


ԷԶՄԻԱԾԻՆ




Զ
2016



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Յո-նիս

2016
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«Էջմիածին»
կրօնագիտական եւ հայագիտական հանդէս

Խմբագրակազմ
Գլխավոր խմբագիր՝ Արսէն Բոբոխեան

Խմբագիրներ՝
Ռսկան քահանայ Յովհաննիսեան, Արփինէ Չանթիկեան,
Լիլիթ Յակոբեան

Տեխնիկական խմբագիր՝
Անգելինա Ալեքսանեան

Լեզուաոճական խմբագիր՝ Վազգէն Սաֆարեան

Խմբագրական խորհուրդ

Վահան Եպիսկոպոս Յովհաննիսեան (Ֆրանսիա), Անուշաւան Եպիսկոպոս
Ժամկոչեան (Երեւանի պետական համալսարան, Աստուածաբանութեան
ֆակուլտէտ), Գէորգ Եպիսկոպոս Սարոյեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան
(աստուածաբանական համալսարան), Շահէ ծայրագոյն վարդապետ
Անանեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական
համալսարան), Դանիէլ վարդապետ Ֆնտրզեան (ԱՄՆ Հայոց Արեւելեան
թեմ), Գարեգին վարդապետ Համբարձումեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան
(աստուածաբանական համալսարան), Զաքարիա վարդապետ Բաղդումեան
(Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Հրաչ
սարկաւազ Սարգիսեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական
համալսարան), Գէորգ Տէր-Վարդանեան (Մաշտոցի անուան Մարենադարան,
Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան),
Դաւիթ Գիւրջինեան (Երեւանի Վ. Բոյունովի անուան պետական
լեզուահասարակագիտական համալսարան, Գէորգեան հոգեւոր ճեմարան
(աստուածաբանական համալսարան), Անահիտ Աւագեան (Գէորգեան
հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Գոհար Մուրադեան
(Մաշտոցի անուան Մարենադարան), Ազատ Բոգոյեան («Վաչէ եւ Թամար
Մանուկեան Մարենադարան», ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ),
Ալեքսան Յակոբեան (ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ), Մհեր
Նաոյեան (Երեւանի պետական կոնսերւատորիա), Աննա Արեւշատեան
(Երեւանի պետական կոնսերւատորիա), Արամ Մարտիրոսեան (Ֆրանսիա,
Փարիզ-Նանտերի համալսարան), Իգաբէլ Էօծէ (Ֆրանսիա, Մոնպելիէի
համալսարան), Աննա Շիրինեան (Բրաւիլ, Բոլոնիայի համալսարան)

“Etchmiadzin”

Review of Religious Studies and Armenology

Editorial staff

Editor in chief - **Arsen Bobokhyan**

Editors

Fr. Voskan Hovhannisyan, Arpine Chantikyan, Lilit Hakobyan

Technical editor - **Angelina Aleksanyan**

Linguistic-stylistic editor - **Vasken Safaryan**

Editorial Board

Bishop Vahan Hovannisian (*France*), **Bishop Anushavan Zhamkochyan** (*Yerevan State University, Faculty of Theology*), **Bishop Kevork Saroyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Supreme Archimandrite Shahe Ananyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Archimandrite Daniel Findikyan** (*USA, Eastern Armenian Diocese*), **Archimandrite Karekin Hambardzumyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Archimandrite Zakaria Baghumyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Deacon Hratch Sarkissian** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Gevorg Ter-Vardanyan** (*Matenadaran, Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Davit Gyurjinyan** (*Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Anahit Avagyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Gohar Muradyan** (*Matenadaran, Yerevan*), **Azat Bozoyan** (“*Vatche and Tamar Manoukian Library*”, *Institute of Oriental Studies, National Academy of Sciences of the Republic of Armenia*), **Alexan Hakobyan** (*Institute of Oriental Studies, National Academy of Sciences of the Republic of Armenia*), **Mher Navoyan** (*Yerevan State Conservatory*), **Anna Arevshatyan** (*Yerevan State Conservatory*), **Aram Martirosian** (*France, University of Paris-Nanterre (Université Paris-Nanterre)*), **Isabel Augé** (*France, University of Montpellier (Université Paul Valéry-Montpellier)*), **Anna Sirinian** (*Italy, University of Bologna (Università di Bologna)*)



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ
ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻՆ՝ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀՐԱՇԱՓԱՌԻ
ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ**
(Սուրբ Էջմիածին, 24 հունիսի, 2016 թ.)

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Գոհություն եւ փառք ենք մատուցում Աստծուն, որ այսօր Միածնաէջ այս սուրբ տաճարում եղբայրական սիրով ու աղոթքով ողջունում ենք Ձերդ Սրբությանը եւ Ձեզ ուղեկցող պատվիրակությանը: Խորապես զգացված ենք, որ Մեր հրավերին ընդառաջ՝ այցելեցիք Հայաստան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Հինավուրց այս տաճարը Աստծո հետ մեր ժողովրդի կնքած սրբազան ուխտի խորախորհուրդ վկայությունն է: Նվիրական այս սրբավայրում իջավ Հիսուս Քրիստոս եւ իր Սուրբ Աջով հաստատեց Սուրբ Էջմիածինը՝ սրբություն սրբոցը համայն հայության: Աստվածային նախախնամությամբ հայոց երկրորդ Լուսավորիչ, առաքելապատիվ սուրբ Գրիգոր հայրապետի տեսիլքով ու անխոնջ ջանքերով նորոգվեցին սուրբ Թադեոս եւ սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությամբ մեր ժողովրդի սրտում վառված հավատքի կանթեղները: Այդ օրից ի վեր Սուրբ Էջմիածնից ճառագող լույսը միավորում է մեր ժողովրդին տապանակիր Արարատի շուրջ սփռված իր հայրենիքով, իր սրբություններով, իր պատմությամբ: Անչափ ուրախ ենք, որ այսօր Միածնաէջ այս սուրբ տաճարում ի փառս Աստծո միավորվում են սուրբ Պետրոս եւ սուրբ Թադեոս ու սուրբ Բարդուղիմեոս առաքյալների Աթոռների գահակալներն աղոթքները՝ հայցելով մեր հավատացելոց եւ ողջ

աշխարհի համար խաղաղություն, սիրո ու եղբայրության ամուր օգի եւ համագործակցության արգասավորում:

Այս պահին ջերմ զգացումներով ենք հիշում 2001 թվականին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով սուրբ Հովհաննես Պողոս Բ. Պապի այցը Հայաստան: Այն սուրբ Պետրոսի Աթոռի գահակալի առաջին այցելությունն էր մեր երկիր, որը մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերություններում գործակցության նոր խթան հանդիսացավ: Մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների առավել սերտացման գործում նշանակալի ավանդ էք բերել նաեւ Դուք՝ Ձեր ծառայագործության հանգրվաններում առանձնակի ջերմություն դրսևորելով Հայ Եկեղեցու եւ մեր ժողովրդի նկատմամբ: Ձերդ Սրբության այցելությունը նոր վկայություն է մեր Եկեղեցիների եղբայրության եւ գործակցության, որը երկուստեք զորացնում է Հայ առաքելական ու կաթոլիկ հավատացյալներին եւ տոգորում լավատեսության, որ մեր կյանքում առավել զգալի պիտի լինեն քրիստոնեական սիրով շաղախյալ մեր հավատքի վկայությունները:

Մեր ժողովրդի զավակները երախտագիտության եւ հիշում Սուրբ Պետրոս Մայր տաճարում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին մատուցած Ձեր հանդիսավոր պատարագը՝ ցեղասպանությունը դատապարտող պատմական ճառով: Գոհություն ենք հայտնում Աստծուն, որ այսօր այստեղ Ձերդ Սրբության, Կաթոլիկ Եկեղեցու զավակների, Ձեր այցի առիթով տարբեր երկրներից Հայաստան ժամանած բազմաթիվ հայորդյաց ու հայրենաբնակ մեր ժողովրդի հետ միասնաբար կարող ենք աղոթել եւ հայցել Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների բարեխոսությունը, որոնց արյան վկայությունը ոչ միայն Հայոց, այլ նաեւ քրիստոնեական ընդհանուր հավատքի հաղթանակի հավաստիքն է: Ինչպես առաքյալն է ասում՝ շատերի գոհության մեջ առատացած շնորհը ավելանում է ի փառս Աստծո (Հմմտ. Բ. Կորնթ. Դ. 15):

Հայոց ցեղասպանության եւ խորհրդային աստվածամերժության տարիների ավերներից հետո այսօր հայրենի անկախ պետականության պայմաններում մեր Եկեղեցին հոգեւոր նոր զարթոնք է ապրում՝ ազատորեն իրականացնելով տերունավանդ իր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: Մեր Եկեղեցին նաեւ առավել մասնակցություն է բերում համաքրիստոնեական կյանքին՝ խորին համոզումով, որ աշխարհում առկա հոգեւոր, քաղաքական, տնտեսական ու մարդասիրական ճգնաժամերի խորացման այս ժամանակաշրջանում առավել քան կարեւորվում է Քույր



Հանդիպեցինք, եղբայրաբար ողջագուրուեցինք, միասին աղօթեցինք, կիսեցինք ընծաները, յոյսերն ու մտահոգությունները
 Զրիստոսի Եկեղեցու, որի սրտի միաձայն զարկերը լսում ենք, եւ հաւատացած ենք ու զգում ենք, թէ մէկ է:
 «Մէկ մարմին եւ մէկ հոգի, ինչպէս որ մէկ է ձեր յոյսը... մէկ Տէր, մէկ հաւատ, մէկ մկրտութիւն:
 Մէկ Աստուած եւ Հայր բոլորի, որ վեր է բոլորից, բոլորի հետ եւ մեր բոլորի մէջ» (Եփ. Դ. 4-6)
 (Հռոմի Սրբազան Ըստիանայապետ Ն. Ս. Ֆրանցիսկոս Պապ)



Իսկ այժմ Սրբութիւն Աստուծոյ անունով խնդրում եմ,
որ ինձ օրհնէք, օրհնէք ինձ եւ Կաթողիկէ Եկեղեցին,
օրհնէք մեր այս ընթացքը դէպի կատարեալ միութիւն
(*Յռոմի Սրբազան Ըստիանայապետ Ն. Ս. Ֆրանցիսկոս Պապ*)



Տէրը թող օրհնի ձեզ՝ հաւատի այս լուսաւոր վկայութեան համար,
որ օրինակելի կերպով ապացուցում է ավելի քան 1700 տարի առաջ
ընդունած Սկրտութեան հզօր արդիւնաւետութիւնն
ու բեղունութիւնը մարտիրոսութեան պերճախօս եւ սուրբ նշանով,
որ ձեր ժողովրդի պատմութեան կայուն մասնիկն է դարձել
(*Յռոմի Սրբազան Ըստիանայապետ Ն. Ս. Ֆրանցիսկոս Պապ*)

Եկեղեցիների միասնական աղոթքն ու գործակցությունը հանուն Քրիստոսի Սուրբ Եկեղեցու առաքելության արգասավորման, աշխարհում հոգեւոր-բարոյական արժեքների պահպանման ու արժեւորման, մերձավորի հանդեպ սիրո զորացման, որոնցով կյանքում կարող են մարմնավորվել ապահովության եւ բարօրության իրական արդյունքները:

Աղոթք ենք բարձրացնում Քրիստոսի Սուրբ Եկեղեցու հաստատունության եւ պայծառության, մեր Տիրոջ պարգեւած սիրո ու հաճության ոգու տարածման եւ աշխարհում խաղաղության ու համերաշխ կյանքի ամրապնդման համար: Հայցում ենք Ձերդ Սրբությանը Տիրոջ զորակցությունը եւ մաղթում ընդ երկայն աւուրս քաջառողջ, արդյունազարդ գահակալություն՝ ի պայծառություն Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու եւ ի մխիթարություն հավատացելոց:

Բարի եք եկել աստվածաշնչյան երկիր Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի ողորմությունը, շնորհներն ու օրհնությունը թող լինեն մեզ հետ եւ ամենքի. ամեն:



**ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՖԻՆԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ
ԽՕՍՔԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՀՐԱՇԱՓԱՌԻ ԲԱՐԻԳԱԼՍԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ**
(24 յունիսի, 2016 թ.)

Մեծարգոյ եղբայր,

Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց,

Սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս.

Յուզումով ոտք դրեցի ձեր ժողովրդի պատմութեան վկայի, նրա հոգեկանութեան լուսաշող կենտրոնի՝ այս սրբազան վայրի շէմին եւ Աստծու թանկագին պարգեւն եմ համարում, որ կարողացայ մօտենալ Սուրբ Սեղանին, որից Քրիստոսի լոյսը սփռուեց Հայաստանում: Ողջունում եմ Նորին Սրբութիւն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ շնորհակալութիւն յայտնելով Ս. Էջմիածին այցելելու հաճելի հրաւերի համար, Հայ Առաքելական Եկեղեցու արքեպիսկոպոսներին եւ եպիսկոպոսներին: Շնորհակալութիւն եմ յայտնում բոլորին՝ սրտագին եւ ցնծալի ընդունելութեան համար, որ ինձ պարգեւեցիք: Շնորհակալութիւն, Ձերդ Սրբութիւն, ինձ Ձեր տանը հիւրընկալելու համար. սիրոյ այս նշանը պերճախօս բառերից աւելի շատ է արտայայտում ընկերութիւնն ու եղբայրական սէրը:

Այս հանդիսաւոր առիթով Տիրոջ գոհութիւն եմ մատուցում ձեր երկրում վառուած հաւատի լոյսի համար. հաւատ, որ Հայաստան աշխարհին տուեց իր ուրոյն ինքնութիւնը եւ նրան Քրիստոսի պատգամաբերը կարգեց ազգերի մէջ: Քրիստոս է Ձեր փառքը, Ձեր լոյսը, արեգակը, որ Ձեզ լուսաւորեց եւ նոր կեանք պարգեւեց, որ Ձեզ ուղեկցեց եւ սատարեց յատկապէս մեծագոյն փորձութիւնների պահերին: Խոնարհւում եմ Տիրոջ ողորմութեան առաջ, որ կամեցաւ Հայաստանը լինէր առաջին ազգը՝ 301 թուականին ընդունելով Քրիստոնէութիւնը՝ որպէս իր կրօնը, այնպիսի ժամանակաշրջանում, երբ հռոմէական կայսրութեան մէջ դեռ բոլորքւում էին հալածանքները:

Քրիստոսի հաւատը Հայաստանի համար չի եղել իբրեւ զգեստ, որ կարելի է հագնել կամ հանել՝ ըստ պարագաների կամ առիթների, այլ սեփական ինքնութեան բաղկացուցիչ իրականութիւն, գերազանց պար-


գեւ՝ ուրախութեամբ ընդունելի, ժրաջանութեամբ եւ ուժով պահպանելի: Ինչպէս գրեց Սուրբ Յովհաննէս Պօղոս Բ.-ն, «Հայ հասարակութեան «Մկրտութեամբ» [...] ծնունդ է առնում ժողովրդի նոր ինքնութիւն, որ հայ լինելու անբաժանելի եւ բաղկացուցիչ մաս է դառնալու: Այդ պահից այլեւս անհնար է մտածել, որ տուեալ ինքնութեան բաղադրիչների շարքում տեղ չգտնի Քրիստոսի հաւատը՝ որպէս էական բաղկացուցիչ» (Առաքելական նամակ հայ ժողովրդի մկրտութեան 1700 յորելանի առիթով [2 Փետրուար 2001]: Տէրը թող օրհնի ձեզ՝ հաւատի այս լուսաւոր վկայութեան համար, որ օրինակելի կերպով ապացուցում է ավելի քան 1700 տարի առաջ ընդունած Մկրտութեան հզօր արդիւնաւէտութիւնն ու բեղունութիւնը մարտիրոսութեան պերճախօս եւ սուրբ նշանով, որ ձեր ժողովրդի պատմութեան կայուն մասնիկն է դարձել:

Գոհութիւն եմ մատուցում Տիրոջը նաեւ այն ընթացքին համար, որ Կաթողիկէ եւ Հայ Առաքելական Եկեղեցիները կատարեցին եղբայրական եւ անկեղծ երկխօսութեան միջոցով՝ հասնելով գոհութեան Սեղանի կիսմանը: Սուրբ Հոգին թող օգնի մեզ՝ իրականացնելու այն միութիւնը, որի համար աղօթեց մեր Տէրը, որպէսզի իր աշակերտները մի լինեն, եւ աշխարհը հաւատայ: Ինձ հաճելի է յիշել այժմ մեր երկու Եկեղեցիների միջեւ յարաբերութիւնների խորացման եւ երկխօսութեան ամրապնդման՝ վերջերս արտահայտուած վճռորոշ մղումը Նորին Սրբութիւններ Վազգէն Ա.-ի, Գարեգին Ա.-ի եւ Սուրբ Յովհաննէս Պօղոս Բ.-ի, Բենեդիկտոս ԺԶ.-ի կողմից: Համամիութենական այս ջանքերի շարքում յիշում եմ Ի. դարու հաւատի Վկաների յիշատակութիւնը 2000 թուականի Մեծ յորելանի շրջանակներում, երբ Ձերդ Սրբութեանը յանձնուեց քրիստոնէայ Հայաստանի Հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի մասունքից՝ Երեւանի նորակառոյց Տաճարի համար, Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ.-ի եւ Ձերդ Սրբութեան ստրոգրած համատեղ Յայտարարութիւնը ճիշտ այստեղ՝ Սուրբ Էջմիածնում, ինչպէս նաեւ Ձերդ Սրբութեան կատարած այցերը Վատիկան:

Դժբախտաբար, աշխարհը բաժանումներով եւ ընդհարումներով է խարանդուած, ինչպէս նաեւ նիւթական եւ հոգեւոր աղքատութեան ծանր վիճակներով, եւ քրիստոնեաներից ակնկալւում է փոխադարձ գնահատման եւ եղբայրական համագործակցութեան վկայութիւն, որպէսզի կրկին փայլի Քրիստոսի Յարութեան զօրութիւնն ու ճշմարտութիւնը: Համբերատար եւ մշտանորոգ ջանքերը դէպի լիարժէք միութիւն, համատեղ ձեռնարկների հզօրացումը եւ ի տես հասարակաց բարիքի՝ Տիրոջ

բոլոր աշակերտների միջև համագործակցությունը նման են փայլականացալու լոյսի՝ խաւարամած գիշերուան մէջ, որը կանչ է՝ ապրելու սիրով եւ նոյնիսկ տարբերութիւնների փոխըմբռնմամբ: Համամիութենական ոգին օրինակելի է դառնում նաեւ եկեղեցական հասարակութեան տեսանելի սահմաններից դուրս, եւ բոլորի համար ներկայացնում է մի զօրաւոր կոչ՝ տարակարծութիւնները յարթելու երկխօսութեամբ եւ արժեւորելով այն, ինչ միացնում է: Համամիութենական ոգին միաժամանակ արգելում է հաւատի չարաշահումն ու շահարկումը, որովհետեւ պարտաւորեցնում է յայտնաբերել նրա հարազատ արմատները, հաղորդել, պաշտպանել եւ տարածել ճշմարտութիւնը՝ իւրաքանչիւր մարդկային էակի արժանապատուութեան պահպանմամբ եւ այնպիսի ձեւերով, որոնցից թափանցի այն սիրոյ եւ փրկութեան ներկայութիւնը, որ ցանկանում ենք սփռել: Այսպէս, համոզիչ վկայութիւն ենք տալիս աշխարհին, թէ Քրիստոս կենդանի է եւ գործուն, կարող՝ ազգերի, մշակոյթների եւ կրօնների միջեւ միշտ նորանոր հաշտութեան ճանապարհներ բացելու: Վկայում ենք եւ հաւատացնում, որ Աստուած սէր է եւ գթասրտութիւն:

Սիրելի՛ եղբայրներ, երբ մեր գործը ներշնչուած է Քրիստոսի սիրոյ ուժով, զարգանում են փոխադարձ ճանաչումն ու համարումը, ստեղծւում են լաւագոյն պայմաններ համամիութենական պտղաբեր ընթացքի, եւ միաժամանակ, մատնանշւում է իւրաքանչիւր բարի կամք ունեցող անձի եւ ամբողջ հասարակութեան առարկայական երթեւեկելի ճանապարհ՝ ներդաշնակելու համար հակամարտութիւնները, որ պատառոտում են քաղաքակիրթ կեանքը եւ առաջացնում են դժուար վերականգնող բաժանումներ: Ամենակարողն Աստուած, մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, բարեխօսութեամբ ամենասրբուհի Մարիամի, «սիւն լուսոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ» Գրիգոր Լուսաւորչի եւ Եկեղեցու Վարդապետ Սուրբ Գրիգոր Նարեկացու, օրհնի բոլորիդ եւ ամբողջ Հայ Ազգը եւ միշտ պահպանի այն հաւատի մէջ, որ ստացել է հայրերից եւ փառաւոր վկայութիւն տուել դարեդար:



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ
ՖԻԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՄՐԻԻ
ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

(Գյումրի, 25 հունիսի, 2016 թ.)

*«Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմեանց.
խնչպես ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեանց սիրեցեք»
(Յովհ. ԺԳ. 34):*

Ձերդ Սրբություն,

Սիրեցյալ հոգեւոր եղբայրներ եւ բարեպաշտ հավատացյալներ,

Այսօր, երբ մեր Եկեղեցին հիշատակում է Տիրոջ սուրբ առաքյալների տոներ, որքան քաղցրահունչ ու առավել ուժգնությամբ է հնչում մեր հոգիներին այս պատգամը, որը մեր Տերն ուղղեց իր աշակերտներին: Տերունապատվեր սիրո այս ջերմ զգացումով հանուն տարածաշրջանի ողջ հավատացելոց՝ բարի գալուստ ենք մաղթում Ձեզ, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, Գյումրի քաղաք: Ուրախություն է Մեզ համար աղոթակից լինել Հայ Եկեղեցու եւ Հայ ժողովրդի մեծ բարեկամիդ մատուցած Պատարագին:

Գյումրին Հայաստանի պատմական այն քաղաքներից է, որտեղ ծաղկում են ապրել Հայ քրիստոնեական դարավոր արժեքները, ներդաշնակությամբ ձուլվել մեր ժողովրդի պատմությունն ու մշակույթը եւ հյուրընկալության սիրառատ ոգին: Գյումրիի ժողովուրդը առանձնանում է խորին հավատքով եւ եկեղեցասիրությամբ, կրողն է նաեւ քրիստոնեական եղբայրական համակեցության գեղեցիկ ավանդույթի, որի վկայությունն է այսօր այստեղ աղոթքի կանգնած Հայ Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների եւ քրիստոնեական այլ հարանվանությունների հավատացյալ զավակների ներկայությունը: Խորհրդային աստվածամերժության տարիներին, երբ Հայաստանում կործանվում եւ փակվում էին եկեղեցիները, եւ միայն հավատացյալ մեր ժողովրդի անտեղիտալի դիմադրության շնորհիվ բաց էին մնացել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ սակավ եկեղեցիներ, Գյում-

րի Սուրբ Աստվածածին (Յոթվերք) եկեղեցին իր մայրական գիրկը բացեց եւ հովանի ու աղոթավայր դարձավ Հայաստանի հյուսիսային շրջանների եւ Վրաստանի սահմանամերձ հայաբնակ քաղաքների ու գյուղերի բոլոր քրիստոնյաների համար՝ անկախ ազգային ու դավանական պատկանելութիւնից՝ լինելին նրանք հայ առաքելական, կաթոլիկ, թե օրթոդոքս: Եկեղեցու հյուսիսային նախամուտքը վերածվեց կաթոլիկ հավատացյալների աղոթավայրի, որտեղ տեղադրվեց եւ առ այսօր պահպանվում է կաթոլիկ ավանդույթին բնորոշ՝ Տիրոջ խաչելութեան արձանը՝ բերված Արեւիկ գյուղի կաթոլիկ եկեղեցուց, իսկ հարավային նախամուտքը տրամադրվեց ուղղափառներին, որտեղ ամենապատվավոր տեղում բարձրացվեց Սուրբ Նիկողայոս Սքանչեւագործի ռուսական սրբապատկերը: Այսպես Գյումրին եւ Սուրբ Աստվածածին (Յոթվերք) եկեղեցին էկումենիզմի ժամանակակից սահմանումից տարիներ առաջ դարձան գործնական էկումենիզմի մատակարարն ու քարոզիչը:

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, քաղաքը, որտեղ մենք այսօր գտնվում ենք, հյուրընկալ ու ջերմ իր սրտի վրա կրում է նաեւ կնիքը տառապանքի: Քսաներորդ դարասկզբին, երբ մեր ժողովուրդը ցեղասպանության էր ենթարկվում, Գյումրին նույնպես զգաց Օսմանյան կայսրության ջարդարար եւ զավթողական քաղաքականության ծանր հարվածները եւ այսօր էլ կանգնած է փակ սահմանի դիմաց՝ իբրեւ հարյուր տարի առաջ Թուրքիայի կողմից իրագործված ցեղասպանության եւ շարունակվող ժխտողական քաղաքականության վկա:

Մեր ժողովրդի զավակները Գյումրիում հավատքով ու քաջարի ոգով դիմագրավեցին նաեւ երկրաշարժի աղետը: Այս առիթով ի դեմս Ձերդ Սրբութեան՝ երախտագիտութեան Մեր խոսքն ենք ուղղում Կաթոլիկ եկեղեցուն, որը ծանր այդ օրերին նույնպես եղբայրսիրութեամբ օգնության ձեռք մեկնեց երկրաշարժից տուժածներին՝ համաձայն առաքյալի խոսքի. «...հոգ տանենք միմեանց՝ սիրոյ եւ բարի գործերի յորդորելով» (Եբր. Ժ. 23-24): Այսօր էլ գյումրեցի մեր զավակները շարունակում են հաղթահարել դժվարությունները եւ նվիրյալ ջանքեր բերում՝ բարօր ու զարգացող կյանքով բարեչեն դարձնելու Գյումրին, որի վկայութիւնն են վերջին տարիներին կառուցված կաթոլիկ եկեղեցին, այս հրապարակին հովանի դարձած պատմական երկու նորոգված եկեղեցիները՝ իբրեւ Գյումրիի հառնող կյանքի խորհրդանիշերը:

Գոհութիւն հայտնելով Տիրոջը Գյումրիում Մեր սիրեցյալ եղբոր՝ Յրանցիսկոս Պապի հետ միասնական աղոթքի այս շնորհառատ օրվա հա-



Մեր ժողովրդի զավակները երախտագիտությամբ են հիշում Սուրբ Պետրոս Մայր տաճարում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին մատուցած Ձեր հանդիսավոր պատարագը՝ ցեղասպանությունը դատապարտող պատմական ճառով (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրելին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց)



Քրիստոսի հաւատը Հայաստանի համար չի եղել իբրեւ զգեստ, որ կարելի է հագնել կամ հանել՝ ըստ պարագաների կամ առիթների, այլ սեփական ինքնութեան բաղկացուցիչ իրականութիւն, գերազանց պարգեւ՝ ուրախութեամբ ընդունելի, ժրաջանութեամբ եւ ուժով պահպանելի (Հռոմի Սրբազան Ըսհանայապետ Ն. Ս. Ֆրանցիսկոս Պապ)



Աղոթք ենք բարձրացնում Զրիստոսի Սուրբ Եկեղեցու
հաստատունության եւ պայծառության, մեր Տիրոջ պարգեւած
սիրո ու հաճության ոգու տարածման եւ աշխարհում
խաղաղության ու համերաշխ կյանքի ամրապնդման համար
(Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց)



...Ձեր այցի առիթով... մեր ժողովրդի հետ միասնաբար կարող ենք աղոթել
եւ հայցել Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների
բարեխոսությունը, որոնց արյան վկայությունը ոչ միայն հայոց, այլ նաեւ
քրիստոնեական ընդհանուր հավատքի հաղթանակի հավաստիքն է
(Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց)


մար՝ Մեր հորդորն ու մաղթանքն ենք բերում ձեզ, սիրելի հավատացյալներ, հավատքի, եղբայրսիրության ու հույսի աներեր քայլերով վկայելու այս աշխարհում Քրիստոսի պատգամը. «Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեանց սիրեցէք»:

Այս մաղթանքով նաեւ ողջունում եւ Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Գյումրիի եւ մարզի իշխանավորներին, Շիրակի հավատավոր Մեր զավակներին: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանին, նրան լծակից հոգեւորականներին եւ հայ կաթողիկ համայնքի եկեղեցականներին՝ առաջնորդ Ռաֆայել արքեպիսկոպոս Մինասյանի գլխավորությամբ: Մաղթում ենք, որ Տիրոջ զորակցությամբ նրանք շարունակեն արդյունավորել իրենց հավատավոր հոտի խնամքն ու հովվությունը եւ եղբայրսիրությամբ գործակցությունը:

Սուրբ առաքյալների եւ Տիրոջ բոլոր վկաների բարեխոսության հայցով աղոթք ենք բարձրացնում առ Ամենակալն Աստված աշխարհի խաղաղության, մարդկության բարօր ու ապահով կյանքի եւ Քրիստոսի Սուրբ Եկեղեցու պայծառության համար:

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, Ձեր այցելությունը Գյումրի հոգեւոր նորոգություն է Շիրակի տարածաշրջանի հավատացյալներին եւ միշտ պիտի հիշվի սիրով ու ջերմությամբ: Ուրախ սրտով վերստին հաստատում ենք, որ Ձեր այցը նոր վկայություն է մեր Եկեղեցիների բարի հարաբերությունների:

Թող Աստված ամուր պահի եղբայրությունը եւ արգասավորի գործակցությունը մեր Եկեղեցիների այսօր եւ միշտ. ամեն:



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ
ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ ՀԵՏ ՄԱՏՈՒՑՎԱԾ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**
(Երեւան, Հանրապետության հրապարակ, 25 հունիսի, 2016 թ.)

*«Երանի՜ խաղաղարարներին, որովհետեւ նրանք
Աստծու որդիներ պիտի կոչվեն»
(Մատթ. Ե. 9):*

*Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,
Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության,
Շնորհազարդ հոգեւոր եղբայրներ եւ սիրելի բարեպաշտ ժողովուրդ,
Բարձրյալն Աստծո սուրբ անվան փառաբանությունը մեր շուրթե-
րին՝ այսօր քաղաքամայր Երեւանի կենտրոնում, Բիբլիական Արարատի
օրհնաբեր հայացքի ներքո համախմբվել ենք միասնական աղոթքի: Նոյի
երկրից, որտեղ Աստված ծագեցրեց խաղաղության ծիածանը, մեր հայցը
բարձրացրինք երկինք ի Քրիստոս սիրեցյալ Մեր եղբոր՝ Փրանցիսկոս
Պապի հետ՝ հանուն աշխարհում խաղաղության հաստատման եւ մարդ-
կության ապահով ու բարօր կյանքի: Հուզումով ենք անդրադառնում,
որ այս հրապարակում մեզ աղոթակից են նաեւ պատերազմներից, ահա-
բեկչություններից ու բռնություններից տուժածներ, փախստականներ
Ադրբեջանից, փախստականներ Սիրիայից, Իրաքից, ովքեր առ Աստված
հույսով սպասում են խաղաղության օրերին իրենց հայրենի բնակավայ-
րերում:*

*Արդարեւ, մեկ եւ կես տասնամյակ առաջ երրորդ հազարամյակը դի-
մափորում էինք հույսով, որ այն մարդկության կյանքում սկիզբ պիտի
առնի ազգերի համերաշխ գոյակցությամբ եւ պետությունների բարի գոր-
ծակցությամբ՝ հանուն խաղաղ ու արդար աշխարհի կառուցման: Մինչ-
դեռ ամենօրյա իրականությունը հաճախ գուժում է պատերազմական
եւ ահաբեկչական նորանոր գործողությունների, մարդկային անասելի
տառապանքների, անդառնալի կորուստների մասին: Աշխարհի տարբեր*

կողմերում տարբեր ազգերի, կրոնների ու դավանանքների պատկանող մանուկներ ու պատանիներ, կանայք ու տարեցներ մահասփյուռ զենքերի եւ վայրագ բռնարարքների զոհ են դառնում կամ բռնում գաղթականության ուղին՝ ահռելի դժվարություններ հաղթահարելով կյանքի ապահովություն գտնելու համար:

Ճիշտ մեկ դար առաջ այս նույն ճանապարհն էր անցում մեր ժողովուրդը՝ հայտնվելով ծանրագույն իրավիճակի առջեւ, երբ Յեղասպանության հետեւանքով կորցրել էր հայրենիքի մեծագույն մասը եւ, ունենալով մեկ ու կես միլիոն անմեղ նահատակներ, պայքարում էր իր գոյության իրավունքի համար: Այսօր էլ մեր ժողովուրդն ապրում է չհայտարարված պատերազմի դժվարին պայմաններում՝ թանկ գնով պաշտպանելով խաղաղությունը մեր երկրի սահմաններում, Լեռնային Ղարաբաղի մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքը՝ իր բնօրրան հայրենիքում: Մեր ժողովրդի խաղաղասիրական ձգտումներին ի պատասխան՝ Ադրբեյջանը, խախտելով հրադադարը, ապրիլ ամսին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմաններին սանձազերծեց ռազմական գործողություններ: Հրետակոծվեցին եւ ավերվեցին հայկական բնակավայրեր, զոհվեցին ու վիրավորվեցին խաղաղության պաշտպան զինվորներ, դպրոցահասակ երեխաներ, խոշտանգվեցին խաղաղ, անզեն բնակիչներ:

Այս դժվարություններին հանդիման՝ մեր ժողովուրդը ցավ է ապրում նաեւ այն ավերածությունների եւ կորուստների համար, որ շարունակվում են Մերձավոր Արեւելքում, սոսկալի ահաբեկչությունների համար, որ իրագործվեցին եվրոպական խոշոր քաղաքներում, Ռուսաստանում, Միացյալ Նահանգներում, Ասիայի եւ Աֆրիկայի երկրներում, հոգեւոր ու մշակութային այն արժեքների համար, որ անխնա կերպով ոչնչացվում են հակամարտությունների տարածաշրջաններում: Որքան սրբավայրեր պղծվեցին եւ արժեքավոր կոթողներ կործանվեցին Սիրիայում, Իրաքում, Արեւելքի եւ Աֆրիկայի երկրներում, որքան խաչքարեր ոչնչացվեցին Ադրբեյջանում: Փլատակների, կորստի ցավի ու կարիքի մեջ փլուզվում են նաեւ մարդկային հոգու արժեքներն ու զգացումները:

Ստեղծված իրավիճակներում քրիստոնեական Եկեղեցիների եւ կրոնական առաջնորդների առաքելությունը չի կարող սահմանափակվել միայն տուժածներին աջակցելով, մխիթարելով եւ հովվական հոգատարություն ցուցաբերելով: Խաղաղության փնտրտուքի ճանապարհին առավել գործուն քայլեր պիտի ձեռնարկվեն՝ համատեղ ջանքերով կանխարգելելու համար չարիքը, միջկեղեցական ու միջկրոնական գործակ-

ցուլթյամբ հասարակությունների մեջ զորացնելու սիրո, համերաշխության ու համագործակցության ոգին՝ ըստ Աստծո կոչի. «Երանի՜ խաղաղարարներին, - ասում է մեր Տերը, - որովհետեւ նրանք Աստծու որդիներ պիտի կոչուեն»:

Ձերդ Սրբություն, հովվական Ձեր ծառայությունն ակնհայտորեն արտահայտում է աշխարհի խաղաղության ու ազգերի միջեւ հաշտության տերուհեւանդ պատգամին Ձեր ամբողջական նվիրվածությունը, որի վկայություններից մեկը եղավ նաեւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով անցյալ տարի Վատիկանի Սուրբ Պետրոս Մայր տաճարում մատուցված պատարագը՝ ի հիշատակ մեր անմեղ նահատակների, երբ Դուք Ձեր պատգամում բարձրաձայնեցիք արդարության վերականգնման անհրաժեշտության մասին՝ նշելով. «Չարիքը թաքցնելը կամ ուրանալը նման է թույլ տալուն, որ վերջն արյունահոսի՝ առանց վիրակապվելու»:

Այս նույն սկզբունքով առաջնորդված՝ վերջին մեկ տարում Հայոց ցեղասպանությունը վճռականորեն դատապարտեցին նաեւ նոր պետություններ ու կազմակերպություններ, օրերս՝ նաեւ Գերմանիան, որն Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի դաշնակիցն էր: Մեր ժողովուրդը երախտագետ է Ձերդ Սրբությանը եւ բոլորին, ովքեր բարձրաձայնում ու պաշտպանում են արդարությունը եւ ակնկալում է, որ Թուրքիան՝ ունկնդիր Ձեր պատգամին եւ բազում պետությունների ու միջազգային կառույցների կոչին, քաջություն դրսևորի առերեսվելու պատմությանը, վերացնի Հայաստանի անօրինական չրջափակումը, դադարեցնի նաեւ զորակցությունը Ադրբեյջանի ռազմական խարդավանքներին՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ու խաղաղ ապրելու իրավունքի դեմ: Արդարեւ, խաղաղությունը չի կարող կենսագործվել առանց արդարության, մարդկային կյանքերը չեն կարող դառնալ չահարկումների առարկա, չեն կարող անտեսվել: «Աստծու կողմից աշառութիւն չկայ, - ասում է առաքյալը, - այլ՝ բոլոր ազգերի մէջ ով երկնչում է Նրանից եւ արդարութիւն է գործում, ընդունելի է Նրան» (Գործք Ժ. 34-35): Միայն արդարությունը, որի վրա հիմնված է մարդկանց եւ ժողովուրդների իրավունքների պաշտպանությունը, կարող է դառնալ ամուր հիմքը մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման եւ ամենաիրական ուղին հակամարտությունների համապարփակ լուծման:

Այս նպատակի իրագործման համար ջերմեռանդ սրտով աղաչում ենք Աստծուն, որպեսզի ունկնդիր լինի մեր աղոթքներին եւ Սուրբ Հոգու



Ցանկանում եմ միաժամանակ հիացմունքնով յիշել՝ ինչպես քրիստոնեական հաւատը «Հայոց պատմութեան Նոյնիսկ ամենաողբերգական պահերին մղիչ զսպանակն է եղած, որ Նշեց տառապեալ ազգի վերածնունդը: Այդ է ձեր իրական ոյժը, որ թոյլատրում է Չատկուան խորհրդաւոր եւ փրկարար ճանապարհին բացուելու...»
(Յրոմի Սրբազան Ըստիանայապետ Ն. Ս. Ֆրանցիսկոս Պապ)



Որքան սրբավայրեր պղծվեցին եւ արժեքավոր կոթողներ կործանվեցին Սիրիայում, Իրաքում, Արեւելքի եւ Աֆրիկայի երկրներում, որքան խաչքարեր ոչնչացվեցին Ադրբեջանում: Փլատակների, կորստի ցավի ու կարիքի մեջ փլուզվում են նաեւ մարդկային հոգու արժեքներն ու զգացումները
(Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց)



Մեր ժողովուրդը երախտագետ է Ձերո՛ր Սրբությանը եւ բոլորին, ովքեր բարձրաճայնում ու պաշտպանում են արդարությունը եւ ակնկալում է, որ Թուրքիան՝ ունկնդիր Ձեր պատգամին եւ բազում պետությունների ու միջազգային կառույցների կոչին, քաջությունս դրսեւորի առերեսվելու պատմությանը, վերացնի Հայաստանի անօրինական շրջափակումը, դադարեցնի նաեւ զորակցությունը Ադրբեջանի ռազմական խարդավանքներին՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ու խաղաղ ապրելու իրավունքի դեմ
(Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց)

չնորհներին առատ հեղմամբ բարի արդյունքներով արգասավորի եղբայրական սերն ու գործակցությունը Եկեղեցիներին: Թող Ողորմած մեր Տերը մաքրի աշխարհը չարի ողբերգություններից եւ պարգևի խաղաղություն ու ապահովություն: Եվ թող մարգարեական խոսքի համաձայն՝ սուսերներից խոփեր ձուլվեն, սվիններից՝ մանգաղներ, ազգ ազգի դեմ սուր չբարձրացնի, եւ մարդիկ չսովորեն պատերազմել (Հմմտ. Եսայի. Բ. 4):

Բարերար Աստծո մեզ պարգեւած հանդիպման հոգեւոր ուրախությունը Մեր սրտում, մեր Տիրոջ եւ Փրկչի շնորհը եւ խաղաղությունը հայցելով բոլորիս՝ հրավիրում ենք Ձեզ, սիրեցյալ եղբայր, Ձեր պատգամը եւ սիրառատ օրհնությունը բերելու այստեղ համախմբված բազմահազար հավատացյալներին:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ ԽՕՍՔԸ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(25 յունիսի, 2016 թ.)

Մեծարգոյ եւ յոյժ սիրելի եղբայր, Ծայրագոյն Պատրիարք եւ
Կաթողիկոս Ամենայն Հայոց,
Պարոն Նախագահ,

Սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր,

Աստուծոյ օրհնութիւնն ու խաղաղութիւնը ձեզ հետ լինի:

Շատ փափագեցայ այցելել այս սիրելի երկիրը՝ ձեր Աշխարհը, որ
առաջինն ընդունեց քրիստոնեայ հաւատը: Ինձ համար առանձնաշնորհ է
գտնուել այս բարձունքի վրայ, որտեղ Արարատ լեռան հայեացքի ներքոյ
նոյնիսկ լուսութիւնը մեզ խօսուն է թուում. խաչքարերը մեզ պատմում են
անկրկնելի մի պատմութիւն՝ ամրակուռ հաւատով եւ սոսկալի տառա-
պանքներով հիւստած, մի պատմութիւն՝ Աւետարանի սքանչելի վկայու-
թիւններով հարուստ, որոնց ժառանգներն էք դուք: Գալիս եմ Հռոմից
,որպէս ուխտաւոր, ձեզ հետ հանդիպելու եւ սրտի խորքից բխող իմ զգա-
ցումը արտայայտելու. այն ձեր եղբօր սէրն է, եղբայրական գրկախառ-
նումն է ամբողջ Կաթողիկէ Եկեղեցու, որ սիրում է ձեզ եւ ձեր կողքին է:

Անցեալ տարիներին մեր Եկեղեցիների միջեւ միշտ շատ յարգալից
եւ ստէպ յիշարժան այցերն ու հանդիպումները Աստուծոյ շնորհօք սեր-
տացան: Նախախնամութեան կամքն է, որ հենց այս օրը, երբ այստեղ
Քրիստոսի սուրբ Առաքեալների յիշատակն է կատարւում, կրկին միասին
ենք՝ ամրապնդելու առաքելական հաղորդութիւնը մեր միջեւ: Երախտա-
պարտ եմ Աստուծոյ մեր Եկեղեցիների «իսկական եւ ներքին միութեան
համար» (Յովհաննէս Պօղոս Բ., Համաժողովական ծիսակատարութիւն,
Երեւան, 26 սեպտեմբերի, 2001 թ., Ուսուցումներ, ԻԴ. 2, 466) եւ շնորհա-
կալ եմ ձեզ Աւետարանին շատ անգամ հերոսական հաւատարմութեան
համար, որ անգնահատելի պարգեւ է բոլոր քրիստոնեաների համար: Մեր
հանդիպումը «գաղափարների փոխանակում չէ, ընծաների փոխանակում
է» (Հմմտ. անդ, Շրջաբերական նամակ՝ «Զի եղիցին մի», 28). Հնձենք այն,
ինչ Սուրբ Հոգին է մեր մէջ ցանել՝ որպէս իւրաքանչիւրին նուէր (Հմմտ.

Առաքելական յորդոր՝ «Անկարարանական ցնծություն», 246): Մեծ ուրախութեամբ կիսում ենք միասին կտրած՝ արդէն շատ առաջացած ճանապարհի բազում քայլերը, եւ, իրօք, լիայոյս նայում ենք այն օրուան, երբ Աստուծոյ օգնութեամբ միացած կը լինենք Քրիստոսի զոհասեղանի շուրջ՝ հաղորդութեան լրիւ միութեամբ: Դէպի այդ բազմատենչ նպատակը «ուխտաւորներ ենք, եւ միասին ճամփորդում ենք՝ մեր սրտերը անկասկած ու անվարան վստահելով ուղեկցին» (անդ., 244):

Այս ընթացքում մեզ առաջնորդում եւ ընկերակցում են բազմաթիւ վկաներ, յատկապէս նահատակներ, որ արեամբ կնքեցին հասարակաց հաւատն ի Քրիստոս. նրանք մեր աստղերն են երկնքում, որ փայլում են մեր գլխավերելում եւ նշմարում ճանապարհը, որ մեզ մնում է կտրել այս աշխարհում՝ դէպի ամբողջական հաղորդութիւն: Մեծ հայրերի շարքում ցանկանում եմ վկայակոչել Սուրբ Ներսէս Շնորհալի կաթողիկոսին: Նա արտակարգ սէր էր տածում իր ժողովրդի ու նրա աւանդութիւնների հանդէպ, եւ միաժամանակ հակուած էր միւս Եկեղեցիներին, անխոնջ միութեան փնտրողին՝ Քրիստոսի կամքը իրականացնելու փափաքով, որպէսզի հաւատացողները «մէկ լինեն» (Յովհ. Ժէ. 21): Արդարեւ, միութիւնը ռազմավարական առաւելութիւն չէ՝ փոխադարձ հասկերի փնտրտուքով, այլ այն, ինչ Յիսուս խնդրում է մեզնից, եւ որ մեզ է մնում իրագործել բարի կամքով եւ ամբողջ ուժով՝ իրականացնելու համար մեր առաքելութիւնը՝ աշխարհին պարզեւելու Աւետարանը:

Անհրաժեշտ միութիւնն իրականացնելու համար, Սուրբ Ներսէսի համաձայն, բաւարար չէ որեւէ մէկի բարի կամքը Եկեղեցում. անհրաժեշտ է բոլորի աղօթքը: Գեղեցիկ է այստեղ հաւաքուած լինելը՝ մէկս միւսի համար, մէկս միւսի հետ աղօթելու: Եւ յատկապէս աօղթքի նուէրն է, որ եկել եմ այս երեկոյ ձեզնից խնդրելու: Վստահեցնում եմ, որ Հացն ու Բաժակը սուրբ սեղանի վրայ ընծայելիս չեմ դադարում Տիրոջ ներկայացնել Հայ Եկեղեցին եւ ձեր սիրելի ժողովրդին:

Սուրբ Ներսէս զգում էր նաեւ փոխադարձ սէրը աճեցնելու անհրաժեշտութիւնը, որովհետեւ միայն սէրն է ի վիճակի՝ դարմանելու յիշողութիւնն ու բուժելու անցեալի վէրքերը. միայն սէրն է ջնջում նախապաշարումները եւ թոյլ տալիս ընդունել, որ եղբօր հանդէպ անկեղծութիւնը մաքրում եւ բարւոքում է սեփական համոզումները: Այդ սուրբ կաթողիկոսի համար, դէպի միութիւն ճանապարհին, էական էր նմանակել Քրիստոսի սիրոյ ոճը՝ «նա, որ հարուստ էր (Բ. Կորնթ. Ը. 9), խոնարհեցրեց ինքն իրեն (Փիլ. Բ. 8)»: Նրա օրինակով՝ կանչուած ենք քաջութիւնն ու-

նենալու ձեռքազատուելու քարացած համոզումներից եւ սեփական շահերից՝ յանուն սիրոյ, որ խոնարհուում է եւ նուիրւում, յանուն խոնարհ սիրոյ. այն քրիստոնէական կեանքի օրհնեալ իւղն է, հոգեւոր թանկարժէք բալասանը, որ առողջացնում, զօրացնում եւ սրբացնում է: «Թերութիւնները ծածկենք միասնական սիրով» (Ներսէս Շնորհալի Կաթողիկոս Հայոց, Նամակք, Վենետիկ, 1873, էջ 316), եւ նոյնիսկ սիրոյ իւրայատուկ քաղցրութեամբ, որ փափկացնում է նաեւ սրտի կարծրութիւնը քրիստոնեաների, որ շատ յաճախ եսակենտրոն են եւ սեփական շահերի ետեւից են գնում: Ոչ թէ հաշիւներն ու օգուտը, այլ խոնարհ եւ անձնուրաց սէրն է Հօր բարեգթութիւնը շարժում, Քրիստոսի օրհնութիւնը եւ Սուրբ Հոգու առատութիւնը որպէս ընծայ ստանում: Աղօթելով եւ «մաքուր սրտով ջերմօրէն սիրելով միմեանց» (Հմմտ. Պետ. Ա. 22), խոնարհութեամբ եւ հոգու հնազանդութեամբ տրամադրուենք ստանալու միութեան աստուածային ընծան: Վճռականութեամբ շարունակենք մեր ընթացքը, վազենք դէպի մեր միջեւ ամբողջական հաղորդութիւնը:

«Իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. ձեզ չեմ տալիս այնպէս, ինչպէս այս աշխարհն է տալիս...» (Յովհ. Ժ. Դ. 27): Լսեցինք Աւետարանի այս խօսքերը, որ մեզ տրամադրում են Աստուծոց պաղատելու այն խաղաղութիւնը, որը աշխարհը ջանում է գտնել: Որքան շատ են այսօր խաղաղութեան ճանապարհին կանգնած խոչընդոտները, որքան ողբերգական՝ պատերազմների հետեւանքները: Մտածում եմ այն ժողովրդների մասին, որ ստիպուած են թողնել ամէն ինչ, յատկապէս Միջին Արեւելքում, որտեղ մեր եղբայրներն ու քոյրերը ենթարկւում են բռնութեան եւ հալածանքի՝ ատելութեան եւ հակամարտութիւնների պատճառով, գէնքի արտադրման եւ վաճառքի խարանից շարունակ հրահրուած, ոյժի դիմելու փորձութիւնից եւ մարդու հանդէպ յարգանքի պակասից, յատկապէս՝ տկարների, աղքատների եւ պատուարժան կեանք խնդրողների:

Չեմ կարող չմտածել սոսկալի փորձութիւնների մասին, որոնց միջով անցած է ձեր ժողովուրդը. հազիւ մի դար է անցել Մեծ Եղեռնից, որ իրագործուեց ձեր դէմ: Այս «անլուր եւ խոլ ջարդը» («Ուղերձ Սուրբ Պատարագի սկզբին՝ հայածէս հաւատացեալներին», 12 ապրիլի, 2015 թ.), անարդարութեան այս ողբերգական խորհուրդը, որ ձեր ժողովուրդը կրեց իր մարմնի վրայ, միշտ տպաւորուած է մնում յիշողութեան մէջ եւ այրում է սիրտը: Ուզում եմ շեշտել, որ ձեր տառապանքները նաեւ մերն են՝ «Քրիստոսի խոհրդաւոր մարմնի անդամների տառապանքներն են» (Յովհաննէս Պօղոս Բ., Առաքելական նամակ հայ ժողովրդի Մկրտութեան

1700- ամենակի առիթով. Ուսուցումներ, ԻԴ. 1, 275). յիշելը միայն պատեհ է, այլ՝ պարտադիր. բոլոր ժամանակների համար այն ազդարար պէտք է լինի, որ աշխարհը այլեւս երբեք չընկնի այդպիսի սխալների յորձանքի մէջ:

Յանկանում եմ միաժամանակ հիացմունքնով յիշել՝ ինչպէս քրիստոնէական հաւատը «Հայոց պատմութեան նոյնիսկ ամենաողբերգական պահերին մղիչ զսպանակն է եղած, որ նշեց տառապեալ ազգի վերանունդը (անդ, 276): Այդ է ձեր իրական ոյժը, որ թոյլատրում է Զատիկուն խորհրդաւոր եւ փրկարար ճանապարհին բացուելու. բաց մնացած եւ կատաղի ու անիմաստ ատելութիւնից պատճառուած վէրքերը կարող են որոշակիօրէն համեմատուել յարուցեալ Քրիստոսի վէրքերի հետ, այն վէրքերի, որ Նրան պատճառեցին եւ Նրա մարմնի վրայ դեռ դրոշմուած են: Նա, փառաւորուած, ցոյց տուեց դրանք աշակերտներին՝ Զատիկուն երեկոյեան (Հմմտ. Յովհ. Ի. 20)՝ խաչի վրայ կրած վէրքերի այդ սարսափելի ցաւերը: Այսպէս, նոյնիսկ ամենամեծ ցաւը, խաչի փրկագործ զօրութիւնից փոխակերպուած, որի մոլնետիկն ու վկաներն են հայերը, կարող է խաղաղութեան սերմ դառնալ ապագայի համար:

Յիշողութիւնը, սիրուց ներթափանցուած, արդարեւ նոր եւ զարմանալի արահետներով գնալու ատակ (կարողութիւն) է դառնում, որտեղ ատելութեան դաւերը փոխակերպուած են հաշտութեան ծրագրերի եւ կարելի է յուսալ լաւագոյն ապագայ բոլորի համար, ուր «երանի է խաղաղարարներին» (Մատթ. Ե. 9): Բոլորի համար բարերար կը լինի աջակցել ապագայի հիմքերը դնելուն, որ թոյլ չտրուի վրէժի խաբէական ոյժին ներծծուել. ապագայ, որտեղ երբեք չեն հոգնի ստեղծել խաղաղ պայմաններ՝ բոլորի համար արժանավայել աշխատանք, առաւել կարիքաւորների խնամատարութիւն եւ անխոնջ պայքար կաշառակերութեան դէմ, որ պէտք է արմատախիլ անել:

Սիրելի՛ երիտասարդներ, այս ապագան ձերն է. Ձեր մեծերի իմաստութիւնն ամբարելով՝ խաղաղարարներ դառնալու հնարաւորութիւնն էք ունենում՝ ոչ թէ որպէս ստատուս-քվոյի նոտարներ, այլ՝ հանդիպումի եւ հաշտութեան մշակոյթի դրական գործիչներ: Աստուած օրհնի ձեր ապագան եւ «օգնի, որ հայ եւ թուրք ժողովուրդների հաշտութեան ուղին կրկին ձեռք առնուի, ու խաղաղութիւն տիրի Ղարաբաղում» («Պատգամ հայերին», 12 ապրիլի, 2015 թ.):

Յանկանում եմ վերջապէս յիշել Քրիստոսի խաղաղութեան մեծ վկային ու գործչին՝ Սուրբ Գրիգոր Նարեկացուն, ում Եկեղեցու Վարդապետ հռչակեցի: Նա կարող էր հռչակուել նաեւ «խաղաղութեան Վարդա-

պետ»։ Նա այսպէս է գրել իր արտասովոր Գրքում, որ սիրում եմ անուանել «Հայ ժողովրդի հոգեւոր օրէնսգիրք»։ «Յիշի՛ր, Տէ՛ր, նրանց, ովքեր մարդկային ցեղում մեր թշնամիներն են, սակայն նրանց բարիքի համար. նրանց մէջ իրագործիր ներում եւ ողորմութիւն... Մի՛ վերացնիր նրանց, ովքեր ինձ կծոտում են. կերպարանափոխի՛ր։ Արմատախիլ արա աշխարհիկ ախտաւոր ընթացքը եւ տնկիր բարին իմ եւ նրանց մէջ» («Մատեան ողբերգութեան», ՁԳ. 1-2)։ Նարեկացին, «խորապէս գիտակից, մասնակից ամէն մեղքի» (անդ, Գ. 2), կամեցաւ բոլոր ժամանակների տկարների ու մեղաւորների հետ նոյնանալ՝ Տիրոջը պաղատելու, խնդրելու բոլորի համար (անդ, ԼԱ. 3, ԼԲ. 1, ԽԷ. 2). նա դարձաւ «ամբողջ աշխարհի աղօթամատոյցը» (անդ, ԻԸ. 2)։ Նրա՝ այսպիսի նոյնացումը մարդկութեան հետ, քրիստոնէական մեծ պատգամ է խաղաղութեան, ներդաշնակ ճիշդ, որ բոլորի համար ողորմութիւն է հայցում։ Տարբեր երկրներում գտնուող հայերը, որոնց եղբայրաբար գրկում եմ այստեղից, թող լինեն այս հաղորդակցութեան իղձի պատգամաբերներ, «խաղաղութեան դեսպաններ» (Յովհաննէս Պօղոս Բ., Առաքելական նամակ Հայ ժողովրդի Մկրտութեան 1700-ամեակի առիթով. Ուսուցումներ, ԻԴ. 1, 278)։ Ողջ աշխարհը կարիքն ունի ձեր այս քարոզչութեան, կարիքն ունի ձեր ներկայութեան, կարիքն ունի ձեր ամենաջինջ վկայութեան։ Խաղաղութիւն ամենեցուն։



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՀՈՌՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ
ՊԱՊԻ ԱՅՅԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

(Սուրբ Էջմիածին, 26 հունիսի, 2016 թ.)

Յանուն Հոր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

*«Եւ երբ Նա ցամաք ելաւ, տեսաւ բազում ժողովուրդ,
գլխաց նրանց եւ բռնկեց նրանց Հիւանդներին...»
(Մատթ. ԺԴ. 14):*

*Ձերդ Սրբութիւն՝ սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,
Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետութեան,
Հոգեւոր եղբայրներ եւ բարեպաշտ ժողովուրդ,*

*Առ Աստված փառաբանութեան օրեր են Սուրբ Էջմիածնում՝ Հոգեւոր
բերկրանքի եւ համատեղ աղոթքի առատութեամբ: Այսօր սուրբ Պատա-
րագի արարողութեան ենք համախմբվել՝ աղոթակցութեամբ Հռոմի Սրբա-
զան Քահանայապետ, Մեր սիրեցյալ եղբայր Ֆրանցիսկոս Պապի:*

*Խորհրդանշական է, որ սուրբ եւ անմահ այս Պատարագին որպէս ըն-
թերցված հնչեց հացի բազմացման սուրբգրական պատմութիւնը: Ավե-
տարանիչը պատմում է, որ երբ Հիսուս առանձնացավ, ժողովրդի բազ-
մութիւնը, իմանալով այս մասին, գնաց Նրա հետեւից: Եվ երբ Տերը
տեսավ հավաքված բազմութեանը, գլխաց նրանց եւ բռնկեց հիւանդներին:
Երեկոյան դեմ աշակերտները խնդրեցին Տիրոջից ժողովրդին ազատ ար-
ձակել, որպէսզի ուտելիք գտնեն: Քրիստոս նրանց պատվիրեց մարդ-
կանց կերակրել: Սակավ էր, սակայն, ուտելիքը, եւ Տերը օրհնեց այն, ու
հրաշքով առատացած հացը բավարար դարձավ, որպէսզի առաքյալները
կերակրեն հավաքված ողջ բազմութեանը:*

*Այս հրաշագործութիւնը աստվածային շնորհներով, տերունավանդ
ուսուցումներով քաղցյալ հոգիները հագեցնելու, նաեւ՝ գլխասրտութեամբ
կարիքավորներին օգնելու խորհուրդն ունի, որը դարձավ կարեւոր ծա-*

ռայություններից Քրիստոսի Սուրբ Եկեղեցու առաքելության: Տերը հորդորում է Իր հետեւորդներին հավատքը կենդանի դարձնել գործերով, աղոթքին ու պաշտամունքին զուգակցել ողորմություն ու գթասրտությունը, կարիքի եւ նեղությունների ամոքումը, որոնցով առաքյալի խոսքի համաձայն՝ գործակից ենք Աստծուն (Հմմտ. Ա. Կորնթ. Գ. 9): Այս տեսիլքով Եկեղեցու բազում մարգարեաշունչ հայրեր ու երանաշնորհ հայրապետներ, քաջ ու բարի հովիվներ, հավատքի անթիվ վկաներ ու բարեպաշտ հավատացյալներ դարեր շարունակ Քրիստոսի Եկեղեցու պատմության էջերը պատկերագրել են Աստծո խոսքի նվիրյալ քարոզությունը եւ ողորմածություն ու խնամատարություն մեծագործություններով, որպեսզի մարդիկ զորանան հավատքով եւ հավատքի գործերով վկայեն Աստծո ներկայությունը մարդկության կյանքում:

Այսօր առ Աստված հավատքը փորձության է ենթարկվում, եւ մարդկային հոգիները կարծրանում են ինչպես նեղությունների եւ դժվարությունների մեջ, այնպես եւ հարստության ու չքեղության, երբ անհաղորդ են հանապազօրյա հացին կարոտյալ, ցավի ու տառապանքի մեջ ապրող մարդկանց հոգսերին: Հավատքը փորձության է ենթարկվում ծայրահեղական եւ այլ գաղափարախոսություններով, այլատյացությունը, մոլուցքներով, գայթակղություններով, անձնակենտրոն շահերով: Ուժեղանում են աշխարհիկացման ընթացքները, խաթարվում են հոգեւոր-բարոյական ընկալումներն ու արժեքները, վտանգվում է ընտանիքի աստվածհաստատ կառույցը: Փորձել կառուցել աշխարհ առանց Աստծո, աղավաղել աստվածադիր օրենքն ու պատվիրանները, այս է ժամանակակից կյանքի չարիքի արմատը, որն առաջ է բերում տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնապահպանական ու տարաբնույթ խնդիրներ, որոնք օրեցօր խորանում են՝ սպառնալով մարդկության բնականոն կյանքին:

Այսուհանդերձ, աշխարհը չի դադարում լինել կենտրոնը աստվածային սիրո եւ խնամատարության: Տերը շարունակում է ձայնել. «Ես եմ կենաց հացը, ով դէպի Ինձ գայ, քաղց չի զգայ, եւ ով Ինձ հաւատայ, երբեք չի ծարաւի» (Յովհ. Զ. 35): Տիրոջ քաղցը վարդապետությունը ճաշակածը խոնարհվում է ընկածին բարձրացնելու, մարդկանց սրտերում հույսն ու հավատքը առատացնելու, հացի բազմացման հրաշքը կրկնելու՝ աջակցելով ու մխիթարելով կարիքավորներին, հիվանդներին ու վշտացյալներին: Տերունապատվեր այս ընթացքով, հոգեւոր եւ բարոյական արժեքները կենսագործելով է, որ բարին պիտի զորանա աշխարհում եւ հաղթահարվեն արդի մարտահրավերները: Բոլոր բարի գործերը արտա-



Տերը հորդորում է իր հետեւորդներին հավատքը կենդանի դարձնել գործերով, աղոթքին ու պաշտամունքին զուգակցել ողորմությունն ու գթասրտությունը, կարիքի եւ նեղությունների ամոքումը, որոնցով առաքյալի խոսքի համաձայն՝ գործակից ենք Աստծուն (հմմտ. Ա. Կորնթ. Գ. 9)
(Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց)



Խոնարհում եմ Տիրոջ ողորմութեան առաջ, որ կամեցաւ Հայաստանը լինել առաջին ազգը՝ 301 թուականին ընդունելով Զրիստոնէութիւնը որպէս իր կրօնը, այնպիսի ժամանակաշրջանում, երբ հռոմէական կայսրութեան մէջ դեռ բոլորքում էին հալածաքնները
(Հռոմի Սրբազան Բաժանապետ Ն. Ս. Ֆրանցիսկոս Պապ)



Տիրոջ քաղցր վարդապետությունը ճաշակածը խոնարհվում է ընկածին բարձրացնելու, մարդկանց սրտերում հույսն ու հավատքը առատացնելու, հացի բազմացման հրաշքը կրկնելու՝ աջակցելով ու մխիթարելով կարիքավորներին, հիվանդներին ու վշտացյալներին (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց)



Փորձել կառուցել աշխարհի առանց Աստծո, աղավաղել աստվածադիր օրենքն ու պատվիրանները, այս է ժամանակակից կյանքի չարիքի արմատը, որն առաջ է բերում տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնապահպանական ու տարաբնույթ խնդիրներ, որոնք օրեցօր խորանում են՝ սպառնալով մարդկության բնականոն կյանքին (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց)

Հայտնում են աստվածային խնամքը մարդկության ու աշխարհի հանդեպ՝ ըստ Տիրոջ խոսքի՝ «արքայութիւնը ներսում, ձեր մէջ է» (Ղուկ. ԺԷ. 21), որի Հաստատման Համար Եկեղեցիներն իրենց սպասավորւթյունն են բերում աշխարհում:

Սիրելիներ, այս օրերին Մեր Հոգեւոր եղբոր՝ Յրանցիսկոս Պապի հետ միասնական այցերով ու աղոթքներով վերստին հաստատեցինք, որ Քրիստոսի Սուրբ Եկեղեցին մեկ է աշխարհում Քրիստոսի Ավետարանի տարածման, արարչագործութեան հանդեպ խնամքի, համընդհանուր խնդիրներին դիմագրավելու, Աստծո ստեղծագործութեան փառքն ու պսակը հանդիսացող մարդու փրկութեան կենսական առաքելութեամբ: Քրիստոսի Եկեղեցու առաքելութեան անբաժանելի մասն է ազգերի եւ ժողովուրդների միջեւ ամրապնդումը համերաշխութեան, եղբայրութեան ու գործակցութեան, որի վկայութիւնն է այսօր սրբազան այս Պատարագին մասնակցութիւնը Հայաստանում ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչների՝ ասորիների, ռուսների, բելառուսների, հույների, վրացիների, հրեաների, եգիպտացիների, քրդերի, գերմանացիների, լեհերի, ուկրաինացիների, ովքեր մեր ժողովրդի հետ եղբայրական համակցութեան մեջ իրենց նպաստն են բերում մեր երկրի զորացմանն ու հասարակական կյանքի առաջընթացին:

Շնորհաշատ այս օրը գոհունակութիւն է Մեզ համար վերստին հայտնել Մեր շնորհակալութիւնը Յրանցիսկոս Պապին եղբայրական իր այցի առիթով: Մենք եւ մեր ժողովուրդը միշտ պիտի աղոթենք Ձեզ համար, սիրեցյալ եղբայր, եւ ի սեր մարդկության բարօրութեան ու խաղաղ կյանքի եւ Քրիստոսի Սուրբ Եկեղեցու պայծառութեան Ձեր ջանքերի համար: Թող Տերը պահի Ձեզ կորովաշատ, օրհնի ու հաստատուն պահպանի մեր Եկեղեցիները սիրո միութեան եւ գործակցութեան մեջ եւ պարգևի եղբայրութեան վկայութեան նորանոր առիթներ: Ձեր ամենօրյա աղոթքներում հիշեք հայ ժողովրդին, հայոց երկիրն ու Հայ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Աղոթական հոգով հայցում ենք Բարձրյալն Աստծո ամենախնամ Սուրբ Աջի պահպանութիւնն ու զորակցութիւնը պատերազմներից ու ահաբեկչութիւններից տուժածներին, սովի, աղքատութեան եւ փորձութիւնների մեջ գտնվողներին: Հայցում ենք մեր Տիրոջ ամենառատ շնորհները մեր կյանքին եւ համայն աշխարհին. ամեն:



**ՀՈՍՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ
ԽՕՍՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

(26 յունիսի, 2016 թ.)

Ձերդ Սրբութիւն,

Յոյժ սիրելի եպիսկոպոսներ,

Սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր,

Այս յոյժ ցանկալի եւ ինձ համար արդէն անմոռանալի այցի գագաթնակետին ուզում եմ առ Տէրը բարձրացնել իմ շնորհակալութիւնը՝ միացնելով այն այս Սեղանից բարձրացած փառաբանական եւ գոհաբանական մեծ աղօթքին: Այս օրերին Ձերդ Սրբութիւնն իր տան դռները բացեց մեր առջեւ, եւ զգացինք, թէ «որքան բարի, որքան վայելուչ է, որ եղբայրները բնակւում են միասին» (Սաղմ. ՃԼԲ. 1): Հանդիպեցինք, եղբայրաբար ողջագոլորուեցինք, միասին աղօթեցինք, կիսեցինք ընծաները, յոյսերն ու մտահոգութիւնները Քրիստոսի Եկեղեցու, որի սրտի միաձայն զարկերը լսում ենք, եւ հաւատացած ենք ու զգում ենք, թէ ասէ՛ք է: «Մէ՛կ մարմին եւ մէ՛կ հոգի, ինչպէս որ մէ՛կ է ձեր յոյսը... մէ՛կ Տէր, մէ՛կ հաւատ, մէ՛կ մկրտութիւն: Մէ՛կ Աստուած եւ Հայր բոլորի, որ վեր է բոլորից, բոլորի հետ եւ մեր բոլորի մէջ» (Եփ. Դ. 4-6). իրապէս, կարող ենք ուրախութեամբ մերը դարձնել Պօղոս առաքեալի այս խօսքերը: Հենց սուրբ Առաքեալների յիշատակին հանդիպեցինք. Ս. Բարդուղիմէոսը եւ Թադէոսը, որ առաջին անգամ Աւետարանը քարոզեցին այս աշխարհում, եւ Ս. Պետրոսն ու Պօղոսը, որ Հռոմում իրենց կեանքը զոհեցին Տիրոջ համար, մինչ երկնքում թագաւորում են Քրիստոսի հետ, վստահաբար, ուրախանում են՝ տեսնելով մեր սէրն ու ամբողջական հաղորդութեան ժրաջան ձգտումը: Այս ամենի համար շնորհակալ եմ Տիրոջը՝ ձեզ համար եւ ձեզ հետ. Փառք Աստուծոյ:

Այս Սուրբ Պատարագի ընթացքում հանդիսաւոր երեքսրբեանը բարձրացաւ երկինք՝ օրհնաբանելով Աստուծոյ սրբութիւնը. Ամենաբարձրեալի օրհնութիւնը թող առատօրէն իջնի երկիր՝ Աստուածամօր, մեծ սուրբերի եւ վարդապետների, մարտիրոսների եւ յատկապէս բազմաթիւ նահատակ-

ների բարեխօսութեամբ, որ անցած տարի այս վայրում սրբադասեցիք: «Միածինը, որ այստեղ իջավ», թող օրհնի մեր ճանապարհը: Սուրբ Հոգին բոլոր հաւատացեալներին պարգեւի մէկ սիրտ, մէկ հոգի. մեզ այցելի՝ միութեան մէջ վերահասարակելու: Ուստի՝ ցանկանում եմ մէկ անգամ եւս կանչել Նրան՝ իմը դարձնելով սքանչելի խօսքերէն որոշները, որ ձեր ծէս է մուտք գործել: Ե՛կ, Հոգի՛, Դու, «որ անմռունչ հեծութիւններով բարեխօս ես մեզ համար ողորմած Հօր մօտ, որ սրբերին պահում ես եւ մեղաւորներին մաքրում», թող իջնի մեր վրայ քո սիրոյ եւ միութեան կրակը, ու «այս կրակով հալին մեր գայթակղութեան պատճառները» (Հմմտ. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, ԼԳ. 5)՝ նախ եւ առաջ միութեան պակասը Քրիստոսի աշակերտների միջեւ:

Հայ Եկեղեցին թող խաղաղութեամբ ընթանայ, եւ մեր միջեւ խաղաղութիւնը կատարեալ լինի: Բոլորի մէջ ծնուի միութեան հզօր ցանկութիւն, այնպիսի միութեան, որ չլինի «ո՛չ ենթարկութիւն մէկը միւսին, ո՛չ կլանում, այլ՝ ընկալում շնորհների, որ Աստուած տուած է իւրաքանչիւրին՝ ողջ աշխարհին յայտնելու փրկագործութեան մեծ խորհուրդը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի կողմից իրագործուած՝ Սուրբ Հոգու շնորհիւ» (Սրբազան Հօր խօսքերը աստուածային ծիսակատարութեան ընթացքում, Սուրբ Գէորգ պատրիարքական եկեղեցի, Կ. Պոլիս, 30 նոյեմբերի 2014 թ.):

Սրբերի յորդորներն ընդունենք, լսենք խոնարհների ու աղքատների ձայնը, ատելութեան բազմաթիւ զոհերին, որ տառապեցին եւ իրենց կեանքը զոհեցին յանուն հաւատի. աւանջ դնենք նոր սերունդներին, որ անցեալի բաժանումներից ազատ ապագայ են խնդրում: Այս սրբատեղիից թող կրկին սփռուի ճաճանչափայլ լոյսը. այս երկրի լուսաւորիչի՝ ձեր Աւետարանի Հօր՝ Սուրբ Գրիգորի հաւատի լոյսին միանայ սիրոյ լոյսը, որ ներում եւ հաշտում է:

Ինչպէս Առաքեալները Զատիկուան առաւօտուն, տարակոյսներով եւ անվստահութեամբ, վազեցին յարութեան վայրը՝ նոր յոյսի երջանիկ արեւազալից դիւթուած (Հմմտ. Յովհ. Ի. 3-4), մենք եւս այս սուրբ կիրակիին հետեւում ենք Աստուծոյ՝ կատարեալ միութեան կանչին. արագացնենք մեր քայլերը:

Իսկ այժմ Սրբութիւն Աստուծոյ անունով խնդրում եմ, որ ինձ օրհնէք, օրհնէք ինձ եւ Կաթողիկէ Եկեղեցին, օրհնէք մեր այս ընթացքը դէպի կատարեալ միութիւն:



**COMMON DECLARATION
OF HIS HOLINESS KAREKIN II AND HIS HOLINESS FRANCIS
AT HOLY ETCHMIADZIN, REPUBLIC OF ARMENIA**

Today in Holy Etchmiadzin, spiritual center of All Armenians, we, Karekin II, Catholicos of All Armenians and Pope Francis raise our minds and hearts in thanksgiving to the Almighty for the continuing and growing closeness in faith and love between the Armenian Apostolic Church and the Catholic Church in their common witness to the Gospel message of salvation in a world torn by strife and yearning for comfort and hope. We praise the Most Holy Trinity, Father, Son and Holy Spirit, for enabling us to come together in the biblical land of Ararat, which stands as a reminder that God will ever be our protection and salvation. We are spiritually gratified to remember that in 2001, on the occasion of the 1700th anniversary of the proclamation of Christianity as the religion of Armenia, Saint John Paul II visited Armenia and was a witness to a new page in warm and fraternal relations between the Armenian Apostolic Church and the Catholic Church. We are grateful that we had the grace of being together, at a solemn liturgy in Saint Peter's Basilica in Rome on 12 April 2015, where we pledged our will to oppose every form of discrimination and violence, and commemorated the victims of what the Common Declaration of His Holiness John-Paul II and His Holiness Karekin II spoke of as "the extermination of a million and a half Armenian Christians, in what is generally referred to as the first genocide of the twentieth century" (27 September 2001).

We praise the Lord that today, the Christian faith is again a vibrant reality in Armenia, and that the Armenian Church carries on her mission with a spirit of fraternal collaboration between the Churches, sustaining the faithful in building a world of solidarity, justice and peace.

Sadly, though, we are witnessing an immense tragedy unfolding before our eyes, of countless innocent people being killed, displaced or forced into a painful and uncertain exile by continuing conflicts on ethnic, economic, political and religious grounds in the Middle East and other parts of the world. As a result, religious and ethnic minorities have become the target of

persecution and cruel treatment, to the point that suffering for one's religious belief has become a daily reality. The martyrs belong to all the Churches and their suffering is an "ecumenism of blood" which transcends the historical divisions between Christians, calling us all to promote the visible unity of Christ's disciples. Together we pray, through the intercession of the holy Apostles, Peter and Paul, Thaddeus and Bartholomew, for a change of heart in all those who commit such crimes and those who are in a position to stop the violence. We implore the leaders of nations to listen to the plea of millions of human beings who long for peace and justice in the world, who demand respect for their God-given rights, who have urgent need of bread, not guns. Sadly, we are witnessing a presentation of religion and religious values in a fundamentalist way, which is used to justify the spread of hatred, discrimination and violence. The justification of such crimes on the basis of religious ideas is unacceptable, for "God is not the author of confusion, but of peace" (*I Corinthians* 14: 33). Moreover, respect for religious difference is the necessary condition for the peaceful cohabitation of different ethnic and religious communities. Precisely because we are Christians, we are called to seek and implement paths towards reconciliation and peace. In this regard we also express our hope for a peaceful resolution of the issues surrounding Nagorno-Karabakh.

Mindful of what Jesus taught his disciples when he said: "I was hungry and you gave me food, I was thirsty and you gave me drink, I was a stranger and you welcomed me, I was naked and you clothed me, I was sick and you visited me, I was in prison and you came to me" (*Matthew* 25: 35-36), we ask the faithful of our Churches to open their hearts and hands to the victims of war and terrorism, to refugees and their families. At issue is the very sense of our humanity, our solidarity, compassion and generosity, which can only be properly expressed in an immediate practical commitment of resources. We acknowledge all that is already being done, but we insist that much more is needed on the part of political leaders and the international community in order to ensure the right of all to live in peace and security, to uphold the rule of law, to protect religious and ethnic minorities, to combat human trafficking and smuggling.

The secularization of large sectors of society, its alienation from the spiritual and divine leads inevitably to a desacralized and materialistic vision of man and the human family. In this respect we are concerned about the crisis of the family in many countries. The Armenian Apostolic Church and the Catholic

Church share the same vision of the family, based on marriage, an act of freely given and faithful love between man and woman.

We gladly confirm that despite continuing divisions among Christians, we have come to realize more clearly that what unites us is much more than what divides us. This is the solid basis upon which the unity of Christ's Church will be made manifest, in accordance with the Lord's words, "that they all may be one" (*John 17: 21*). Over the past decades the relationship between the Armenian Apostolic Church and the Catholic Church has successfully entered a new phase, strengthened by our mutual prayers and joint efforts in overcoming contemporary challenges. Today we are convinced of the crucial importance of furthering this relationship, engaging in deeper and more decisive collaboration not only in the area of theology, but also in prayer and active cooperation on the level of the local communities, with a view to sharing full communion and concrete expressions of unity. We urge our faithful to work in harmony for the promotion in society of the Christian values which effectively contribute to building a civilization of justice, peace and human solidarity. The path of reconciliation and brotherhood lies open before us. May the Holy Spirit, who guides us into all truth (cf. *John 16: 13*), sustain every genuine effort to build bridges of love and communion between us.

From Holy Etchmiadzin we call on all our faithful to join us in prayer, in the words of Saint Nerses the Gracious: "Glorified Lord, accept the supplications of Your servants, and graciously fulfil our petitions, through the intercession of the Holy Mother of God, John the Baptist, the first martyr Saint Stephen, Saint Gregory our Illuminator, the Holy Apostles, Prophets, Divines, Martyrs, Patriarchs, Hermits, Virgins and all Your saints in Heaven and on Earth. And unto You, O indivisible Holy Trinity, be glory and worship forever and ever. Amen".

Holy Etchmiadzin, 26 June 2016

His Holiness Karekin II

His Holiness Francis



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԵՒ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ
ՀԱՄԱՏԵՂ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ**

Այսօր համայն հայության հոգեւոր կենտրոն Սուրբ Էջմիածնում, մենք՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ֆրանցիսկոս Պապը, ընծայում ենք մեր մտքերը եւ սրտերը որպէս շնորհակալության տուրք Ամենակարողին՝ պայքարով քայքայված եւ սփոփանքի ու հույսի ծարավով լեցուն աշխարհում շարունակելու եւ մեծացնելու հավատի ու սիրո սերտ կապերը Հայոց Եկեղեցու եւ Կաթոլիկ Եկեղեցու միջեւ՝ փրկության ավետարանական ուղերձի իրենց համընդհանուր վկայությամբ:

Մենք փառաբանում ենք ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, բիրւիական Արարատի երկրում մեկտեղվելու հնարավորությունը մեզ ընձեռելու համար, որը կանգուն է որպէս վկայություն, որ Աստված է միշտ մեր պաշտպանությունն ու փրկությունը:

Գոհունակությամբ ու հոգեւոր ուրախությամբ ենք անդրադառնում, որ 2001 թվականին քրիստոնէությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով Հայաստան այցելեց Սուրբ Հովհաննես-Պողոս Բ. Պապը՝ որպէս Հայ եւ Կաթոլիկ եկեղեցիների եղբայրական ջերմ հարաբերությունների պատմության նոր էջի վկայություն: Մենք երախտապարտ ենք, որ շնորհն ենք ունեցել միասին լինելու Հռոմի Սուրբ Պետրոսի Մայր տաճարում, հանդիսավոր պատարագի ժամանակ, 2015 թ., ապրիլի 12-ին, որտեղ մենք մեր հանձնառությունն արտահայտեցինք հակադարձելու բռնության ու անհանդուրժողականության ցանկացած դրսեւորում՝ վերակոչելով այն, ինչ արդեն հաստատվել էր Հովհաննես Պողոս Բ.-ի եւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ստորագրված համատեղ հայտարարության մեջ, որ «մեկուկես միլիոն հայ քրիստոնյաների բնաջնջումն ընդհանրապես ընկալվում է իբրեւ Ի. դարի առաջին ցեղասպանություն» (Համատեղ հայտարարություն, Գարեգին Բ. եւ Հովհաննես-Պողոս Բ., 27 սեպտեմբերի, 2001 թ.):

Փառք Բարձրյալին, որ այսօր քրիստոնէական հավատը կենսունակ իրականություն է Հայաստանում, եւ Հայոց Եկեղեցին իր լիարժեք առա-

քելությունն է իրականացնում՝ եկեղեցիների միջև տիրող համագործակցության եղբայրական ոգով նեցուկ լինելով հավատացյալներին՝ զորակից, արդար եւ խաղաղ աշխարհի կերտման գործում: Ցավոք, մենք վկաներ ենք մեր աչքերի առաջ տեղի ունեցող մի մեծ ողբերգության՝ անթիվ անհամար անմեղ մարդկանց սպանությունների, Մերձավոր Արեւելքում եւ աշխարհի այլ ծագերում էթնիկ, տնտեսական, քաղաքական եւ կրոնական հիմքերի վրա զարգացող շարունակական բնույթի հակամարտություններով թելադրված տեղահանումների կամ պարտադրված ցավալի ու անորոշ աքսորների: Այդ ամենի արդյունքում կրոնական եւ էթնիկ փոքրամասնությունները դարձել են հալածանքների եւ դաժան վերաբերմունքի թիրախ, այն առումով, որ սեփական կրոնական համոզմունքի համար տառապելը դարձել է ամենօրյա իրականություն: Նահատակները պատկանում են բոլոր եկեղեցիներին, եւ նրանց տառապանքը «արյան էկումենիզմ» է, որը անդրանցնում է քրիստոնյաների միջև առկա պատմական բաժանումները՝ մեզ բոլորիս կոչելով նպաստելու Քրիստոսի առաքյալների տեսանելի միասնականությանը: Մենք, Սուրբ Առաքյալների՝ Պետրոսի եւ Պողոսի, Թադեոսի եւ Բարդուղիմեոսի բարեխոսությամբ, միասնաբար աղոթում ենք, որպեսզի սրտերի փոփոխություն տեղի ունենա բոլորի մեջ, նրանց, ովքեր գործում են այսպիսի հանցանքներ եւ նրանց, ովքեր իրենց դիրքի շնորհիվ կարող են կանգնեցնել բռնությունները: Մենք հորդորում ենք ազգերի առաջնորդներին՝ ունկնդրելու միլիոնավոր մարդկային արարածների կոչին, ովքեր խաղաղություն եւ արդարություն են տենչում աշխարհում, ովքեր հարգանք են պահանջում իրենց աստվածատուր իրավունքների նկատմամբ, ովքեր անհապաղ կարիք ունեն հացի, այլ ոչ թե զենքերի:

Ցավոք, մենք ականատես ենք կրոնի եւ կրոնական արժեքների արմատական դրսևորումների, որոնք կիրառվում են՝ ատելության, խտրականության ու բռնության տարածումն արդարացնելու համար: Նմանատիպ հանցանքների՝ կրոնական գաղափարներով արդարացումն անընդունելի է, քանի որ «Աստված խոտվության Աստվածը չէ, այլ խաղաղության» (Ա. Կոր. ԺԴ. 33): Ավելին, կրոնական տարբերությունների հանդեպ հարգանքն անհրաժեշտ պայման է էթնիկ ու կրոնական տարբեր համայնքների խաղաղ համակեցության համար: Եվ հենց քրիստոնյա լինելով է, որ մենք կոչված ենք խաղաղության ու հաշտության ուղիներ փնտրելու եւ իրագործելու: Այս իմաստով մենք հուսով ենք, որ Լեոնային Ղարաբաղին վերաբերող հարցերը կգտնեն խաղաղ լուծում:



Մենք հորդորում ենք մեր հավատացյալներին ներդաշնակ կերպով աշխատելու հասարակության մեջ քրիստոնեական արժեքների զորացման համար, որոնք արդյունավոր կերպով նպաստում են արդարության, խաղաղության եւ մարդկային համերաշխության քաղաքականության կառուցմանը
(*Համատեղ հռչակագիր*)



Հաշտության եւ եղբայրության ուղին բաց է մեր առաջ: Թող Սուրբ Հոգին, ով առաջնորդում է մեզ ամենայն ճշմարտության (հմմտ. Հովհ. Ժ2. 13), զորացնի ամեն ազնիվ ջանք, որ ուղղված է մեր մեջ սիրո եւ հաղորդության կամուրջների կառուցմանը (*Համատեղ հռչակագիր*)



Հիշելով այն ամենը, ինչ Հիսուս սովորեցրեց իր աշակերտներին, երբ Նա ասաց՝ «Ես սոված էի, եւ դուք ինձ հաց տվեցիք, ես ծարավ էի եւ դուք ինձ խմելու մի բան տվեցիք, ես օտարական էի, եւ դուք ինձ ընդունեցիք, ես մերկ էի, եւ դուք ինձ հագցրեցիք, ես հիվանդ էի, դուք ինձ այցելեցիք, ես բանտում էի, եւ դուք եկաք ինձ տեսության» (Մատթ. ԻԵ. 35-36), մենք խնդրում ենք մեր եկեղեցիների հավատացյալներին բացելու իրենց սրտերն ու ձեռքերը՝ օգնելու պատերազմի եւ ահաբեկչության զոհերին, փախստականներին եւ նրանց ընտանիքներին (Համատեղ հռչակագիր)

Հիշելով այն ամենը, ինչ Հիսուս սովորեցրեց Իր աշակերտներին, երբ Նա ասաց՝ «Ես սոված էի, եւ դուք ինձ հաց տվեցիք, ես ծարավ էի եւ դուք ինձ խմելու մի բան տվեցիք, ես օտարական էի, եւ դուք ինձ ընդունեցիք, ես մերկ էի, եւ դուք ինձ հագցրեցիք, ես հիվանդ էի, դուք ինձ այցելեցիք, ես բանտում էի, եւ դուք եկաք ինձ տեսության» (Մատթ. ԻԵ. 35-36), մենք խնդրում ենք մեր եկեղեցիների հավատացյալներին բացելու իրենց սրտերն ու ձեռքերը՝ օգնելու պատերազմի եւ ահաբեկչության զոհերին, փախստականներին եւ նրանց ընտանիքներին: Կարեւորվում է մեր մարդասիրության զգացումը, մեր գորակցությունը, կարեկցանքը եւ մեծահոգությունը, որոնք կարող են ճիշտ արտահայտվել միայն առկա նյութական պաշարների անհապաղ եւ գործնական նվիրատվությամբ:

Մենք ընդունում ենք այն, ինչն արդեն իսկ արվում է, բայց պնդում ենք, որ ավելին պետք է արվի քաղաքական առաջնորդների եւ միջազգային կառույցների կողմից, որպեսզի ապահովված լինի բոլորի՝ խաղաղության եւ անվտանգության մեջ ապրելու իրավունքը, պաշտպանված լինի օրենքի գերակայությունը, կրոնական եւ էթնիկ փոքրամասնությունների պաշտպանությունը, կանխված լինեն մարդկային թրաֆիքինգը եւ մաքսանենգությունը:

Հասարակության սովոր հատվածների աշխարհիկացումը, օտարումը հոգեւորից ու աստվածայինից, անխուսափելիորեն հանգեցնում են մարդու եւ մարդկային ընտանիքի ապաստարանմանն ու նյութապաշտական ընկալմանը: Այս առումով մենք մտահոգ ենք շատ երկրներում ընտանեկան կյանքի ճգնաժամով: Հայ եւ Կաթոլիկ եկեղեցիներն ընտանիքի մասին նույն ընկալումն ունեն, որը հիմնված է ազատ կամքով ու հավատարմությամբ ծնված սիրո արդյունք հանդիսացող տղամարդու եւ կնոջ ամուսնության վրա:


Մենք ուրախությամբ արձանագրում ենք, որ չնայած քրիստոնյաների միջեւ առկա բաժանումներին, այն, ինչ մեզ միավորում է, ավելին է, քան այն, ինչ մեզ բաժանում է, որի վրա էլ պետք է կառուցել Քրիստոսի եկեղեցու միությունը, ըստ Տիրոջ խոսքի, որ բոլորը մեկ լինեն (հմմտ. Հովհ. ԺԷ. 21): Վերջին տասնամյակներում մեր եկեղեցիների հարաբերությունները թեւակոխել են որակապես նոր փուլ՝ ամրապնդված լինելով համատեղ աղոթքներով եւ ժամանակակից մարտահրավերներին դիմագրավելու միասնական ջանքերով: Մենք այսօր համոզված ենք այս հարաբերությունների շարունակականության խիստ կարեւորության մեջ՝ երկուստեք առավել խորը եւ վճռական հանձնառությամբ ոչ միայն աստ-

վածաբանական մարզում, այլև աղոթական եւ գործնական համագործակցությամբ տեղական համայնքներում՝ լիարժեք հաղորդակցություն եւ միության հստակ արտահայտություններ կիսելու տեսլականով: Մենք հորդորում ենք մեր հավատացյալներին ներդաշնակ կերպով աշխատելու հասարակության մեջ քրիստոնեական արժեքների զորացման համար, որոնք արդյունավոր կերպով նպաստում են արդարության, խաղաղության եւ մարդկային համերաշխության քաղաքակրթության կառուցմանը: Հաշտության եւ եղբայրության ուղին բաց է մեր առաջ: Թող Սուրբ Հոգին, ով առաջնորդում է մեզ ամենայն ճշմարտության (հմմտ. Հովհ. ԺԶ. 13), զորացնի ամեն ազնիվ ջանք, որ ուղղված է մեր մեջ սիրո եւ հաղորդության կամուրջների կառուցմանը:

Սուրբ Էջմիածնից մենք կոչ ենք անում մեր բոլոր հավատացյալներին միանալու մեզ աղոթքով, Սուրբ Ներսես Շնորհալու խոսքերով. «Փառավորյալ Տեր, ընդունիր ծառաներիդ աղաչանքները եւ ի բարին կատարիր մեր խնդրանքները՝ բարեխոսությամբ Սուրբ Աստվածածնի, եւ Հովհաննես Մկրտչի, եւ Սուրբ Ստեփանոս Նախավկայի, եւ մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի, եւ սուրբ առաքյալների, մարգարեների, վարդապետների, մարտիրոսների, հայրապետների, ճգնավորների, կույսերի եւ Քո բոլոր երկնային ու երկրային սրբերի: Եվ Քեզ՝ անբաժանելի Սուրբ Երրորդությանդ, փառք եւ երկրպագություն, հավիտյանս հավիտենից, ամեն.»:

Ս. Էջմիածին, 26 հունիսի, 2016 թ.

Նորին Սրբություն Գաբեգին Բ. Նորին Սրբություն Ֆրանցիսկոս



ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ

պատմական գիտ. դոկտոր, ՄՄ

ԱՆԻԻ ՄԵՐՉԱԿԱ ԱՐՋՈԱՌԻՃԻ ՎԱՆՔԸ

Արջոառիճի վանքը գտնվում է Շիրակ գավառում՝ Ախուրյան գետից արեւմուտք՝ համանուն (նաեւ՝ Ալաջա անունով հայտնի) լեռան արեւելյան լանջին, այժմ քրդաբնակ Ալաջա գյուղից արեւմուտք՝ փոքրիկ ձորակի հարավային ափին: Այն Անի քաղաքը եռանկյունաձեւ շրջապատող երեք խոշոր վանքերից մեկն է. հյուսիս-արեւելքում Հոռոմոսն է՝ Բագրատունիների դամբարանավայր-վանքը (Ժ. դար), հյուսիս-արեւմուտքում՝ Բագնայրը (հիմնված 1010 թ.) եւ հարավ-արեւմուտքում՝ Արջոառիճը: Քաղաքի նկատմամբ բարձրադիր այս վանքից արեւելք նայելիս հեռվում երեւում է Անիի համայնապատկերը՝ միջնաբերդի կողմից¹:

Աղբյուրներում վանքը հիշատակվում է երկու անունով՝ Ս. Աստվածածին եւ Ս. Գրիգոր: Գլխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցու դիմաց կառուցված է եղել մեծ ժամատուն-գավիթ (ինչպես Հոռոմոսում եւ Բագնայրում): Իսկ Ս. Գրիգորը, դատելով 1298 թ. հիշատակարանից, վանքում գտնվող նշանավոր խաչ (խաչքար) է եղել: Այժմ վանական համալիրն ամբողջովին ավերված է:

Արջոառիճի վանքը, հավանաբար, հիմնադրվել է Բագրատունիների ժամանակ, սակայն նրա գլխավոր եկեղեցու եւ գավթի ավերակներում

¹ Բնակավայրի անունը գրականության մեջ նշվում է երկու ձևով՝ Արջո Առիճ կամ Արջոառիճ, սկզբնաղբյուրներում երբեմն՝ «Արջուառիճ», «Արջուառեւծ»: 2013 թ. հոկտեմբերի 2-ին մեզ բախտ վիճակվեց այցելելու Արջոառիճ, որը եւ առիթ դարձավ վանքի մասին սույն հոդվածով հանդես գալու: Նախկինում՝ ձեռագրական նյութերի ուսումնասիրությամբ, անդրադարձել ենք Արջոառիճում ԺԳ. դարում գործած վանական դպրոցին (Կ. Մաթևոսյան, Արջո Առիճի դպրոցը XIII դարում, ԼՀԳ, 1984, թ. 3, էջ 67-70):

պահպանված արձանագրությունները ԺԳ. դարից են (Հնագույնը՝ 1207 թ, վերջինը՝ 1289 թ.): Վանքը պատմիչների երկերում չի հիշատակվում, բայց բավականին հարուստ արձանագրություններ է ունեցել, որոնց մի մասը հրատարակել է Վենետիկի Մխիթարյան միաբան Ներսես Սարգիսյանը դեռեւս 1864-ին²: Հայտնի է, որ Ն. Սարգիսյանը, պատմական եւ մատենագրական հուշարձաններ որոնելու նպատակով, Հայաստանում ճամփորդել է 1843-1853 թվականներին, բայց թե երբ է եղել Արջոռիճում, ստույգ հայտնի չէ: Նա նշում է, որ իր այցելության նախորդ տարում տեղի եկեղեցին ու գավիթը փլվել էին, եւ ինքը վիմագրերի տեքստերն արտագրել է փլատակների մեջ պահպանված հատվածներից³:

Վանքի պատմության ուսումնասիրման համար երկու տեսակի սկզբնաղբյուրներ ունենք՝ վիմագրեր եւ ձեռագրերի հիշատակարաններ, իսկ տեղում եղած կառույցների մասին կարելի է դատել ուղեգրական եւ հնագիտական նկարագրություններից: Ստորեւ հերթականությամբ կներկայացնենք այդ աղբյուրների նյութերը:

Վիմագրական րեղիկություններ. Արջոռիճի արձանագրություններից երեւում է, որ այս վանքը անեցիների շրջանում մեծ ժողովրդականություն վայելող սրբավայր է եղել: Վանքի վիմագրերը հայագետներին հայտնի են հիմնականում Ն. Սարգիսյանի հրատարակությունից, սակայն, բարեբախտաբար, վերջերս հրատարակվեց նաեւ Աշխարհբեկ Քալանթարի՝ 1920 թ. տեղեկագիրը վանքի մասին, որտեղ մի քանի արձանագրություններ ներկայացված են նաեւ գրչանկարներով⁴:

Վիմագրերից դատելով՝ ԺԳ. դարի սկզբներին վանքը պատկանել է Գրիգոր եպիսկոպոսին: Նրանով սկզբնավորվել է Անիի եպիսկոպոսական մի տոհմ, որի ներկայացուցիչներն իրենց համարում էին Պահլավունի՝ սերված նշանավոր Վահրամ սպարապետից⁵:

Բազմաթիվ են հատկապես նվիրատվական արձանագրությունները, որտեղ հիշված՝ վանքին տրված ինչքի (կրպակներ, տներ եւ այլն) մեծ մասը գտնվել է Անիում: Վիմագրերից վաղագույնը 1207 թվականից է,

² Ն. Սարգիսյան, Տեղագրությունք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 190-208:

³ «Ամաւ առաջ անկործան կայր եկեղեցիս, այլ արդ մեծաւ մասամբ ի բոնութենէ տարերաց, որպէս ասեն, քայքայեալ է տաճարն աւանդատամբք հանդերձ, եւ խարխալեալ որմոյ ներքնագալթին, քարակոյտք անբաւական դիզեալ զեկեղեցեանս ներքոյ եւ արտաքոյ կիսով չափ բարձրութեան որմոցն...» (անդ):

⁴ Ա. Քալանթար, Հայաստան. Քարե դարից միջնադար, երկերի ժողովածու, (խմբ.՝ Արամ Քալանթարյանի), Երեւան, 2007, էջ 141-145:

⁵ Կ. Մաթևոսյան, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Երեւան, 2015, էջ 84-103:

որում հիշատակվում է, որ Հասանի որդի Պարսամոն, միաբանելով վանքին, տվել է սեփական այգին՝ Սասն անունով՝ ի հիշատակ իր եղբայր Խուրտի եւ ստացել Համապատասխան թվով (այդ մասը չի պահպանվել) պատարագներ⁶։ Հետաքրքրական է, որ Բագնայրում պահպանվել է այս մարդու՝ 1210 թվականի նվիրատվական մեկ այլ արձանագրություն, որտեղ նա նաեւ կոչվում է Օշականի ռայիս (գյուղապետ)՝ «ռախս մեծանուն գեղջն Աւշականո»⁷։

Արջոռուի թվակիր Հաջորդ՝ 1213 թ. արձանագրությունը թեպետ նվիրատվական է, սակայն կարեւոր վկայություն է պահպանել նաեւ վանքի առաջնորդ՝ վերը հիշատակած Գրիգորի մասին (որդի Աբուղամրի), որն այլ արձանագրություններում ներկայանում է որպես Պահլավունի, ավելի ուշ դարձել է Անիի եպիսկոպոս, իսկ դարի 30-ական թվականներին հիշատակվում է նաեւ Գրիգոր Մազիստրոս անունով⁸։ Հենց այս գործչի, որպես առաջնորդի, առաջին հիշատակությունն ենք տեսնում Արջոռու-ճում 1213 թ.։ Իսկ արձանագրությունն այն մասին է, որ Հովհաննես քահանան՝ Հոռոմեանց Կոստանդին քահանայի որդին (որը, ի դեպ, 1215 թ. նվիրատվական արձանագրություն ունի նաեւ Բագնայրի վանքում)⁹, ինչ-որ արժեքավոր բան է գնել (ցավոք, այդ հատվածը չի պահպանվել) ու նվիրել վանքին. «...գանձագին արարի... եւ ընծայեցի յԱրջոռու, ի Ս(ուրբ) Ա(ստուա)ծածինս, ի ձեռն տ(է)ր Գրիգորի որդոյ Ապուղամրի», որի դիմաց ստացել է ամեն տարի 40 օր-ժամ պատարագ¹⁰։

Վանքում եղել է նաեւ մի անթվական արձանագրություն՝ գրված Գրիգորի վանահայրության ժամանակ։ Այն բովանդակությամբ կանոնական է եւ վերաբերում է վանքի միաբանների մահվան ժամանակ նրանց հա-

⁶ Այս եւ հաջորդ արձանագրություններում համառոտագրությունները բացում ենք կոր փակագծերում, իսկ բացակայող տառերի՝ մեր կատարած լրացումները նշում ուղիղ փակագծերում. «ԹՎ. ՌԾԶ (1207) [ողորմութեամբն Ա(ստուծոյ) եւ՝ Պարսամա ծառայ Բ(րիստոս)ի, որդի Հասանա... միաբանեցա ս(ուր)բ ուխտիս եւ ետու զիմ հայրենի ալյգին որ] կոչի Սասն, յիշատակ եղբարն իմո Խուրտ[ին], սպասաորք ս(ուր)բ ուխտիս փոխարէն հատ[ուցեն]... զտանին զելեղեցիս զողջ անխափան... թին եւ կէսն՝ Խուրտին, որք հաստատուն [լաւեն]... յրկան հեգի եւ հանդարտի...» (Ն. Մարգիսեան, նշվ. աշխ., էջ 190)։

⁷ Անդ, էջ 179-180. Կ. Մաթեոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, Երեւան, 2010, էջ 77։

⁸ Կ. Մաթեոսյան, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, էջ 84-103։

⁹ Ն. Մարգիսեան, նշվ. աշխ., էջ 183-184. տե՛ս նաեւ Կ. Մաթեոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 79։

¹⁰ Վիճագրում Հովհաննեսը նշում է, թե ում որքան պատարագ է հատկացվել. «...փոխարէն ինձ տացին յամէն ամի Խ (40) ար ժամ անխափան՝ Ի (20) ինձ, Ե (5) Սիրվարդին, Դ (4) Խաչերեսին, Ե (5) իմ ծնողաց, Բ (2) Խոցաղեղին, Գ (3) Միխայիլ, Ա (1) Կատային...» (Ն. Մարգիսեան, նշվ. աշխ., էջ 190-191)։

մար մատուցվող պատարագների թվին: Նման բովանդակությամբ ու կառուցվածքով արձանագրություններ են գրվել նաեւ Հռոմոսում (1195 թ.), Հառիճում (1214 թ.), Բագնայրում (1215 թ.), որոնց ուսումնասիրությամբ զբաղվել է հմուտ վիմագրագետ Գագիկ Սարգսյանը¹¹: Արջոառիճի արձանագրությունը, հավանաբար, ժ. Գ. դարի 10-ական թվականներին է գրվել.

«Հրամանաւ Տ(եառ)ն Գրիգորո [եպ]իսկոպոսի, որ էր ժառանգորդս (ուր)բ ուխտիս եւ բնակիչք վանացս՝ հայր Գրիգոր, վարդապետս Գերսամս եւ եղբարքս սահման եղաք յիշատակ ննջեց [ելոց] մինչեւ ցվերջինսն, որք միաբան ի ս(ուր)բ ուխտս հանգուցեալ են՝ պատարագել զՔ(րիստո)ս [հանապ]ազ Յայտնութեան զպահքն Ը (8) աւր անխափան զամենայն եկեղեցիքս եւ միա[բ]անին, որ ի Ք(րիստո)ս փոխի՝ հաւրն եւ վարդապետին՝ Դ (4), Խ (քառասունք), եւ իրիցոյն եւ բնաբեղին Գ (3), Խ (քառասունք), եւ աշխարհական հաբեղային եւ մանգանն Բ (2), Խ (քառասունք). եւ ամենայն եղբայր աւր Ա (1) ժամ արասցէ, եւ որ պատարագող չէ, ժ (10) կանոն աղաւթս արասցէ. որք հաստատուն պահեն զգրեալս՝ աւրհանին եւ մասնակից եղիցին ս(ուր)բ պատարագացս»¹²:

Ինչպես տեսնում ենք՝ նշված շրջանում, վանահորից բացի, միաբանությունն ունեցել է նաեւ մեկ այլ հեղինակավոր վարդապետ՝ Գերսամ անունով: Արձանագրությունը պատկերացում է տալիս նաեւ տվյալ ժամանակաշրջանում վանական միաբանության կազմի մասին, որոնք, ըստ նրանց համար մատուցվող պատարագների թվի, աստիճանակարգվում են հետեւյալ կերպ՝ վանահայր եւ վարդապետ (4 քառասունք), երեց եւ բնաբեղա (3 քառասունք), աշխարհական աբեղա եւ մանուկ (2 քառասունք): Ի դեպ, համանման արձանագրություններում մանկան վերաբերյալ միայն այստեղ է նշվում:

Հատկապես հետաքրքիր է անթվական արձանագրություններից եւս մեկը (գավթի հյուսիսային պատի արեւմտյան պատին), որը ներկայացնում է վանքի՝ Անի քաղաքում ունեցած սեփականության մի ցանկ: Նման մի արձանագրություն կա նաեւ Հռոմոսի վանքում. այն սկսվում է հետեւյալ բառերով՝ «Հռոմոսին վանացս հայրենիք, որ ի քաղաքին այս են...», ապա հաջորդում է թվարկումը: Արջոառիճում նշված անշարժ գույքի՝ քաղաքում (Անիում) գտնվելու մասին բառացի չի նշվում, բայց թվարկումը պարզորոշ վկայում է այդ մասին: Արձանագրությունը հետեւ-

¹¹ Գ. Սարգսյան, Միջնադարյան կանոնադրական նորմերի վիճակն արտացոլումներ, ՊԲՀ, 2006, թ. 2, էջ 128-129:

¹² Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 191. հմմտ. Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 128-129:

յալն է. «Յանուն Ա(ստուծո)յ. Հայրենիք, որ կայ վանիցս, այս է. Բաջախին բուրբն եւ ախ/ոռն, եւ զպատարագ՝ Բ (2) աւր՝ Լոյսոտին, եւ Բ (2)՝ Խաչոտին եւ Բ (2)՝ ծնողաց նոցա¹³: /Փռլկակարոց¹⁴ կուղպակն եւ տունն ի ներքեն, Զ (6) աւր պատարագ՝ Գ (3) աւր Բունկա/նն¹⁵ եւ Գ (3)՝ Մխիթարչին: Աբղմսեհէ տանն՝ Գ (3) աւր ժամ, Յոհաննիսի տանն՝ աւր Գ (3) ժամ / Բ (2) իւրեանն եւ Ա (1)՝ իւր հաւրն: Սառաճփողոցին կուղպակն՝ Դ (4) ժամ Բ (2) աւր Շնահոլ/որկանն եւ Բ (2)՝ Գէորգա: Եւ Գեղիմին¹⁶ Բ (2) տուն եւ տան տեղ մի՝ Գ (3) աւր ժամ Գանգատին, / եւ տակառքն¹⁷ Բ (2) աւր ժամ Պետրոսայ: Ես Լիսոտս այլ ետու Գ (3) / արտ եւ տան ինձ Գ (3) ժամ»¹⁸:

Այս արձանագրության տակ, որպես շարունակություն, եղել են, ամենայն հավանականությամբ, ԺԳ. դարին պատկանող նվիրատվական այլ վիճագրեր, ըստ որոնց՝ Ապահերթի որդի Գրիգորը նվիրել է Անիի Կաթողիկեի (Մայր տաճարի) մոտ գտնվող տունն ու ստացել 4 պատարագ իր եւ մերձավորների համար¹⁹, Մխիթար ճոնի (կաշեգործ, գլխարկ կարող) որդի Առյուծը նվիրել է սեփական երկու արտն ու երկու պատարագ ստացել իր եւ կնոջ համար՝ Հռիփսիմյանց տոնին²⁰, ոմն Հազարագեղ նվիրել է

¹³ Հատվածից երևում է, որ Լուստը (Լոյսոտ) եւ Խաչոտը եղբայրներ են: Նկատենք՝ Անիի պարսպի բուրգերից մեկի վրա պահպանվել է արձանագրություն, ըստ որի՝ Շահնշահ Ա.-ի ժամանակ այն կառուցել է Գրիգորի որդի Լուստը: Վիճագրության ժողովածուի մեջ այն պայմանականորեն «Լուստոյի բուրգ» է կոչվում (Դիվան Ա., էջ 6): Հայտնի է, որ Անիի պարսպաբուրգերն օգտագործվում էին որպես պահեստներ, որոնց կից նաեւ ախոռներ էին լինում: Ըստ երեւոյթին, Արջոտիճին պատկանած անշարժ գույքը հենց պարսպաբուրգի (Բաջախին բուրք) ներքին տարածքն ու կից ախոռն է եղել, որի նվիրատվության դիմաց Լուստը եւ Խաչոտն իրենց ու ծնողների համար 6 պատարագ են ստացել:

¹⁴ Նշանակում է արձագագործ-ոսկերիչ (տե՛ս Ս. Ավագյան, Վիճական արձանագրությունների բառարանություն, Երեւան, 1978, էջ 86):

¹⁵ Ա. Քալանթարյանի աշխատության մեջ՝ «Բոնկան» (նշվ. աշխ., էջ 142):

¹⁶ Ն. Սարգիսյանի աշխատության մեջ առկա «Եգեղիմին» ձեռնի ծանոթ լինելով՝ Ս. Ավագյանը ենթադրել է, որ այստեղ, որոշ փոփոխությամբ, «այգեղեմի» բառն է նշված (Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 74):

¹⁷ Տակառք, Անիում այդպես են կոչվել գինու մատանները (Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 313, 315):

¹⁸ Ա. Քալանթար, նշվ. աշխ., էջ 141-142. Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 191-192:

¹⁹ «Գրիգոր որդի Ապահերթի ետ տուն վանիցս՝ մաստ ի Ս(ուր)բ Կաթո/ղիկէ, ի հիսիս կոյս/ եւ առ ժամ ի տարին Ա (1)՝ իւր հարն, Ա (1)՝ Մարեմկանն, Ա (1) Եղբայր/կանն եւ Ա (1) իւրն անխափան» (Ա. Քալանթար, նշվ. աշխ., էջ 143): Ն. Սարգիսյանի աշխատության մեջ նվիրատուի հոր անունը Ապահերթ է (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 192):

²⁰ «Ես Առիծս որդի Մխիթարա ճոնին ետու զիմ հայրենի Բ (2) արտերն, որ ի յա.. ցի ակս է, ի ս(ուր)բ ուխտս եւ փոխարէն հատուցին ս(ուր)բ եղբարքս Բ (2) ար պատարագ ի տանի Հռիփսիմեանց յամէն ամի՝ Ա (1) ինձ, Ա (1) Նուրթէ, կատարիչքն արինին ի Ք(րիստոս) է» (Ա. Քալանթար, նշվ. աշխ., էջ 143. Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 192):



Նկ. 1. Արշոառիճի վանքը հյուսիսային ձորակի կողմից

Նկ. 2. Ավերակները արևելյան կողմից



Նկ. 3. Ընկած գմբեթի հատված, շատ հեռվում՝ Անին
 Նկ. 4. Ավերակները հարավային կողմից

վանահայրն ու եկեղեցու սպասավորները պարտավորվում են ամեն տարի Աստվածածնի ավետման տոնին պատարագել ութ օր²⁶:

Վանքի ավերակներում Ա. Քալանթարն ընդօրինակել է եւս երկու վիմագրեր, որոնք չկան Ն. Սարգիսյանի աշխատության մեջ: Առաջինը ոմն Սարգսի նվիրատվական արձանագրության հատվածն է²⁷, իսկ երկրորդում, նվիրատվությունից բացի, նշվում է Ս. Աստվածածին եկեղեցու աջ եւ ձախ կողմերում խաչքարերի կանգնեցման մասին: Յավոք, տողերի վերջնամասի քարերը թափված են, անավարտ բառերը փորձել ենք վերականգնել. «Ես Քրիստափոր մեղուցեալ... ին/ մեծ աշխատութ(եամ)ք ի Ս(ուր)ք ուխտս յԱրջուառ[ճոյ].../ [շուրջ]անակի, եւ կանգնեցի ի սմա Բ (2) խաչս յաջմէ եւ յ[ահեկէ Սրբոյ] / Ա(ստուած)ածնիս եւ ետու ... եւ խաչ արծա[թի]... / եւ հատուցին ինձ Զ (6) աւր պատարագ... / ...Ա (1) իմ եղբարցն, Ա (1) Տիկ... / եւ Յակոբա: Որք հաստատուն.../ խափանէ.../եւ զ...»²⁸:

Ներսես Սարգիսյանի եւ Ա. Քալանթարի հավաքած արձանագրություններից բացի՝ մեկ այլ վիմագրի հատված է վկայաբերում Կյուրեղ Սրապյանը 1878 թ. իր կազմած տեղեկագրում՝ նշելով, թե գավթից եկեղեցի տանող «կամարակապ դռան վերայ հետեւեալ բառեր միայն կկարդացուեն. «...պատիւ եւ հոգեւոր տեառն Գրիգորի արհի եպիսկոպոսի, առաջնորդի...»²⁹: Սա, ամենայն հավանականությամբ, Աբուղամարի որդի Գրիգորի մի արձանագրությունից է՝ գրված այն ժամանակ, երբ նա արդեն արքեպիսկոպոս եւ Անիի երեցապետ եպիսկոպոսն էր:

Ինչպես տեսնում ենք՝ վիմագրերում հիշատակվում են վանքին կատարված բազմաթիվ նվիրատվություններ՝ այգիներ, հողեր, Անիում գտնվող տներ, կուղպակներ եւ այլն: Արձանագրություններում պահպանվել են նաեւ վանքի երեք վանահայրերի անունները. 1207-1213 թթ.՝ Գրի-

²⁶ «Շնորհին Ք(րիստոս)ի եւ Որդեկ երէց Կողբացի, որդի Դաթի, թոռն Պառաւ իրիցոյս միաբանեցայ Ս(ուր)ք ուխտիս Արջուառջոյ եւ ետու ընծա ի Ս(ուր)ք Լուսաւորիչս Գրիգոր զիմ հայրենի այգին, որ ի Կողբ է, որ Պառաւնց կոչի եւ զներքն տունն, որ եւ շինե(ա)լ եմ, եւ փոխարէն հատուցին մեզ հայր Անդրէաս եւ այլ սպասատոք յամենայն ամի պատարագ ի տանի Ա[ւետ]ե[ւ]յց Ա(ստուած)ածնին. Ը (8) ար՝ Բ (2) իմ հարս..., Ա (1) իմ մարն Թագոնէ, Ա (1) կենակցի իմ՝ Մամսթէ, Բ (2) ազաց իմ յորոսնու, Բ (2) ինձ՝ Որդեկիս, եւ որք յիշատակս մեր հաստատ պա[հեն] արինին յԱ(ստուծոյ) եւ որք խաբանեն որոշին ի Ք(րիստոս)է: ՉԼԸ (1289). Իմ բազում մեղաց թողութի(ւն) արարէք» (Ա. Քալանթար, նշվ. աշխ., էջ 144. Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 192):

²⁷ Յավոք, առաջին մասում պահպանված տառերով բառ չի կազմվում, բայց նվիրատու Սարգսի անվանը հաջորդող «դուր...» հատվածը, կարծում ենք, կարելի է վերականգնել «դուրգար» (հյուսն) ձեւով. «...սկը էրնս Սարգիս դուր[գար] / իսմա որդիս էտու զիմ/ հայրէնի կողն առ...» (Ա. Քալանթար, նշվ. աշխ., էջ 144):

²⁸ Անդ, էջ 145:

²⁹ «Մի տեղեկագիր Կարսի մարզի վերաբերյալ», ԲՀԱ, 1970, թ. 2, էջ 111:

գործ՝ որդի Աբուղամրի, 1289-ին՝ Անդրեաս, եւ Վարդան, որը, կարծում ենք, ժամանակով նախորդ երկուսի միջեւ պիտի լինի:

Ցավով պետք է նշել, որ Արջոռուի վանքում եղած վիմագրական այս ծավալուն ժառանգությունն այժմ ամբողջովին ոչնչացված է: 2013 թ.՝ մեր այցելության ժամանակ, վանքի ավերակներում վերը նշված արձանագրություններից որեւէ մեկի քարաբեկորն անգամ չհաջողվեց գտնել: Վանքի արեւմտյան մուտքի մոտ՝ գետին ընկած պարզ խաչաքանդակով կոտրված մի քարի վերին ձախ անկյունում, մնացել էր միայն մեկ համառոտագրված անուն՝ «Ք(րիստո)ս»³⁰:

Բուն վանքում եղած վիմագրերից բացի՝ Արջոռուի հիշատակվում է նաեւ Մրենի ու Անիի երկու արձանագրության մեջ: Ուշագրավ է, որ Մրենի Կաթողիկէ եկեղեցու հարավային պատին պահպանված՝ նշանավոր մեծատուն Սահմաղինի 1273 թ. արձանագրությունը վերաբերում է Արջոռուի վանքի՝ այդտեղ եւ Օշականում գտնվող այգիների՝ որոշ հարկերից ազատվելուն: Սահմաղինն այդ ժամանակ գնել էր Մրենը, ուստի արձանագրությունն այստեղ է թողել՝ որպէս տեղի սեփականատեր, իսկ բարեգործությունը կատարել է իր արեւատության եւ մեղաց թողության համար³¹:

Ուշագրավ է Անիի արձանագրությունը, որը պահպանվել է Ախուրյան գետի կամրջից դեպի քաղաք բարձրացող ճանապարհի վրա գտնվող մուտքի պարսպաբուրգի վրա եւ պատկանում է անեցի Սարգիս Ծիլենց բաժրարին: Արձանագրությունը հետեւյալն է. «Շնորհիւ եւ ողորմութեամբ Ա(ստուծո)յ ես՝ Սարգիս Ծիլենց բաժրարս, թողի զԱրջոռու Սուրբ Գրիգորի զբաժն՝ մեծ եւ փոքր, վասն հանկըստեան պատրոնին մերո Շահնշահի, եւ Ա(ստուա)ծատուր զաւակացն՝ Զաքարիայի եւ եղբարց նորայերկարկենդանութեան: Էթէ ոք զյիշատակս խափանէ նզովեալ եղիցի յամենակալէն Ա(ստուծո)յ. հաստատուն պահողք աւրհնին յԱ(ստուծո)յ»³²: Վիմագրության դիվանում արձանագրության թվականը նշված չէ, սա-

³⁰ Կ. Մաթեոսյան, Վիմագրական նշխարներ Արեւմտյան Հայաստանից, «Էջմիածին», 2015, Դ., էջ 145, նկ. 5:

³¹ «Թուականին ՉԻԲ (1273) ողորմութեամբն Ա(ստուծո)յ ես պարոն Սահմաղինս ազատեցի զսուրբ ուխտն Արջվառջոյ այգիքն Մրենո եւ Աւշականո ի խալալէ եւ յաւելորդ հարկէ, որ բնական ազատ էր: Ոչ ամիրին, ոչ ձեռնաւորին, ոչ ում ձեռն չկայ ի վերայ, վասն արեւշատության որդե(ա)ց իմոց եւ քաւութեան մեղաց մերոց...» (И. Орбели, Надписи Мрена, «Հայագիտական հետազոտություններ», Երեւան, 1974, էջ 39, գրչանկարը եւ լուսանկարը տես Ս. Կարապետյան, Մրենը եւ նրա հուշարձանները, «Վարձք», 2012, թ. 7, էջ 58-59):

³² «Դիվան հայ վիմագրության», պր. Ա., կազմ.՝ Հ. Օրբելի, Երեւան, 1966, էջ 3:

կայն Ղ. Ալիշանի գրքում բերված է վիմագրի գծապատկերը, որի սկզբում ԶԿԹ. (1320) թվականն է³³: Դա համապատասխանում է նաեւ Շահնշահ Բ. Զաքարյանի մահվան թվականին, որի «հանկըստեան» եւ նրա որդիների «երկարկենդանութեան» համար էլ Սարգիս Ծիլենցը կատարել է իր բարեգործությունը³⁴:

Արջոառիծի պատմության համար այս արձանագրությունն արժեքավոր է երեք առումով. առաջինն այն է, որ վանքը որոշակիորեն հանդես է գալիս որպես տնտեսական միավոր, որի՝ վաճառքի համար քաղաք ուղարկված ապրանքը Սարգիս Ծիլենցի արտոնագրի շնորհիվ ազատվում էր մաքսային մեծ եւ փոքր հարկերից: Երկրորդ՝ եթե բուն վանքի վիմագրերում պահպանված վերջին թվականը 1289-ն է (ինչպես ստորեւ կտեսնենք՝ հիշատակարաններում՝ 1298-ը), ապա այստեղ տեսնում ենք Արջոառիծի գործուն վիճակը 1320 թվականին: Երրորդ՝ այս արձանագրության շնորհիվ կարելի է ասել, որ Արջոառիծից Անի գալու ճանապարհն անցել է քաղաքային վերոնշյալ մուտքով, այսինքն՝ քաղաքի մոտ գտնվող Ախուրյանի կամրջով: Սա էլ իր հերթին նշանակում է, որ Արջոառիծից եղել է դեպի արեւելք տանող մի ճանապարհ, որով ընթանալով՝ Անի եկողներն անցել են Ախուրյանի ձախ ափը, ապա գետի հունով վեր բարձրանալով՝ արդեն Անիի մոտ անցել կամուրջը եւ քաղաք մտել «Սարգիս Ծիլենցի» դռնով:

Հիշարձանային րեղեկություններ. Արջոառիծի մասին վկայություններ են պահպանվել ԺԳ. դարի երեք հիշատակարաններում: Առաջինը նշանավոր «Հաղթատի ավետարանից» է (Մատենադարան, ձեռ. թիվ 6288)՝ ձեռագիր, որը 1211 թ. բնիկ անցի Սահակ քահանան գրել է տվել Հաղպատի վանքում, որտեղ ուսանում էր, ապա նկարագրողելու համար բերել է Անիի Բեխենց վանք, կազմել տվել Հոռոմոսի վանքում, որից հետո մատյանն իր ու հայրական ընտանիքի անունից նվիրել Արջոառիծին՝ այստեղ գտնվող իրենց նորաշեն տոհմական եկեղեցուն:

Զեռագրի հիշատակարանում ստացողի անունից ասվում է. «Ո՛վ լուսերամ բնակիչք սրբոյ ուխտիդ Արջուառի, առ որ զլոյս հաւատոյ մեր եղեալ, զբովանդակ գոյք ծնողաց մերոց եւ եղբարց ծախեցաք եւ շինեցաք զաստուածաբնակ սուրբ եկեղեցիքս եւ աւանդեցաք զսուրբ Աւետարանս յԱստուծոյ սուրբ եկեղեցիս, որ շինեցաւ ի մէնջ, ի վանս Արջուառի, որպէսզի սուրբ եկեղեցեաւս եւ սուրբ Աւետարանաւս՝ մեք եւ ծնաւդքն մեր եւ եղբարք եւ ազգականք գտաք ողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մե-

³³ Ղ. Ալիշան, Երբակ, Վենետիկ, 1881, էջ 74:

³⁴ Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 56:

րոյ...»³⁵: Ինչպես տեսնում ենք՝ այստեղ խոսվում է Ավետարանի նվիրատվության, Սահակ Անեցու ընտանիքի միջոցներով Արջոռուի ձեռնարկում «եկեղեցիներ շինելու», որը պետք է նորոգման իմաստով հասկանալ, եւ վանքում մի առանձին տոհմական եկեղեցի կամ մատուռ կառուցելու մասին:

Սահակ Անեցու ստացած մատյանը, որն Անիի մանրանկարչության բացառիկ արժեքավոր օրինակ է, երկար չի մնացել Արջոռուի ձեռագրի մեկ այլ հիշատակարան վկայում է, որ 1223 թ. Սարգիս անունով քահանան Ավետարանը տեսել է Անիի գավառում («գտեալ զսա ի գաւառին Անոյ...») եւ այն ձեռք բերելով՝ ուղարկել իր հայրենի գավառ՝ Մեծկոմանաց եպիսկոպոսարան (Արցախում)³⁶:

Արջոռուի մասին վկայող երկրորդ հիշատակարանը պահպանվել է մի պատահիկի վրա, որը հին Ավետարանի մեկ թերթ է (Մատենադարան, ձեռ. թիվ 1501, պահպանակ): Հետագայի հիշատակարանը, հավանաբար, 1236 թ. մոնղոլական ավերիչ արշավանքից հետո է գրվել, քանի որ այնտեղ նշվում է՝ ձեռագրի ստացող Աստվածատուր քահանայի մտերիմները նահատակվել են թաթարների ձեռքով («որ նահատակեցան ի տաթարէն...»): Շատ հետաքրքիր է, որ Աստվածատուրն իրեն կոչում է Արջոռուի ուխտի աշակերտ, եւ որ նա այդ մատյանը նվիրել է վանքին: Յավոք, հիշատակարանը շատ վնասված է, պահպանված մասում կարդացվում է հետեւյալը. «...նուստ եւ անարժան քահանա, աշակերտ եւ [սպասաւոր սուրբ] ուխտիս Արջոռու, որ ի դրան մայրաքաղաքիս Անոյ, որ աւանդեցի զսուրբ [Աւետարանս] ի նորին յուխտս յիշատակ ինձ եւ ծնողաց մերոց եւ եղբարց եւ վարդապետաց...»³⁷:

Այստեղ ուշադրավ է նաեւ, որ Արջոռուի ձեռագրում է Անիի դռները, այսինքն՝ քաղաքին շատ մոտ գտնվող վանք: Իսկ վանական դպրոցի մասին տեղեկությունը լրացվում է նաեւ հաջորդ հիշատակարանով:

Բուն Անիում ամբողջովին գրված՝ մեզ հասած եզակի ձեռագրերից է այժմ Սանկտ Պետերբուրգում (Ռուսաստանի ԳԱ Արեւելյան ձեռագրերի ինստիտուտ, B 44) պահվող 1298 թ. Ավետարանը, որը նույն թվականին նվիրվել է Արջոռուի³⁸: Հիշատակարանում նշվում է, որ մատյանը

³⁵ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ. դար, կազմ.՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 71:

³⁶ Անդ, էջ 134: Քանի որ Սարգիսը չի մանրամասնում մատյանին տիրանալու հանգամանքները, այլ շատ անորոշ նշում է, թե ձեռագիրը գտել է Անիի նահանգում, չի կարելի բացատրել, որ այն գողացվել է Արջոռուի վանքից ու վաճառվել հեռավոր երկրամասից եկած այս մարդուն:

³⁷ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 197:

³⁸ Ձեռագրի մասին հանգամանորեն տե՛ս Կ. Юзбашян, Анийская рукопись 1298 г.,



Նկ. 5. Հյուսիսային պատի միակ պահպանված հատվածը



Նկ. 6. Սեդանատան շենքը արևմուտքից

Նկ. 7. Զանդակազարի բեկոր

գրվել է Անիի Ներքին բերդում (սա քաղաքի հարավարևելյան կողմում գտնվող՝ հետագայում Աղջկաբերդ անվանված մասն է)՝ եղբայրիկ գրչի ձեռքով եւ Հակոբ քահանայի պատվերով, որը հայտնում է, թե ժամանակին ինքն ու եղբայրը՝ Ստեփանոսը (արդեն մահացել էր), սովորել են Արջոռիճի դպրոցում: Հիշատակարանում մասնավորապես ասվում է. «Իսկ ես նուստ... Յակոբ ի մայրաքաղաքէս Անոյ, հանդերձ աստուածագութ եղբարբ իմ Ստեփաննոսիւ, ի մանկութենէ վարժեալ ի սուրբ ուխտս Արջեւառեւծոյ, ի դրան Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Գրիգորո, քրիստոսազաւր Սուրբ Նշանիս հովանեաւ տաղաւարեալ եւ յայսմ տեղւոջ ընկալեալ գաւժումն քահանայութեան...»³⁹:

Հակոբ քահանայի հիշատակարանն արժեքավոր է ինչպես Արջոռիճի դպրոցի մասին պահպանած տեղեկությամբ, այնպես եւ վանքի անվան պարզաբանման տեսանկյունից, քանի որ, ինչպես տեսանք, վիճաբերում այն նշվում է կա՛մ Ս. Աստվածածին (Արջոռիճ, 1213 թ.) եւ կա՛մ Ս. Գրիգոր (Արջոռիճ, 1289 թ., Անի, 1320 թ.) անուններով: Հիշատակարանից երեւում է, որ վանքի գլխավոր եկեղեցին Ս. Աստվածածինն էր, բայց եղել է նաեւ ոչ պակաս նշանավոր եկեղեցի՝ Ս. Գրիգոր անվամբ, եւ մի հռչակավոր խաչ (խաչքար), որը Հակոբը կոչում է «քրիստոսազոր Սուրբ Նշան»: Ինչպես երեւում է Ա. Քալանթարի գրառումից՝ 1920-ին այն դեռ կանգուն էր եկեղեցու արեւմտյան պատի մոտ, «որտեղ գավթի կողմից գտնվում է նշանավոր խաչքարն յուր տեղում կանգնած»⁴⁰:

Հիշատակարանից կարելի է ենթադրել, որ եղբայրները ծնունդով Արջոռիճից էին, քանի որ ձեռագրի նվիրատվության մասին Հակոբն ասում է. «...զայս Աւետարան, զոր աւանդեցի եւ ընծայեցի ի բնական տեղիս մեր, ի սուրբ ուխտս Արջեւառեւծս...», նաեւ պատվիրում վանքի սպասավորներին՝ «...ի տաւնի Պենդակոստէին զԱւետարանս տանել ի գերեզմանն եղբարն իմ Ստեփաննոսի»⁴¹: Հակոբը հիշում է նաեւ ծնողներին, քրոջն ու նրա զավակներին, իսկ վանքի միաբաններից՝ իրենց ուսումնակից կուսակրոն քահանա Ներսեսին⁴²: Հիշատակարանում թեւեւ չի չեղտվում վա-

ԲԵՀ, 1971, թ. 2, էջ 77-94. Կ. Մաթեոսյան, Անի քաղաքի Ներքին բերդի Ավետարանը, «Էջմիածին», 1984, ԺԱ.-ԺԲ., էջ 110-115:

³⁹ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 817:

⁴⁰ Ա. Քալանթար, նշվ. աշխ., էջ 139:

⁴¹ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 817:

⁴² Ներսեսին Հակոբը անվանում է իրենց «սննդակիցը»: Ստացողի ծնողների անուններն են Կիրակոս եւ Խելոք, ունեցել է վաղամեռիկ եղբայր՝ Սարգիս, քրոջ անունն է Մնեւր, որի ավագ որդի Գրիգորի մասին ասվում է. «...որ տարաշխարհիկ գնաց», մյուս որդին էլ Շահն է (անդ):

նահոր անունը, ասվում է, որ Արջոռուի ձագերը ժամանակ գտնվում էր Մագիստրոսենց տեր Հովհաննեսի եւ Փախրաղինի որդի Ամիրի տերութեան մեջ՝ «ի տէրութեան Արջեւառնո Մագիստրոսենց տէր Յովհաննէսի եւ Ամիրին՝ որդո Փախրաղինին»⁴³, բայց պետք է կարծել, որ վանահայրը հենց Մագիստրոսենց տեր Հովհաննէսն էր:

Ուղեգրական եւ հնագիտական նկարագրություններ. 1850-ականներին վանք այցելած Ն. Սարգիսյանը գրում է. «...մենաստանս, որոյ անհետացեալ իսպառ, զնշխարեալ մասունս եկեղեցւոյն պահէ տակաւին: Եկեղեցիս այս թէպէտ եւ մեծութեամբն եւ հոյակապութեամբն զուգակշիռ չկայցէ ընդ Բագնայր, սակայն եւ ոչ շատ ստորին է քան զնա: Նոյնօրինակ բաժանեալ է եւ սա ի ներքնագաւիթ եւ ի տաճար. անսիւն է ներքնագաւիթն եւ կամարաւ յարկեալ. եւ ի վերայ տաճարին եւ երկուստեք խորանին գեղեցիկաչէն մատրոնք կամ աւանդատունք հանդերձ կաթողիկէիւք իւրեանց»⁴⁴:

1878-ին վանք այցելած՝ Ս. Էջմիածնի միաբան Կյուրեղ Սրապյանը (1844-1895 թթ.) իր կազմած տեղեկագրում նույնպէս շատ համառոտ է խոսում դրա մասին: «Ալաճայի եկեղեցիք» վերնագրի ներքո նա գրում է. «Սույն եկեղեցիներ Ալաճա քրդաբնակ գյուղի արեւմտյան կողմ՝ Ալաճա լեռնան ստորոտ շինված են մաքուր սրբատաշ քարերով: Առաջին վանուց միայն պատեր կանգուն կմնան, իսկ կաթողիկէն (գմբէթը՝ Կ. Մ.) փլած է, ինչպէս կերեւի շարժով, որովհետեւ դեռ ողջ՝ գետնի վրա ինկած է»⁴⁵: Այնուհետեւ նա գրում է քառասյուն գավթի մասին (այն անվանում է «դարպաս»), նշում այդտեղ եղած մեծ («հաղթանդամ») խաչքարերի, եղծված բազմաթիվ արձանագրութիւնների մասին, հիշատակում է նաեւ վանքի արեւմտյան կողմի, հավանաբար, սեղանատան շէնքի մասին՝ այն կոչելով «կրկնահարկ»⁴⁶:

Արջոռուի համեմատաբար ամբողջական ու մասնագիտական նկարագրութիւնը պահպանվել է Ա. Քալանթարի հնագիտական արշավախմբի նյութերում. նա այստեղ է եղել 1920 թ. օգոստոսի 20-21-ին: Փորձառու հնագետը նախ նկարագրում է տեղանքը, կառուցյաների ավերակ վիճակը՝ նշելով, որ փլուզման պատճառը տարերային աղետն է եղել, քանի որ

⁴³ Անդ, էջ 818:

⁴⁴ Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 190:

⁴⁵ «Մի տեղեկագիր Կարսի մարզի վերաբերյալ», էջ 111:

⁴⁶ Անդ:

գմբեթի, խորանի եւ այլ պատերի ամբողջական հատվածներ «երկրաշարժի ուժեղ հարվածը չպրտել է արեւմուտքից արեւելք»⁴⁷:

Չափազանց արժեքավոր է Ա. Քալանթարի վկայությունը եկեղեցում եղած որմնանկարների մասին, որոնց վերաբերյալ նախորդ այցելուները ոչինչ չեն գրում: Հայ միջնադարյան որմնանկարչությունն ընդհանրապես թերի է ուսումնասիրված, հուշարձանները մեծապես վնասվել կամ իսպառ ոչնչացել են վերջին հարյուրամյակների ընթացքում. դրանցից մեկն էլ Արջոռուի որմնանկարն է: Ստորեւ ներկայացվող նկարագրությունը, փաստորեն, միակ վկայությունն է այդ որմնանկարի վերաբերյալ. «Եկեղեցին սվաղված է եղել ալբեստրով. նրա հարավարեւելյան անկյան մնացորդից երեւում է, որ նկարգարդված է եղել: Որմնանկարների մնացորդները գտնվում են արեւմտյան պատի հարավային անկյունին կից, մնացորդը՝ վերելից ներքեւ: Վերելի մասում պահպանված է շատ աղոտ՝ երեք մարդու նկար՝ ամբողջ հասակով կանգնած իրար կողքի, իշխանական հագուստով. մեկի շորերը հասնում են մինչեւ ծնկները, երկարավիզ կոշիկներով, իսկ երկուսինը քիչ ավելի երկար են: Դրա ձախ կողմից սրբի նկար է նիմբով (լուսապսակ՝ Կ. Մ.), նայում է ներս, բայց ավելի ցածրից է նկարված (գոտկատեղի ուղղությունը): Հետքեր կան նաեւ նույն անկյունին կպած հարավային պատի վրա, նաեւ ընկած կտորների վրա՝ ներկերի հետքեր»⁴⁸:

Արջոռուի վանքում Ա. Քալանթարը կատարել է նաեւ չափազորումներ ու լուսանկարներ, որոնց գտնվելու տեղը, սակայն, անհնար եղավ պարզել (հույս ունենք, որ դրանք կհայտնաբերվեն): Հնագետը թվարկել է լուսանկարները, որոնցից երկուսը արձանագրություններ են, երկուսը՝ ընդհանուր տեսարան, գավթի ծածկը, ութը՝ բեկորներ եւ մանրամասներ, մեկը՝ «Ֆրեսկոն եկեղեցու արեւմտյան պատի հարավային անկյան մոտ»⁴⁹:

Ա. Քալանթարը նկարագրում է նաեւ եկեղեցուց եւ գավթից բացի եղած մյուս կառույցների մնացորդները. «Բոլոր շինությունները քանդված են... բացի մի շինությունից, որը գտնվում է եկեղեցու արեւմտյան կողմը՝ 15 սաժենի վրա, որից մնացել է մի պատը՝ հյուսիսից հարավ տաշած կարմրավուն քարերով: Շինությունը ընդարձակ է եղել, գուցե՝ սեղանատուն միաբանության համար: Եկեղեցու գավթի հարավային եւ արեւմտյան կողմերից եղել են առանձին շինություններ, գուցե մատուռներ, որոնց պատերի հետքերը միայն կան»⁵⁰:

⁴⁷ Ա. Քալանթար, նշվ. աշխ., էջ 139:

⁴⁸ Անդ, էջ 140:

⁴⁹ Անդ:

⁵⁰ Անդ:

1920 թվականի այս նկարագրությունից հետո անցած ժամանակաշրջանում վանքի ավերակներն ավելի են հոշոտվել, վերացել են արձանագրությունների ու որմնանկարների հետքերը, որի ականատեսը եղանք 2013 թ. մեր այցելությունից ժամանակ (տե՛ս լուսանկարները): Վանքի նախկին նկարագրություններին կարելի է ավելացնել, որ եկեղեցու եւ գավթի հարավային ու հարավարեւմտյան կողմում բավական մեծ տեղ են զբաղեցնում հիմնականում անմշակ քարերով կառուցված վանական այլեւայլ շինությունների փլատակները:

Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպությունը (RAA) հափազրությունների եւ հին լուսանկարների բացակայությունը փորձել է լրացնել վերջին տարիներին ավերակների ուսումնասիրությամբ կազմված մոտավոր հափազրությամբ եւ եկեղեցու ու գավթի վերակազմությունը ներկայացնող գծանկարով⁵¹:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ Արջոարիճը Անի քաղաքի հետ սերտ կապեր ունեցած նշանավոր վանքերից է եղել, ծաղկել է հատկապես ԺԳ. դարում, ունեցել մեծ միաբանություն եւ դպրոց, վանական հարուստ տնտեսություն: Վանքի Ս. Աստվածածին եկեղեցին, գավթիժը եւ մյուս շինություններն այժմ ավերված են եւ դրանց հետագա ճակատագիրն անորոշ է:

РЕЗЮМЕ

Средневековый армянский монастырь Арджоарич расположен в провинции Ширак, к западу от реки Ахурян, на восточном склоне горы Аладжа (ныне на территории Турции). В средние века монастыри Арджоарич, Оромос и Багнайр с трех сторон окружали город Ани.


В источниках монастырь упоминается двумя именами - Св. Богоматери и Св. Григора. Сейчас все церкви, притвор и другие строения монастыря полностью разрушены. В 1864 г. Нерсес Саркисян (из конгрегации Мхитаристов Венеции) и в 1920 году археолог Ашхарбек Калантар опубликовали многочисленные эпиграфические надписи монастыря, ни один из которых ныне не сохранился. Арджоарич процветал в 13-ом веке, в период когда там существовала школа, о чем свидетельствуют памятные записи рукописей. В статье представлены все известные исторические данные о монастыре. Автор посетивший в 2013 году Арджоарич описывает нынешнее состояние руин монастыря, а также представляет ряд фотографий касательно материала.

⁵¹ Չափագրությունը՝ Ա. Հակոբյանի (2014), գծանկարը՝ Ս. Այվազյանի. տե՛ս Ս. Կարապետյան, Եղեռն Եղեռնից հետո, հ. Ա., Երևան, 2015, էջ 84:

SUMMARY

To the west of the Akhouryan river, and the right of mount Alatchas' eastern slope, in the Shirak county of Armenia is located the Armenian medieval Ardjoarich monastery (at the present in Turkey). It is one of the three large monasteries surrounding the city of Ani (Horomos and Bagnayr monasteries being the other two).

According to the primary sources, this monastery is referred to by two names, Sourp Asdvadzadzin (S. Virgin) and Sourp Grigor (S. Gregory). A large narthex was built, adjacent to the main church structure, The Sourp Asdvadzadzin. At the present this monasterial complex is completely ruined. In 1864, Nerses Sarkisian, of the Mekhitarist Congregation in Venice, and in 1920, archaeologist Ashkharhbeg Kalantar, have included in their publications, several of the inscriptions from the monastery of which non exists at the present. The Ardjoarich monastery came to its peak in bloom, during the 13th, century, several handwritten records are documents, referring to the monastery having had a school at site. In addition, the article is supported with all the records, references, inscriptions, data from travelers' notes and memoirs, referring to the monastery. In this article the author is presenting the current condition of the Ardjoarch monastery's ruins and sharing several photos from his visit on October, 2013.



ՏԱԹԵՒԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄՄ

ՈՍԿԱՆ ԵՐԵԿԱՆՑՈՒ ՏՊԱԳԻՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՁԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

Նայ տպագրության պատմության երեւելի երախտավորներից՝ Ոսկան Երեւանցին 1666 թ. Ամստերդամում տպագրել է իր քերականական աշխատությունը, որ Ն. Տեր-Ներսիսյանը բնութագրել է հետեւյալ կերպ. «Մեր կարծիքով, իսկական լատինաբան հայերէնի առաջին քերականութիւնն է ասիկա, թէպէտ շատ ամփոփ, որ գրեթէ տասնամեակ մը կը կանխէ Յ. Յ. Հոլովի պաշտօնական քերականութիւնը: Ոչ միայն. այլ նաեւ կարգ մը կէտերու մէջ, Ոսկան շատ աւելի լատինաբան կը յայտնուի՝ քան նոյն ինքն Հոլով»¹:

Մինչ այդ՝ 1630-ական թվականներին, Ոսկան Երեւանցին թարգմանել էր Թովմա Իտալացու քերականութիւնը՝ «Քերականութեանց գիրք առաջին՝ արարեալ մեծի հռետորին Թովմայի Իտալացւոյ, արտադրեալ ի հայս Ոսկանի Երեւանցւոյ բանի սպասաւորի»² խորագրով՝ հարմարեցնելով այն հայերենի քերականությանը:

Նշյալ աշխատության հայտնի յոթ գրչագիր օրինակներից վեցը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում՝ Հ^մ 2274, 2275, 2276, 2277, 2294, 339Բ, իսկ մեկը՝ Տյուբինգենի Արքայական համալսարանի գրադարանում՝ Ma XIII 80⁴:

Երեւանի Մատենադարանում, վերոհիշյալ ձեռագրերից բացի, կա Ոսկան Երեւանցուն վերագրվող քերականությունը պարունակող եւս մեկ

¹ Ն. Տեր-Ներսիսեան, Ոսկան վարդապետի քերականական ըմբռնումները. «Բազմավէպ», թ. 11-12, Վենետիկ, 1966, էջ 312:

² ՄՄ, ձեռ. Հ^մ 2274, 4ա:

³ ՄՅՀՀ, հ. Է., խմբ.՝ Գ. Տեր-Վարդանեսյի, Երևան, 2012, էջ 758, 763-766, 767, 770, 826-827. ՅԶՄՄ, հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965, էջ 1002:

⁴ “Hauptkatalog der Königlichen Universitätsbibliothek zu Tübingen”, von Franz Nikolaus Finck und Levon Gjandschezian, Tübingen, 1907, S. 116.

ձեռագիր, որը կրում է 2295 թվահամարը: Մեր քննության առարկա նյութն ունի «Քերականութեանց գիրք առաջաւոր» վերնագիրը եւ զբաղեցնում է ձեռագրի 49ա-107ա էջերը:

Հայ քերականագիտության պատմության մեջ Հ^{մր} 2295 ձեռագրի՝ մեզ հետաքրքրող նյութը մասնագետները բնորոշել են տարբեր մեկնաբանություններով. Գ. Զահուկյանն այն համարել է Ոսկան Երեւանցու տպագիր քերականության ձեռագիր մեկնություն⁵: Իտալացի բանասեր Ալեսանդրո Օրենգոն թվարկված յոթ գրչագիրը համարել է Ոսկանի քերականության ձեռագիր օրինակներ եւ անվանել նրա քերականության ընդարձակ, իսկ տպագիրը՝ համառոտ տարբերակ: Նա ընդարձակ խմբի շարքին է դասել նաեւ մեր քննության նյութ Հ^{մր} 2295 ձեռագիրը՝ նշելով, որ այն կրճատված է եւ փոքր-ինչ փոփոխված⁶: Ն. Պողոսյանը եւս, տպագիրը համեմատելով միայն Հ^{մր} 3391 ձեռագրի հետ, վերջիններս համարում է Ոսկանի քերականության ընդարձակ, իսկ տպագիրն էլ՝ համառոտ տարբերակ⁷:

Ի դեպ նշենք, որ Հ^{մր} 2295 ձեռագիրը միակը չէ. Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի (անթվակիր)⁸, Հռոմի Կազանատենսե գրադարանի (Ժէ. դար)⁹ եւ Պետերբուրգի Արեւելագիտության ինստիտուտի (1688 թ.)¹⁰ ձեռագրական հավաքածուներում կան եւս երեք ձեռագրեր:

Հակված ենք կարծելու, որ 2295 ձեռագիրը չի կարելի դասել թարգմանական խմբին, առավել եւս համարել տպագիր քերականության մեկնություն: Վերոհիշյալ չորս ձեռագրերը խմբագրված, բազմաթիվ նորահայտ եզրերով հարուստ, լատինաբան հայերենի փոխարեն դասական գրաբարով շարադրված տարբերակներ են: Այսպիսով, առանձնացնում ենք Ոս-

⁵ Տե՛ս Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երեւան, 1974, էջ 65:

⁶ A. Orenco, Oskan Erewantsi traduttore dei Grammaticalia di Tommaso Campanella, «Padus-Araxes, Rassegna Armenisti Italiani», VI, Venezia, 2003, p. 9. Alessandro Orenco, Una Nuova Redazione della Traduzione Armena dei Grammaticalia di Tommaso Campanella, «Bnagirk' Yisatakac'», Bologna, 2004, p. 318. Alessandro Orenco (Pisa), La traduction des nomspropres dans les K'erakanowt'ean Girk' («Livres de Grammaire») de Oskan Erewanc'i, «Il nome nel testo, Rivista internazionale di onomastica letteraria», VIII, Edizioni ETS, 2006, p. 549.

⁷ Ն. Պողոսյան, Ոսկան Երեւանցու ձեռագիր եւ տպագիր թարգմանական երկերի համեմատական վերլուծության փորձ, ԲԵՀ, Երեւան, 2012, էջ 52. Ն. Պողոսյան, Ոսկան Երեւանցու քերականական ժառանգությունը. ԲԵՀ, Երեւան, 2014, էջ 56:

⁸ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 4, կազմեց՝ Ն. եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1969, էջ 443:

⁹ «Catalogo dei manoscritti Armeni delle biblioteche d'Italia, a cura di Gabriella Uluhogian», Roma 2010, p. 298-301.

¹⁰ К. Юзбашян, Православный палестинский сборник, Армянские рукописи в Петербургских собраниях, С. Петербург, 2005, с. 102-103.

կան Երեւանցու քերականության ձեռագրական երկու խումբ՝ թարգմանական եւ խմբագրված:

Կատարել ենք համեմատական քննություն՝ վերոհիշյալ խմբերից առանձնացնելով հետեւյալ գրչագրերը.

Առաջին թարգմանական խմբից առանձնացրել ենք ՄՄ 2274 թվահամարը կրող ձեռագիրը՝ հաշվի առնելով, որ այն այդ խմբի ձեռագրերի շարքում հնագույնն է՝ գրված 1658 թվականին Ուշիի Սուրբ Սարգիս վանքում, որի վանահայրն էր Ոսկան Երեւանցի եպիսկոպոսը¹¹: Ձեռագրի գրչության վայրն ու թվագրումը համընկնում են Սուրբ Սարգիս վանքում Ոսկան Երեւանցու առաջնորդության տարիներին. «72ա. Գրեցաւ ի թվին Փըր[կ]չի Ռ.երորդի ԶՃ.երորդի Ծ. եւ Ը.երորդի (1658) եւ յամսեանն նոյեմբերի երկակի եւ ի Հայոց թվին Ռ.երորդի Ճ.երորդի եւ Է.երորդի (1658)... ի յերկրին Արարատեան եւ ի նահանգին Կարբւոյ, ի վանայ Ուշ-ւոյ Սուրբ Սարգսայ... յառաջնորդութեան քաջ Հռետորապետին Ոսկանի թարգմանողի գրամատիկոսի...»¹²:

Երկրորդ խմբի ձեռագրերից առանձնացրել ենք Հ^Պ 2295-ը, որը եւս խմբագրված ձեռագրերի շարքում հնագույնն է:

Համեմատելով թարգմանական խմբի Հ^Պ 2274 եւ Հ^Պ 2295 ձեռագրերը՝ նկատեցինք բազմաթիվ տարբերություններ, որոնց մանրամասն քննությունը կարելուք ենք համարում՝ ցույց տալու թարգմանական եւ խմբագրված ձեռագրերի, որոշ դեպքերում նաեւ տպագրի տարբերություններն ու նմանությունները՝ հընթացս գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք նորակազմ քերականական եզրեր: Ներկա ուսումնասիրության բովանդակությունը հիմք է տալիս մի շարք եզրակացություններ անելու, որոնցից, մեր կարծիքով, առավել կարեւորներն են.

1. Հ^Պ 2295 ձեռագրում Քերականությունը բաղկացած է երկու հիմնական գրքից, որոնցից առաջինում խոսում է քերականության, նրա բաղկացուցիչ մասերի, ինչպես նաեւ ձեւաբանության, իսկ երկրորդում՝ շարահյուսության մասին:

Հ^Պ 2274 եւ 2295 ձեռագրերի միջեւ կան բազմաթիվ տարբերություններ. վերջինը չի կարելի համարել Ոսկանի Քերականություն, քանի որ ամբողջական քերականություն չէ, այլ հատվածաբար քաղված է Ոսկանի

¹¹ Կարապետ եպս. Ամատունի, Ոսկան վրդ. Երեւանցին եւ իր ժամանակը, Վենետիկ, 1975, էջ 127. հմմտ. «Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան», Երեւան, 2002, էջ 830. Գ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, հ. Գ., Երեւան, 1990, էջ 192:

¹² ՄՅՀԶ, հ. Է., խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2012, էջ 761-762:

Թարգմանական եւ ինքնուրույն քերականություններից¹³, եւ երկրորդ՝ որոշ հատվածներ էլ անմիջաբար Ոսկանի գրչին չեն պատկանում, քաղված են այլ քերականներից: Այսպես՝ Հ^{մբ} 2274 ձեռագրում Բերականությունն առաջին գիրքը պարունակում է բովանդակային 62 ենթաբաժին, մինչդեռ Հ^{մբ} 2295 ձեռագրում համապատասխան բաժինն ունի ընդամենը 12 մաս, նույն պատկերն է նաեւ երկրորդ գրքի դեպքում. Հ^{մբ} 2274-ն ունի 34 ենթաբաժին, իսկ Հ^{մբ} 2295-ը՝ 3: Ծավալի այս էական տարբերությունը հաստատում է, որ սա կրճատված, համառոտված տարբերակ է՝ ընդամենը մի փոքր մաս (մեր ձեռագրում բացակայում են հոլովման ու խոնարհման հարացույցներ): Ծավալայինից զատ՝ ձեռագիրն ունի նաեւ այլ տարբերություններ.

ա. Վանկի սահմանումը չի համընկնում ո՛չ Հ^{մբ} 2274 ձեռագրի եւ ո՛չ էլ Ոսկան Երեւանցու տպագիր քերականության համապատասխան հատվածներին. Հ^{մբ} 2295 ձեռագրում վանկը հետեւյալ կերպ է բնորոշվում. «Վանգն է կատարեալ ձայնի մասն» (50ա)¹⁴, մինչդեռ 2274 ձեռագրում այլ պատկեր է. «Վանկ է նախորդ շարակալումն գրոց միոյ հնչման, միոյ եւս երգեցողութեան ցուցակ» (7ա)¹⁵:

բ. Կան որոշակի մեկնողական հատվածներ էլ, որոնք առավել հակիրճ են կամ առհասարակ բացակայում են Ոսկանի թարգմանական եւ ինքնուրույն աշխատություններում: Այսպես՝ Հ^{մբ} 2295 ձեռագրի 53աբ էջերի «Խրատ» խորագրով մեկնության մեջ մանրամասն խոսվում է անհոլով եւ հոլովական խոսքի մասերի մասին, մինչդեռ Հ^{մբ} 2274 ձեռագրում ընդամենը թվարկվում են անհոլով եւ հոլովական խոսքի մասերը: 2295-ի 59բ, 59բ-60բ, 73աբ, 84բ-85ա էջերում կան «Խրատ» եւ «Մեկնություն» խորագրերով մեկնողական հատվածներ, որոնք թարգմանիչ-քերականի գրչին չեն պատկանում: Կամ 65բ էջում քերականը խոսում է հոգի մասին, որն ունի «Յաղագս յաւդոյ խրատ» վերնագիրը, մինչդեռ Ոսկան Երեւանցին իր գործերում հոգի մասին առհասարակ չի հիշատակում:

գ. Շատ հաճախ էլ սահմանումները տրվում են նույն իմաստով, սակայն շարադասության որոշակի ետուառաջությունը կամ հոմանշային կիրառությունը, օրինակ, որոշ եզրեր՝

¹³ Մի շարք բնորոշ նմանությունների հիման վրա ենթադրում ենք, որ մեր քննության նյութը մեծավ մասամբ ընթրօրինակված է Ոսկան Երեւանցու թարգմանական քերականությունից:

¹⁴ Ձեռագրերից արված բնագրական քաղվածքները ձեռագրերում ատկա ուղղագրությամբ են:

¹⁵ Գրեթե նույն սահմանումն է նաեւ տպագիր տարբերակում:

2295	2274
«Բառ է հնչումն շնչաւորի բերանով քնական գործըրով արտաբերեցեալ...» (50բ)	«Բառ է հնչումն բերանով շնչաւորի արտաբերեալ քնականօք գործիք...» (8ա)
«Անուն է մասն բանի հոլովական, որ իրի իւրաքանչիւր ոք զէութին դրութեամբ նշանակէ...» (53բ)	«Անուն է մասն բանի հոլովական նշանակիչ զէութեան իւրաքանչիւրոյ իրի ի շարադրութենէ...» (10ա)
«Փոխանուն է մասն բանի հոլովական, որ զանձն կամ զէութեանց անձնականսն համանշանակէ...» (60բ)	«Դերանունն է մասն բանի հոլովական շարանշանակօղ, զի անձինս կամ զանձնականս էութեանց...» (21բ)
«Բայ է մասն բանի հոլովական զիրաց գործողութիւն կամ ելոյ, կամ արտակալոյ, կամ ներգործելոյ, կամ արտագործելոյ, կամ կրելոյ, կամ տալոյ դրութեամբ նշանակէ...» (66ա)	«Բայ է մասն բանի հոլովական նշանակօղ ի բաղադրութենէ իրաց զգործ կամ ելոյ, կամ կալոյ, կամ գործելոյ, կամ արտագործելոյ, կամ կրելոյ, կամ տալոյ...» (28բ)
«Ընդունակ է մասն բանի հոլովական, որ զէութին ի միասին ընդ իւրում գործողութեան կամ զգործողութիւն ընդ էութեամբն, որում է գործողութիւն, նշանակէ...» (72բ)	«Ընդունելութիւն է մասն բանի հոլովական, նշանակօղ զէութին ի միասին ընդ իւրոյ իրակութեան կամ զգործողութիւն ընդ էութեանն, որոց է գործողութիւն...» (40ա)

Կան նաեւ ո՛չ բառացի պատճենված, այլ հոմանշային կիրառությամբ օրինակներ.

2295	2274
քամի, փող	հողմ և փող
Պետրոս վազի, և Յոհաննէս նստի	Պետրոս ընթանայ, և Յօհաննէս նստի
դու ես կամ մարդ, կամ անասուն	դու կամ ես մարդ, կամ գազան
Պետրոս է սուրբ, ապա ուրեմն սիրելի է Աստուծոյ	Պետրոս է սուրբ, ուրեմն է ըղձալի Աստուծոյ

2. Հ^{մբ} 2295 ձեռագրում առկա են նաեւ զգալի թվով եզրային տարբերություններ. եզրերի մի մասը մեզ ավանդել են Ոսկան Երեւանցուն նախորդած եւ Հաջորդած քերականները, մյուս մասն էլ նորակազմ են:

Այսպես՝ խոսելով ձայնավորի եւ բաղաձայնի մասին՝ 2295 ձեռագրում քերականը բաղաձայնի հետ մեկտեղ գործածում է «Համաձայն» նոր եզր. «...զի ոչ յամենայն գրէ վանգ լինի, բայց միայն ի ձայնաւորէ, որ զհնչումն ունի եւ ոչ ի համաձայնէ, որ ոչ ունի..., երբեմն ի ձայնաւորէ միոջէ եւ ի մի համաձայնէ...» (50ա):

Հաջորդիվ «բանը»¹⁶ բաժանում է երկու տեսակի՝ «Հայտնական» եւ «անհայտ», մինչդեռ սրանք բոլորովին նոր եզրեր են, քանի որ Ոսկա-

¹⁶ Ի դեպ, ինչպես նշում է Հ. Մխիթարյանը, Ոսկանը «բան» ասելով հասկանում է միաժամանակ եւ՝ խոսք, եւ՝ նախադասություն, տե՛ս Հ. Մխիթարյան, Ոսկան Երեւանցին իբրեւ քերականագետ, «Էջմիածին», 1966, ԺԱ.-ԺԲ., էջ 212:

նը 2274 ձեռագրում նույն քերականական հասկացությունների համար տալիս է այլ եզրեր՝ «բաղադրեալ» եւ «տարալուծեալ», իսկ տպագրում՝ «խոնեալ» եւ «տարալուծեալ»: Փաստորեն միեւնույն քերականական հասկացության համար ունենք մի դեպքում երկու, մյուս դեպքում՝ երեք տարբեր եզրեր՝ «յայտնական»-«տարալուծեալ», «անյայտ»-«բաղադրեալ»-«խոնեալ»:

Անվան քերականական կարգերի դեպքում եւս կան տարբերություններ. Հ^{մբ} 2295 ձեռագրում առանձնացվում է հինգ կարգ՝ էություն, քանակություն, թիվ, կարգ, կերպարանություն, մինչդեռ 2274 ձեռագրում կա նաեւ սեռի քերականական կարգ, իսկ տպագրում դրանց քանակը յոթն է՝ էություն, քանակ, թիվ, կարգ, սեռ, կերպավորություն, հոլով: Հ^{մբ} 2295-ը էության երկու տեսակ է առանձնացնում՝ «գոյավոր» եւ «ածավոր», որոնք Ոսկանի «գոյական» կամ «ենթակայական» եւ «ածական» եզրերի փոխարեն են գործածվել: Անունների թվի քերականական կարգի հատվածում գործածում է «բազմավորակի» նորակազմ եզրը՝ հոգնակիի իմաստն արտահայտելիս: Նշենք, որ դեռ նախկին քերականների երկերում կային հոգնակիի նույնարմատ եզրեր, ինչպես Կյուրեղ Ալեքսանդրացու մեկնությունների հայերեն թարգմանիչը հոգնակիի համար տալիս է «բազմավոր» եզրը, Անանունը՝ «բազմավորաբար», Դիոնիսիոս Թրակացու թարգմանիչը՝ «բազմավորական»¹⁷: Կամ անուններն ըստ կազմության բաժանում է «առաջավոր»-ի եւ «կրկնավոր»-ի. «առաջաւոր է, որ ոչ ումեք է քերականաբար, որպէս մարդկային ի մարդէն եւ լեառնական ի լեռնէն: Կրկնաւոր միշտ ածաւոր է, իսկ առաջաւոր՝ գոյաւոր... իսկ որք ի նոցունց որպէս առու ի յաղբերէ կրկնին, կրկնաւորք ասին եւ բազում կերպիւ լինին, որգոն՝ աստուած, աստուածային, աստուածեղէն, աստուածական...» (56բ): 2274 ձեռագրում «առաջավոր»-ի փոխարեն ունենք «նախագաղափար», որը հայտնի է դեռ Դիոնիսիոս Թրակացու հայերեն թարգմանությունից, իսկ «կրկնավոր»-ի համար կա «ածանցական» եզրը¹⁸, մինչդեռ «կրկնավոր» եզրը լեզվաբանական բառարանում բացատրվում է իբրեւ բառի կամ արմատի կրկնությունը կազմված բառ¹⁹:

Գրաբարի վաղ շրջանում անվան թեքման համար երկու եզր էին գործածում՝ «հոլով» եւ «թավալում»²⁰, սակայն Ոսկանը «հոլով» բառի փո-

¹⁷ Լեզվաբանական բառարան (այսուհետև՝ ԼԲ), Երևան, 1975, էջ 43:

¹⁸ Թարգմանական ձեռագրերի խմբից միայն 3391 ձեռագրում ածանցականի դիմաց կա՝ ածական:

¹⁹ ԼԲ, էջ 160:

²⁰ Հ. Մխիթարյան, անդ, էջ 214:

խարեն «անկ» եզրն է գործածել: Քննվող ձեռագիրը 2274 ձեռագրի «Հոլովք» եւ «անկք» եզրերի փոխարեն ունի «խոտորումն» եւ «անկ» եզրերը՝ ի դեպ շեշտելով, որ սրանք հատուկ են հայերեն լեզվին: Այստեղ ունենք «խոտորումն» նորակազմ քերականական եզր: Այնուհետեւ առանձնացնում է սեռական Հոլովի տարատեսակներ՝ ծագման սեռական, որն անվանում է «ծննդական» նոր եզրով. «...սեռական, որ է ծննդական, ի ծնանելոյ ասի, զի զհայր ի նա դնեմք, յորժամ զորդի անուանեմք, որպէս ասելով՝ Սահակ Ներսէսի որդի» (58բ), եւ պատկանելության սեռական, որն էլ կոչում է «ստացական» կամ «ստացողական»՝ «իսկ ոչ միայն զհայր ի ծննդական անկն դնեմք, այլեւ ստացաւդ, որպէս՝ Պետրոսի տուն, վարդապետի գիրք» (58աբ): Այս եզրերից «ստացական»-ը հայտնի է դեռեւս Թրակացու քերականությունից, իսկ «ստացողական» եզրը հայ քերականագիտության մեջ նորակազմ եզր է: Կամ Ոսկան Երեւանցու՝ հայցական, հոշական եւ սկզբնական Հոլովները մեր ձեռագրում գործածված են համապատասխանաբար «կրողական», «կոչական» եւ «առնողական Հոլով» եզրերով, որոնք հատուկ են Կղեմես Գալանոսին:

Հաջորդիվ Ոսկան Երեւանցու «դերանուն» եզրի փոխարեն մենք տեսնում ենք «փոխանուն» եզրը, իսկ «փոխանուն» եզրը քերականության մեջ առաջինը գործածել է Ստեփանոս Սյունեցին²¹: Այս բաժնում նորակազմ եզրեր եւս կան. քերականը գործածում է «առաջին դէմ» եզրը՝ Ոսկան Երեւանցու «առաջներորդ դէմ»-ի փոխարեն, որի առաջին գործածողը Հովհաննես Հոլովն է եղել²², իսկ Հովհաննես Կոստանդնուպոլսեցու գործը տպագրվել է 1674 թվականին, երբ Ոսկանն արդեն ողջ չէր, հետեւաբար մեր ՄՄ 2295 ձեռագրի մեկնիչը Ոսկանը լինել չէր կարող: Կարելի է ենթադրել, որ մեր քերականության հեղինակը քաջատեղյակ է եղել ոչ միայն Ոսկանի, այլեւ Կղեմես Գալանոսի եւ Հովհաննես Հոլովի քերականություններին եւ նրանց գործածած եզրերին:

Փոխանուններն ըստ կազմության բաժանում է «նախկնավոր»-ներին ու «կրկնավոր»-ներին՝ 2274-ի «նախագաղափար»-ի (պարզ) ու «ածանցական»-ի (ածանցավոր) փոխարեն:

Բայի բաժնում եւս նոր եզր կա՝ «ծառայական»: Քերականը բայերը բաժանում է դիմավոր, անդեմ եւ ծառայական տեսակների, վերջինս էլ ունի հետեւյալ բնութագրումը. «Ծառայականը դիմաւորացն եւ անդիմացն

²¹ ԼԲ, էջ 305:

²² Անդ, էջ 26. Յոհաննէս Կոստանդինուպօլսեցի, Զտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հոռմ, 1674, էջ 109:

ծառայեն եւ ընդդիմաւորօք դիմաւորականք են, որպէս՝ դու պարտիս զապաշխարանս քաշել եւ ընդանդիմօք անդէմք դառնան, որդոն՝ սիրել պարտէ» (67բ):

2295 ձեռագրում «ընդունելութիւն» (դերբայ) եզրի համար նշվում է «ընդունակ»-ը, որը նորակազմ գործածություն է, եւ քերականը տալիս է այս նորակազմության իր մեկնաբանությունը. «Ընդունակ կոչեցինք, եւ ոչ ընդունելութիւն, զի ընդունելութիւն վերացեալ անուն է, որ ոչ զառնօղ, այլ զառնումն նշանակէ եւ ընդունակ զառնօղ, զի թանձրացեալ է, ապա ընդունակ ասի, վասն զի զանուան եւ զբայի նշանակութիւն ընդունի, որ է էութիւն եւ զգործողութիւն» (73ա): Դեռ 1645 թ. իր տպագրում Կղեմես Գալանոսն այս խոսքի մասի համար տալիս էր «ընդունական անուն» եզրը, իսկ մեր քերականության մեջ ավելի կրճատված տարբերակն ենք տեսնում՝ «ընդունակ»: Կարելի է ենթադրել՝ Քերականության հեղինակը ոչ միայն շարադրանքի հոմանշային փոփոխություններ է կատարել, այլ նաեւ քերականական եզրերը բացառապէս միայն Ոսկանից չի վերցրել, այլ օգտվել է նաեւ նախորդ եւ հաջորդ քերականներից, տվյալ դեպքում՝ Կղեմես Գալանոսից:

Այնուհետեւ հաջորդում է նախադրությունը, որի համար քերականը առաջարկում է «նախդիր» կամ «առանուն» եզրերը: «Նախդիր» եզրը քերականության մեջ առաջինը գործածել է Վարդան Արեւելցին²³, իսկ «առանուն»-ի վերաբերյալ տեղեկություններ չունենք. սա հայ քերականագիտության մեջ այդ հասկացության համար նոր գործածություն է: Քերականը նաեւ տալիս է «առանուն»-ի ավելի նախընտրելի համարելու պատճառը. «Բայ ընդ բայի միաբանի, իսկ նախդիր ընդ անուան, ուստի եւս ուղղագրութեամբ առանուն ասիւր, քան զնախդիր, զի նախդիրն է ամենայն իրաց, որք յառաջադրին, թէ՛ ի բնութիւն, թէ՛ ի բառս, բայց անուան նախդիրն յատկութիւն է բանի մասիս այսու, զոր յայսման է կոչեմք զնախդիր, իսկ լաւագոյն առանուն» (74բ):

ՄՄ Հ^{մբ} 2274 եւ 2295 ձեռագրերում մակբային համարժեք առկա է միեւնույն եզրը: Քերականության մեջ հայտնի է, որ «առբայ» անվանումը առաջին անգամ տվել է Ոսկանը²⁴, իսկ արդեն տպագրում Երեւանցին իր իսկ «առբայ»-ի փոխարեն տալիս է «մակբայ» անվանումը՝ փաստորեն հետեւելով նախորդ քերականներին: Մակբայի հատկապես նորակազմ եզրեր տեսնում ենք ենթատեսակների մեջ. այսպէս՝ «ըստ գործոյ շրջական նշանակութեան» առանձնացնում է մակբայի հետեւյալ տեսակները՝

²³ ԼԲ, էջ 227:

²⁴ Անդ, էջ 28:

«Ժամանակ», «տեղ», «մեծություն», «թիվ», «կարգ»²⁵, «նմանություն»²⁶ եւ «Հոգո ձգտությունք», իսկ 2274 ձեռագրում «մեծության» փոխարեն կա «դիպուկածո մեծության», իսկ «Հոգոյ ձգտության» փոխարեն՝ «անձին արտածգությունք»:

Շաղկապի տեսակների թվարկման մեջ եւս տեսնում ենք նորակազմ եզրեր. այսպես՝ Ոսկանին հատուկ «շարունակական» կամ «ջոկաման»²⁷ եզրի փոխարեն մեր քերականը 2295 ձեռագրում առաջարկում է «կապավոր» նոր եզրը, «անջատական»-ի փոխարեն՝ «անջատավոր», «ընդդիմական»-ի փոխարեն՝ «ընդդիմավոր», «տարակուսական»-ի փոխարեն՝ «տարակուսավոր», «բաղդատականներ»-ի փոխարեն՝ «համեմատավոր», «փաստբանական» կամ «պատճառական»-ի փոխարեն՝ «բանավոր», «առադրական»-ի փոխարեն՝ «լուծական», «բացբարձական»-ի փոխարեն՝ «որոշավոր», «Ժամանակ»-ի կամ «Ժամանակային»-ի փոխարեն՝ «Ժամանակավոր» եւ այլ նորակազմ եզրեր:

3. Համեմատության ժամանակ մեր ձեռագրի սահմանումներում, հատկապես մեկնողական հատվածներում, լատինաբան հայերենի տարբերակիչ քերականական հատկանիշները նկատելիորեն նվազագույնի են հասցված կամ գրեթե չկան: Դրանց փոխարեն մեր քերականը տուրք է տվել հին հայերենին հարազատ ձևերին: Քերականությունը գերծ է նախածանցների անտեղի գործածություններից, բազմակի նախամասնիկավորումներից, անջատական գրությունմբ նախամասնիկների անհարկի գործածություններից (օրինակ՝ «գերփիլիսոփայություններգերփիլիսոփայություն, ի բազում այլ լեզուս-ներայլոց լեզուաց, համանշանակեն-շարանշանակեն, յայսմ տեղուջ-նայսմ տեղուջ, ըստ նշանակութեան-ներնշանակութեան, քանակութիւն-առքանակութիւն, ի հայերէն լեզուն-ներհայկականում քերականում»), ավելի շատ նկատելի է գրաբարին հատուկ ձևերի կիրառությունը, գերծ է նաեւ բառիմաստային, բառակապակցական պատճենումներից եւ շարադրված է դասական հայերենի կանոններին համապատասխան («գլխաւորացն-սկզբնականաց, առանց պատճառի-թարց պատճառի, դրութիւն-շարադրութիւն, գիտելի է-նշանակելի է, անջատում-բաժանում, զառբերումն-զառաջաբերութիւն»):

²⁵ Ի դեպ՝ «կարգի առբայք» եզրը առաջինը առանձնացրել է Ոսկան Երեւանցին՝ ի նկատի ունենալով ձեռի մակբայները, տե՛ս ԼԲ, էջ 149:

²⁶ Կղեմես Գալանտը առանձնացնում է նմանական մակբայ, եւ գուցե մեր ձեռագրում առկա նմանություն տեսակը ազդված լինի նրանից, տե՛ս ԼԲ, էջ 234:

²⁷ ԼԲ, էջ 242:

4. Անդրադառնալով մեկնությունների հեղինակի խնդրին՝ մի քանի նկատառումներ ունենք. նախ սկսենք ձեռագրի բովանդակային նկարագրությունից. ձեռագիրը աստվածաբանական, մեկնողական, փիլիսոփայական պատառիկ-նյութերի հետ մեկտեղ մեծավ մասամբ ամբողջական քերականական նյութերի ժողովածու է. ձեռագրի 1բ-18բ էջերում գետեղված է Հոմերոսի քերականությունը, որին անմիջապես հաջորդում են 18բ-22ա էջերի «Մեկնություն բառից քերականութեան», 25ա-47ա էջերի «Սահմանք քերականության» խորագրերով նյութերը, որոնց անմիջական բովանդակային շարունակությունն է մեր կողմից ուսումնասիրվող քերականական աշխատությունը: Ելնելով ձեռագրի բովանդակության նյութերի շարադրանքից՝ հակված ենք կարծելու, որ գրիչը քերականությանը որոշակի քաջատեղյակ մեկն է եղել, քանի որ այլ ձեռագրերից ընդօրինակելով մի քանի քերականություն՝ ուսումնասիրվող նյութն իր գիտելիքների սահմաններում փորձել է ինքը մեկնել-շարադրել: Եթե հաշվի առնենք, որ մի շարք եզրեր էլ վերցրել է մյուս քերականներից, ապա կարելի է կարծել, որ սա Ոսկան Երեւանցու քերականության մի նոր ձեռագիր խմբագրություն է:

Բացի այդ, քերական-գրիչը նաեւ թողել է փոքրիկ հիշատակարան-գրություններ. այսպես՝ մեր ձեռագրում թվարկվում է փոխանունների հոլովման ութ տեսակ, մինչդեռ Հ^Պ 2274-ում եւ տպագիր օրինակում դրանց քանակը ինն է, դեռ ավելին. կան նաեւ դերանուններ, որոնք «անհոլովք» են կոչվում²⁸: Ձեռագրում վերոհիշյալ նյութը եզրափակվում է հետեւյալ նախադասությամբ. «Փոխանունանք թուականք այլ եւ այլ խոտորումն ունին. եւ ոչ գիտեմք, վասն զի գիրք չկայ» (63բ), կամ թվարկելով «անհայտ բան» խոսքի մասի տեսակները՝ գրիչը գրում է. «Ձայս թէպէտ կամ պակասին կամ ոչ գիտեմ, սակայն վասն քերականի կատարելութեան գրեցի, եւ իմացող մարդ եւ որ զբնական լեզուդ ունի, յորժամ իմաստնացաւ, զիմ պակասութիւնս լցուցանելոց է» (84ա):

Եվ այս հիշատակագրությունները թույլ են տալիս մեզ ենթադրել, որ Քերականության հեղինակը Ոսկան Երեւանցին չէ, քանի որ դժվար թե նա ձեռքի տակ չունենար որեւէ աղբյուր կամ առհասարակ դրա պետքն ունենար իր քերականությունը շարադրելիս:

Ինչպես վերը նշեցինք, գրիչը քերականության մեջ որոշակիորեն հմուտ մեկն է եղել, տիրապետել է ոչ միայն Ոսկանի, այլեւ նրան նախորդած եւ հաջորդած քերականների գործերին եւ փորձել է մեկնել-շարադ-

²⁸ Ի դեպ՝ Հ^Պ 2274 ձեռագրում դերանունների հոլովումը դրված է «Նախադրութիւն յաղագս պատահմանց» խորագրի ներքո:

րել խնդրո առարկա նյութը: Բացի այդ, տեսանք, որ ՄՄ 2295 ձեռագրում նվազագույնի են հասցված լատինաբանությունը խիստ հատուկ քերականական հատկանիշները, գործածված են մի շարք նորակազմ եզրեր: Այս առիթով հիշենք, որ Ն. Պողոսյանը իր հոգվածում վկայում է, որ «առհասարակ լատինաբան հայերենը խորթ է Ռսկան Երեւանցու ոչ միայն թարգմանական, այլև ինքնուրույն գրվածքներին»²⁹, հետեւապես մեզ իրավունք ենք վերապահում կասկածելի համարելու 2295 ձեռագրի քերական-մեկնիչին եւ Ռսկանին միեւնույն անձը համարելը, քանի որ եթե մտածենք, թե այս ձեռագրի մեկնողական հատվածները Ռսկանի ինքնուրույն գրվածքներն են, ապա ինչպե՞ս բացատրենք նույն հատվածներում առկա քերականական նոր եզրերի գործածությունը:

Մեկ այլ վկայությամբ՝ ՄՄ 1684 ձեռագրում առկա են Ռսկանի թարգմանությունները՝ իր իսկ ձեռքով գրված՝ ինքնագիր, որի լուսանցքներում կան խմբագրական միջամտություններ. փաստորեն վերստին թարգմանություն արդյունքում Ռսկանը շատ հասկացություններ պարզեցրել է, հավանաբար ընթերցողին ավելի դյուրընկալելի դարձնելու համար³⁰: Այս տեսանկյունից նայելիս, գրեթե նույն երեւույթը տեսնում ենք նաեւ մեր ձեռագրում, այն տարբերությամբ, որ եթե ՄՄ 1684-ում նա խմբագրական միջամտություններ կատարել է լուսանցքներում, ապա մեր ձեռագրում հենց բնագրի մեջ՝ լատինաբանության կնիքը կրող մի շարք եզրեր նորերով փոխարինելով, բնականաբար, ավելի պարզ ու հասկանալի դարձնելու նպատակով:

Բոլորովին էլ տարօրինակ է, որ Ռսկանն իր տպագիր քերականությունից տարիներ հետո մեկներ իր քերականությունն արդեն դասական գրաբարով, քանի որ հասկանալի է, որ տպագիրը գրել է ավելի տուրք տալով լատինաբանությանը՝ ելնելով ժամանակներից եւ իր տպարանի շահերից, սակայն սա բացառելու երկու փաստարկ են առաջ գալիս. նախ մենք ունենք նոր եզրեր՝ ազդված նրան հաջորդած Հովհաննես Հոլովից, եւ երկրորդ՝ ունենք երկու փոքրիկ հիշատակարան-գրություններ, որտեղ ասվում է, թե ձեռքի տակ գիրք չի եղել, դրա համար թողել է կիսատ, որ քերականության գիտակ հաջորդները շարունակեն:

Այսպիսով, կարելի է փաստել, որ շնորհիվ Հ^ր 2295 ձեռագրի եւ նմանօրինակ մյուս երեք գրչագիր տարբերակների՝ ի հայտ է եկել մի նոր համահավաք քերականություն-մեկնություն՝ մի շարք քերականական նորահայտ եզրերով հանդերձ, ինչպես նաեւ անանուն մի քերական-մեկնիչ,

²⁹ Ն. Պողոսյան, սշվ. աշխ., էջ 4:

³⁰ Անդ, էջ 6:

սակայն գիտական շրջանառության մեջ ենք դնում Ոսկան Երեւանցու քերականության մի նոր խմբագրություն՝ նրա քերականական հայացքների հենքով եւ այլ քերականների ազդեցությամբ:

РЕЗЮМЕ

В статье анализируется рукопись 2295 - целостный сборник грамматических материалов из фонда Матенадарана имени М.Маштоца. Предмет нашего исследования «Ведущая книга грамматики», которую мы сравниваем с рукописью 2274 и с печатной грамматикой Воскана. Рукопись не единственная, в Матенадаране находятся еще пять переводов (2275, 2276, 2277, 2294, 3391) грамматики Ф. Итальянца (переводил опять В. Ереванци) и еще одна находится в библиотеке Тюбингенского Королевского Университета (Ma XIII 80). В истории армянской грамматики часть рукописи 2295, которая нас интересует, получила разные оценки и комментарии: Г. Джаукян (1974) ее считал как объяснение печатного труда В. Ереванци, А. Оренго (2003, 2004, 2006) оценил её идентичной с другими экземплярами труда Ф. Итальянца, более краткой и измененной. Благодаря рукописи 2295 и еще трем рукописным вариантам появился новый сборник интерпретации грамматики, с несколькими новообразными грамматическими стилями. Также, появилась новая анонимная интерпретация грамматики, которую мы вводим в научный оборот как новую редакцию грамматики В. Ереванци.

SUMMARY

The report analyzes the manuscript 2295 from the rich fund of Matenadaran named after M. Mashtots. This manuscript is a holistic collection of grammatical material. The subject of our study is “Leading grammar book”, which we compare with manuscript 2274 and with printed grammar of V. Yerevantsi. This manuscript is not the only one, there are also five (2275, 2276, 2277, 2294, 3391) translations of Th. Italian’s Grammar (translated by V. Yerevantsi) in the Matenadaran and another one is in the library of Tubingen Royal University (Ma XIII 80). In the Armenian grammar history the manuscript 2295, which we are interested in, gets different grades and comments: G. Jahukyan (1974) considered it as an explanation of V. Yerevantsi’s printed work, A. Orengo (2003, 2004, 2006) appreciated it as identical with other instances of Thomas Italian’s work, shorter and altered. Due to the manuscript 2295 and three other such handwritten versions, a new collection of interpretations of grammar has been created, with multiple grammar styles. Also we have a new anonymous interpretation of grammar, which we are introducing to the scientific community as a new version of the V. Yerevantsi’s Grammar.



ԱՐՄԻՆԵ ՄԵԼԶՈՆՅԱՆ

պարսկական գիր. թեկնածու, ՄՄ

ՊԵՏՐՈՍ ՄԱԴԱԹՅԱՆԻ (ԱՇՈՒՂ ՍԵՅԱԴ)
ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Պետրոս Մադաթյանը («աշուղ Սեյեադ, «Սեյեադ Շամախեցի»)¹ նոր շրջանի հայ գրականության ոչ շատ հայտնի եւ քիչ ուսումնասիրված հեղինակներից է: Նրա մասին շրջանառվող կենսագրական տեղեկությունները կցկտուր եւ իրարամերժ են²: Հայագետ, հրապարակագիր Մկրտիչ Պոտուրյանի կազմած անտիպ հանրագիտարանում նշվում է, որ Պ. Մադաթյանցը ծնվել է 1810 թ. Ալամենց Գոմեր գյուղում եւ վախճանվել 1872 թ. Կ. Պոլսում³: Կա կարծիք, որ Արցախի Վարանդայի գավառում գտնվող Ալամենց (կամ Ալամանց) Գոմեր գյուղը Պետրոս Մադաթյանի անվան հետեւողությունը կոչվում է նաեւ «Մադաթ»⁴: Սակայն բանաստեղծություններից մեկում Սեյադը վկայում է, որ ինքը ծնվել է Շամախիում, իսկ ընտանիքը սերում է Արցախի Չանախչի (Ավետաբանոց) գյուղից. «Յայտնի Սեյեադն եմ, Մադաթեան ցեղէն/, յԱրցախայ երկրի Չանաղչի գեղէն...»⁵, «Հայրս տէրտէրայ, / Բնիկ Արցախեցի եմ՝ ի

¹ Հեղինակն ինքն է ընտրել «Սեյեադ» մականունը. «Սեյեադ ըստ Արաբացոց է որսորդն, վասնորոյ եւ ես որոնող ամենայն պատճառաց գոլով, որսորդ անունն ընտրեցի մականունն, ըստ սովորութեան՝ յարեւելեան երգչաց, յորոց ոմն Հաֆիզ կոչի, ոմն Սայդի, ոմն Փիրտովսի եւ այլն, որք իրանց իսկ անունը չէ, այլ մականուն» (տե՛ս ՄՄ ձեռ. 9562, թ. 27ա): Իր ձեռագրերում նա ստորագրում է նաեւ «Պետրոս Մադաթով», «Պետրոս Մադաթեանց» տարբերակներով (տե՛ս ՄՄ ձեռ. 7655, թ. 22ա, 122ա):

² Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հ. 1, Երեւան, 1962, էջ 252. «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 10, Երեւան, 1984, էջ 283:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 425, ց. 1, գ. 89, թ. 8:

⁴ Տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. Ա., Երեւան, 1986, էջ 60: Բացառված չէ, որ բառարանի հեղինակները շփոթել են գններալ Վալերիան (Ռոստոմ) Մադաթովի եւ Պետրոս Մադաթյանի ծննդավայրերը:

⁵ ՄՄ ձեռ. 7655, թ. 100բ: Հեղինակը ծանոթագրում է. «Չանաղչի Վարանդայ գաւառակի գիւղաքաղաքն է եւ է հայրենիքն Շահնազարեան եւ Մադաթեան սերնդոց եւ հայերէն կոչում է Աւետարանոց»:

մօրէ ծնեալ ի Շրուան»⁶: 1826 թ. Մաղաթյանն ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը՝ լինելով 18 անդրանիկ շրջանավարտներից մեկը⁷:

Հայաստանի ազգային արխիվի՝ Էջմիածնի Սուրբ Լուսավորչական Սինոդի ֆոնդում պահպանվում է 1840 թ. փետրվարի 6-ին վրացական Հ^ր 6 գումարտակի ենթասպա Պետրոս Մաղաթյանի գրած դիմումը՝ ուղղված Էջմիածնի հոգեւոր Սինոդին: Նամակագիրը Շիրվանի թեմի կոնսիստորիայում որպէս էկզեկուտոր (դատական կատարածու) ծառայութեան անցնելու ցանկութիւնն էր հայտնում: Տեղեկացնելով, որ տիրապետում է հայերեն, ռուսերեն, պարսկերեն եւ թուրքերեն լեզուներին՝ նա պատրաստակամութիւնն էր հայտնում դասավանդել Շամախու հոգեւոր սեմինարիայում⁸: Սեյադի բանաստեղծութիւնների խորագրերին կից, ինչպէս նաեւ վերջում թողած հիշատակագրութիւններից կարելի է եզրակացնել, որ նա շրջել է Կարսում, Էջմիածնում, Ալեքսանդրապոլում, Ջեյվայում, Սարդարապատում: 1855-1856 թթ. նա պաշտոնավարել է Արեւելյան Հայաստանում, եղել Սարդարապատի գավառակապետը⁹: Հավանաբար հենց այդ շրջանում Սեյադը հանդիպել է աշուղ Շիրինին՝ արժանանալով վերջինիս բարձր գնահատանքին¹⁰: Նշենք, որ 1860 թ. նա արդեն ստորագրում էր «կապիտան Մաղաթեանց»¹¹: Սեյադն ամուսնացած է եղել Ոսկի անունով մի բարեպաշտ կնոջ հետ, ունեցել է մեկ որդի, ով վաղաժամ մահացել է (հավանաբար 1856 թ.)՝ մեծ վիշտ պատճառելով աշուղին¹²:

Աշուղ Սեյադի առանձին ստեղծագործութիւնները տարբեր ժամանակներում հրատարակվել են «Նոր Քնար», «Մեղու», «Արծուի Վասպուրական» եւ այլ պարբերականներում, նաեւ աշուղական գրականութեան ժողովածուներում: 1857 թ. Մոսկվայում Ոսկան Տ. Գեւորգյանց Հովհաննիսյանց Երեւանցին հրատարակել է Սեյադ Շամախեցու ստեղծագործութիւնների առաջին ժողովածուն, որի մեջ ամփոփված են մինչեւ 1856 թ.

⁶ ՄՄ ձեռ. 7655, թ. 106բ:

⁷ Տե՛ս Ա. Երիցեան, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հայոց հոգեւոր դպրոցի, որ ի Թիֆլիզ (1824-1899 թթ.), հ. Ա. (1824-1850 թթ.), Թիֆլիս, 1898, էջ 114-116:

⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 704, թ. 1 եւ շրջ.:

⁹ Տե՛ս “Кавказский календарь, на 1856 годъ”, Тифлис, 1855, с. 627. “Кавказский календарь, на 1857 годъ”, Тифлис, 1856, с. 529. «Երկասիրութիւն Սէյեադի կապիտան Պետրոս-Բէգի Մաղաթեանց», Բագու, 1884, էջ 73:

¹⁰ Տե՛ս ՄՄ ձեռ. 7655, թ. 152բ:

¹¹ Տե՛ս ՄՄ ձեռ. 9562, թ. 53բ, 143բ:

¹² Տե՛ս «Ջանազան երգք Պ. Պետրոսի Տ. Յովսէփեան Մաղաթեանց Շամախեցոյ Սէյեադ մականունանելոյ յօգուտ ազգի», Մոսկուա, 1857, էջ 44-45, 64-65, 84-85. ՄՄ ձեռ. 7655, թ. 80ա:

գրված գործերը¹³: Ավելի ուշ՝ 1884 թ., Բաքվում հրատարակվել է Սեյադի բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն, ուր ներառված են 1859-1862 թթ. գրված ստեղծագործությունները¹⁴:

Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են Պետրոս Մաղաթյանի ստեղծագործությունները պարունակող երեք ձեռագրեր (ՀՊ 7655, 9562, 10005):

ՄՄ ՀՊ 7655 գրչագիրը եղել է Երեւանի հնությունների պահպանության կոմիտեի հավաքած ձեռագրերի շարքում, որը 1922-1938 թթ. ընթացքում ներառվել է Երեւանի Գրական թանգարանի հավաքածուի մեջ, իսկ այնուհետեւ փոխանցվել Մատենադարանին¹⁵: Ինքնագիր օրինակը գրվել է 1865-1866 թթ. Շամախիում եւ Վլադիկավկազում: Ընդհանուր 186 թերթաքանակով ձեռագիրը բաղկացած է 5 առանձին տետրակներից՝ գրչի էջակալմամբ՝ 1-41 (2ա-22ա), 1-41 (25ա-65ա), 1-104 (69ա-120բ), 1-73 (126ա-162ա), 1-19 (165ա-183ա): 270-ից ավելի ինքնուրույն մեծ ու փոքր բանաստեղծություններից բացի՝ ժողովածուում ներառված են նաեւ Կռիլովի, Ֆիզուլու, Ֆիրդուսու, Հաֆեզի ստեղծագործությունները՝ Սեյադի թարգմանությամբ:

1865-1867 թթ. Ս. Պետերբուրգում ձեռագիրը գրաքննել են Անդրեյ Սմիրնովը եւ Նիկիտա Բերոնը: Հայագետ, զինվորական եւ պետական գործիչ, դիվանագետ Ն. Բերոնը սովորել է Աստրախանի Աղաբաբյան դպրոցում: 1845 թ. նա սկսել է Հայոց լեզու դասավանդել Ս. Պետերբուրգի համալսարանի հայերենի, վրացերենի եւ թաթարերենի (ադրբեջաներեն) նորաբաց ամբիոնում: Այդ շրջանից սկսած՝ նրան հանձնարարվում է գրաքննել հայալեզու գրականությունը, իսկ 1857 թ. պաշտոնապես նշանակվում է Սանկտ Պետերբուրգի գրաքննական կոմիտեի հայկական տպագրության գրաքննիչ¹⁶: Հետաքրքրական է, որ Սեյադի ստեղծագործությունների առաջին (1857 թ.) հրատարակության գրաքննիչ Ն. Ախմատովը 1856 թ. ժողովածուի տպագրությունը թույլատրել է նույն Բերոնի կարծիքի հիման վրա¹⁷:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տե՛ս «Երկասիրություն Սեյադի կապիտան Պետրոս-Բեգի Մադաթեանց»:

¹⁵ Տե՛ս ՅՁՄՄ, կազմեցին՝ Օ. Եգանյանը, Ա. Զեյթունյանը, Փ. Անթաքյանը, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Կ. Ա., Երևան, 1965, էջ 149-150, 154:

¹⁶ Տե՛ս Ս. Արեշյան, *Армянская печать и царская цензура*, Ереван, 1957, էջ 113-116:

¹⁷ Տե՛ս «Ջանազան երգք Պ. Պետրոսի Տ. Յովսէփեան Մադաթեանց Շամախեցոյ...», տիտղոսաթերթը:

ՄՄ Հ^մ 7655 ձեռագրի թերթերի առաջին երեսին վանկատու-մով գրված է՝ «Н. Бероев» (2ա, 69ա, 121ա, 126ա, 165ա), «Цензоръ Санкт-Петербургскаго Цензурнаго Комитета, Андрей Смирнов» (թ. 69-120), «Цензоръ Андрей Смирнов» (թ. 126-161), «Цензоръ Санкт-Петербургскаго цензурнаго комитета, статский советник А. Смирнов» (թ. 165-183): **Ձեռագրի առանձին մասերի անկյուններում առկա են գրաքննության հանձնելու մտից թվականներ եւ հերթական համարներ**¹⁸: Փաստորեն, Պետրոս Մաղաթյանը 1865-1866 թթ. գրված ստեղծագործությունների տետրակներից յուրաքանչյուրը գրաքննության է ներկայացրել անմիջապես դրանք ավարտելուց հետո: Վերջին հատվածը գրաքննական կոմիտեում ստացվել է 1867 թ. ապրիլի 8-ին, իսկ ապրիլի 29-ին թույլատրվել է տպագրության¹⁹: Իր նշումներում Ն. Բերոևը մակագրում է, որ ոչինչ չի հակասում ցենզուրային կանոնադրությանը²⁰, սակայն վերջնական հաստատումը եւ տպագրության թույլտվությունը տվել է Ա. Սմիրնովը: Վերջինիս «Дозволено цензурою С. П. Б., 11 июня 1866 года, цензор А. Смирнов»²¹ եւ նման մյուս նշումներից հետո գրված են Սանկտ Պետերբուրգի գրաքննական կոմիտեի շրջանաձեւ կնքադրոշմները: Փաստորեն, կոմիտեն թույլատրել է Սեյադի ստեղծագործությունների տպագրությունը: Այս դեպքում անհայտ է մնում դրանց չհրատարակվելու պատճառը (միայն 3 տաղ ժամանակին հրատարակվել է «Մեղու Հայաստանի» պարբերականում):

Հ^մ 7655 ձեռագրում կա 5 ներդիր, որոնց վրա ուղևորներն նշված է Մաղաթյանի 5 տետրակներից յուրաքանչյուրի թերթաքանակը եւ տարեթիվ՝ 1868 թ., ինչպես «Въ сей тетради пронумерованныхъ сорок одинъ (41 стр.) отъ г[осподи]на Мадатова, 1868 г.»²²: Գրաքննություն անցած 5 առանձին տետրակները միացվել եւ մեկ ձեռագրի մեջ կազմվել են 1868 թ.: Նույն թվականին էլ, հավանաբար, գրվել են ձեռագրում առկա ստեղծագործությունների ցանկերը²³:

Մի քանի տարի անց՝ հավանաբար Սեյադի մահից հետո, կրկին արձարծվել է սույն ձեռագրի հրապարակման հարցը: Ս. Պետերբուրգի կոմիտեի երկու գրաքննիչների (Ն. Բերոևի եւ Ա. Սմիրնովի) արտոնությունը

¹⁸ Տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 7655, թ. 68ա՝ N 669 – 19 мая 1866, 121ա՝ N 1277 - 23 декабря 1865, 124ա՝ N 1357 – 31 октября 1866, 184ա՝ 443/1867, 8 IV:

¹⁹ Անդ, թ. 184ա, 184բ:

²⁰ Անդ, թ. 2ա, 69ա, 121ա, 126ա, 165ա:

²¹ ՄՄ ձեռ. 7655, թ. 2ա, 68բ, 184բ:

²² Անդ, թ. 2ա, նման՝ 23ա, 123ա, 124ա, 184ա:

²³ Անդ, թ. 1բ, 24ա, 66բ:

բավարար չհամարելով՝ ձեռագիրը կրկին հանձնվում է գրաքննություն՝ այս անգամ Կովկասի գրաքննական կոմիտե (Թիֆլիս)։ 1872 թ. այստեղ գրաքննիչ էր նշանակվել ծայրահեղ ուսուցիչ, ապագային գործիչ Սողոմոն Մելիք-Մեհրաբովը, ում Ալեքսանդր Շիրվանզադեն անվանել է «մտքի դահիճ»²⁴։ Ձեռագրի 2ա թերթի վերին հատվածում, ինչպես նաև 2-21 թերթերի առաջին երեսին մանուշակագույն թանաքով վանկատումով գրված է. «Дозволено цензурою 22-го мая, 1873 г. с исключениемъ»: Մելիք-Մեհրաբովն իրեն բնորոշ ծայրահեղ գործելակերպով ջնջել է ընդարձակ հատվածներ եւ ամբողջական բանաստեղծություններ. «Исключено на страницах: 3, 4, 5, 7, 8, 9, 10, 14, 19, 20, 31, 33, 34, 35 и 38. [Цен]зурою Тифлиса, 22 мая 1873 года. Цензоръ С. Мелик-Меграбов»²⁵:

Միանշանակ կարելի է պնդել, որ 1873 թ. գրաքննվել են Հ^ր 7655 ձեռագրի միայն առաջին 22 թերթերը, եւ գործընթացն ինչ-ինչ պատճառներով անավարտ է մնացել, որովհետեւ հետագա թերթերին մանուշակագույն թանաքով արված որեւէ նշում չկա:

Մատենադարանում պահվող Հ^ր 9562 ինքնագիր ձեռագրում ամփոփված են 1859-1862 թթ. ընթացքում Սեյադի գրած ստեղծագործությունները: Ձեռագրի առաջին էջում առկա է հետեւյալ գրությունը. «Հ. Արեւյանին: Քո հայրենակից, ժողովրդական երգիչ Սեյադի այս ձեռագիր ժողովածուն մի մերժիլ ընդունել: Հ. Մարթնոսյան Շամախեցի, 3 դեկտեմբ. 1932, Լենինական»: Նույն թերթի ձախ անկյունում գրված է «Abelian»: Փաստորեն, 1932 թ. սկսած ձեռագիրը պատկանել է հայ մեծանուն դերասան Հովհաննես Աբելյանին, իսկ 1955 թ. հանգրվանել է Երեւանի Մատենադարանում²⁶:

Ձեռագիրը համապատասխանում է Սեյադ Շամախեցու երկերի 1884 թ. Բաքվի հրատարակությանը: Այն բաղկացած է 3 տետրակից, որոնցից երկրորդը եւ երրորդը (թ. 56ա-85բ, 86ա-143բ) 1860-ական թվականներին գրաքննել է նույն Ն. Բերոելը՝ տարբեր ստեղծագործություններից կրճատելով փոքր հատվածներ կամ արտահայտություններ՝ «не нужно» նշումով²⁷: Այդուհանդերձ, տպագրությունից առաջ՝ 1883 թ., ձեռագիրը

²⁴ Մ. Մխիթարյան, Կովկասի գրաքննական կոմիտեի նյութերից, ՊԲՀ, 1974, թ. 3, էջ 105:

²⁵ ՄՄ ձեռ. 7655, թ. 22ա:

²⁶ Տե՛ս ՅԶՄՄ, հ. Ա., էջ 170:

²⁷ Տե՛ս ՄՄ ձեռ. 9562, թ. 56ա, 86ա, իսկ 56-143 թերթերի առաջին երեսին վանկատումով գրված է «Н. Бероев»:

կրկին գրաքննության է ենթարկվել Թիֆլիսում՝ նույն Մելիք-Մեհրաբովի կողմից²⁸:

Հ^ր 7655 եւ 9562 ձեռագրերի՝ Թիֆլիսում իրականացված գրաքննության արդյունքում ջնջվել են ոչ միայն առանձին տողեր կամ հատվածներ, այլեւ ամբողջական բանաստեղծություններ՝ մանուշակագույն թանաքով արված “ИСКЛЮЧИТЬ” նշումով: Արգելված բանաստեղծությունների մեծ մասն («Առ Ջանգի գետն Երեւանայ», «Երգ ի դիմաց Հայաստանի», «Առ գլուխն ազգի Հայոց... սն», «Սիւնք Ռուսիոյ Հայոց» եւ այլն) առավելապէս ազգային, հայրենասիրական թեմաներով են, ուր խոսվում է ցիրուցան եղած հայ ժողովրդի միաբանության անհրաժեշտության, հայրենիքի գաղափարի մասին: Օրինակ՝ տպագրությունից դուրս մնացած «Բան ի դիմաց Սէյեադի առ բանասէրս Հայոց ազգի, որք կամին տալ զկենդանութիւն կիսամեռ Հայաստանին» վերնագրով բանաստեղծության սկսվածքն է.

«Հայոց նման ցիրուցան եղած ազգին
Միաբանութիւն տալը շար դժուար է.
Նրանց համար այսուհետեւ վերստին
Ի Հայաստան դառնալը շար դժուար է»²⁹:

Մեկ այլ՝ «Առ բիւբիւ թռչունն» բանաստեղծությունից հանված է հետեւյալ հատվածը.

«Ամեն ազգ ունի հայրենիք,
Հայոց ազգին հայրենիք չիք
Եղել են օրաւրաց որդիք,
Եղկելի բիւբիւ էր կուլաս:
Դու ծառայում ես քո տարին,
Հայերի քանն է դժուարին,
Ջի գերի են օրաւրին,
Եղկելի բիւբիւ էր կուլաս»³⁰:

Դրանց մի մասն էլ պարունակում են քաղաքական բնույթի, գրաքննիչին վտանգավոր թվացած ակնարկներ: Օրինակ՝ «Յաղագս զանազան

²⁸ Անդ, թ. 1թ, 143բ:

²⁹ Անդ, թ. 90ա:

³⁰ ՄՄ ձեռ. 9562, թ. 99ա:

բերմանց ժամանակի» բանաստեղծության «Ձկայ արդարադատ իշխան, / Ոչ օրէնք գոյ, ոչ դատաստան» երկտողը³¹:

Արգելվել են նաեւ գռեհկաբանություն, խիստ մտերմիկ սիրային տեսարաններ պարունակող տաղերը, կամ դրանց առանձին հատվածները: Իսկ անհարկի բառերը փոխարինվել են նորերով: Այսպես՝ «Բերմունք ժամանակի» խորագրով բանաստեղծության մեջ «Անյայտ կու մնաս եթէ շատ եկող գնացող չունենաս, / Քեզ մին սեւ փող գին չեն դնիլ, թէ կին չնացող չունենաս» դրվագում «չնացող» բառը փոխարինված է «սիրուն» բառով, որն ի վերջո տպագրության ժամանակ դարձել է «գեղեցիկ»³² հավանաբար բանաստեղծական ութմը պահպանելու նպատակով: «Անկեղծ եւ կեղծաւոր» բանաստեղծությունից կրճատված է «Կինամօլ սօլթանը շանից ստոր է, / Արուագէտ իշխանը է մահ տարածամ» տողերը³³:

Սեյադի ստեղծագործությունները պարունակող՝ Մատենադարանի ՀՊՐ 10005 ձեռագրի գրիչը թեաբար համարվում է գրական-մշակութային նշանավոր գործիչ Մսեր Մսերյանը³⁴: Առաջին մասը (թ. 2ա-49բ) քաղվածաբար ընդօրինակված է 9562 թվահամարի ձեռագրից: Ընդ որում՝ այստեղ ընդգրկված են նաեւ գրաքննության արդյունքում տպագրությունից դուրս մնացած մի շարք ստեղծագործություններ: 50ա-53բ թերթերի տաղերը, մեր կարծիքով, գրված են հենց Սեյադի ձեռքով, իսկ 54ա-55ա թերթերն ընդօրինակված են մեկ այլ գրչի կողմից: Առանձին մասերից բաղկացած այս պրակները, որոնք 1960 թ. Մատենադարանին է նվիրել ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը³⁵, միացվել են իրար՝ վերակազմվելով մեկ ձեռագրի մեջ:

Սեյադի ստեղծագործական ժառանգությունը բազմաբնույթ է. սիրային, կրոնական, բարոյախրատական եւ այլն: Իբրեւ ականատես՝ նա նկարագրել է իր ժամանակաշրջանում տեղի ունեցած նշանավոր դեպքերը («Ի Սէյեադէ վասն մահու նորին կայսերական Բարձրութեան Նիկօլայ Ալեքսանդրովիչ-ժառանգի Ամենագոր գահին Ռուսաց, 12-ին Ապրիլի, 1865 ամի Տեառն», որում ողբում է Նիկոլայի մահը, «Մուխամազ յօրինեալ ի 11 Ապրելի 1866 ամի, երբ Շամախի քաղաքումը լուր տարածեցաւ, թէ ի Պետերբուրգ ձեռամբ չարեաց ատրճանակ է արձակվել մեր Աստուածագոր կայսր Աղեքսանդր Երկրորդի վերայ, եւ նա շնորհիւ

³¹ ՄՄ ձեռ. 7655, թ. 20բ:

³² Տե՛ս «Երկասիրութիւն Սէյեադի կապիտան Պետրոս-Բէգի Մադաթեանց», էջ 3:

³³ ՄՄ ձեռ. 9562, թ. 11ա:

³⁴ Տե՛ս ՑԶՄՄ, հ. Բ., Երեւան, 1970, էջ 1028:

³⁵ Տե՛ս ՑԶՄՄ, հ. Ա., էջ 172:

ամենազորին Աստուծոյ անվնաս է մնացել»³⁶), անդրադարձել հասարակական-սոցիալական, քաղաքական իրադարձություններին, քննադատել առօրյա կյանքում հանդիպող բացասական երեւոյթները: Նա բանաստեղծություններ է նվիրել նաեւ իր ժամանակակից հոգեւոր եւ աշխարհիկ գործիչներին՝ Ներսես Աշտարակեցի «աննման հայրապետին եւ հրեշտակակրօն կաթողիկոսին»³⁷, Շամախու նահանգապետ Իվան Վիլամանին, որում գովերգում է քաղաքական գործչին՝ նրան անվանելով «Շրուանայ սրտացաւ հայր»³⁸, եւ այլոց:

Առանձնապես մատնանշելի են Սեյադի՝ աստվածաշնչային, կրոնական, աստվածաբանական թեմաներով զրկած ստեղծագործությունները («Ներգործութիւնք եօթն մահացու մեղաց», «Առ քառաթեւ սուրբ խաչն Քրիստոսի», «Սգալի երգ վասն չարչարանաց Բանին Աստուծոյ»³⁹ եւ այլն), որոնցում լավագույնս դրսեւորված են նրա աստվածաբանական խորը գիտելիքները, Հայ եւ Ընդհանրական եկեղեցու պատմութեանը քաջածանոթ լինելը: Առանձին տաղերում հեղինակը հիշատակում է Նիկիայի եւ Քաղկեդոնի տիեզերաժողովները, անդրադառնում լյութերականությանը⁴⁰ կոչ անելով հավատարիմ մնալ Հայ Առաքելական եկեղեցու դավանանքին: Աստվածաշնչյան սրբերը, որպէս բարձրագույն տիպար, արտացոլված են նրա մյուս ստեղծագործությունների հերոսների մեջ: Օրինակ՝ իր կնոջը՝ Ոսկուն նվիրված բանաստեղծութեան մեջ նրան համեմատում է Մարիամի, իսկ իրեն՝ Հովսեփի հետ:

Սեյադը տաղեր է նվիրել պատմական անձանց՝ Վարդան Մամիկոնյանին⁴¹, Վասակ Սյունուն⁴², Զապել Թագուհուն եւ այլոց: 74 տնից բաղկացած «Վասն չարութեան աշխարհի» բանաստեղծութեան մեջ անձնավորելով Աշխարհ-ը եւ նրան նույնացնելով չարի հետ՝ հեղինակը նկարագրում է Հայոց եւ Համաշխարհային պատմութեան մեջ կարեւոր դեր ունեցած դեմքերի՝ Աստվածաշնչյան հերոսների (Ադամ, Եվա, Կայեն, Նոյ, Մելքիսեդեկ, Աբրահամ, Իսահակ, Հակոբ, Հովսեփ, Մովսես, մարգարեներ), Հայոց եկեղեցու սրբերի (Գրիգոր Լուսավորիչ, Մեսրոպ Մաշտոց, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի), Տիեզերական եկեղեցու հայրե-

³⁶ ՄՄ ձեռ. 7655, թ. 16աբ, 114աբ:

³⁷ Անդ, թ. 50բ, 168բ:

³⁸ Անդ, թ. 103ա:

³⁹ Անդ, թ. 69աբ, 79բ, 92աբ:

⁴⁰ Անդ, թ. 20ա, 57ա:

⁴¹ ՄՄ ձեռ. 7655, թ. 50բ, 126ա:

⁴² Անդ, թ. 96աբ:

րի (Հովհան Ոսկեբերան, Նիկողայոս Աքանչեւագործ, Բարսեղ Կեսարացի, Եփրեմ Ասորի), թագավորների եւ կայսրերի (Նաբուգոդոնոսոր, Տիգրան Մեծ, Նադիր Շահ, Պետրոս Մեծ, Նապոլեոն), իշխանների եւ զորավարների (Հանիբալ, Մուշեղ Մամիկոնյան, Վասակ Սյունի, Պոտյոմկին, Սուվորով եւ այլն) հետ տեղի ունեցած վատ դեպքերը, դրանց արձագանքները.

«Դառնութեանց մայր եւ անողորմ Աշխարհ,
Ով եկալ քեզ հիւր՝ ողբալով զնաց,
Դու եւ զանազան չարեաց ճանապարհ,
Քոյ միջին երկար, ասա՛, ո՛վ մնաց»⁴³:

Սեյադը կերպարանափոխվում է իր գրական հերոսների մեջ, խոսում նրանց անունից, արտահայտում իր վերաբերմունքը ոչ միայն իր ժամանակի, այլեւ պատմական տարբեր փուլերում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ՝ դրանք առավելապես դիտարկելով բարոյաբանական տեսանկյունից.

«Պարմութիւնն է իսկ հայելի վարուց,
Մարդկային մնաց ուղիղ ուղեցույց»⁴⁴:

Իր երգերում նա գովերգում է հայրենի բնությունը՝ Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, սարերն ու գետերը: Ողբալով Հայաստանի եւ հայ ժողովրդի թշվառ վիճակը՝ նա Հայոց աշխարհի ապագան ու ծաղկումը կապում է Ռուսաստանի հետ.

«Սէյեան՛, օրհնեա՛, Ռուսաց գահն,
Որ թշնամեաց պարտէ ւսին,
Նա է որք Հայոց գրահն»⁴⁵:

Սեյադի բանաստեղծություններն օժտված են նուրբ հումորով եւ սուր մտքով: Ասվածի վառ վկայությունն է «Երգիծաբանություն» խորագրով բանաստեղծությունը, որում հեղինակը բացասական եւ զվարճալի որակումներով գովերգում է իր սիրեցյալին. «Այդ գեղեցկությունդ, որ դու ունես, եա՛ր, / Կապիկների մէջ չի՛ք քեզ հաւասար...»⁴⁶: Թեմատիկ առու-

⁴³ Անդ, թ. 82ա-85ա:

⁴⁴ «Երկասիրութիւն Սէյեանի կապիտան Պետրոս-Բէգի Մադաթեանց», մաս Գ., էջ 82:

⁴⁵ ՄՄ ձեռ. 7655, թ. 101բ:

⁴⁶ Անդ, թ. 173բ:

մով եզակի է թեյին նվիրված «Ի դիմաց Սէյեադի առ Ջայն, որ հայէրէն կոչի թէյ» տաղը, որտեղ ներկայացվում է, թե ինչպես տարբեր ժողովուրդներ («Թէ ֆռանգ, թէ ռուս, թէ նեմեց, թէ հայ») դարձել են այդ «աշխարհաւէր» խմիչքի «գերին»⁴⁷:

Սեյադի գրական ժառանգությունը հետաքրքրական է ոչ միայն գեղարվեստական առումով, այլևս որպես Հայաստանի, Ռուսաստանի եւ տարածաշրջանի մյուս երկրների՝ ԺԹ. դարի պատմության ուսումնասիրման սկզբնաղբյուր: Ստեղծագործություններից շատերն ուշագրավ են ժամանակաշրջանի առօրյա պատմության, հատկապես մարդկանց բարքերի, բնավորության ու մտածելակերպի ուսումնասիրման տեսանկյունից: Այսպես՝ «Նկարագրութիւն բարուց եւ վարուց արական եւ իգական բնակչաց Կովկասեան նահանգաց (ղուբերնիայից)» բանաստեղծության մեջ նկարագրված է Թիֆլիսի, Քութայիսի, Երեւանի, Շամախու, Դերբենդի, Ստավրոպոլի բնակիչների նիստուկացը⁴⁸:

Պետրոս Շամախեցին հորինել է ոչ միայն հայերեն, այլևս թուրքերեն ու ռուսերեն ստեղծագործություններ: Իր տեսակի մեջ հետաքրքրական է քառալեզու (թուրքերեն, հայերեն, ռուսերեն, պարսկերեն) սիրային մոտիվաբանությունը, որի սկսվածքն է՝ «Գոր նեջայ վարդանսց է ուսոմնի տեմե գիւլ տարէր»: Ի դեպ, հեղինակը ծանոթ է եղել Արցախի բարբառին, որով գրել է մի քանի ոտանավոր. «Քաղցրահնչիւն բարբառ Ղարաբաղցոց» բանաստեղծությունը.

«Լիու կաց տեսնամ մեր խօխան
Բրծաւ թավուր էն ծօխան,
Որ քրթից մեր պրիշակը,
Էն քընրծախար մընէշակը»⁴⁹:

Արժեքավոր են նաեւ Սեյադի ձեռագրերի թերթերի ստորին լուսանցքների ծանոթագրությունները՝ օտարալեզու բառերի, տեղանունների ու անձնանունների բացատրություններ, պատմական եւ ժամանակակից իրողությունների վերաբերյալ հարուստ տեղեկատվություն: Օրինակ՝ «հէջ Պարսից հիշ բառիցն են հանել տաճիկք եւ նշանակում է երբեք», «Մաջնուն Լէյլու սիրահարն էր, որոյ սէրը նրան յիմարացրուց եւ ձգեց անապատները», «Բօշայք յայտնի ցեղ են, յորոց միջին ամենայն

⁴⁷ ՄՄ ձեռ. 7655, թ. 30ա:

⁴⁸ Անդ, թ. 37ա-8բ:

⁴⁹ Անդ, թ. 120ա:

կերպ անշուք արարք կը գտնուին եւ Երեւան քաղաքի համարայ մեծ մասն ի նոցանէ, զորս ոռւսք «ցիղան» են կոչում», «Հացունեաց հրաշագործն Սուրբ Խաչն է ի Վայոց Ձորն Հայոց աշխարհի, որ այժմ կոչվում է Արկազեան Աւետարան»⁵⁰ եւ այլն:

Ամփոփելով՝ փաստենք, որ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է ԺԹ. դարի հայ բանաստեղծ, զինվորական գործիչ Սեյադ Շամախեցու 2 ինքնագիր ձեռագիր (ՀՊ՝ 7655, 9562) եւ մեկ ընդօրինակություն (ՀՊ՝ 10005): Ինքնագրերը ժամանակին գրաքննվել են Սանկտ-Պետերբուրգի եւ Կովկասի գրաքննական կոմիտեների կողմից: Արդյունքում՝ ՄՄ ՀՊ՝ 9562 ձեռագիրը զգալի կրճատումներով հրատարակվել է 1884 թ., իսկ 7655-ը, որում ամփոփված են 1865-1866 թթ. հեղինակի գրած ստեղծագործությունները, մինչ օրս անտիպ է: Ներկայացնելով այդ ձեռագրերի պատմությունը՝ լիահույս ենք, որ մի օր դրանք ամբողջապես լույս կտեսնեն՝ իրենց ուրույն տեղը գրավելով հայ աշուղական արվեստի գանձարանում:

РЕЗЮМЕ

В статье представлена жизнь и литературное наследие армянского поэта 19-го века, военного деятеля Петроса Мадатяна (ашуг Сеяд Шамахеци), на основе рукописей и архивных документов.

В Матенадаране имени Месропа Маштоца хранятся три рукописи, содержащие сочинения Сеяда (N 7655, 9562, 10005). Автографы (7655, 9562) были цензурованы цензурой комитетов Санкт-Петербурга и Кавказа. В результате рукопись N 9562 была опубликована со значительными сокращениями в 1884 году в Баку, а N 7655 не опубликована до настоящего времени. Запрещенные сочинения были написаны в основном на национальные, патриотические и политические темы. Стихи с вульгарными и интимными эпизодами были также исключены.

Кроме художественной ценности, литературное наследие Сеяда также интересно как источник истории Армении, России и других стран региона 19-го века, в частности для изучения истории повседневности и обычаев. Особенно примечательны стихи Сеяда, посвященные библейским и великим церковным деятелям. Петрос Шамахеци сочинял не только на армянском, но и на русском и турецком языках.

⁵⁰ ՄՄ հմ. 7655, ր. 2ր, 12ր, 40ր, 83ր:

SUMMARY

In this article life and literary legacy of the 19th century Armenian poet, military figure Petros Madatyan (*ashugh* Seyad Shamakhetsi) is presented on the basis of manuscripts and archival documents.

In Mesrop Mashtots Matenadaran three manuscripts containing Seyad's writings (N 7655, 9562, 10005) are preserved. The autographs (N 7655, 9562) were censored by the censorship committees of St. Petersburg and the Caucasus. As a result MM 9562 was published with substantial reductions in 1884 in Baku. MM 7655, which includes more than 270 compositions is up to date unpublished. Forbidden poems are principally related to national, patriotic and political themes. Verses containing vulgar and intimate love episodes have also been deleted.

Besides the artistic value Seyad's literature is a fascinating source for the 19th century history of Armenia, Russia and the other countries of the region, in particular for studying the everyday life and customs. Seyad's verses devoted to Biblical and Church great figures are especially remarkable. Petros Shamakhetsi has composed not only in Armenian but also in Russian and Turkish languages.



ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ*պարսկական գիր. դոկտոր, ՄՄ***«ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՅ» ՄԱՏԵՆԱՇԱՐԸ
ԵՒ ՄԵՐ ԲՆԱԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ալեկի քան մէկ դար եւ մի տասնամեակ առաջ՝ 1902 թ., յայտնի բանասէր Ստ. Մալխասեանցը հրապարակեց գրերի գիւտի հազար հինգհարիւրամեակի առիթով «Պատմագիրք Հայոց» մատենաշար տպագրելու յայտ-ծրագիրը¹, ապա 1904, 1909 եւ 1913 թթ. այդ շարքով հրատարակուեցին Ղազար Փարպեցու², Ագաթանգեղոսի եւ Մովսէս Խորենացու Պատմութիւնները³: Սրանք, ըստ էութեան, մեր պատմագիրների երկերի առաջին կանոնաւոր-«գիտական»⁴ հրատարակութիւններն էին, մատենաշարն այս երեք գրքով աւարտուեց. ընդհատուեց առաջին համաշխարհային պատերազմի պատճառով: Թէեւ Ստ. Մալխասեանցի

¹ Ս. Մալխասեանց, Հին դարերից, «Մշակ», 1902, 27 հոկտեմբերի, թ. 238, էջ 1-2. 31 հոկտեմբերի, թ. 241, էջ 1-2. 1 նոյեմբերի, թ. 242, էջ 1-2:

² «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», աշխատ.՝ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, 1904, 4 չհ., ԺԶ., 211, 3 չհ. էջ:

³ Ագաթանգեղոսի եւ Մովսէս Խորենացու երկերի տպագիրների մատենագիտական նկարագրութիւններն արել ենք իրենց ներկայացման տեղերում, միաժամանակ այստեղից սկսելով՝ Խոր., Ագաթ. համաոտումներով եւ էջահամարներով յղում ենք շարադրանքում կամ տողատակում:

⁴ «Գիտական» բառով նկատի ունենք ընդհանրապէս ձեռագրերի համեմատութեամբ, նաեւ՝ որոշակի ձեռագրերի հասցեական ընթերցումների նշանակմամբ արուած հրատարակութիւնները, որովհետեւ տիտղոսաթերթերի վրայ «քննական» եւ անգամ «գիտաքննական» բնորոշում ունեցող շատ բնագրեր յաճախ, եւ երբեմն իրաւացիօրէն, ստացել են քննադատների բացասական՝ ընդհուպ մինչեւ «ոչ գիտական եւ ոչ քննական» համարող գնահատականներ: Հիմնականում ԺԺ. դ. ընթացքում եւ մեծ մասամբ Վենետիկի Մխիթարեանների հրատարակութիւններում համեմատուած ձեռագրերի ընթերցումների՝ «ոմանք», «այլք», «երկու օրինակք» եւ նման բնորոշումներով գրառուած ընթերցումները համարում ենք անորոշ՝ անհասցէ, անստուգելի, ուստի եւ այդպիսի տպագիրներն այստեղ «գիտական» չենք համարում: Այդուհանդերձ, առաւել քան վստահ ենք, որ բնագրական քննութիւնների ընթացքում պետք է այդպիսի ընթերցումներն անպայման նկատի ունենալ:

ծրագրային շարադրանքը, որքան գիտենք, որեւէ արծարծում-քննարկում չի ունեցել⁵, սակայն հետագայ տարիներին համարեա նրա ներկայացրած սկզբունքներով, բայց առանց մատենաշարային վերնախորագրերի, տպագրուեցին նաեւ այլ հեղինակների երկեր: Այս մատենաշարը մեր գիտութեան, առանձնապէս՝ պատմագրական բնագրագիտութեան պատմութեան համար նշանակալի էջ կամ մի տեսակ սկզբնակէտ էր, այդ իսկ պատճառով անհրաժեշտ ենք համարում յատկապէս բնագրերի հրատարակութեան եղանակը՝ մեթոդի տեսանկիւնից քննել-արժեւորել այս շատ կարեւոր շարքը: Որոշեցինք մատենաշարի ընդհանուր յատկանիշներն այստեղ քննել Ագաթանգեղոսի եւ Մովսէս Խորենացու երկերի տպագրութիւնների հիման վրայ, իսկ Ղազար Փարպեցու Պատմութեան տպագրին յարմար դիտեցինք անդրադառնալ առանձին՝ «Ղազար Փարպեցու Հայոց պատմութեան եւ Թղթի տպագիրների բնագրական վիճակը» խորագրով յօդուածով, որ նոյնպէս տպագրման ընթացքի մէջ է:

Սկսենք՝ Ստ. Մալխասեանցի ծրագրի ելակէտային հիմնական դրոյթները վերլուծելով.

- Որպէս «արտաքին» յատկանիշ՝ տպագրական լաւագոյն որակով⁶, մեծադիր 1000ական էջանոց հինգ հատորի մէջ պէտք է հրատարակէին յիսուն հեղինակների⁷ երկերը.

⁵ Եթէ չհաշուենք գրախօսութեան առիթով Յ. Վ. Տաշեանի հպանցիկ արած վերապատմումը. հմմտ. «Հանդէս ամսօրեայ», 1904, թ. Թ.-Ժ., էջ 225-226:

⁶ «Ամեն ջանք պէտք է գործ դրուի, որ այս հրատարակութիւնը հնար եղածին չափ կատարեալ լինի արտաքին եւ ներքին յատկութիւններով». Ս. Մալխասեանց, Հին դարերից, «Մշակ», 1902, 1 նոյեմբերի, թ. 242, էջ 1 (տպագրական որակը գործի «արտաքին» կողմն էր):

⁷ Հեղինակների անունների թուարկումը վերարտադրելն անելորդ չենք համարում. «Այս հեղինակներն են՝ Կորին, Ագաթանգեղոս, Փաստոս, Եղիշէ, Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի, Սեբէոս, Զենոբ (Յովհան Մամիկոնեան), Ղեւոնդ երէց, Թովմայ Արծրունի, Յովհաննէս կաթողիկոս, Ուխտանէս, Մեսրոպ երէց, Ստեփանոս Ասողիկ, Արիստակէս Լաստիվերտցի, Ներսէս Շնորհալի (Ողբ Եղեսիոյ), Կիրակոս Գանձակեցի, Մովսէս Կաղանկատուացի, Սամուէլ Անեցի, Վարդան Բարձրբերդցի, Մատթէոս Ուռհայեցի, Մխիթար Անեցի, Մաղաքիա արեղայ, Սմբատ Գունդստար, Մխիթար Այրիվանեցի, Ստեփանոս Օրբելեան, Հեթում Պատմիչ, Աբուսահլ Պատմիչ, Գրիգոր Խլաթեցի, Թովմայ Մեծոփեցի, Մինաս վարդապետ Համդեցի, Յովհաննէս աագ երէց Կամենիցոյ, Առաքել Դարիժեցի, Զաքարիա Սարկաւազ, Ագոստինոս Բաջեցի, Եսայի Հասան-Ջալալեան, Պետրոս դի Գիլանեց, Դաւիթ Բէզ (Ստ. Վ. Շահումեան), Աբրահամ Կրետացի, Սիմէոն կաթողիկոս (Ջամբո), Զաքարիա Ագուլեցի, Թովմաս Խոջամալեան, Ժամանակագրութիւն (Անձանօթի, Մանասայից), Յովհաննիսիկ վարդապետ, Վահրամ Բաբունի, Մարտիրոս Երզնկացի, Սիմէոն Ապարանցի, Երեմիա Չէլէպի, Մաղաքիա Ճէվա-հիրճեան, Աւետիք երէց Ղափանցի (վերջին վեցը այն դէպքում, եթէ կարողանանք ձեռք բերել գրչագիրներից ընդօրինակութիւններ): Այս ձեռնարկութիւնը յաջողութեամբ գլուխ գալուց յետոյ կարելի կը լինի հրատարակել երկու լրացուցիչ հատոր էլ, որոնցից առա-

Իսկ «ներքին յատկութեան տարրերը կազմելու են սրանք.

1. Իւրաքանչիւր հեղինակի սկզբից դրուելու է սեղմուած⁸ առաջաբան, որի մէջ հաղորդուելու են հակիրճ, ստոյգ տեղեկութիւններ հեղինակի անձի եւ պատմութեան գրուելու ժամանակի մասին, այդ պատմութեան նախկին տպագրութիւնները, նոր տպագրութեան բնագիրը, համեմատուած ձեռագիրները, համեմատողների անունները:

2. Իւրաքանչիւր հեղինակից յետոյ դրուելու է մանրամասն ճիշտ ցանկ՝ նրա մէջ գործածուած յատուկ անունների:

3. Ի նկատ կառնուեն այն ուղղագրութիւնները, որոնք առաջարկուած են զանազան բանասէրների կողմից՝ որ եւ է հեղինակի այս կամ այն աղաւաղուած տեղը ուղղելու համար:

4. Ամենայն զգուշութիւն գործ կը դրուի՝ հարազատ եւ լիակատար կերպով հրատարակելու հեղինակի գործը, որ եւ է ուղղագրական փոփոխութեան մասին, որ կը մտցուի բնագրում, հաշիւ կը տրուի ծանօթութեան մէջ:

5. Հեղինակները, մանաւանդ հնագոյնները, նորից կը համեմատուեն ձեռագիրների հետ եւ աւելի կատարեալ ու հարազատ կերպով լոյս կընծայուեն՝ քան մինչեւ այժմ եղած հրատարակութիւնները: Այս հեղինակների շարքումն են ի միջի այլոց՝ Փաւստոս, Ղազար Փարպեցի, Սեբէոս, Ուխտանէս, Մովսէս Կաղանկատուացի, մանաւանդ Մովսէս Խորենացի, որ կը տպագրուի ընդարձակ ընթերցուածքներով՝ էջմիածնի ձեռագիրների բաղդատուութեամբ:

ջինի մէջ կը մտնեն հայերէն թարգմանուած հին օտարագրի պատմագիրներ՝ Եւսեբիոս (Ժամանակագրութիւն), Լաբուրնայ, Սոկրատ, Միքայէլ Ասորի եւ Ջուանշիր (Պատմութիւն Վրաց), իսկ երկրորդի մէջ՝ ընտիր հայ հեղինակներ ոչ-պատմական բովանդակութեամբ, ինչպէս՝ Եգնիկ, Անանիա Շիրակացի, Գրիգոր Մագիստրոս (Թղթերը), Մխիթար Գօշ եւ այլն»։ **Ս. Մալխասեանց**, Հին դարերից, «Մշակ», 1902, 31 հոկտեմբերի, թ. 241, էջ 2: Հետաքրքիր է, որ ի տարբերութիւն սրա, Ղ. Ալիշանի «Հայապատում»ի «Բնիկ պատմիչք Հայոց» շարքն սկսում է «Ագաթանգեղոս» եւ աւարտում Հ. Միքայէլ վ. Չամչեան» անուններով եւ ունի 1-158 համարներ. տես **Հ. Ղեւոնդ վ. Ալիշան**, Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց. Ա. Պատմիչք Հայոց, Բ. Պատմութիւնք Հայոց, Վենետիկ, ի վանս Ս. Ղազարու, ՌՅԾԱ.՝ 1901, էջ 35-139:

⁸ Որեւէ սկզբունք կամ կարգ կարող է սկզբնապէս սահմանուել, սակայն նրա դրսեւորումը միշտ կախում է լինում առարկայական եւ ենթակայական պատճառներից. նիւթը՝ մի դէպքում որեւէ երկ, որեւէ պատմութիւն (օրինակ՝ Մովսէս Խորենացու), իր առթած խնդիրներով կարող է ընդարձակ առաջաբան թելադրել, մի այլ դէպքում՝ առաջաբան (օրինակ՝ Ագաթանգեղոս) գրողը կարող է երկարաբան լինել. այս իսկ պատճառով այս նոյն Պատմագրքի երեք գրքերի առաջաբաններն անհամաչափ են՝ Ղազար Փարպեցու նը ԺԶ. էջ է, Ագաթանգեղոսինը՝ Զ. էջ, Մովսէս Խորենացուինը՝ ԿԳ. էջ:

6. Այս ծրագիրը կարող է ենթարկուել մանր փոփոխությունների, օրինակ՝ հեղինակը ճիշտ ժամանակագրական կարգով դասաւորելով, երկրորդական, մանր հեղինակներ աւելցնելով եւ այլն. բայց հիմնական կէտերում փոփոխութիւն չի կրի»⁹:

Ըստ այսմ՝ առաջաբանները պէտք է հակիրճ լինէին (ընդարձակ հետազոտութիւններն անցանկալի էին), պարունակէին միայն առաջին կէտում թուարկուած յատկանիշները. նկատենք՝ «Համեմատողների անունները» շեշտելով՝ արձանագրուում էր, որ նրանք կարող են լինել բնագիրը պատրաստողներից տարբեր մարդիկ: Միւս կարեւոր կէտն այն է, որ ծանօթագրութիւններ չեն նախատեսուել. 4րդ կէտում առկայ «ծանօթութեան մէջ» խօսքը վերաբերում է տողատակին՝ ընթերցումների շարքում գրելիքին:

Մատենաշարի տպագրութեան անհրաժեշտութիւնը Ստ. Մալխասեանցը հիմնաւորել է հետեւեալ փաստարկներով. գոյութիւն ունեցող գրքերը անգտանելի եւ թանկ են, աւելին՝ «այս հրատարակութիւնները եղել են զանազան տեղերում եւ ժամանակներում՝ տարբեր պատրաստութիւն ունեցող մարդկանց ձեռքերով եւ տարբեր ուղղութեամբ ու նպատակներով: Այս պատճառով շատ զանազանում են նրանք միմեանցից ներքինով եւ արտաքինով: Ոմանք ունեն ձեռագիրների տարբեր ընթերցութեամբներ (որոնց մէջ մի քանիսը լիակատար, միւսները՝ սահմանափակ թուով), միւսները՝ ոչ: Մի քանիսը տպագրուած են մի քանի ձեռագիրների բաղդատութեամբ, միւսները՝ առաջին պատահած, գուցէ սխալաշատ ձեռագրից: Ոմանք ունեն յատուկ անունների ցանկեր, միւսները չունեն: Ոմանք բաւական արտաքին վայելչութիւն ունեն, համեմատաբար քիչ սխալներով, իսկ միւսները՝ սաստիկ վատ տպագրութիւն, անպիտան թուղթ, տառասխալներով լիքը: Վերջապէս, հրատարակութիւններից ոմանք ենթարկուած են կամաւոր կամ ակամայ աղաւաղումների: Կան եւ այնպիսի հեղինակներ, որոնք կիսատ են տպագրուած՝ միակ ծանօթութեան ձեռագրից. այն ինչ յետոյ գտնուել են անթերի ձեռագիրներ, որոնցից զեռ հրատարակութիւն չէ եղած»¹⁰:

Դարից աւելի է անցել, բայց Ստ. Մալխասեանցի այս ծրագրի հրապարակումից յետոյ տպագրուած բնագրերի «ներքին յատկութեան», այսինքն՝ գիտական որակի առումով գրեթէ բան չի փոխուել. եղել են, եւ

⁹ Ս. Մալխասեանց, Հին դարերից, «Մշակ», 1902, 1 նոյեմբերի, թ. 242, էջ 1. թուարկման կարգային 1-6 համարները մերն են, բնագրում սրանց փոխարէն գծիկներ են:

¹⁰ Անդ, էջ 2:

գուցէ շարունակելու են լինել թէ՛ լաւ եւ վստահելի, թէ՛ անյաջող ու անվստահելի հրատարակութիւններ. եւ սրա պատճառները բազմազան ու բազմատեսակ են, բայց մեծ մասամբ ենթակայական են՝ պայմանաւորուած պատրաստող անհատներով¹¹:

Ստ. Մալխասեանցն իր շարադրանքի վերջում գործակցութեան է հրաւիրել գրեթէ ամբողջ հայութեանը. «Մենք հոգով ցանկանում ենք, որ այս հրատարակութեան մէջ մասնակցութիւն ունենան որչափ կարելի է շատ հայ անհատներ՝ թէ՛ մտաւոր աշխատակցութեամբ եւ թէ՛ նիւթական օժանդակութեամբ: Ցանկանում ենք դարձեալ, որ հրատարակութիւնը այնքան էժանագին լինի եւ այնքան շատ տպագրուի, որ ինքն իրան տարածուի հայ ժողովրդի բոլոր խաւերում, տարածուի այնպէս, ինչպէս տարածւում է Ամերիկական ընկերութեան հրատարակած Աստուածաշունչը: Այս ցանկութիւններն իրագործելը այնքան մեզանից չէ կախուած, որքան բանասէր եւ բարեսէր ազգայիններից, որոնց ամեն մի աջակցութիւնը՝ մտաւոր թէ՛ նիւթական, աննախանձաբար եւ շնորհակալութեամբ կը յիշուի հրատարակութեան վերջում: Մեր բանասէր եղբայրակիցներին, մանաւանդ որոնք մօտ են գտնւում գրչագիրների պահեստներին, մենք առանձին դիմում կանենք անձամբ եւ նամակներով, եւ լիայոյս ենք, որ նրանք եռանդուն մասնակցութիւն յանձն կառնեն այս հասարակօգուտ աշխատութեան մէջ»¹²:

Գրեթէ միշտ, նաեւ մեր օրերում, մատենագրական շատ միաւորների մէջ բառական սրբագրութիւններ անելու առիթով յաճախ, եւ իրաւամբ, յիշատակւում է յայտնի բանասէր Նորայր Բիւզանդացու անունը: Եւ այս տեսանկիւնից շատ ուշագրաւ է, որ Ստ. Մալխասեանցը երեք նամակով (30 նոյեմբերի 1902 թ., 5 յունուարի եւ 17 նոյեմբերի 1903 թ.) Նորայր Բիւզանդացուն հրաւիրել է գործակցելու «Պատմագիրք Հայոց»ին, բայց նրանից ստացել է կարծես թէ ամբողջ հայութեանն ուղղուած մի բողոքագիր-նամակ (16/29 նոյեմբերի 1903 թ.). «Արդարեւ գրեթէ 45 տարի է, որ պարապած եմ եւ կը պարապիմ հայերէն մատենագրութեան եւ լեզուի... Յայտագրիդ մէջ կըսէք. «Պատմագիրք Հայոց հրատարակութեան ամբողջ ծախսը՝ թէ՛ տպագրութիւնը եւ թէ՛ աշխատակիցների վարձատրութիւնը հաշուած է մօտաւորապէս 20,000 ռուբլի», ապա շարունակել է. «Տպագրեալ նախնեաց մատենագրութեանց մէջ՝ 10,000-է աւելի մի

¹¹ Միս կողմից՝ շատ մեծ սխալ է, որ մեր որեւէ կազմակերպութիւն այստեսակ աշխատանքները չի համակարգում:

¹² Ստ. Մալխասեանց, Հին դարերից, «Մշակ», 1902, 1 նոյեմբերի, թ. 242, էջ 2:

քան զմի կարեւոր սրբազրուածիւններ ունիմ, ինչպէս արդէն յայտարարած եմ այլուր: Կը փափագի՞ք իմ աշխատակցութեանս Պատմագիրք Հայոց հրատարակութեան համար. հաճեցէք հայթայթել ինձ 25,000 (քսան եւ հինգ հազար) ռուբլի, յղեցէք ինձ զգումարդ, եւ ես կաջակցեմ ձեզ բոլոր զօրութեամբս»: Ստ. Մալխասեանցը 1903 թ. դեկտեմբերի 17ի իր պատասխանում գրել է. «Հայոց Պատմագիրքին» աշխատակցելու համար Ձեր դրած պայմանը, այն է՝ քսան եւ հինգ հազար ռուբլի վարձատրութիւն տալ, մենք չենք կարող կատարել, ոչ թէ այն պատճառով, որ թանգ է - մտքի աշխատանքի համար, այն էլ քառասուն եւ հինգ տարի տեւող աշխատանքի համար ոչ մի վարձատրութիւն թանգ չէ, այլ որովհետեւ այդպիսի գումար հայթայթել չենք կարող... Ձեր աշխատակցութիւնը կրկնապատիկ պէտք է մեծացնէ մեր նախահաշիւը. որպիսի գումար ձեռք բերել մենք յոյս չունենք, ուստի ստիպուած ենք զուրկ մնալ Ձեր խիստ ցանկալի աշխատակցութիւնից»: Ապա ամփոփում է. «...ըստ երեւոյթին, գիտութեամբ անիրագործելի պայման է առաջարկում, որ հաւասար է մերժողական պատասխանի», ի վերջոյ՝ «Ես շարունակեցի նրան ուղարկել Ղ. Փարպեցու մեր նոր հրատարակութիւնը թերթ-թերթ, մամուլից դուրս գալուց յետոյ, եւ նա բաց նամակով շնորհակալութիւն յայտնեց այդ մասին»¹³:

Այս ամէնով հանդերձ, տպագրուելուց գրեթէ անմիջապէս յետոյ նոյն Ն. Բիւզանդացին գրել է «Պատմագիրք Հայոց» շարքի առաջին երկու գրքի՝ Ղազար Փարպեցու եւ Ագաթանգեղոսի երկերի միասնական խիստ քննադատական գրախօսութիւն, որի մէջ նաեւ մի քանի տողով լաւագոյնս եւ ճշգրիտ սահմանել է «քննական» անուանելի բնագրի էութիւնը եւ այն պատրաստելու ուղին. «Նախնեաց ո՛ր եւ իցէ հին բնագիրը յարդարելու համար, բաց ի ձեռագրաց համեմատութենէն, անհրաժեշտ կարեւոր է լիովին ուսումնասիրել զայն՝ ստէպ ստէպ կարդալով: Պէտք է միտ դնել մատենագրին դարուն յորում կը գրէր, իւր գիտութեան աստիճանին, ընդելական դարձուածներուն, բառերուն կազմութեանը, քերականութեանը. միտ դնել այն բառերուն եւ ասացուածներուն՝ որ մերթ այս կերպ գրուած են, մերթ այն կերպ, եւ նորին իսկ մատենագրին օգնութեամբ՝ աստ սխալ գրուածը սրբագրել անդ ուղիղ գրուածով. միտ դնել մատենագրին նա եւ ուրիշ գրուածոց եւ թարգմանութեանց՝ եթէ ունի, եւ իւր ժամանակակից ա՛յլ մատենագրութեանը՝ որ փոխադարձաբար կը

¹³ Ստ. Մալխասեանց, Սոսագում թէ ոչ, «Մշակ», 1904, 19 հոկտեմբերի, թ. 254, էջ 1-2 («բաց նամակ»՝ մերօրեայ «բացիկ» քառն է):

լուսավորեն, կը պարզեն, կը հաստատեն կամ կ'ուղղեն մէկզմէկ, նոյնպէս եւ այն յետագայ մատենագրութեանց՝ յորս կը գտնուին փոխառութիւնք ի նոյն մատենագրէն: Սովին ոճով ուսումնասիրեալ եւ յարգարեալ բնագրի հրատարակութիւնն կը կոչուի Քննական Հրատարակութիւն»¹⁴:

Հանրայայտ եւ անուրանալի մեծ վաստակի տէր մի այլ բանասէր՝ Մանուկ Աբեղեանը, որ այդ ժամանակ, վստահաբար, զբաղուած էր նոյն մատենաշարի երրորդ գրքի՝ Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» բնագրի պատրաստման աշխատանքով, Նորայր Բիւզանդացու քննադատութեանն ի պատասխան գրել է հետեւեալը. «Էջմիածնի այս հրատարակութիւնները յաւակնութիւն չեն ունեցել «քննական» կոչուելու. այլ նրանց վերնագիրն է «Պատմագիրք Հայոց, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց»: Ամեն հասկացող, դրանց մէջ եւ Նորայր Բիւզանդացին, պիտի իմանայ, որ դա մի նախապատրաստութիւն է ապագայ քննադատական հրատարակութեան եւ ամենակարեւոր նախապատրաստութիւն, քանի որ ամեն քննական հրատարակութեան հիմքը պիտի կազմի ձեռագիրների համեմատութիւնը, եւ ամենայն սրամիտ ուղղում բնագրի մէջ կը մնայ միայն իբրեւ մի կարծիք ու ենթադրութիւն: Պահանջել, որ ձեռագիրների բաղդատութեան հսկայական, այո՛, հսկայական աշխատանքն անողները միաժամանակ եւ բնագրի քննական հրատարակութիւն անէին, այդ ոչ մի մարդ իրաւունք չունի: Պիտի առնել այն, ինչ տրուած է: Բայց չնայելով սրան՝ Նորայր Բիւզանդացին Էջմիածնի այս հրատարակութիւնների մասին խօսում է այնպէս, իբր թէ դրանք բնագրի քննական հրատարակութիւն լինէին: Մի անգամ, որ նա այսպէս թիւր կողմից է մօտեցել այդ մեծ գործին, բնական է, որ նա չպիտի տար ճիշտ գնահատութիւն, եւ նրա «քննութիւնը» պիտի լինէր Նորայրի իրեն կարծիքներ եւ դիտողութիւններ, որոնցից Ագաթանգեղոսի եւ Փարպեցու ապագայ քննական բնագիրը կազմողները կարող են օգտուել եւ չօգտուել, նայելով թէ ընդունելի կը համարեն նրա ասածը, թէ ոչ: Մենք մեր կողմից համաձայն ենք նրա մի քանի դիտողութիւններին, ինչպէս են, թէ պէտք էր հին ուղղագրութիւնը պահել, ի հարկէ, միայն ձեռագիրների տուած ըն-

¹⁴ Ն. Բիւզանդացի, Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ագաթանգեղոսի եւ Ղազարայ Փարպեցու, «Յուշարձան», Գրական ժողովածոյ առթիւ 100 ամեայ յոբելինի հաստատման Միսիթարեան միաբանութեան ի Վիեննա (1811-1911) եւ 25 ամեայ տարեշրջանի «Հանդէս ամսօրեայ» ուսումնաթերթի (1887-1911), հրատարակեալ ի Միսիթարեան միաբանութենէ, մասնակցութեամբ աշխատակցաց «Հանդէս»-ի եւ հայերէնագէտ բանասիրաց, 67 պատկերով բնագրի մէջ եւ 3 տախտակով, Վիեննա, 1911, էջ 165 (ամբողջը՝ էջ 161-174):

թերցուածներով (թէպէտ եւ այդ անելն այժմ շատ էլ հեշտ է, որովհետեւ շատ բանում դեռ վիճելի է, թէ ո՛րն է հինը եւ ո՛րը նորը). ապա պէտք էր, հարկաւ, «երբեմնի» նորաձեւութիւնը չմտցնել հնագոյն բնագրի մէջ, եւ վերջապէս կան, հարկաւ, ընթերցուածներ, որ ծանօթութիւնների մէջ դնելու փոխարէն՝ պէտք էր բնագրի մէջ առնել, ինչպէս՝ «ամպաշուփ» եւ ուրիշները: Բայց այդ անելու համար ամեն դէպքում առանձնապէս ուսումնասիրութիւն պիտի լինի, եւ ո՞վ կարող է պահանջել, որ Գ. Տ. Մկրտչեան, Ստ. Կանայեան եւ Ստ. Մալխասեան, որոնք ձեռագիրների բաղդատութեան տաժանակիր աշխատանքը յանձն են առել, այդ էլ անէին: Այդ էլ թող Նորայր Բիւզանդացին անէ, եւ հաւատացած ենք, որ նրա անելուց յետոյ էլ մի ուրիշը կարող է նոր ուսումնասիրութիւններով ցոյց տալ, որ դեռ ուղղելի շատ բաներ կան, եւ բաներ էլ կան, որոնց մէջ սխալում է Նորայր Բիւզանդացին: Ազաթանգեղոսի նման մի երկի քննական բնագիր կազմելը մի մարդու գործ է. դեռ ամբողջ սերունդներ պիտի աշխատեն դրա վրայ: Ահա թէ ինչը չի մտածում Նորայր Բիւզանդացին: Եթէ նա այդ մտածէր, կը թուէր գոնէ մի քանիսն այն «բազում առաւելութիւններից», որ Էջմիածնի այս հրատարակութիւններն ունին իրենց նախորդների վրայ: Յառաջադիմութիւնը հետզհետէ առաւելութիւններով է լինում եւ ոչ թէ միանգամից կատարելութեամբ, որ Նորայր Բիւզանդացու էլ ոյժից վեր է»¹⁵:

Այս երկու կարծիքները, առանձնապէս՝ Մ. Աբեղեանի բաւական ընդարձակ խօսքը նոյնութեամբ բերեցինք՝ նկատի ունենալով նրանց ծրագրային-ուսուցողական կարեւոր արժէքը. թէեւ առաջինը քննադատական գրախօսութեան մաս է, իսկ երկրորդը գրուել է ի պատասխան առաջինի, այսինքն՝ բանավիճային գրուածքներ են, սակայն երկուսը միասին, միմեանց լրացնելով, միջնադարեան բնագրի հրատարակում եւ քննութիւն ձեռնարկողների համար ձեւաւորում են ուղենիշ-սկզբունքների մի հիանալի ամբողջութիւն:

Թէ՛ այստեղ եւ թէ՛ հետագայի հայ բանասիրական-աղբիւրագիտական գրականութեան մէջ բնագրագիտութեան կարեւորագոյն խնդիրը համարուել է որեւէ երկի նախնական՝ հեղինակային տեսքի վերականգնումը, ուստի եւ մեր մէջ միշտ պակասել եւ պակասում է մի այլ կարեւոր հասկացութեան գիտակցումը՝ նոյն բնագրի պատմութիւնը, այսինքն՝

¹⁵ Մ. Ա. (=Մանուկ Աբեղեան. գրախօս.), Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ազաթանգեղոսի եւ Ղազարայ Փարպեցոյ ի Նորայրէ Բիւզանդացոյ, Վիեննա, 1911 (եր. 161-174), «Արարատ», 1912, էջ 561-563:

Ժամանակի ընթացքում միտումով կամ պատահմունք-սխալմունքների հետեւանքով բնագրի կրած փոփոխութիւնների պատմութեան հետազօտման խնդիրը: Բոլոր դէպքերում հայկական պատմագրական երկերի բնագրագիտութիւնը մինչ այժմ գործել է բնագրի հեղինակային տեսքը վերականգնելու (կամ Ն. Բիւզանդացու ձեւակերպման) շրջանակներում:

Մինչդեռ ներկայիս ըմբռնումները բաւական տարբեր են, պահանջներն էլ՝ անհամեմատ աւելի: Ըստ այդմ՝ Ն. Բիւզանդացու եւ Մ. Աբեղեանի լիովին իրաւացի մտքերը լրացնենք եւ բնագրագիտութիւն առարկայի ներկայիս սահմանումը ներկայացնենք՝ նշանաւոր ուսուսակադեմիկոս Դմիտրի Լիխաչովի «Բնագրագիտութիւն» գրքի «Բնագրագիտութեան խնդիրները» ընդարձակ գլխի մի փոքր մասի կարեւորագոյն մտքերն ազատ քաղումներով վերադասաւորելով¹⁶: Նկատենք, որ փակագծային ենթավերնագրի համաձայն՝ այս գիրքը գրուած է ըստ Ժ.-Ժէ. դարերի ուսուսակողութեան նիւթի, սակայն մեծապէս յենուած է նաեւ արեւմտաեւրոպական գիտութեան վրայ, այսինքն՝ ստորեւ բերուող ձեւակերպումները վերաբերում են, այսպէս ասենք, Ընդհանուր բնագրագիտութիւն հասկացութեանը:

Բնագրագիտութիւնը նախկինում զբաղուած էր «ընդհանուր սխալների» հիման վրայ բնագրերի ձեռագիր օրինակների մքենական խմբաւորում-դասակարգմամբ՝ սրա հիման վրայ ձեռագրերի ազգակցական՝ հիմնականում երկճիւղ «ծառեր» կազմելով եւ «սխալներից» ձեւականօրէն «մաքրելով»՝ առանց այդ դասակարգում-խմբաւորումները պատմականօրէն բացատրելու: Այս գիտութեան հին տարբերակը սկզբնաղբիւրները հրատարակելու բանասիրական հնարքների ամբողջութիւն էր (էջ 33), սակայն ըստ ներկայիս միտումի՝ պէտք է նախ լիովին ուսումնասիրել բնագրի պատմութիւնը, ապա՝ հրատարակել այն, այսինքն՝ հրատարակութիւնը բնագրագիտութեան գործնական ղրսեւորումներից միայն մէկն է: Հեղինակի սկզբնական բնագրի վերականգնումը եւս բնագրագիտութեան սոսկ մի խնդիրն է, եւ սրան հնարաւոր է հասնել բնագրի պատմութեան ամբողջական-կատարեալ (ո՛չ թէ առանձին հատուածների) ուսումնասիրման եղանակով (էջ 32):

¹⁶ Д. Лихачев, при участии С. А. Алексеева и А. Г. Боброва, Текстология (на материале русской литературы X-XVII веков), Издание третье, переработанное и дополненное, Санкт-Петербург, 2001, 759 с. նշում գլուխը՝ էջ 29-61. առանց չափերսնների արուած մեր ազատ՝ ոչ բառացի քաղումները՝ 32-38 էջերից, որոնք այստեղ նշում եւս նաեւ ամէն հատուածի վերջում:

Բնագրագիտութեան խնդիրը սկզբնաղբիւրի բնագրի պատմութեան ուսումնասիրութիւնն է նրա գոյութեան բոլոր շրջաններում՝ հեղինակի, ընդօրինակողների, խմբագիրների, քաղաքագրողների եւ այլոց ձեռքերով բնագրի փոփոխութիւններ կրելու ամբողջ ընթացքում՝ նոյն փոփոխողների աշխարհայեացքի եւ գաղափարաբանութեան հետ սերտ կապի մէջ, այլ խօսքով՝ հեղինակից մինչեւ հետազօտող եւ հրատարակիչ. միաժամանակ նոյն ուսումնասիրութիւնը պէտք է սերտ կապի մէջ լինի բնագրի բովանդակութեան բոլոր դրսեւորումների՝ քաղաքական նկրտումների, գեղարուեստական նպատակադրումների, պատմական իրականութեան կամ իր ժամանակի հասարակական-քաղաքական կեանքի հետ (էջ 32): Հետազօտող բնագրագէտը պէտք է ձգտի պարզել եւ բացատրել բնագրի պատմութեան բոլոր փուլերը եւ նրանց առաջացման հանգամանքներն ու պատճառները (էջ 38), ուստի եւ պարտաւոր է քաջածանօթ լինել իր ուսումնասիրած բնագրի դարաշրջանին վերաբերող պատմական բոլոր գիտելիք-գիտութիւններին. ըստ այսմ՝ լաւ բնագրագէտը պէտք է լինի նաեւ լաւ գրականագէտ եւ պատմաբան. նրա հետազօտութեան յաջողութիւնը կախուած է իր գիտելիքների լայնքից, խորքից եւ բազմակողմանիութիւնից (էջ 37):

Ըստ այսմ՝ բնագրագիտութեան համար շատ կարեւոր է ազգակից գիտութիւնների՝ ձեռագրագիտութեան եւ արխիւագիտութեան լաւ կազմակերպածութիւնը, առանձնապէս՝ ձեռագրերի բաւարար-կանոնաւոր նկարագրութիւնների առկայութիւնը. ուստի եւ բնագրի պատմութիւնը կատարեալ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ բոլոր տեղերում՝ բոլոր հաւաքածուներում գտնուող ձեռագրերը, կարեւոր է նաեւ բնագրին առնչուող այլ աղբիւրների լաւ իմացութիւնը. առանց այդ ամէնի արուած աշխատանքը թերի եւ անլիարժէք կլինի (էջ 34):

Ահա, ի շահ մեր պատմական եւ ընդհանուր բնագրագիտութեան ապագայի՝ բերելով մեր խնդրոյ առարկայի վերաբերեալ Ն. Բիւզանդացու, Մ. Աբեղեանի եւ Դ. Լիխաչովի ընդարձակ-մանրամասն¹⁷ բնորոշումները, միաժամանակ պէտք է ցաւով արձանագրել, որ դեռեւս չկայ միջնագրի հայ պատմագրութեան որեւէ միաւոր, որ հրատարակուած լինի ըստ այս պահանջների ամբողջութեան¹⁸, ապա յուսանք, որ մօտ

¹⁷ Հարկադրուած էինք շատ բան նոյնութեամբ բերել, քանի որ որեւէ ձեռով համառօտելով վերաշարադրելու դէպքում հեղինակների խօսքիմաստի կորուստներ կառաջանային:

¹⁸ Այս գաղափարին մօտ է թերեւս միայն Եզնիկի բնագրի հետեւեալ տարբերակը՝ Եզնիկ Կողբացի, [Ճառք ընդդէմ աղանդոց], Առաջին հատոր. Ներածութիւն եւ քննական բնագիր, սրբագրուած եւ միակ վաւերական հրատարակութիւն, առանց այլընթերցումների,

ապագայում, «Մատենագիրք Հայոց» շարքից¹⁹ անկախ եւ նրան զուգահեռ, կպատրաստուեն եւ հատիկ-հատիկ կտպագրուեն մեր թէ՛ պատմագրքերի եւ թէ՛ ընդհանրապէս մատենագրական աղբիւրների նաեւ առանձին՝ իրապէս քննական հրատարակութիւններ: Ինքնին հասկանալի է, որ ցանկալի քննական այդ բնագրերում անպայման պէտք է նկատի առնուեն ոչ միայն նախորդ տպագիրները, այլ նաեւ բնագրերի բոլոր թարգմանութիւնները, առաջին հերթին՝ նրանց աշխարհաբար տարբերակները՝ բոլորի մէջ առկայ լեզուա-քերականական եւ պատմագիտական ծանօթագրութիւններով, կէտադրութիւն-ընկալումներով հանդերձ. այլ կերպ ասած՝ այստեսակ հրատարակութեան մէջ ամէն բառ եւ ամէն ստորակէտ պէտք է ենթարկուի մանրազնին քննութեան: Մատենաշարային հրատարակութեան ամենեւին դէմ չենք, բայց նրա կաղապարային սկզբունքները (առաջաբանի համառօտութիւն, ծանօթագրութիւնների չգոյութիւն) եւ պայմանները (ժամանակին տպուող հատորին հասցնել եւ այլն) իրական քննական բնագիր պատրաստելուն էականօրէն խանգարող հանգամանքներ են: Միաժամանակ արժէ մեր պատմագրքերն իրենց հեղինակների անուններով եւ առանձին քննական հատորներով հրատարակել, որպէսզի այլաբնոյթ աղբիւրների շարքում, թող թոյլ տրուի ասել, չընկղմուեն-չկորսուեն:

Իսկ այժմ շարունակենք.

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, 1909

Մատենաշարային տիտղոսաթերթ Ա.՝ «Պատմագիրք Հայոց. Ագաթանգեղոս», տիտղ. Բ.՝ «Հրատարակութիւն Ս. Էջմիածնի. Պատմագիրք Հայոց, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, ի ձեռն Գ. Տէր-Մկրտչեան, Ստ. Մալխասեանց, Ստ. Կանայեանց եւ այլոց, ընդ վերակացութեամբ Ստ. Մալխասեանց, հատոր առաջին, գիրք երկրորդ. Ագաթանգեղոս. Հրատարակչական մասնաժողով, Էջմիածին-Տփղիս» (էջ Բ.): Տիտղ. Գ.՝ «Ագա-

աշխատ.՝ Մարտիրոս Մինասեանի..., Ժնեւ, 1992, 222 էջ. Երկրորդ հատոր. Ծանօթագրութիւններ եւ համաբարբառ, աշխատ.՝ Մարտիրոս Մինասեանի..., Ժնեւ, 1992, 643 էջ (մեծադիր՝ Ա4 չափսի հրատարակութիւն է):

¹⁹ Պէտք է մեր միջնադարեան ամբողջ մատենագրութիւնն անփոփի մեծադիր՝ միանման հատորների մի շարքի մէջ. ողջունելի այս գաղափարը քայլ առ քայլ իրագործում է. ներկայումս առկայ է տասնինը հատոր (Ա.-ԺԷ. եւ ԺԹ.-Ի.), որոնք տպագրուել են Անթիլիասում (հ. Ա.-ԺԴ., 2003-2008 թթ.) եւ Երեւանում (հ. ԺԵ.-ԺԷ., ԺԹ.-Ի., 2011-2016 թթ.): Հետագայ արծարծումների ընթացքում այս շարքը յիշատակելու ենք «ՄՀ» համառօտումով:

Թանգեղայ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Ծախիւք տեառն Սուքիասայ արքեպիսկոպոսի Պարգեանց, Տփղիս, Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, Պուշկինեան փողոց, 3, 1909»։ Զ., 474, Լ. էջ²⁰։

էջ Ե.-ԾԹ. «Յառաջաբան», ստորագրուած՝ «Գ. Տէր-Մկրտչեան, Ստ. Կանայեանց», էջ Կ.-ԿԳ.՝ Յունարէն խմբագրութիւնից թարգմանուած՝ Ագաթանգեղոսի պակասող սկիզբը, էջ ԿԴ.-ԿԷ.՝ «Մատենագրութիւն» (իմա՝ Մատենագիտութիւն), որ կազմել է Ս. Կանայեանցը, էջ ԿԸ.-ԿԹ.՝ «Համառօտ ցուցակ... գործածուած տառանիշները», իմա՝ համեմատուած ձեռագրերի եւ տպագրիւնների պայմանանիշների, էջ 1-472՝ բնագիրը, բաժանուած 1-900 յօդուածի (Տ)²¹, որից առաջ՝ էջ Հ.-Զ. «Բովանդակութիւն»՝ բնագրի յօդուածների (Տ) խմբերին տրուած խորագրերի ցանկ²², վերջում կցուած՝ «Դաւանութիւն ուղիղ հաւատոյ, յառաջ բերեալ յանստերիւր վարդապետութենէ Սրբոյն Գրիգորի» (էջ 472-4), ապա՝ էջ Ա.-ԺԵ.՝ «Ս. Գրքի, Կորինի եւ Փաւստոսի վկայութիւններ եւ հատուածներ Ագաթանգեղոսում»²³ (Կորինիներ եւ Փաւստոսիներ՝ էջ ԺԴ.-ԺԵ.), էջ ԺԶ.-ԻԹ.՝ «Յանկանուանց» (անունների դիմաց ո՛չ գրքի էջերը, այլ՝ բնագրի յօդուածների համարները), էջ Լ. «Ուղղելիք եւ վրիպակք», որի մասին սկզբում ազդարարուած է. «Հրատարակութիւնիցս օգտուողներից խնդրում է՝ գործածելուց առաջ նախապէս ուղղել տպագրական վրիպակները, որոնց ցանկը տե՛ս գրքի վերջում» (էջ ԿԹ.)²⁴։

²⁰ Բնագիրը նոյնաբար վերատպուած է՝ ՄՀ, հ. Բ., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1291-1735։

²¹ «Ամբողջ գործը՝ սկզբից մինչեւ վերջը՝ տեւեց մօտ եօթը տարի» (էջ ԾԴ.), «Ամբողջ Ագաթանգեղոսը բաժանեցինք 900 հատուածի կամ պարբերութեան, որոնում բառը կամ տեղը դիւրաւ գտնելու համար» (էջ ԾԷ.)։ Ի՛նչ ՄՀ՝ այս բաժանումն անտեսուած է, փոխարէնն այստեղ բնագիրը տրոհուած է ըստ Գ. Փեշտմայճեանի եւ Գ. Տէր-Մկրտչեանի յօրինած խորագրերի կարգային համարների՝ Ա.-ՃԻԷ.։

²² Էջ ՀԱ. ծնթ. «Գլխակարգութեանց բովանդակութեան այս ցանկը առնում ենք երկրորդ տպագրից՝ թերեւ փոփոխութեամբ՝ յարմարեցնելով մեր տպագրին։ Կազմողն է Գրիգոր դպիր Փեշտմայճեան»։

²³ Էջ Ա. ծնթ. «Այս ցանկում անելացուած են մի քանի վկայութիւններ, որոնք չեն նշանակուած բնագրի էջերում». բնագրում զատուած են՝ սոսկ չակերտների մէջ առնուած լինելով։

²⁴ Ի՛նչ ՄՀ՝ շարադրանքի մէջ այս վրիպակներն ուղղուած են։ Այս տպագրի՝ Ն. Բիւզանդացու գնահատութեան համառօտութիւնը. «Ընդ մեծ եւ ընդ փոքր՝ 500 փոփոխելիք եւ ուղղելիք կան Ագաթանգեղոսի վեցերորդ տպագրութեանս մէջ» (Ն. Բիւզանդացի, Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց, էջ 165)։

«Համառօտ ցուցակ բնագրում եւ մեր յառաջաբանում գործածուած տառանիշների» ցանկում²⁵ (էջ ԿԼ.-ԿԹ.) կայ 60 պայմանանիշ, բայց համեմատել են 12 ամբողջական ձեռագիր ($a, b, c, d, Ա-Ը$), 12 ճառընտրային-հատուածական օրինակ ($\alpha, \beta, g, h, l, n, s, w, w^2, w^3, w^4, z$), մագաղաթէ երկաթագիր մի պահպանակ (E) եւ հինգ տպագիր ($k, o, t, vա, vբ$). այսինքն՝ 30 միաւոր: Ի լրոյ գիտեն 17 ձեռագիր ($d^2, R, \theta, \phi, \iota, L, \text{Խ}, \text{Մ}, Կ, \text{Հ}, \text{Ձ}, \text{Ղ}, \text{Ճ}, \text{Մ}, \text{Յ}, \text{Ն}, \text{Շ}$), նաեւ՝ արձանագրել են իրենց տեսած կամ չտեսած ձեռագրերի եւ տպագրիչների 13 ածանցեալ դրսեւորումներ՝ որեւէ ձեռագրի մէջ առկայ սրբագրումներ, որեւէ տպագրի մէջ այլ ձեռագրի ընթերցումների արձանագրում եւ նմանիք ($c^2, g^2, p, v, v^1, v^2, v^3, v^4, v^5, v^6, v^7, x, x^2$). կրկին՝ 30 միաւոր:

Ամփոփենք. սահմանուած պայմանանիշները խառն բնոյթի են՝ առաւելապէս լատիներէնի փոքրատառեր (երբեմն՝ թուային ցուցիչներով), երբեմն՝ նոյնի գլխատառեր, յունարէնի փոքրատառեր, վերջում՝ հայերէնի գլխատառեր:

Միայն ճառընտրային հատուածները նկատի ունենալով՝ հպանցիկ գրել են. «Թէ՛ մեր մատենադարանում եւ թէ՛ մանաւանդ դուրսը մնում են դեռ եւս շատ Ձ-րեր՝ Ագաթանգեղոսից հատուածներ ունեցող: Այդ բոլորն աչքէ անցնել եւ որոշ չափով համեմատութեան մէջ առնել մեր ուժերից բարձր էր: Բաւականացանք 12 ճառընտրով՝ որոշ գաղափար ստանալու համար, թէ ինչ կարելի է սպասել ճառընտիրներից Ագաթանգեղոսի բնագրի համար, եւ մասամբ նաեւ պարզելու զանազան խմբերի ծագումն ու ճիւղաւորութեան ընթացքը: Աւելին մնում է ապագայ ուսումնասիրողներին» (էջ ԾԴ.): Այժմ ինքնին պարզ է, որ նոյնը վերաբերում է նաեւ բնագրի ամբողջական ձեռագրերին. այսինքն՝ 1909ից առաջ ի լրոյ յայտնի 17ից բացի, նորատիպ ձեռագրացուցակներում այսօր վստահաբար կան այլ՝ գուցէ եւ ո՛չ պակաս կարեւոր եւ աւելի մեծաքանակ օրինակներ, որոնց քննութեան խնդիրը նոյնպէս «մնում է ապագայ ուսումնասիրողներին»:

Մատենաշարի մէջ ընթերցումների արձանագրման հնարք-եղանակների եւ բացառութիւնների (ուղղագրական չնշուելիք ձեւերի) խնդիրը վճռուել է 1903ին էջմիածնում կայացած խորհրդակցութեան ժամանակ²⁶,

²⁵ Ի ՄՀ, Բ., էջ 1292-1294 չկան այս ցանկի՝ «t - հինգերորդ տպագրութիւն 1883ին Թիֆլիսում» եւ «x² - նախորդից (x-ից) ծագող ենթադրեալ Ձ-ը, գրուած 1668 թուից առաջ»:

²⁶ Նոյն սկզբունքները կիրառուած են նաեւ ի Խորենացի՝ էջ ԽԵ. «խորհրդակցութեան մէջ ձայների մեծամասնութեամբ որոշուեց, տեղ եւ ժամանակ վստասկելու համար, համեմատութեան մէջ չառնել ընդհանրապէս ուղղագրական ընթերցումներ ու ն յօդի տար-

եւ այդ սկզբունքների ամբողջութիւնն առաջին անգամ 1909ին հրապարակուել է Ագաթանգեղոսի առաջաբանում (էջ ԾԴ.-ԾԸ.):

Ըստ այդմ՝

- անկախ ձեռագրերի ունեցածից, «աւ»ի փոխարէն գրել են «օ» (էջ ԾԴ.), որ սխալ է, որովհետեւ մեր մատենագրութեան մէջ ԺԳ. դարից առաջ «օ» չի եղել.

- Եջ-է. գրել են ըստ աւանդական ուղղագրութեան՝ է. լիովին իրաւացիօրէն նկատել են, որ շատ դէպքերում ձեռագրերի մէջ Ե-է՝ չեն գանազանւում (էջ ԾԵ.).

- գաղտնավանկի կամ նրա հետեւանք «ը»ին վերաբերող (մշտնջենաւոր, ըզնա, զընա...) ընթերցումները չեն գրել (էջ ԾԵ.).

- փշիկով Լիւնը կամ Ղատը գրել են սովորական Լիւնով (էջ ԾԵ.).

- «յ»՝ չեն արձանագրել անհարկի գոյութիւնը եւ չգոյութիւնը՝ «հրաշայկերտ», «նայ»... «արքաի», «վանչական» եւ այլն (էջ ԾԵ.).

- «ւ»՝ «հոգով», «եկեղեցոյ», «աղաւնոյ», ու-ի տեղ ւ - «ստերամած», «յաւրինւածոց» տարբերութիւնները չեն նշել (էջ ԾԵ.).

- անտեսել են պատիւի նշանի մոռացումները («զաւրութեն» ունենալու դէպքում գրել են «զաւրութեան». էջ ԾԵ.).

- կէտագրութիւնը նշանակելն ամբողջովին թողել են Ս. Մալխասեանցի հայեցողութեանը (էջ ԾԶ.).

Ընթերցումների նշանակման եղանակները («Համառօտագրութիւններ»՝ էջ ԾԶ.-ԾԷ.).

- «Ընթերցուածների պակասները նշանակել ենք չիք-երով».

- փխ. (=փոխանակ) համառօտութիւնը գործ է ածուած, երբ մի ընթերցուածի տեղ այլ Զ-ը մի ուրիշ ընթերցուած ունի, օրինակ՝ «ուր փխ. յոր».

- երբ որեւէ ձեռագրում որեւէ ձեւ «տիրում է», ապա գրում են, օրինակ՝ «Ճ այնաւրիկ (յաճ.)», որ նշանակում է, թէ ճ-ն յաճախ այնորիկ բառը գրում է «այնաւրիկ»:

- երբ «ընթերցուածը Զ-ում պատիւ ունի», կողքը գրում է՝ «(պատ.)», որ, իհարկէ, աւելորդ է:

- երբ տողի մէջ միեւնոյն բառը մի քանի անգամ է պատահում, անորոշութիւնից խուսափելու համար, չիք-ի առաջ կլոր փակագծերի մէջ գրուած է եւ հետեւեալ բառը, օրինակ՝ «չիք եւ (ասաց)».

- տեղ-տեղ հանդիպող (*) աստղանշով ընթերցուածը ցոյց է տալիս, որ այդ ընթերցուածը տպագրական վրիպակ չպէտք է համարել իւր տարօրինակ գրչութեան պատճառով.

- գիծը (-) նշանակում է մինչեւ, յատկապէս գործածուած չիք-երի մէջ.

- անկիւնաւոր փակագիծը [] գործ է ածուած՝ այլ եւ այլ, մեծ մասամբ նոյն խմբի Զ-ների նման ասացուածի մէջ այս կամ այն Զ-րին յատուկ տարբերութիւնները նշանակելու համար՝ առանց կրկնելու մի քանի անգամ ամբողջ ասացուածը. օրինակ՝ «*βabdԱԲ* եւ ի ներքսագոյն խորանացն [*βd* խորանսն, *a* խորանն] ի վերայ հանգստարանացն կենդանագիր [*βa* կենդանագիր]» ասացուածքի մէջ վեց ձեռագիրն էլ յար եւ նման ընթերցուած ունին, բացի անկիւնաւոր փակագծերում նշանակուած բառերից: Այս փակագծի գործածութեամբ ձեռք է բերուում մեծ պարզութիւն եւ տեղի խնայողութիւն»:

- «Բառերի յետեւառաջութիւնը՝ ընթերցուածների մէջ առաջ է բերուած առանց որեւէ նշանի, օր. բնագիր՝ «եւ ասէ թագաւորն», ընթերցուած՝ «եւ թագաւորն ասէ» (էջ ԾԷ.):

- մնացած համառօտութիւններն ինքն ըստ ինքեան հասկանալի են... տ. այսինքն՝ տե՛ս, էջերի թուանշաններից յետոյ տ. = տող, հմմտ. = համեմատել, պարբ. = պարբերութիւն կամ հատուած, միւսները կամ միւսն. = միւս Զեռագրերը եւ այլն» (այս նոյնը տե՛ս Խորենացի, էջ ԽԵ.-ԽԶ.):

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՀԱՅՈՑ, 1913

Տիտղոսաթերթ Ա.՝ «Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Ծախիւք տեառն Սուքիասայ արքեպիսկոպոսի Պարզեանց, Տփլիս, տպ. Մնացական Մարտիրոսեանցի, 1913», տիտղ. Բ.՝ «Պատմագիրք Հայոց, ի լոյս ածեալ բաղգատութեամբ ձեռագրաց ի ձեռն Գ. Տէր-Մկրտչեան, Ստ. Մալխասեանց, Ստ. Կանայեանց, Մ. Աբեղեան, Ս. Յարութիւնեան եւ այլոց, ընդ. վերակացութեամբ Ստ. Մալխասեանց, հատոր երկրորդ, գիրք առաջին. Մովսէս Խորենացի (Հրատ. Ս. Էջմիածնի), Հրատ. մասնաժողով Էջմիածին-Տփլիս».

ԿԳ., 396 էջ:

Լրացուած վերատպութիւն՝ «Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւ-

նեանի. Նմանահանութիւն, Լրացումները Ա. Բ. Սարգսեանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1991». 6 չհ., ԿԳ. 485 էջ²⁷:

«Համառօտ ցուցակ գործածուած տառանիշների եւ Համառօտագրութիւնների» ցանկի (էջ ԿԳ.) համաձայն՝ բնագիրը կազմուած է ըստ քսան ձեռագրի (*a, b, c, d, e, f, n, o, p, q, r, s, g, h, i, k, l, m, y, z*), երկու ձեռագրի տպուած ընթերցուածների (*Կ¹,²⁸ Կ²*) եւ տասնմէկ տպագրի (*t, w, w¹, Վ, վ, վ², վ³, վվ, x*. սրանք արտայայտուած են 8 ձեռագրի պատկեր), ի լրոյ իմացել են գոյութիւնը եւս 22 ձեռագրի, որ, բնականաբար, չեն համեմատել: 1991ի վերատպութեան մէջ աւելացուած է եւս տաս ձեռագրի (*E, F, L, Z, M, N, O, P, Q, R*) եւ տաս պատառիկի (*Պ₁-Պ₁₀*) համեմատութիւն. էջ 399-409 «Յաւելուածի առաջաբան» (Հիմնականում նոր համեմատուած ձեռագրերի եւ պատառիկների նկարագրութիւններն են), էջ 410-485 «Տարընթերցումներ»: Այսպիսով, Խորենացու Պատմութեան այսօր առկայ բնագիրը կազմուած է երեսուներկու ձեռագրի եւ տասական տպագիրների ու պատառիկների համեմատութեամբ: Կարելոր մի հանգամանք եւս՝ 1991ի լրացում-ընթերցումներն արձանագրուած եւ գրուած են ճիշտ նոյն եղանակներով, ինչ 1913ի տպագրի մէջ:

Կրկին ամփոփենք՝ պայմանանիշերի մեծ մասը լատինականի փոքրատառերն են (երբեմն՝ թուային ցուցիչներով), ապա՝ նոյնի մեծատառերը, հայերէնի փոքրատառերը (էլի երբեմն թուերով), ի վերջոյ՝ պարզել են ձեռագրերի երեք խումբ, որ կոչուել են հայերէնի գլխատառերով՝ Ա (Ամստերդամի), Տ (տպագրի) և (խառն). կան նաեւ այս հաւաքական պայմանանիշերով գրուած ընթերցումներ:

Պայմանանիշերի նշանակման մեր ընդհանուր գնահատականը հետեւեալն է. «Պատմագիրք»ը ձեռնարկել եւ պատրաստուած էին ԺԹ. դարի վերջերին Հիմնականում Արեւմտեան Եւրոպայում կրթութիւն ստացած մեր բանասէրները, ուստի եւ նրանք այս հարցում հետեւեցին իրենց տեսած՝ սկզբնաղբիւրների եւրոպական հրատարակութիւններին, որոնց մէջ համեմատուած ձեռագիր եւ տպագիր նիւթերի պայմանանիշերը լատինական այբուբենի՝ գերազանցապէս փոքրատառերով էին²⁹: Թէ՛ նրանք եւ թէ՛ նրանց մերօրեայ հետեւորդները առաջնորդուել են գուցէ նաեւ

²⁷ Նախորդի բնագիրը, սրա լրացում-ընթերցումներով հանդերձ, նոյնաբար վերատպուած է՝ ՄՀ, Խ. Բ., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1739-2121:

²⁸ Մաշտոցեան Մատենադարանի (այսուհետեւ ըստ հարկի՝ ՄՄ համառօտումով) ՀՊ. 2748 ձեռագիրն է:

²⁹ Տե՛ս օրինակ՝ “Monumenta Germaniae Historica. Scriptores” մատենաշարը (Stuttgart, Hannover, 1826-1874):

այն մտայնութեամբ, թէ լատինատառ (երբեմն նաեւ՝ ռուսատառ) պայմանանիշերը հայատառ ընթերցումներից գծագրական առումով էականորէն տարբեր են, ուստի նաեւ՝ անշփոթելի, սակայն, թուում է, արժէր՝ մտածէին, որ եւրոպական (նաեւ՝ ռուսական) հրատարակութիւնների մէջ հայատառ պայմանանիշեր երբեւէ չեն եղել, այսինքն՝ առանց դժուարութեան կարելի էր բաւարարուել սեփական այբուբենով՝ կիրառելով զանազան տարբերակներ, որոնցից մէկն էլ մենք ենք գործածում մեր կազմած բնագրերում. բոլոր պայմանանիշերը նշանակում ենք հայերէն այբուբենի գլխատառերով, ըստ հարկի աւելացնելով փշիկներ կամ թուային ցուցիչներ, իսկ ընթերցումների մէջ յատուկ անունները գրում ենք միայն փոքրատառերով, որպէսզի նրանց գլխատառերը պայմանանիշեր չկարծուեն-չչփոթուեն:

* * *

«Պատմագրքի» երեք գիրքն էլ պատրաստել են երկուական աշխատասիրող. որպէսզի համեմատութիւնն արուի ընթերցման-փոխընթերցման եղանակով. այսպէս՝ «Ընթերցումները գրի առնելու գործը ամբողջովին Ս. Կանայեանցինն է: Զ-երին հետեւել է Գ. Տէր-Մկրտչեանը, տպագրին՝ Կանայեանցը, երկուստեք հետեւելով Զ-րի եւ տպագրի տարբերութեանցը: Ընթերցումն եղել է փոխնիփոխ, ձայնի յոգնութիւնից խուսափելու համար... Փորձը ցոյց տուեց, որ այս տեսակ համեմատութեան ժամանակ էլ անխուսափելի են երկու տեսակ սխալ՝ աչքի եւ ականջի»: - Աչքի սխալներն առաջանում են Զ-ին կամ տպագրին անուշադիր հետեւելուց, «բայց որովհետեւ հսկողութիւնը երկուստեք էր՝ այսպիսի սխալներն իսկոյն նկատուում էին: Ականջի սխալը թելադրելուց կամ «տուն տալուց» է առաջ գալիս, մանաւանդ երբ երկար լարուած աշխատանքից յոգնութիւնն աւելանում է», «ուղղագրական տարբերութիւնների մեծ մասը ծագած են թուում թելադրութիւնից» (Ագաթ. էջ ԾԷ.)³⁰:

³⁰ Մեր բնագրագիտութեան համար սա կարեւոր հարց է, ուստի տեսնենք նաեւ շարունակութիւնը. «Թելադրուած բառը լսողը կամ լսողները գրում են իրաքանչիւրն ըստ իր լսածի եւ իր գիտեցած ուղղագրութեան, եւ երբ գրողները մի քանիսն են՝ մի անգամից, մի թելադրութիւնից ստացում են բազմաթիւ տարբեր օրինակներ, այլ եւ այլ ուղղագրութեամբ եւ զանգան վրիպակներով» (Ագաթ. էջ ԾԷ.): Ապա յաջորդ էջում խօսում է յունա-հռոմէական աշխարհում նոյն երեւոյթի տարածուածութեան մասին. մինչդեռ մի այլ տեղ կարդում ենք. «Հին Ռուսաստանում, ինչպէս եւ Արեւմտեան Եւրոպայում, գրիչները համեմատաբար սակաւ են գրել թելադրութեամբ. ինչ որ ժամանակ թելադրութեամբ գրել են անտիկ կայսերական գրասենեակների գրիչները» (Դ. Лихачев, Текстология,

Նոյնը՝ աւելիով, նաեւ խորենացու մէջ է, ուր առաջաբանի «Մի քանի խօսք մեր աշխատութեան մասին» հատուածում (էջ ԽԴ.-ԽԶ.) ներկայացուածն իսկական շփոթի տպաւորութիւն է ստեղծում՝ թէ ո՛վ ի՛նչ է համեմատել, ո՛վ ո՛ր ձեռագիրն է կարգացել, ո՛վ՝ հիմք-տպագիրը, կրկին՝ կէտադրութիւնը տպագրութեան ընթացքում նշանակել է Ս. Մալխասեանցը եւ այլն: Հիմք են ընդունել «Թիֆլիսի 1881 թ. տպագրութիւնը (Վ), որ արտատպած է Վենետիկի 1865 թ. տպագրից՝ իբրեւ իր ժամանակին մատչելի տարածուած օրինակ»³¹... Կարգացուել է ոչ թէ տպագիրը, այլ միշտ՝ Զ-ները, որովհետեւ Զ-ը կարգացուել է ոչ այնքան բառերի ընդհանուր պատկերով, որքան տառերը քաղելով, ուստի սխալները, կարծում ենք, այսպէս համեմատաբար պակաս կրկինին՝ քան եթէ տպագիրը կարգացուէր, երբ Զ-ին հետեւողը աչքից շատ բան կը փախցնէր, կարծելով թէ այնպէս է գրուած, ինչպէս լսում է: Երբեմն միայն դժուար կտորները վերծանելու համար դիմել ենք տպագրի օգնութեանը: Ընթերցուածները գրի առնելու եւ տպագրին հետեւելու գործն ամբողջապէս Մ. Աբեղեանինն է, որ յաճախ գրի առնելուց առաջ մտիկ է տուել Զ-րի գրութեանը: Զ-ները կարգացել է մեծ մասամբ Ս. Յարութիւնեանը...» (Խոր. էջ ԽԶ.):

Նոյն Ստ. Մալխասեանցը նաեւ «վարելով տպագրութեան սրբագրութիւնը՝ ամէն մամուլի համար բազմաթիւ ցուցումներ եւ դիտողութիւններ է ուղարկել էջմիածին Մ. Աբեղեանին՝ ցոյց տալով ծանօթութիւնների մէջ կասկածելի թուացող կամ արտագրութեան ժամանակ չնշանակած կամ թերի նշանակած կէտեր, որ նորից ստուգել եւ լրացրել է Մ. Աբեղեանը, ինչպէս եւ առաջարկելով այս կամ այն ընթերցուածը ծանօթութիւնների մէջ զննելու փոխանակ՝ բնագրի մէջ առնել կամ ընդհակառակն» (Խոր. էջ Ծ.):

Կայ նաեւ աւելին, որպիսին առկայ է բոլոր գրքերի մէջ. «էջմիածնի ոքոք Զ-ներին հետեւել են էջմիածնի Գ. Զեմարանն աւարտած պարոններ...» (Խոր. էջ ԽԶ.). եւ թուարկուած է ութ անուն, որոնցից որեւէ մէկը հետագայում գիտական գրականութեան մէջ չի երեւացել: Երեւի միայն Աբեղեանի նման կազմակերպուած մտքի տէր մարդը կարող էր

էջ 68): Գրեթէ վստահ ենք, որ մեր միջնադարում եւս թելադրութեամբ՝ «տուն տալով» գրելը սակաւադէպ երեւոյթ է եղել, այդուհանդերձ, կարծում ենք, որ սա առանձին եւ մանրակրկիտ հետազոտութեան արժանի խնդիր է՝ յատկապէս բնագրական տարբերությունների ինչ որ տեսակներ ճիշտ գնահատել կարողանալու համար:

³¹ «Ժամանակին մատչելի տարածուած օրինակ» տպագիրը համեմատութեան հիմք ընդունելը տրամաբանական չէ. ճիշտ եղանակը համեմատելի բոլոր օրինակների փորձնական-հատուածական բաղդատութեան հիման վրայ լաւագոյն ձեռագիրը պարզելով՝ այն հիմք դարձնելն է:

1913ին պատուով աւարտի հասցնել 1901ին սկսուած, բազմաթիւ մարդկանց մասնակցութեամբ արուած այս գործը:

Նոյնական ընթերցումների խմբաւորում-միաւորումը, որ այժմ արւում է ինքնաբերաբար, «Պատմագրքի» դժուարագոյն խնդիրներից էր. «ամենից ծանր եւ յոգնեցնող աշխատանքը եղել է ոչ այնքան ձեռագիրների համեմատութիւնը եւ տարբեր ընթերցուածները նշանակելը՝ որքան ընթերցուածների համախմբումը: Երբ բաղդատուած օրինակների թիւը սակաւ է՝ հեշտ է ծանօթութիւնները միացնել. բայց երբ նոյն օրինակների թիւը շատ է, ինչպէս այս դէպքում՝ առանձին մտքի լարում է պահանջուում, որ նման ընթերցուածները ի մի խմբուին, առանց մէկը կամ միւսը բաց թողնելու կամ սխալներ անելու՝ վատ կարգալուց կամ անգգոյշ արտագրելուց: Համախմբումներն ու բնագիրը կազմելու ժամանակ, դժբախտաբար, հնարաւոր չի եղել ձեռքի տակ ունենալու Ձ-ները՝ կասկածելի թուացող ընթերցուածները նորից ստուգելու համար» (Խոր. էջ ԽԹ.): Նոյնը կայ նաեւ Ագաթանգեղոսում՝ «Համախմբման գործը աւելի մտաւոր լարուածութիւն եւ յոգնութիւն պատճառող գործ է, նոյնպէս ենթակայ սխալների եւ թիւրիմացութեան» (Ագաթ. էջ ԾԸ.):

Ներկայիս հնարաւորութիւնների պայմաններում՝ ժամանակի հեռուից գուցէ դժուար է մի դար առաջ արուած աշխատանքի «խոհանոցային» մանրամասները պատկերացնելը, սակայն Խորենացու երկի հրատարակութեան առաջաբանի մի հատուած ցոյց է տալիս, որ «Պատմագրքի» աշխատասիրողներն իրենց պատրաստած բնագիրը եւ ընթերցումները նոյն հարթութեան վրայ տեսել են տպագրական շարուածքի սրբագրութեան փորձ-էջերի վրայ, որից յետոյ են գրել հետեւեալը. «Բնագրի համար իբրեւ հիմք ընդունուած է սովորական Վ տպագրութիւնը. բայց եւ շատ բան, օգտուելով Ա եւ Խ խմբերի Ձ-ներից, փոխուած է, մանաւանդ մութ եւ անհասկանալի կտորները, որոնք պարզ կերպով աղաւաղուած են Վ-ի մէջ: Այս աշխատանքը վերջացնելուց յետոյ, սակայն, երբ պարզուած են Ձ-ների խմբակցութիւնները եւ երբ բոլոր ընթերցուածները մի անգամից աչքի առաջ կարելի է ունենալ՝ աւելի ճիշտ կերպով կարելի է բնագիրը վերակազմել. եւ այժմ իսկ տեսնում ենք, որ շատ ընթերցուածներ պէտք էր բնագրի մէջ դնել, որ մենք ծանօթութիւնների մէջ ենք առել, կամ ընդհակառակն: Բայց այդ չէինք կարող անել այն ժամանակ, երբ թէպէտ մեծ խմբերը՝ Ա եւ Տ, մեզ համար պարզ էին, բայց դեռ բոլորովին պարզ չէին երկրորդական խմբակցութիւնները, անհնարին լինելով տետրակների մէջ նշանակած ընթերցուածներով այդ պարզել» (Խոր. էջ ԽԹ.):

Ուստի բնական է, որ այս բնագրի պատրաստողը ձեռագրերի մի խումբ ներկայացնելուց յետոյ խմբերի առաջացման ժամանակը քննած չլինելու մասին ասել է. «Դա արդեն բնագիրը վերականգնելուն է վերաբերում, որ իմ նպատակից դուրս է» (Խոր. էջ ԽԱ.):

Բնական է նաեւ, որ այս պայմաններում արուած աշխատանքի համար Մ. Աբեղեանի նման բարեխիղճ եւ ճշգրտութիւն սիրող մարդը խոստովանել է. «Ինչքան էլ առանձին խնամքով պատրաստուի այսպիսի աշխատանքը՝ վրիպակներն անխուսափելի են, մանաւանդ որ շատ անգամ կարգացած լինելով՝ գրեթէ անգիր գիտենք Խորենացին, որով եւ աչքից կարող են փախած լինել ընթերցողաձններ: Կըլինին եւ ականջի սխալներ, քանի որ մէկը կարգացել է Ձ-ները, միւսը հետեւելով տպագրին՝ լսելով նշանակել է տարբեր ընթերցողաձններ: Սխալներ առաջ են գալիս նոյն-իսկ ընթերցողաձնները Ձ-րից արտագրելիս եւ ամենից շատ, ինչպէս վերեւում նկատեցի՝ ընթերցողաձնների համախմբումի, այլ եւ արտագրութեան եւ տպագրութեան միջոցին...» (Խոր. էջ ԾԱ.): Եւ որպէս եզրափակում՝ ասել է աւելին. «Չպէտք է մոռանալ, որ այս գործի վրայ աշխատողներս մեր օրուայ թարմ ժամանակը չենք նուիրել սրան, այլ եղել ենք մարդիկ՝ «անպարապ» իւրաքանչիւրս մեր պաշտօնի գործերից, եւ մեր յոգնութեան ժամերին ենք կատարել³² այդ եւ նոյն-իսկ մեր հանգստեան ժամերը նուիրել դրան տարիների ընթացքում, չխնայելով ժամանակ եւ եռանդ եւ կրելով այդպիսի տաղտկալի գործի ծանրութիւնը, որ այսպիսի բազմաթիւ օրինակների բաղդատողներն ու բիւրաւոր ընթերցողաձնները համախմբողները միայն կը հասկանան թէ ինչ է: Արել ենք այն, ինչ որ կարողացել ենք: Մենք մեզ լիովին վարձատրուած կը համարէնք, «միայն թէ շնորհակալ ոք մերոցս գտանիցի աշխատութեանցս: /ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆ / ՍԷԹ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ / 30 սեպտեմբերի 1912. / Ս. Էջմիածին» (Խոր. էջ ԾԲ.):

Ստ. Մալխասեանցի ծրագրային յօդուածի մէջ կայ մի կարեւոր կէտ. տպագրուելիք յիսուն հեղինակների շարքի վերջն այսպէս է. «Վահրամ Բաբունի, Մարտիրոս Երզնկացի, Սիմէօն Ապարանցի, Երեմիա Չէլչպի, Մաղաքիա Ճէվահիրճեան, Աւետիք երէց Ղափանցի (վերջին վեցը այն դէպքում, եթէ կարողանանք ձեռք բերել գրչագիրներից ընդօրինակութիւններ)»³³. սրանք այն հեղինակներն են, որոնց գործերի ձեռագրեր

³² Բնագիրը համեմատելու ժամանակ յոգնածութիւն զգալուն պէս պէտք է անմիջապէս համեմատելը դադարեցնել:

³³ Ստ. Մալխասեանց, Հին դարերից, «Մշակ», 1902, 31 հոկտեմբերի, թ. 241, էջ 2:

էջմիածնում չկային, ուրեմն եւ՝ պէտք է այլ հաւաքածուների (ասենք՝ Վենետիկի) ձեռագրերից վերստին օրինակել տային: Մինչեւ 1950ական թուականները այլ տեղերում գտնուող ձեռագրերի օրինակներ բնագիր կազմողները կարող էին ստանալ միայն այս՝ ընդօրինակել տալու եղանակով. իսկ արտագրութեան ընթացքում, ինչպէս արդէն գիտենք, միշտ նոր սխալներ են առաջանում:

Կարեւորագոյն խնդիր պէտք է համարել ձեռագրական նիւթը՝ տարբերակ-ընթերցումները, ճշգրիտ վերարտադրելը. յետոյ արդէն այդ նիւթի հիման վրայ ամէն ոք կարող է տարատեսակ ճիշտ եւ անճիշտ, հիմնաւոր կամ անհիմն, ընդունելի կամ անընդունելի առաջարկ-դատողութիւններ անել, ուստի եւ կրկին՝ առաւել քան իրաւացի է նոյն Մ. Աբեղեանի այս միտքը. «Մեր աշխատանքի մէջ կարեւորը, կարծում ենք, ոչ այնքան բնագիրն է, որքան ընթերցուածները: Բնագրի վերակազմելը չի կարող մի մարդու գործ լինել. դրա վրայ դեռ շատերը պիտի աշխատեն. եւ կարծում ենք, այսուհետեւ ուրիշները հեշտութեամբ կարող են վերակազմել բնագիրը՝ ի նկատի ունենալով ոչ միայն մեր տուած ընթերցուածները, այլ եւ ուրիշ աղբիւրներ, եւ ամեն մի հատուածի համար առանձնապէս ուսումնասիրութիւն անելով: Արդարեւ, մինչեւ այժմ եւս շատ դիտողութիւններ են եղել խորենացու բնագրի համար, բայց դրանք մեծ մասամբ մնացել են լոկ ենթադրութեամբ ուղղումներ, քանի որ հիմնուած չեն եղել Զ-ների ընթերցուածների վրայ. այսուհետեւ այդպիսի ուղղումները, եթէ հաստատուում են միաժամանակ եւ ընթերցուածներով՝ կը դառնան ընդունելի եւ ստոյգ: Յուսանք որ մեր այս նոր հրատարակութիւնը նոր առիթ կընծայէ շատերին խորենացու բնագրով նոր ի նորոյ պարապելու» (Խոր. էջ Ծ.):

* * *

Վերը պատկերուած իրողութիւնները, այն, որ ընթերցումների բազմակի արտագրութիւնների ժամանակ սխալներ էին առաջանում, եւ առանձնապէս այն, որ կազմողը բնագիրն ու ընթերցումները նոյն թղթի՝ նոյն հարթութեան վրայ տեսնում էր արդէն գրքի սրբագրութեան փորձի վրայ³⁴, թելադրում է հնում տպագրուած բնագրերի պատրաստման տեք-

³⁴ Մեր սերնդի մարդիկ կապարի շարուածքով մեծ կամ փոքր գործեր տպելու առիթներ են ունեցել եւ գիտեն, որ սրբագրութեան ժամանակ մի տողում առկայ սխալն ուղղելիս նոյն կամ կողքի տողում կարող էին նոր սխալներ առաջանալ:

նրկական կողմին թեթեակի անդրադառնալ գոնե մեր տեսածի, մասամբ եւ ժամանակին փորձածի³⁵ չափով.

Հիմք ձեռագիրը կամ տպագիրը ընտրելուց յետոյ բնագիրն ամբողջութեամբ ընդօրինակում էին, ապա՝ սրբագրում, յետոյ՝ մեքենագրում կամ մեքենագրել տալիս³⁶, սա եւս սրբագրելուց յետոյ բոլոր էջերի բոլոր տողերը համարակալում էին, ասենք՝ ամէն էջում 1-30 (երբեմն մեքենագրում էին էջի կէսը, որ համարակալում էին 1-15, որպէսզի մնացած տեղում յետոյ մեքենագրէին ընթերցումները), այդ ժամանակ համեմատելի ձեռագրերի քանակը ճշտուած էր լինում եւ որոշուած՝ ամէն ձեռագրի պայմանանիշը (A, B, C...), ուստի հետագայ աշխատանքը կարող էր լինել երկու կերպ.

ա. Պատրաստելիք բնագրի համեմատ՝ վերցնում էին մի մեծ մատեան, մատեաններ կամ տետրեր, մեքենագիր բնագրի ամէն էջի ամէն տողին սրանց մէջ յատկացնում որոշակի քանակի տեղ (տողեր կամ էջեր), ձեռագրերը նախապէս որոշած կարգով համեմատում եւ նրանց տարբերութիւնները (ընթերցումները) արձանագրում սկզբնապէս որոշուած տեղում: Որքան էլ տեղը եւ ընթերցումների արձանագրման եղանակները յստակ սահմանուած լինէին, գրառումները խառն էին ստացւում, ուստի, անկախ այդ խառնութիւնից, համեմատութիւններն աւարտելուց յետոյ ընթերցումները խմբաւորելով՝ նոյնական ձեւերը մեքենագրութեան էջահամարներով, տողահամարներով եւ ձեռագրերի պայմանանիշերով հանդերձ արտագրում էին մի այլ տեղում, ապա մեքենագրել էին տալիս այս նորը՝ խմբաւորած ընթերցումները, սրբագրում-ուղղում նաեւ այս արտագրութեան եւ մեքենագրութեան սխալները: Եթէ ըստ վերն ասուածի՝ բնագիրը մեքենագրած էին լինում 15 տողանոց էջերով, ապա էջերի ստորին կէսին մեքենագրում էին խմբաւորած ընթերցումները, որոնց համաձայն՝ վերին կէսի վրայ ձեռքով ուղղում էին բնագիրը, այսինքն՝ ընթերցումները «վերովաւ»ելով՝ անում էին բնագրի քննութիւնը: Եթէ այս աշխատանքի հետեւանքով էջերը շատ էին «կեղտոտուում», դժուարընկալելի եւ շփոթութիւններ առաջացնող տեղեր էին առաջանում, ամբողջը նորից էր մեքենագրում եւ, բնականաբար, նորից ու նորից սրբագրում:

³⁵ Բարեբախտաբար, զուտ պատահմունքով այդ փորձերը տպագրելու առիթ չենք ունեցել:

³⁶ Եթէ «Ռեմինգտոն» անունով առաջին՝ նախնական գրամեքենան սկսել է արտադրուել 1874 թ., ապա ընդհանրապէս գրամեքենայի հայատառ տարբերակը մեր իրականութեան մէջ պէտք է յայտնուած լինի երեւի թէ առաջաւելն ԺԹ. դ. վերջերին կամ Ի. դ. սկզբներին. գոնէ 1970ական թուականներին հայատառ սեփական գրամեքենայ ունենալը շատ անհատների համար երազանքի նման քան էր:

բ. Մեքենագրութեան ամէն էջի համար վերցւում էր նոյն էջի չափի մի այլ էջ կամ նրա երկայնական կէս մասը, ամէն ձեռագրի ընթերցումներն առանձին գրում էին սրա վրայ՝ բնագրի տողին համապատասխան՝ սրա վրայ մի տող. համեմատութեան աւարտից յետոյ մի հարթութեան վրայ էին դրւում մեքենագրի ամէն էջը եւ նրա համապատասխան՝ նրա կէս լայնքի թերթերը, որոնց քանակը նոյնքան էր, որքան համեմատուած ձեռագրերինը, կատարւում էր ընթերցումների խմբաւորում-միաւորումը³⁷, ապա՝ վերջիններիս մեքենագրումը. եթէ պայմանանիշերը լատինատառ կամ ռուսատառ էին, ապա մեքենագրւում էր երկու մեքենայով՝ նախ ընթերցումները հայատառով, ապա պայմանանիշերը՝ լատինատառով կամ ռուսատառով:

Ի վերջոյ հրատարակչութիւն-տպարան էր ուղարկւում բնագրի եւ ընթերցումների մեքենագրութիւնը՝ էջերի վերին մասը՝ բուն շարադրանքը, ստորին մասը՝ ընթերցումները. եւ ամէն ինչ արւում էր ի նորոյ, տառ առ տառ շարւում էր թէ՛ վերին մասը, թէ՛ ստորին մանրատառ ընթերցումները, ամբողջը երկուական անգամ սրբագրւում էր հրատարակչութեան սրբագրողի եւ կազմողի ձեռքով, եւ ի վերջոյ, լոյս էր տեսնում մի գիրք, որի կազմում-տպագրութիւնը տեւել էր երբեմն մի տասնամեակ (ինչպէս մեր խնդրոյ առարկայ պատմագրքերը):

* * *

Ոչ թէ հակադրութեան, այլ միայն համեմատութեան համար համառօտ պատկերենք բնագիր պատրաստելու մեր կիրառած եղանակը, որ երեւի ընդհանուր է համակարգչով բնագիր պատրաստող բոլոր անհատների համար: Համեմատելի հիմք ձեռագիրը կամ տպագիրը որոշում եւ պատրաստում ենք նրա համակարգչային շարուածքը, որ անմիջապէս ստուգում-սրբագրում ենք՝ չտկելով անուշադրութեան հետեւանքով առաջացած մանր վրէպները (բացթողումներ, կրկնութիւններ, մատի սխալներ եւ այլն): Նախապէս որոշած ենք լինում նաեւ համեմատելիք միւս՝ ձեռագիր եւ տպագիր օրինակները՝ իրենց պայմանանիշերով հանդերձ, պատրաստում ենք սրանց բոլորի թուային պատճէնները, սրան-

³⁷ Այս եղանակով մեր աչքի առաջ կատարուել է հետեւեալ բնագրի կազմումը՝ Գրիգոր Նարեկացի, Մատենա ողբերգութեան, աշխատ.՝ Պ. Մ. Խաչատրեանի եւ Ա. Ա. Ղազիսեանի, Երեւան, 1985, 1124 էջ: Ձեռագրերի համեմատութեան եւ ընթերցումների խմբաւորման բառացիօրէն տաժանակիր աշխատանքից յետոյ էլ սրբագրութեան թերթերն էին յաճախակի ստուգում՝ ձեռագրերի հետ վերստին համեմատելով:

ցով բոլոր օրինակները հիմքի հետ կարգով համեմատում ենք հետեւեալ ձեւով. համակարգչի պաստառի ստորին կէսին բացում ենք հիմքի շարուածքը, վերին կէսին՝ համեմատելի օրինակի թուային պատճէնը, որի վրայ տեսած տարբերութիւնը ստորին կէսի համապատասխան բառի վրայ դրուած ծանօթութեան նշանով արձանագրում ենք տողատակում: Նոյն տարբերութիւնը յաջորդ ձեռագրերում տեսնելուն պէս՝ արդէն գրուած տարբերութեան պայմանանիշի կողքին աւելացնում ենք նոր ձեռագրի պայմանանիշը. ասենք՝ սկզբում գրել ենք «աթոռ» հիմնաբառի «Բ գաթոռ» ընթերցումը, եւս երեք ձեռագիր համեմատելուց յետոյ այս ընթերցումը դառնում է՝ «ԲԴԵ գաթոռ»: Այս եղանակով մի ընթերցումը գրուում է մի անգամ, կողքն աւելանում են միայն միւս օրինակների պայմանանիշերը, ինքնաբերաբար միաժամանակ արւում է նաեւ խմբաւորումը: Կարելոր է յատկապէս այն, որ համեմատողի հայեացքը գործում է միեւնոյն հարթութեան՝ համակարգչի պաստառի վրայ վերովար անելով: Ի վերջոյ՝ հիմնաբառերը եւ այս ձեւով արձանագրուած ընթերցումներն ի սկզբանէ տեսանելի են նոյն մէկ հարթութեան վրայ, ուստի եւ շատ մեծ դիւրութեամբ արւում է նաեւ նրանց ընտրութիւն-քննութիւնը: Այս եղանակի կարեւորագոյն առաւելութիւնը ճշգրտութիւնն է, որովհետեւ, կրկնենք՝ որեւէ ընթերցում գրւում է մի անգամ եւ այլեւս չի արտագրւում: Միւս պատեհութիւնն այն է, որ որեւէ ընթերցման վերաբերեալ հետագայ աշխատանքի ընթացքում առաջացող կասկածը հնարաւոր է անմիջապէս ստուգել, որովհետեւ բոլոր օրինակների թուային պատճէնները մշտապէս բնագիրը պատրաստողի ձեռքի տակ՝ նրա համակարգչի մէջ են³⁸:

* * *

Այսպիսով՝ մեր եզրակացութիւնը մէկն է. հնում կազմուած որոշ գիտական բնագրեր, գոնէ «Պատմագիրք Հայոց» շարքով տպուածները պէտք է անպայման նոր ի նորոյ կազմել՝ նորայայտ նիւթերի ներառումով եւ նոր հնարաւորութիւնների գործադրմամբ³⁹, ճշգրիտ վերարտադրելով ձեռագրական ամբողջ նիւթը, ապա բնագիրը մշակելով եւ ամէն

³⁸ Անշուշտ, գոյութիւն ունեն նաեւ բնագիր պատրաստելու համակարգչային ծրագրեր, անգամ ժամանակին Collate անունով մէկն օգտագործելու անյաջող փորձ ենք արել. եւ, որքան գիտենք, հայերէնին եւ հայերէն բնագրերին յարմարեցուած ծրագրեր դեռեւս չկան:

³⁹ Մովսէս Խորենացու երկի դէպքում լուսագոյն օգտագործելով նաեւ հետեւեալ արժէքատր աշխատանքը՝ Պ. Յովհաննիսեան, Մովսէս Խորենացի. Մատենագիտութիւն, Երեւան, 2013, 426, 10 չի. էջ (ցուտք, ձեռագրերի մատենագիտութիւնն այստեղ չկայ):


ինչ մանրամասն ծանոթագրելով՝ ըստ վերը ներկայացուած սկզբունքների, մանրակրկիտ օգտագործելով նաեւ բնագրերի բոլոր տեսակի թարգմանութիւնները (հաղորդումների եւ նրանց նրբերանգների ընկալումները), առաջին հերթին՝ աշխարհաբար տարբերակները եւ նրանց ունեցած բոլոր տեսակի ծանոթագրութիւններն ու մեկնաբանութիւնները:

РЕЗЮМЕ

В статье обобщены требования, касающиеся принципов и критерий так называемого жанра «критических» текстов, исходя из чего мы пришли к заключению, что составленные в прошлом некоторые научные тексты наших историографов, хотя бы труды Агатангехоса, Лазаря Парпеци и Мовсеса Хоренаци, изданные в 1904-1913 гг. в серии «Армянские историографы», должны заново быть подготовлены, с включением новых материалов и по новым методам, подробными аннотациями, учитывая все научные предложения о коррекции их текстов, а также все переводы их текстов, в первую очередь версий на современном армянском языке.

SUMMARY

The article summarizes the requirements relating to the principles and criteria of the genre of so-called “critical” texts. On the basis of this we concluded that some scientific texts (created in the past) from the series “Armenian historiography”, such works as Agatangeghos, Khazaros Parpetsi and Movses Khorenatsi published in 1904-1913, should be re-conducted, with the inclusion of new materials and by new methods, detailed annotations, taking into account all the scientific proposals for correction of texts, all translations of their texts - primarily versions in the modern Armenian language.



ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

բանաստիճական գիրք. դոկտոր, ՀՊՄՀ

ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆԸ ՎՍՏԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԹՎՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պատկերավոր համեմատությունները (ՊՀ) ազատ կամ կայուն բառակապակցություններ են, որոնց հիմքում ընկած է համեմատությունը (փոխաբերությունը), որն արտահայտում է համեմատելի հատկանիշ՝ երկու տարասեռ առարկաների եւ նրանց հատուկ ընդհանուր հատկանիշի հարաբերության միջոցով¹: Այդ կարգի կառույցները գործառվում են մեր լեզվի բոլոր գոյավիճակներում՝ առավել կամ նվազ հաճախականությամբ, տարբեր կառուցատիպերով, որ պայմանավորված է ժամանակաշրջանի լեզվամտածողությամբ: Գրաբարում ՊՀ-ների բաղադրիչները միավորվում են իբրեւ, քան, որպէս նախադրություններով, հմտ. խոյանալ իբրեւ զարծուի, չար քան զթոյսս իժից, որպէս լոյս առ խաւար եւ այլն:

ՊՀ-ները, իբրեւ լեզվական միավորներ, բնութագրվում են որոշակի հատկանիշներով եւ դասակարգվում են ըստ ներբառութային իմաստային հարաբերությունների (հոմանիշներ, հականիշներ), ըստ ձեւաբանական արժեքի (ածականական, բայական եւ մակբայական), ըստ տարբերակների եւ այլն:

Լեզվում տարբերակներն առաջանում են այն բանի հետեւանքով, որ քերականական իմաստներն ավելի շատ են, քան դրանք արտահայտելու լեզվական միջոցները: Առանձնացվում են համազոր եւ ոչ համազոր լեզվական տարբերակներ: Համազոր են համարվում այն տարբերակները, որոնք կարող են ազատորեն փոխարինվել մեկը մյուսով, կիրառվել գրեթե

¹ Հմտ. Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երեւան, 1986, էջ 126-127, 140, 260-263. А. Г. Назарян, Фразеология современного французского языка, Москва, 1987, էջ 111-125, 194-199. Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Երեւան, 1990, էջ 50-51:

բոլոր ոճերում, խոսքի բոլոր ոլորտներում: Տարբերակները ոչ համազոր են, երբ ունեն իմաստային, ոճական, կիրառական եւ տարածական տարբերություններ²:

Սույն հոգեվածում մենք կփորձենք ներկայացնել ՊՀ-ների տարբերակները գրաբարում, ավելի որոշակի՝ Աստվածաշունչ մատյանի գրքերում³, որտեղ դրանք առավելապես հանդես են գալիս որպես խոսքի ոճական արժեքի եւ ոճական կառուցվածքի դրսեւորումներ. հանգամանք, որ առաջին հերթին պայմանավորված է թարգմանական բնագրի ճիշտ մատուցման նպատակով:

Տարբերակներն ընդհանրապես հոմանշային գույգ (կամ գույգեր) են, որոնք արտահայտում են իմաստային մերձավոր կամ նույնական նշանակություններ եւ միմյանցից տարբերվում են արտահայտություն եղանակներով կամ կառուցվածքային գործոններով: Ըստ վերջին հանգամանքի էլ կարելի է խոսել տարբերակների տեսակների մասին:

ա) Եթե հոմանշային կառույցները միմյանցից տարբերվում են բաղադրիչ բառերի փոփոխակներով (հոմանշային տարբերակներով), ապա այդ կարգի տարբերակները կոչվում են քառական, հմմտ. հոսել իբրեւ զջուր եւ հոսել իբրեւ զհեղեղ:

բ) Եթե հոմանշային կառույցները միմյանցից տարբերվում են բաղադրիչ բառերի քերականական ձեւավորումով, ապա այդ կարգի տարբերակները կոչվում են քերականական, հմմտ. գոչել իբրեւ զառիւծ եւ գոչել իբրեւ առիւծոնք:

գ) Եթե համարժեք կառույցները միմյանցից տարբերվում են բաղադրիչների շարադասությամբ, ապա այդ կարգի կառույցները կոչվում են քանական, հմմտ. գոչել իբրեւ զառիւծ եւ գոչել իբրեւ զայրագին:

Աստվածաշնչի գրքերում հանդիպում են ՊՀ-ների վերոնշյալ տարբերակները՝ բառային, քերականական եւ քանական⁴, որոնց քննությունը կանգնադառնանք ստորեւ:

1. Բառային (հոմանշային) տարբերակներ. Աստվածաշնչի գրքերում բառային (հոմանշային) տարբերակների իմաստակառուցվածքային քննությունը ցույց է տալիս, որ դրանք այնպիսի կապակցություններ են, որոնք միմյանցից տարբերվում են հոմանշային որեւէ բաղադրիչով՝ միա-

² Զ. Աղաջանյան, Ձեռագրական նորմ եւ խոսքի մշակույթի հարցեր, Երևան, 2007, էջ 116:

³ Աստուածաշունչ մատենա հին եւ նոր կտակարանաց, Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, Երևան, 1997:

⁴ Գրաբարի դարձվածային տարբերակների մասին տե՛ս Պ. Բեղիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, էջ 213-216:

ժամանակ պահպանելով իմաստային մերձավորությունը որոշակի աստիճան: Այդ տարբերակներն ունեն այնպիսի կառուցատիպեր, որոնք միմյանց հարաբերում են նախադրությունների, գերադաս և ստորադաս բաղադրիչների փոփոխականերով:

ա) Աստվածաշնչի գրքերում բառային տարբերակներ են կազմում այն կապակցությունները, որոնց կառուցվածքում առկա են հոմանիշ նախադրություններ (հաճախ էլ՝ հետադրություններ). քան զձին սպիրակ // իբրեւ զձին սպիրակ, որպէս ի կարկրոյ հարեալք // իբրեւ ի կարկրոյ հարեալք, իբրեւ զաւագ բազմանալ // քան զաւագ բազմանալ, որպէս լոյս առ խաւար // զոր օրինակ լոյս առ խաւար, քան զսուր երկաւայրի // որպէս զսուր երկաւայրի, իբրեւ զաւագ // որպէս զաւագ // քան զաւագ եւ այլն:

Հմմտ. Եթէ իցեն մեղք ձեր իբրեւ զձանձախարիթ, իբրեւ զձին սպիրակ արարից (Եսայ. Ա. 18): Տօղեա յիս մշտկաւ եւ սուրբ եղէց, լուա եւ քան զձին սպիրակ եղէց (Սաղ. Ծ. 9): Եւ եգից զաւակ քո իբրեւ զաւագ ծովու, որ ոչ թուիցի ի բազմութենէ (Ծնն. ԼԲ. 12): Տեղեաց ի նոսա միս, որպէս զհող, որպէս զաւագ ծովու զթռչունս թեւաւորս (Սաղ. ՀԷ. 27): Բազմեցան զինեւ այրիք նոցա քան զաւագ ծովու (Երե. ԺԵ. 8):

Նման կապակցությունների արտահայտությունը պլանում կարող են գեղջվել ածականական բաղադրիչները կամ նախադրությունները. իբրեւ բոց // որպէս բոց, իբրեւ զաւագ ծովու // որպէս զաւագ ծովու // քան զաւագ ծովու, որպէս զանասունս // իբրեւ զանասունս, շանց գունակ // շանց օրինակ, իբրեւ (զ) Աստուած // որպէս (զ) Աստուած իբրեւ բոց հրոյ // բոց հրոյ եւ այլն: Հմմտ.

Թռիչք նորա իբրեւ զթռիչս բոցոյ հրոյ (Երգ. Ը. 6): Եւ աչք նորա որպէս բոց հրոյ (Յայտ. Ա. 14): Եւ աչք նորա բոց հրոյ, եւ ի վերայ գլխոյ նորա պսակս բազումս (Յայտ. ԺԹ. 12):

բ) Բառային տարբերակներում կարող են փոխվել գերադաս բաղադրիչները (ածականական կամ բայական). քաջ քան զԱքիլէս // արի քան զԱքիլէս, վարթար քան զշուն // լիրք քան զշուն, փրկում մինչեւ ի մահ // անմխիթար մինչեւ ի մահ, ի վեր քան զմիւս // գերազանց քան զմիւս, յորդել իբրեւ զջուր // յորդել իբրեւ զհեղեղ // հոսել իբրեւ զհեղեղ, իբրեւ զհուր վառել // իբրեւ զհուր բորբոքել(իմ), իբրեւ զխտրան ի բաց թողուլ // իբրեւ զխտրան հալածել ընկենոյ, ազդող քան զամենայն սուր // հալած քան զամենայն սուր, վառեալ իբրեւ զհնոց // ջեռեալ իբրեւ զհնոց եւ այլն:

Հմմտ. 1. Եւ ասէ Դաւիթ, Նա եւ վարթար եւս եւ քան զշուն (Ա. Թագ. ԺԷ. 43): Իբրեւ շունք լիրք եղեն յանձին իւրեանց, որ ոչ գիտեն զյագուրդ (Եսայ. ԾԶ. 11): 2. Եւ յորդեացեն իբրեւ զջուր իրաւունք եւ արդարութիւն

իրրեւ զհեղեղ անհուն (Ամովս., Ե. 24): Հոսեացեն իրրեւ զհեղեղ զարտասուս ի տուէ եւ ի գիշերի (Ողբ., Բ. 18):

դ) Հանդիպում են տարբերակներ, որոնց երկրորդ եզրում փոխված են լինում՝

1. Գերադաս բաղադրիչները եւ նախադրությունները. Հմմտ. Ծաղկեցէ՛ք որպէս զվարդենի բուսեալ (Սիրաք. ԼԹ. 17): Ծաղկեցէ՛ք ծաղիկ իրրեւ զշուշան (Սիրաք. ԼԹ. 19):

2. Գերադաս բաղադրիչները եւ նախադրության խնդիրները, Հմմտ. Ակնկալեսցի իրրեւ զանձրեւ բարբառ իմ, եւ իջցեն իրրեւ զցօղ պատգամք իմ, իրրեւ զանձրեւ ի վրեայ սիգոյ եւ իրրեւ զրեղաւարաւի ի վերայ խոտոյ (Բ, Օրէնք, ԼԲ. 2):

3. Բոլոր բաղադրիչները, Հմմտ. Աւրհնութիւն նորա իրրեւ զգեպ ծաւալեցան, որպէս հեղեղ զցամաք արքոյց (Սիրաք, ԼԹ. 27):

դ) Բառային տարբերակներ են ստեղծում սեռականով ավելադրությունները, որոնք ցուցաբերում են հոմանշային հարաբերություններ, ինչպես՝ Աչք իւր են իրրեւ զրոց հրոյ (Յայտ. Բ. 18): Ո՞ հանդարտեսցէ յայտնութեան նորա. զի նա մտցէ իրրեւ զրոց հալոցի (Մաղա. Գ. 2):

Սեռականով ավելադրությունը հոմանշային հարաբերություն կարող է ձեւավորել տարբերակային եզրի ածականական բաղադրիչի հետ, Հմմտ.

Որդւոց մարդկան ատամունք իւրեանց զէն եւ նետք են, եւ լեզուք նոցա որպէս զսուր սուսերի (Սաղ., ԾԶ. 5): Զօրհանապազ զանիրաւութիւն խորհեցաւ ի լուզուի իւրում, որպէս ածելի սուր սրեաց զնենգութիւն (Սաղ., ԾԱ. 4):

ե) Տարբերակներ կարող են դառնալ համարժեք նախդրավոր կառույցները, ինչպես՝ Եւ ելին ինքեանք եւ թագաւորք ... քաղում իրրեւ զաւագ առ աին ծովու բազմութեամբ (Յեսու. ԺԱ. 4): Եւ ուղտուց նոցա ոյ գոյր թիւ, այլ էին իրրեւ զաւագ առ եզր ծովու բազմութեամբ (Դատ, Է. 12):

զ) Բառային տարբերակներ կարող են ի հայտ գալ նաեւ կապակցության համեմատելի բաղադրիչների փոփոխականերով, որոնք հաճախ արտախոսքային մակարդակում չեն առանձնանում որպէս բուն հոմանիշներ, ինչպես՝

սպիտակ իբրեւ զլոյս // սպիտակ իբրեւ զծիւն // սպիտակ քան զկաթն
սեւա իբրեւ զագռաւ // սեւա իբրեւ զկապերտ այծեայ⁵

⁵ Մեա միջուկի գունային ենթադաշտին աղերսվում են ագռաւ եւ կապերտ (այծեայ) գունային երանգի հասկացությունները (տե՛ս Լ. Մ. Խաչատրյան, Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորները գրաբարում (ըստ Աստվածաշնչի), «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր, 2003, հ. 1, էջ 23):

իբրեւ զառիւծ // իբրեւ զվիշապ

որպէս սուր // որպէս ածելի եւ այլն: Հմմտ.

1. Եւ լուսաւորեցան երեսք նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձք նորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս (Մատթ. ԺԷ. 2): Եւ էր տեսիլ նորա իբրեւ զփայլակն եւ հանդերձ նորա սպիտակ իբրեւ զձիւն (Մատթ. ԻԸ. 3): Զուարթագին են աչք նորա ի գինւոյ եւ սպիտակ արամունք նորա քան զկաթն (Ծննդ. ԽԹ. 12):

2. Եւ եղիցին մնացորդքն Յակոբայ ի հեթանոսս, ի մէջ ազգաց բազմաց, իբրեւ զառիւծ ի մէջ խաշին յանտառի (Միքիէ. Ե. 8): Օտարացարուք ի միջոյ Բաբելոնի, եւ եղերուք իբրեւ զվիշապս առաջի խաշանց (Երե. Ծ. 8):

3. Որդւոց մարդկան ատամունք իւրեանց զէն եւ նետք են, եւ լեզուք նոցա որպէս զսուր սուսերի (Սաղ., ԾԶ. 5): Զօրհանապազ զանիրաւութիւն խորհեցաւ ի լեզուի իւրում, որպէս ածելի սուր սրեաց զնենգութիւն (Սաղ., ԾԱ. 4):

Ինչպես նկատելի է վերոբերյալ կապակցությունների կառուցվածքային քննությունից, ՊՀ-ների բառական տարբերակները լայն կիրառություն ունեն Աստվածաշնչի գրքերում, որպես խոսքի ոճական հնարանքներ:

Բ. Քերականական տարբերակներ. Աստվածաշնչի գրքերում հանդիպում են ՊՀ-ների քերականական տարբերակներ, որոնք կարելի է խմբավորել ըստ բաղադրիչների ձեւաբանական եւ շարահյուսական հատկանիշների: Այս դեպքում հաշվի են առնվում նրանց բաղադրիչների դրսեւորման ձեւաբանական միջոցները (հոլովման, թվի եւ այլ կարգերում) եւ կապակցության բաղադրիչների շարադասական դիրքի փոփոխությունը:

1. ՊՀ-ների ձեւաբանական տարբերակներում առկա են անվանական բաղադրիչների հոլովական զուգաձեւություններ եւ եզակի-հոգնակի ձեւեր: Դիտարկենք այդ տարբերակները շարահյուսական միջավայրում:

ա) Բաղադրիչների հոլովական զուգաձեւությամբ տարբերակներ⁶:

Այս կարգի կառույցներում նախադրության խնդիրները հոլովական տարբեր արտահայտություններ ունեն՝ պայմանավորված այն հանգաման-

⁶ Հայ քերականագիտության մեջ ընդհանրապես քերականական, մասնավորապես հոլովական զուգաձեւություններին անդրադարձել են Ա. Բագրատունին (Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացեալոց, Վենետիկ, 1852, էջ 6-7, 9, 11, 13, 17-29, 94), Մ. Սեբաստացին (Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 20-43, 253-293), Մ. Չամչեանը (Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1843, էջ 11-34), Լ. Խաչատրյանը եւ Լ. Ենգոյանը, Գոյականի հոլովական զուգաձեւությունները Ե. դարի մատենագրական երկերում («Էջմիածին», Ը., 2015, էջ 60-68):

քով, որ տվյալ նախադրույթյունը կարող է խնդիր ստանալ տարբեր հոլովներով, հմմտ. մահու չափ // մահուամբ չափ, գոչել իրրեւ առիւծ // գոչել իրրեւ զառիւծ, իրրեւ զառիւք // իրրեւ զզառիւս, իրրեւ ոչխարք // իրրեւ զոչխարս եւ այլն: Հմմտ.

Իշխանք նորա իրրեւ առիւծունք գոչեացեն, եւ դատաւորք նորա իրրեւ զգայլս (Սոփ., Գ. 3): Եւ աղաղակեաց ի ձայն մեծ, գոչեաց իրրեւ զառիւծ (Յայտ., Ժ. 3):

բ) Բաղադրիչների եզակի-հոգնակի ձեւերով տարբերակներ. իրրեւ զմանուկ // իրրեւ զմանուկս, իրրեւ զգառն // իրրեւ զգառիւս, իրրեւ զայր // իրրեւ զարս, իրրեւ զոչխար // իրրեւ զոչխարս, որպէս ծնող // որպէս ծնողք եւ այլն: Հմմտ.

1. Ես իրրեւ զգառն անմեղ վարեալ ի սպանդ, ոչ գիտասցի, թէ զինէն խորհեցան խորհուրդ չար (Երե., ԺԱ. 19): Զի իրրեւ զձիս ճախրեցան եւ իրրեւ զզառիւս խայտացին՝ աւրհնել զքեզ (Իմաս., ԺԹ. 9): 2. Ապա թէ անդանդաղ լինիցիս, հասանիցէ իբրեւ զաղբիւր ամառն քո, եւ կարօտութիւն իրրեւ այր մի չար ինքնահալած լինիցի (Առակ., Զ. 11): Եւ եթող առ իւր ի նոցանէ իրրեւ արս երիս հազարս (Ա. Մակ., ԺԲ. 47):

գ) Աստվածաշնչի ՊՀ-ների շրջանակներում հանդիպում են այնպիսի կառույցներ, որոնք միաժամանակ դրսեւորում են թե՛ բառային (նախադրույթյունների) եւ թե՛ քերականական (հոլովական) տարբերություններ. նման Աստուծոյ // որպէս զԱստուած, նման արծաթոյն // իրրեւ զարծաթ, նման առիւծոյ // որպէս զառիւծ, որպէս խաշին // իրրեւ զխաշն եւ այլն: Հմմտ.

1. Էր կենդանին առաջին նման առիւծոյն, եւ երկրորդ կենդանին՝ նման զուարակի (Յայտ., Դ. 7): Եւ բազմեալ հանգեալ իրրեւ զառիւծ եւ իրրեւ զկորին առիւծու (Թիւք, ԻԴ. 9): 2. Առաջնորդեցեր որպէս խաշին ժողովրդեան քո ի ձեռն Մովսիսի եւ Ահարոնի (Սաղ., ՀԶ. 21): Եւ որ չէնն մնասցէ, եղիցի իրրեւ զհօր մակադեալ եւ իրրեւ զխաշն լքեալ (Եսայ., ԻԷ. 10):

դ) Նախադրույթյունների հայցականով խնդիրը կարող է հանդես գալ Զ նախդրով եւ առանց դրա. որպէս զմեղուս // որպէս մեղուս, որպէս առիւծ // որպէս զառիւծ եւ այլն:

Հմմտ. Այլ զկնի Տեառն գնացից, իրրեւ առեւծ մռնչեսցէ, զի ինքն մռնչեսցէ (Ովսէ., ԺԱ. 10): Զի ես եմ իրրեւ զյովազ ի վերայ Եփրեմի, եւ իրրեւ զառեւծ ի վերայ Կանան Յուդայ (Ովսէ., Ե. 14):

2. ՊՀ-ների շարահյուսական տարբերակների ձեւավորման գործում կարեւոր դեր է վերապահվում կապակցությունների շարադասական գոր-

ծնին. **դրանք ձեռավորվում են կառույցի բաղադրիչների շարադասական դիրքի փոփոխություններով.**

իրեն զմարգարիսն պարտական // իրեն զպարտական մարգարիսն,
քաղցր քան զմեղու խորիսիս // քաղցր քան զխորիսիս մեղու, իրեն զարծաթ ի
բովս (քննել) // (մկրանել) ի բովս իրեն զարծաթ, ծագել իրեն զոյս // իրեն զոյս
ծագել, գոչել իրեն զառիծ // իրեն զառիծ գոչել **եւ այլն: Օրինակ՝**

1. Վասն Երուսաղեմի ոչ ներեցից, մինչեւ ծագեացէ իրեն զոյս արդարութիւն նորա (Եսայ., ԿԲ. 1): Եւ կոտորեցի զնոսա բանիւ բերանոյ իմոյ, եւ իրաւունք քո իրեն զոյս ծագեացեն (Ովսէ., 2. 5): 2. Արթո՛ւն լերուք, հսկեցէ՛ք, զի ոսոխն ձեր Սատանայ իրեն զառեւծ գոչէ (Ա. Պետ., Ե. 8): Եւ աղաղակեաց ի ձայն մեծ, գոչեաց իրեն զառեւծ (Յայտ., Ժ. 3):

Շարահյուսական տարբերակներ են ստեղծվում ածականական բաղադրիչների գեղջման դեպքում. սուր քան զամենայն սուր երկասյրի // քան զամենայն սուր երկասյրի, քաղցր քան զխորիսիս մեղու // իրեն զխորիսիս մեղու **եւ այլն: Հմմտ.**

1. Յանկալի է նա քան զոսկի եւ քան զականս պատուականս բազումս (Սաղ., ԺԸ. 11): Ընկալարո՛ւք զխրատ, եւ մի՛ զարծաթ, եւ զգիտութիւն քան զոսկի ընտիր (Առակ., Ը. 10): 2. Քաղցր է նա քան քան զմեղու խորիսիս (Սաղ., ԺԸ. 11): Եւ նա էր իբրեւ զսերմն գնձոյ՝ սպիտակ եւ համ նորա իրեն զխորիսիս մեղու (Ելք., ԺԶ. 31):

Գ. Քանակական տարբերակներ. Աստվածաշնչի գրքերում այս կարգի տարբերակները հանդես են գալիս բաղադրիչների քանակային տարբեր կազմերով՝ համառոտ եւ ծավալուն, որոնք, պահպանելով իմաստային մերձավորությունը, կազմում են հոմանշային զույգ(եր):

Քանակական տարբերակները սովորաբար ձեռավորվում են այն դեպքում, երբ ելակետային բառակապակցությունն նախադրության խնդիրը ստանում է որեւէ կարգի լրացում՝ այդպիսով առաջին պլան մղելով ՊՀ-ի իմաստային բեռնվածությունը: Այդ կարգի լրացումները կարող են արտահայտվել ինչպես բառով, բառակապակցությամբ եւ նախդրավոր կապակցությամբ, այնպես էլ (երկրորդական) նախադասությամբ: Ըստ այդ հանգամանքի էլ առանձնացվում են քանակական տարբերակների կառուցատիպերը:

1. Լրացական անդամն արտահայտված է բառով.

ՊՀ-ների արտահայտությունն պլանում այդպիսի բառական բաղադրիչները կամ ընտրական անդամներ են, ինչպես՝

իբրեւ զհնոց // իբրեւ զհնոց վառեալ

իբրեւ զլոյս // իբրեւ զլոյս փոթագին
 իբրեւ զլոյս // իբրեւ զլոյս արեգական
 իբրեւ զեղբայր // իբրեւ զեղբայր զհարազատ
 իբրեւ ոչխարք // իբրեւ ոչխարք մոլորեալք
 որպէս անձրեւ // որպէս անձրեւ սաստիկ
 յորդեւ իբրեւ զհեղեղ // յորդեւ իբրեւ զհեղեղ անհուն
 գոչեւ իբրեւ զառիւծ // գոչեւ իբրեւ զառիւծ զայրագին
 որպէս խաչն // որպէս զխաչն քնալ եւ այլն:

Հմմտ. 1. Առաջնորդեցեր որպէս խաչին ժողովրդեան քո ի ձեռն Մովսիսի եւ Ահարոնի (Սաղ. ՀԶ. 21): Եւ որ չէնն մնասցէ, եղիցի իբրեւ զխաչն քնալ (Եսայ., ԻԷ. 10): 2. Զի բորբոքեցան իբրեւ զհնոց սիրտք նոցա յանիծանել զնոսա (Ովսէ., Է. 6): Ամենեքին ջեռան իբրեւ զհնոց վառեալ, եւ հուր եկեր զգատաւորս նոցա (Ովսէ., Է. 7): 3. Եւ կոտորեցի զնոսա բանիւ բերանոյ իմոյ, եւ իրաւունք քո իբրեւ զլոյս ծագեսցեն (Ովսէ., Զ. 5): Եւ եղիցի լոյսն լուսնի իբրեւ զլոյս արեգական, եւ լոյսն արեգական եւ թնապատիկ եղիցի (Եսայ., Լ. 26):

2. Լրացական անդամն արտահայտված է բառակապակցութեամբ (կամ նախդրովոր կապակցութեամբ): Այստեղ պետք է նկատի առնել, որ լրացական անդամները վերաբերում են գերադաս բաղադրիչներին, հմմտ.

իբրեւ վիշապ // իբրեւ զվիշապս առաջի խաչանց, օրինակ իմն որպէս փոթորիկ // օրինակ իմն որպէս փոթորիկ յանրատէ տերեւաթափ, իբրեւ զփայլակն // իբրեւ զփայլակն անկեալ յերկնից, իբրեւ զաւազ ծովու // իբրեւ զաւազ առ ափն ծովու եւ այլն:

Հմմտ. 1. Եւ ցիւք ի դաշտս ծծեցին զօդս իբրեւ վիշապս (Երե., ԺԴ. 6): Եւ յերկրէդ Քաղդեացւոց ելէք, եւ եղերուք իբրեւ զվիշապս առաջի խաչանց (Երե., Ծ. 8): 2. Եղից զաւակ քո իբրեւ զաւազ ծովու, որ ոչ թուիցի ի բազմութենէ (Ծնն., ԼԲ. 12): Եւ ելին ... իբրեւ զաւազ առ ափն ծովու բազմութեամբ (Յեսու. ԺԱ. 4):

Այլ դեպքերում բառակապակցական լրացումը վերաբերում է բայական անդամին, ինչպես՝

Դիր զհս իբրեւ զկնիք ի սրտի քում եւ իբրեւ զմաւրանի ի վերայ բազկի քո (Երգ., Ը. 6):

Քանակական տարբերակներում բայական անդամը կարող է զեղչված լինել, ինչպես՝ իբրեւ զառիւծ // իբրեւ զառիւծ ի մէջ խաչին, որպէս մեղուս // որպէս մեղուս ընդդէմ ծաղկանց, իբրեւ զարծաթ // իբրեւ զարծաթ ի բովս եւ այլն: Հմմտ.

Որսացեալ եմ իրրէս զառիծ ի սպանումն (Յովբ., Ժ. 16): Եւ եղիցին մնացորդքն Յակոբայ ի հեթանոսս իրրէս զառիծ ի մէջ խաշին (Միքիէ, Ե. 8):

3. Լրացական անդամն արտահայտված է (երկրորդական) նախադասությամբ: Այս կարգի կառուցատիպերում նախադասությամբ արտահայտված հավելական բաղադրիչները հիմնականում լրացնում են նախադրության խնդրին՝ հանդես գալով իբրեւ ստորոգումային լրացումներ: Հմմտ.

1. Ես եմ պարիսպ, եւ ստինք իմ իրրէս զաշտարակս (Երգ., Ը. 10): Ռեգուկը քո իրրէս զաշտարակն Լիբանանու, որ դիրք հանդէպ Դամասկոսի (Է. 4): 2. Եւ ճակատեցան որդիքն Իսրայելի ընդդէմ Ասորուցն իրրէս երկու երամակք այծից (Գ. Թագ., Ի. 27): Վարսք քո իրրէս զերամակս այծից, որք երեսեցան ի Գաղղասաթէ (Դ. 1):

Այսպիսով, Աստվածաշնչի գրքերում ՊՀ-ների տարբերակները բնութագրվում են որոշակի կառուցատիպերով. առանձնացվում են բառային (հոմանշային), քերականական եւ քանակական տարբերակները: ՊՀ-ների տարբերակների ձեւավորման գործում զգալի դեր ունեն գերադաս եւ ստորադաս բաղադրիչների բառաքերականական հատկանիշները, կամընտրական անդամները, նրանց արտահայտության լեզվական միջոցները եւ, որ կարեւոր է, նախդիրների կապակցելիական հնարավորությունները:

ՊՀ-ների ուսումնասիրությունը Աստվածաշունչ մատյանում ունի ոչ միայն ճանաչողական, բանասիրական եւ լեզվաբանական նշանակություն, այլ նաեւ աղբյուրագիտական նշանակություն՝ գրաբարայեզու պատմիչների երկերի պատկերավորման համակարգի գնահատման տեսանկյունից: Հինգերորդ դարի մատյաններում հանդիպող ՊՀ-ների բացարձակ մեծամասնությունը սերում է Աստվածաշունչ մատյանից. մի հանգամանք, որ պայմանավորում է պատմիչների մատյանների պատկերավորման կուռ համակարգը: Այդ առումով Աստվածաշնչի պատկերավորման համակարգը, բոլոր առումներով, մնում է որպէս չգերազանցված չափանիշ, որի ազդեցությունն առկա է բոլոր դարերի հայկական պատմագեղարվեստական երկերի պատկերավորման համատեքստում:

РЕЗЮМЕ


Варианты образных сравнений в книгах Библии (армянский перевод) характеризуются конкретными моделями, которые разделяются на следующие подгруппы: словесный (սպիտակ որպէս զձիւն // սպիտակ իրրէ զկաթն. белый как снег // белый как молоко), грамматический (սման Աստուծոյ // որպէս զԱստուած. подобно Богу // как Бог), количественный (քաղցր իրրէ զմեղր // քաղցր քան զխորիսխ մեղր. сладкий как мёд // сладкий как соты мёда).

В плане образования таких вариантов важную роль играют способы выражения доминантного компонента, грамматические признаки зависимого члена, расположение элементов сочетания, а также связывающие особенности предлогов в планах выражения и содержания структуры.

SUMMARY

The variants of figurative comparisons in the books of the Bible (Armenian version) are characterized by specific models, which are divided into the following groups: *wordy* (սպիտակ որպէս զձիւն // սպիտակ իրրէ զկաթն. white as snow // white as milk), *grammatical* (սման Աստուծոյ // որպէս զԱստուած. like the God // as a God), *quantitative* (քաղցր իրրէ զմեղր // քաղցր քան զխորիսխ մեղր. sweet as honey // sweet like a honeycomb honey).

In terms of the formation of these variants the ways of expression of dominant component the grammatical features of a dependent member, the layout combinations, as well as the binding characteristics of prepositions in the plans of expression and content structure play an important role.



ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Տ. ՄՈՎՍԵՍ ԱԲԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՀԸ

ԱՐԴԱՐԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնեական ավանդական վարդապետության համաձայն՝ որոշ պատերազմներ արժանի են քրիստոնյաների մասնակցությանն ու պաշտպանությանը: Այսպիսի պատերազմները կոչվում են «արդարացի», երբ ճշմարտությանը ղեկավարվող իշխանությունները, գինվորական գործողությունների դիմելու համար, ունեն իրավացի հիմք եւ արդար նպատակ:

Քրիստոնյաների վերաբերմունքը պատերազմի եւ խաղաղության նկատմամբ քրիստոնեական գաղափարախոսության ձեւավորման դարաշրջանում գիտական հետաքրքրություն է ներկայացնում՝ հաշվի առնելով երկու հանգամանքներ.

ա. քրիստոնեության պատմության առաջին դարերում հաստատվեցին իրականության ընկալման ընդհանուր սկզբունքները, որոնք կիրառվեցին եվրոպական քաղաքակրթությունում ընդհուպ մինչեւ մեր ժամանակները: Այդ պատճառով պատերազմի եւ խաղաղության վերաբերյալ արդիական մեկնաբանությունների գաղափարային արմատները բոլոր հիմքերով կարող ենք փնտրել եւ գտնել արդեն եկեղեցու հայրերի գործերում:

բ. Պատերազմի եւ խաղաղության նկատմամբ վերաբերմունքը միշտ էլ եղել է քրիստոնեական աշխարհայացքի կարեւոր մասը:

Եկեղեցու կողմից ձեւավորված դասական եւ ավանդական՝ արդարացի պատարազմի դրույթը միշտ չէ, որ ուժի կիրառումը համարում է անընդունելի: Դեռ ավելին, սա հռչակում է, որ պատերազմն իրականում կարող է լինել սիրո դրական արտահայտություն: Աստծու եւ բարեկամի նկատմամբ սերը ստիպել է քրիստոնյաներին արդարացի խաղաղություն

փնտրել, իսկ բանակը երբեմն պատշաճ միջոց է այդ խաղաղությանը հասնելու համար¹:

Պատերազմում առկա են հակասություններ քաղաքակրթության հիմնական արժեքներին: Այն հարձակում է մարդկանց ապրելու իրավունքների, անվտանգության, ունեցվածքի, խաղաղության եւ ազատության դեմ: Բայց եւ այնպես, արդարացի պատերազմի տեսությունը պնդում է, որ պատերազմը կարող է որոշակի պայմաններում լինել բարոյապես արդարացված:

Ի սկզբանե արդարացի պատերազմի տեսությունը ստեղծվել ու զարգացել է քրիստոնեական մտածողների, հատկապես աստվածաբանների ու եկեղեցու հայրերի կողմից: Հետագայում այն ձեռք է բերել փիլիսոփայական հիմք եւ, հետեւապես, արտահայտվել մասնակիորեն եւ՝ որպես սովորույթ, եւ՝ որպես միջազգային իրավունք²:

Արդարացի պատերազմի դրույթները պաշտոնապես ձեւավորվել են ժամանակակից փաստաթղթերում, ինչպիսիք են Հաագայի ու ժնևեի կոնվենցիաները եւ ՄԱԿ-ի կանոնադրությունը: Արդարացի պատերազմի տեսությունը բարոյական պատասխանն է բոլոր նրանց, ովքեր համարում են, որ օրենքը կիրառելի չէ պատերազմական գործողությունների ժամանակ, ինչպես ընդունված էր ասել Հռոմում՝ «Պատերազմի ժամանակ օրենքը լուռ է»³:

Ժամանակակից արդարացի պատերազմի տեսության առաջատար մասնագետները (*James Turner Johnson, Michael Walzer*) գտնում են, որ արդարացի պատերազմի գաղափարախոսությունը բնական զարգացում է ունեցել ցանկացած ժողովրդի կամ համայնքի կյանքում, ինչն էլ հիմք է հանդիսացել տվյալ դոկտրինի համար⁴:

Ըստ Ջեյմս Ջոնսոնի՝ մինչեւ ԺԶ. դար հեղինակները հիմնականում ազդվել են Օգոստինոսի եւ վաղ եկեղեցական կանոնական իրավունքի՝ այլ աստվածաբանների գործերից, եւ սխալ է խոսել դասական արդարացի պատերազմի դրույթի մասին մինչեւ հիշյալ ժամանակաշրջան, որովհետեւ

¹ Տիւ D. Cole, When God says war is right. The Christian's perspective on when and how to fight, USA 2002, p. 7:

² Տիւ J. T. Johnson, Just war theory: What's the use? "WORLDVIEW" Wolume 19, July-August, 1976, p. 41. <http://worldview.carnegiecouncil.org/archive/worldview/1976/07/2722.html> (26.02.2016):

³ Տիւ M. Percy, We have never known what death was before, A just war doctrine critique of U.S. history textbooks, University of South Florida, 2011, p. 10. <http://scholarcommons.usf.edu/etd/3286/> (26.02.2016):

⁴ Տիւ J. T. Johnson, Ideology, reason, and the limitation of war: Religious and secular concepts, 1200-1740, New Jersey 1975, p. 12-13:

մինչ այդ գոյություն ունեւ երկու դրույթ՝ կրոնական, որն ընդհանուր առմամբ մտահոգված էր պատերազմ սկսելու իրավունքի՝ *jus ad bellum*-ի հետ կապված հարցերով, եւ աշխարհիկ, որն հիմնականում ուղղված է պայքարի պատշաճ եղանակների ապահովմանը՝ *jus in bello*-ին: Արդարացի պատերազմի դոկտրինն ընդունելի համարվեց դրանից հետո եւ ի. դարում, երբ դրույթն իր մեջ սկսեց ընդգրկել վերոնշյալ երկու կետերը միասին⁵:

Մայքլ Վալզերը Զեյմս Զոնսոնի հետ միասին առավելապես կենտրոնացնում է ժամանակակից արդարացի պատերազմի դրույթի վրա: Իր «Արդարացի եւ անարդարացի պատերազմներ» գրքում խոսելով պատերազմի բարոյական նկարագրի մասին՝ Մ. Վալզերը պնդում է, որ հարձակումը այն միակ հանցագործությունն է, որ պետությունը կարող է կատարել մեկ այլ պետության դեմ⁶:

Չնայած նրան, որ արդարացի պատերազմի ավանդույթը լայն ու բազմակողմանի է, այն բաղկացած է պատերազմի էթիկայի վերաբերյալ խնդրի չորս հիմնական մասերից՝ միլիտարիզմ, պացիֆիզմ, ռեալիզմ, արդարացի պատերազմ⁷, որոնք ընդգծում են նրա արտաքին սահմանները.

1. Միլիտարիզմը պատերազմը համարում է միանշանակ դրական երեւույթ:

2. Պացիֆիզմն առհասարակ դեմ է պատերազմին:

3. Քրիստոնեական ռեալիզմի գաղափարախոսության համաձայն՝ պատերազմը գտնվում է էթիկական մտորումների հարթությունից դուրս, եւ բարոյականությունը չի կարող կիրառվել պատերազմի ժամանակ⁸:

4. Արդարացի պատերազմի տեսությունն, ըստ էության, ամենաընդունելին է, այն որոշ դեպքերում պատերազմը համարում է բարոյապես ընդունելի եւ սահմանում է արդարացի պատերազմի չափորոշիչները:

Այս սահմանափակումների շրջանակներում տեսաբաններն առանձնացնում են արդարացի պատերազմի ավանդույթի տարբեր ճյուղեր ո՛չ միայն տեսության նրբությունները ցույց տալու, այլեւ դրանց հիմնարար առանձնահատկությունները ընդգծելու համար. զինված հարձակման դեմ, ինքնապաշտպանության դիմելուց բացի, կարո՞ղ է պատերազմը արդարացված լինել:

⁵ Տե՛ս J. T. Johnson, *Ideology*, p. 7-8:

⁶ Տե՛ս M. Walzer, *Just and unjust wars. A moral argument with historical illustrations*, New York, 1977, p. 51:

⁷ Տե՛ս A. J. Coates, *The ethics of war*, Manchester, 1997, p. 17-96:

⁸ Տե՛ս J. T. Johnson, *Just war theory: what's the use?* p. 41:

Արդարացի պատերազմի տեսությունը պատերազմը համարում է մերժելի, սակայն՝ որոշ հանգամանքներում բարոյապես թույլատրելի, որպես «չարյաց փոքրագույնը»⁹: Այն բաժանվում է երեք մասերի՝

1. Պատերազմ սկսելու արդարացիություն (*jus ad bellum*)
2. Պատերազմի արդարացի ընթացք (*jus in bello*)
3. Արդարացիություն պատերազմի ավարտին (*jus post bellum*)

Սրանցից յուրաքանչյուրի համար գրեթե բոլոր հեղինակներն էլ սահմանել են չափորոշիչներ՝ առանձին կետերով: Ստորեւ կփորձենք տարբեր հեղինակների սկզբունքների հիման վրա շարադրել արդարացի պատերազմի տեսություն կանոնները՝ համառոտ բացատրություններով:

JUS AD BELLUM.

Պատերազմի սկիզբը կարող է համարվել արդարացի հետեւյալ վեց չափանիշների առկայությամբ, ընդ որում՝ առաջին երեքը զուտ բարոյական են, իսկ վերջին երեքը հիմնված են անվտանգության ապահովման վրա:

1. Արդարացի հիմք: Սա ամենակարեւոր նախապայմանն է, որովհետեւ պատերազմ սկսելու համար պետք է լինեն արդարացի հիմնավորումներ: Այդպիսին կարող են լինել ինքնապաշտպանությունը, այլոց պաշտպանությունը հարձակումից, անմեղ մարդկանց պաշտպանությունը ագրեսիվ վարչակարգերից, անցյալում կատարված ագրեսիվ հանցագործությունների համար ուղղիչ կամ պատժիչ գործողությունները: Այս բոլորն ուղղված են ընդդեմ ոչ իրավացի հարձակման, ընդդեմ հիմնական իրավունքների խախտման՝ օգտագործելով զինված ուժ:

Միջնադարյան ժամանակներից արդարացի հիմքը համարվում էր ամենաառաջնային հանգամանքը, որպեսզի պատերազմը համարվեր արդարացի: Սակայն սկսած ԺԸ. դարից մինչեւ վերջերս՝ այն կորցրեց իր առաջնայնությունը¹⁰: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այս հարցն իր վրա կենտրոնացրեց գիտնականների ու միջազգային իրավունքի ուշադրությունը՝ հաճախ դառնալով հանրային բանավեճի առարկա:

2. Արդար նպատակ: Պատերազմին մասնակցելու մտադրությունը հիմնավորված է, երբ այն սկսված է արդարացի հիմքով: Մյուս բոլոր մտադրությունները, օրինակ՝ նյութական շահը, հարցականի տակ են դնում

⁹ Sñu N. Megoran, Militarism, realism, just war, or nonviolence? Critical geopolitics and the problem of normativity, «Geopolitics» Volume 13, Issue 3, University of Newcastle, 2008, p. 478.

¹⁰ J. F. Coverdale, An introduction to the just war tradition, Pace International Law Review, V. 16, Issue 2 Fall 2004, p. 229. <http://digitalcommons.pace.edu/pilr/voll6/iss2/1> (26.02.2016).

պատերազմի արդարացիությունը: Արդարացի պատերազմի միջնադարյան տեսությունը ճանաչում է հիմնականում երեք նպատակ, որոնք արդարացնում են պատերազմը: Դրանք են՝ հարձակումից պաշտպանվելը, անօրենսությանը դավթած տարածքի, ինչքի ետքերումն ու հակառակորդին կամ չարին պատժելը: «Չարին» պատժելու նպատակը մեծ տեղ էր զբաղեցնում միջնադարյան տեսության մեջ. Թոմաս Աքվինացին այն համարում էր պատերազմի սկզբունքային արդարացում: Մինչդեռ ժամանակակից տեսաբանները բարոյական հանցագործության համար պատիժն այլևս չեն համարում որպես պատերազմի արդարացում, փոխարենը ընդգծում են առարկայական սխալները, այդ թվում՝ մարդու իրավունքների խախտումը¹¹:

3. Համապատասխան իշխանություն եւ հանրային հոգակազիր: Պատերազմի դիմելու որոշումը պետք է ընդունվի օրինական իշխանության կողմից (սովորաբար պետության սահմանադրության հիմնավորված) եւ հանրության կոչով կամ հոգակազրով: Այս մասին Թոմաս Աքվինացին եւս նշում է, որ միայն իրավական իշխանությունը կարող է պատերազմ սկսելու հրաման արձակել, որովհետեւ դա անձի, անհատի գործ է: Նա, հղում անելով Օգոստինոսին, գրում է. «Պատերազմը որոշելու եւ հայտարարելու իրավունքը գտնվում է միայն գերագույն իշխանության ձեռքում»¹²: Այսինքն՝ միայն որոշակի անձինք են լիազորված որոշում կայացնելու պատերազմի մեջ մտնելու կամ չմտնելու մասին: Այդպիսիք չեն կարող լինել մասնավոր անձինք, մասնավոր կազմակերպություններ, գեներալներ, այլ՝ պետական պաշտոնյաներ կամ որոշակի ինստիտուտներ: Պատճառն այն է, որ հեղափոխական իրավիճակների ու քաղաքացիական պատերազմների ժամանակ դժվար է որոշել, թե որն է պատերազմ, որը՝ մասնավոր բռնություն: Արդարացի պատերազմի ավանդույթում այս տարբերությունը կախված է այն բանից, թե ում կողմից է պատերազմ հայտարարված եւ ում անունով է այն մղվում: Ընդունված է, որ ազգային-ազատագրական շարժումները, որոնք պայքարում են գաղութային ռեժիմների դեմ, նույնպես ունեն լեգիտիմ իշխանություն՝ ուժի կիրառմամբ ինքնորոշման իրենց իրավունքը պաշտպանելու համար:

4. Վերջին հանգրվան: Պատերազմի հոգակազիրը պետք է լինի վերջին միջոցը՝ հակամարտության լուծման բոլոր հավանական այլընտրանքների

¹¹ J. F. Coverdale, An introduction to the just war tradition, p. 230.

¹² Saint Thomas Aquinas, Summa Theologica, Second part of the second part, Question 40. Of war, Article 1: Whether it is always sinful to wage war?

սպառնալից հետո: Սակայն որոշ հեղինակներ կարծում են, որ դա չի նշանակում, թե ազգերը կարող են դիմել պատերազմի միայն այն ժամանակ, երբ այլեւս ոչ մի այլընտրանք չկա: Այսինքն՝ պետք է անպայման փորձել բոլոր տարբերակները, եթե արդեն ակնհայտ է, որ խնդիրը կարող է լուծվել միայն ուժի միջոցով, որովհետեւ այս չափանիշն, ըստ բրիտանացի հայտնի ռազմագետ Մայքլ Քուինլանի, պահանջում է, որ պատերազմը լինի «նվազագույն տարբերակը, որը պետք է նախընտրել»¹³: Այսինքն՝ այս չափանիշը պահանջում է կշռադատված դատողություն. կա՞րողոք որեւէ այլընտրանք, որի միջոցով հնարավոր կլինի խուսափել պատերազմից:

5. Հաջողության հավանականություն: Պատերազմի հոգակումը կարող է լինել արդարացի, եթե պետությունը կանխատեսի հակամարտության կարգավորման հաջողության հավանականությունը պատերազմի միջոցով: Բռնությունը, առանց հնարավոր ձեռքբերումների, չի կարող արդարացված լինել:

Սակայն այս չափանիշը եւս որոշ բացատրությունների կարիք ունի, որպեսզի սխալ չհասկացվի այն իմաստով, որ պատերազմը գործընթաց է, եւ միշտ չէ, որ հնարավոր է կանխատեսումներ անել ու հավաստի երաշխիքներ ունենալ պատերազմի ավարտի մասին: Հաշվի առնելով, որ ոչ ոք անպարտելի չէ, թշնամուն հակադարձելու համար քայլեր չձեռնարկելը նշանակում է խուսափել պատասխանատվությունից եւ հրահրել կրկնվող կամ նույնիսկ ավելի վատ հանցագործություններ հետագայում¹⁴:

6. Համաչափություն: Հայտարարված պատերազմի պատասխանատվությունը պետք է լինի համաչափ: Պետությունը, նախքան պատերազմ նախաձեռնելը, պետք է կշռադատի համընդհանուր շահը, որն ակնկալվում է արդյունքում, ինչպես նաեւ պետք է կարողանա իր կողմից պատերազմի դիմելու արդարացի հիմնավորումները եւ նպատակները ապահով կերպով պահպանել ողջ պատերազմի ընթացքում, հակառակ այն արհավիրքի, որն ամենայն հավանականությամբ, տեղի պիտի ունենա պատերազմի ժամանակ: Այստեղ պետությունը պետք է հաշվի առնի ոչ միայն իր ծախսերն ու օգուտները, այլեւ նրանց, ովքեր կտուժեն՝ ներգրավվելով պատերազմի մեջ (այդ թվում հակառակորդի կորուստները, անմեղ զոհերը)¹⁵:

¹³ M. Quinlan, The just war litmus test, «The Tablet», The international Catholic news weekly, 13 October 2001, p. 7. <http://archive.thetablet.co.uk/article/13th-october-2001/7/the-just-war-litmus-test> (22.03.2016).

¹⁴ M. Quinlan, նույն տեղում, էջ 7:

¹⁵ Stiu M. Lacewing, Philosophy for A2, Unit 3, Key Themes in Philosophy, New York, 2010, p. 135:

Արդարացի պատերազմի տեսությունը պնդում է, որ բոլոր վեց չափանիշները պետք է ամբողջությամբ կիրառվեն, որպեսզի տվյալ պատերազմը համարվի արդարացիված, եւ նույնիսկ մեկ սկզբունքի բացակայության դեպքում տվյալ պատերազմին արդարացում¹⁶ չկա: Արդարացի պատերազմի տեսությունն այս հարցում բավական պահանջկոտ է, եւ այդպես էլ պետք է լինե՝ հաշվի առնելով հարցի լրջությունը: Կարելի է նշել, որ վեց կանոններից առաջին երեքը բարոյական պահանջմունքներ են, որոնք վերաբերում են հիմնական պարտականությունների կամ առաջնային սկզբունքների պահանջներին: Սակայն այստեղ տեսանելի է մի նրբություն. արդարացի պատերազմը երբեմն խախտում է որոշ սկզբունքներ, օրինակ՝ հարձակում չգործելու պարտականությունը՝ նկատի ունենալով արդարացի հիմքով պատերազմ սկսելը, հակահարձակումը: Այստեղ պատերազմող կողմը, «խախտելով» չհարձակվելու կանոնը եւ պատերազմ սկսելով, պետք է կատարի մյուս բոլոր պարտականությունները, որոնք պետք է լինեն պատշաճորեն հիմնավորված եւ հրապարակայնորեն հայտարարված: Հաջորդ երեք պահանջները բխում են նախորդներից: Նախքան պատերազմի մեկնարկը, սկզբունքային պահանջները բավարարելու հետ, պետք է նաեւ հաշվի առնել ակնկալվող հետեւանքները: Այսպիսով, արդարացի պատերազմի տեսությունը փորձում է ապահովել բարոյական եւ իրավական միասնական դրույթներ՝ պատերազմին վերաբերող հարցերում:

JUS IN BELLO.

Հետեւյալ վեց կանոնները հիմնականում արտահայտում են պատերազմի արդար գործընթացի պայմանները:

1. Միջազգային օրենքներով արգելված զենքեր չպետք է կիրառել: Մասնավորապես քիմիական ու կենսաբանական զենքերի գործածումը արգելվում է բազմաթիվ պայմանագրերով: Միջուկային զենքի օգտագործման վերաբերյալ արգելանքն այնքան էլ հստակ չէ, սակայն ակնհայտ է, որ մեծ տաբու կա այդպիսի զենքի կիրառման վրա, որի օգտագործումը միջազգային հանրության կողմից պիտի հանդիպի աներեւակայելի թշնամական վերաբերմունքի:

2. Տարբերակել կոմուղներին ու չկոմուղներին: Զինվորների համար թիրախ կարող են լինել միայն նրանք, ովքեր «ընդգրկված են պատերազմական

¹⁶ Stú B. Orend, War, Stanford encyclopedia of philosophy, 2005 <http://plato.stanford.edu/entries/war/> (16.04.2015):

գործերի մեջ»¹⁷, ինչը նշանակում է խտրականություն դնել զինվորականների ու քաղաքացիականների միջև: Ակնկալելի է, որ որոշ քաղաքացիներ կարող են անուղղակիորեն պատերազմի զոհ դառնալ, սակայն պետք է աշխատել՝ հնարավորինս բացառել նման մահերը:

3. Համաչափություն: Զինվորներն իրենց նպատակին հասնելու համար պետք է օգտագործեն համաչափ ուժ: «Օրինակ՝ զանգվածային ոչնչացման զենքերը սովորաբար դիտվում են օրինական ռազմական նպատակներից դուրս»¹⁸:

4. Մարդասիրական օգնություն ուղարկելու հերք: Նրանք պետք է ստանան բուժօգնություն, քանի որ գերի ընկնելուց հետո նրանք այլևս սպառնալիք չեն կյանքի եւ անվտանգության համար: Ուստի բարոյական կոպիտ սխալ է ռազմագերիներին սպանելը, տանջելը, սոված թողնելը, բժշկական օգնություն չցուցաբերելը եւ այլն: Այս եւ շատ այլ օրենքներ սահմանված են 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևյան կոնվենցիաներում, ըստ որոնց՝ գերիները մարդասիրական օգնություն պետք է ստանան պատերազմական գոտուց հեռու, իսկ պատերազմի ավարտից հետո գերիները փոխանակումով պիտի վերադառնան իրենց երկիր:

5. Զիթոյապրովումորել բռնի միջոց: Պատերազմական որեւէ զենք կամ միջոց չպետք է կիրառել անմարդկային ու չար նպատակներով: Սա իր մեջ ներառում է ցեղասպանությունները կամ էթնիկական զտումները, բռնաբարությունները, զանգվածային թունավորումը, ուխտադրությունները, գերեվարած զինվորներին իրենց սեփական կողմի դեմ կռվել ստիպելը, ինչպես նաեւ այնպիսի կենսաբանական զենքերի կիրառումը, որոնց ազդեցությունները հնարավոր չէ կառավարել:

6. Ո՛չ ճնշող կամ ռեպրեսիվ միջոցներին: Զինված ուժերին թույլատրելի չէ խախտել այս օրենքները՝ որպես արձագանք թշնամիների կողմից այն խախտելու¹⁹ կոչին:

JUS POST BELLUM.

Արդարացի պատերազմի դոկտրինի երրորդ բաժինը պատերազմի արդարացի ավարտի մասին է: Քիչ համաձայնություն կա *jus post bellum*-ի կանոնների մեջ: Այնուամենայնիվ, ուրվագիծը ձևավորելու համար մենք

¹⁷ M. Walzer, Just and unjust wars, p. 43.

¹⁸ B. Orend, War.

¹⁹ Տե՛ս M. Lacey, Philosophy for A2, p. 136.

կարող ենք կիրառել մի շարք արժեքներ, որոնք արտահայտում են *jus ad bellum*-ը եւ *jus in bello*-ն:

1. Համաչափություն ու հրապարակայնություն: Խաղաղության հաստատումը պետք է լինի համաչափ, ինչպես նաեւ հրապարակավ հայտարարված: «Այն պետք է լինի խելամիտ, ո՛չ վրեժխնդրությունից դրդված, ինչն ամենայն հավանականությամբ, պիտի արվի վրդովմունքով ու հետագա ագրեսիայով»²⁰:

2. Իրավունքների արդարացում: Խաղաղության հաստատումը պետք է ապահովի այն հիմնական իրավունքները, որոնց խախտումը հանգեցրել է արդարացի պատերազմի: Համապատասխան իրավունքները ներառում են մարդու կյանքի ու ազատության, ինչպես նաեւ պետության տարածքային ու ինքնիշխանության սկզբունքները: Սա ցանկացած հակամարտության արժանավայել կարգավորման հիմնական ու էական նպատակն է՝ երաշխիքը, որ պատերազմը կարող է, ըստ էության, ունենալ ուղղիչ ու բարերար ազդեցություն: Իրավունքները հարգելը, ի վերջո, քաղաքակրթության հիմքն է՝ լինի ազգային, թե միջազգային. «Արդարացնել իրավունքները, ո՛չ թե արդարացնել վրեժխնդրությունը. սա՛ է օրվա հրամայականը»²¹:

3. Խղրականություն: Հետպատերազմյան կարգավորումներում անհրաժեշտ է տարբերակել մեղավոր կողմի քաղաքական առաջնորդներին, կռիվողներին, խաղաղ քաղաքացիներին, որպեսզի դիրքորոշումը լինի խելամիտ եւ հնարավոր լինի խուսափել զանգվածային պատիժներից²²:

4. Պարիժ: Եթե պարտված երկիրը եղել է անարդարացի ու իրավախախտ ագրեսոր, ապա համաչափ պատժի պետք է արժանանա: Մասնավորապես ռեժիմի ղեկավարները հրապարակայնորեն պետք է ենթարկվեն պատերազմական հանցագործությունների միջազգային արդար փորձաքննությանն ու դատին: Զինվորները նույնպես գործում են պատերազմական հանցագործություններ, ուստի պատերազմից հետո արդարադատությունը պահանջում է, որ հակամարտող բոլոր կողմերի այդպիսի զինվորները նույնպես պատասխանատվության ենթարկվեն. նրանց նկատմամբ անցկացնել հետաքննություն եւ հարկ եղած դեպքում նաեւ դատավարություն:

5. Փոխհարուցում: Ֆինանսական փոխհատուցումը կարող է պարտադրվել՝ հետեւելով համաչափության ու խտրականության օրենքներին:

²⁰ M. Lacey, նույն տեղում, էջ. 136:

²¹ B. Orend, War.

²² Sŭu M. Pearcy, We have never known what death was before, p. 15.

Պատերազմից հետո խաղաղ բնակչությանը հարկերով ծանրաբեռնելն, ընդհանուր առմամբ, անթույլատրելի է. ընդհակառակը, այնտեղ պետք է բավարար ռեսուրսներ թողնել, որպեսզի պարտված երկիրը կարողանա ինքնուրույն սկսել իր վերակառուցումը:

6. Վերականգնում: Պատերազմի հետեւանքով ավերված տարածքները վերականգնելու համար մեղավոր եւ պարտված կողմին պետք է տրամադրել թույլատրելի հնարավորություններ: Նման բարեփոխումները թույլատրելի են, սակայն դրանք պետք է համաչափ լինեն մեղավոր ռեժիմի թույլ տված անբարոյականությունների աստիճանին: Վերականգնողական ու բարեփոխիչ աշխատանքները կարող են ընդգրկել ապառազմականացումը եւ զինաթափումը, ոստիկանություն ու դատական համակարգի վերապատրաստումը, մարդու իրավունքների ուսուցումը եւ նույնիսկ ներկառուցվածքային փոփոխությունները՝ հասարակությանը օրինական կառավարում ապահովելու համար: Սա ակնհայտորեն ամենավիճահարույց սկզբունքն է պատերազմի արդարացի ավարտի տեսություն:

Արդարացի պատերազմի տեսության վերոնշյալ սկզբունքների խախտումը, հակամարտության մեջ գտնվող որեւէ երկրի կողմից, պետք է պատժվի: Այդ խախտումները կարող են հակամարտող կողմին տալ արտոնություններ, բայց ոչ ռազմական գործողությունները վերսկսելու իրավունք: Պատերազմի վերսկսումը կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ *jus ad bellum*-ի մյուս բոլոր ավանդական չափանիշները՝ արդարացի հիմքը, արդար նպատակը, համաչափությունը եւ այլն, կբավարարվեն:

Այսպիսով, արդարացի պատերազմի ավանդույթը մերժում է թե՛ պացիֆիստական մոտեցումը, որ պատերազմը միշտ անբարոյական է, եւ թե՛ ռեալիստական մոտեցումը, որ պատերազմը դուրս է բարոյական դատողության սահմաններից: Այն պատերազմը տեսնում է որպես մարդկային գործունեություն, հետեւաբար բարոյական քննության ենթակա: Ավելին, այն պատերազմը համարում է գործիք, որը քաղաքական գործիչները կարող են օգտագործել համապատասխան հանգամանքներում արդարության հասնելու համար:

Ամփոփելով կարող ենք ասել, որ խաղաղություն հաստատելու եւ ապահովելու համար Քրիստոսի հետեւորդները պետք է պատրաստ լինեն պատերազմելու, եթե տվյալ պատերազմն արդարացի է, եւ նրանք պետք է պատրաստ լինեն մղել այն արդար ձեւով, որպեսզի հնարավոր լինի ստեղծել արդար եւ խաղաղ վիճակ ազգերի միջեւ՝ այդպիսով ձգտելով կատարել Նսայի մարգարեի խոսքերը, ըստ որի՝ ազգերն «իրենց սուսերներից

խոփեր պիտի ձուլեն, եւ իրենց սուրիններից՝ մահաղաներ. ազգ ազգի վրայ սուր չպիտի բարձրացնի, եւ նրանք այլեւս չեն սովորելու պատերազմել» (Ես. Բ. 4):

РЕЗЮМЕ

Согласно традиционной христианской доктрине, некоторые войны достойны участия христиан. Эти войны называются “справедливыми”, когда власти имеют праведную основу и справедливую цель для обращения к военным действиям. Теория справедливой войны считает войну неприемлемой, но при определенных обстоятельствах морально допустимой. Она делится на три части:

1. Справедливо начатая война (jus ad bellum),
2. Справедливый ход войны (jus in bello),
3. Справедливость к концу войны (jus post bellum).

Почти все авторы определяют принципы и критерии, при нарушении которых конфликтующая сторона будет наказана. Эти нарушения могут дать преимущество конфликтующей стороне, но не право предпринимать военные действия. Война может быть объявлена только в том случае, если будут удовлетворены все традиционные стандарты jus ad bellum, в частности - справедливая основа, справедливая цель, пропорциональность и т.д. Традиция справедливой войны отрицает и пацифистический подход, согласно которой война всегда неприемлема и реалистический подход, когда война находится вне морального рассуждения.

Таким образом для установления и обеспечения мира христиане должны готовиться к войне, если война справедливая: они должны быть готовы воевать справедливым образом, чтобы иметь возможность создать мирную обстановку между народами.

SUMMARY

According to the traditional Christian doctrine, some wars are worthy of participation by the Christians. These wars are called ‘just’ when legal authorities have a just cause and objective basis for resorting to military action.

The theory of a just war, though war is unacceptable but morally permissible in certain circumstances, is divided into three parts:

1. Justification of resorting to war (jus ad bellum),
2. Justification during the conduct of war (jus in bello),
3. Justification on the termination of war (jus post bellum).

Almost all the authors have constituted principles and criteria for each of the above and suggested that violation of them by any country in conflict should be punished. These irregularities may give benefits to the parties, but not the right to take military

action. Starting the war is possible only when all traditional standards of Jus ad bellum: the just cause, right intention, proportionality and so on, are met.

The tradition of the just war rejects both the pacifist notion that war is always unacceptable and the realistic approach that war is beyond the borders of moral judgment. It sees war as a human activity, and therefore subject to ethical review. Moreover, war is a tool that governments may use in appropriate circumstances for the pursuit of justice.

Thus, in order to establish and ensure peace, the followers of Christ should be ready for war, if the war is justified and they should be ready to wage it in a fair manner, in order to create a just and peaceful situation among nations.



ԼԻԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱԻ

**ՄԱՍՏԱՐԱՅԻ ՍՐԲԱՏԵՂԻՆԵՐԸ
ԵՒ ԴՐԱՆՑ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄՆԵՐԸ**

Մաստարա գյուղը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում՝ Արագածի հարավարևմտյան փեշերին¹: Հեռավորությունը մարզկենտրոնից 58 կմ հյուսիս-արևմուտք է, Թալինից՝ 8 կմ հյուսիս, բարձրությունը ծովի մակերեւույթից՝ 1750 մ: Գյուղը մասնագիտական աղբյուրներում եւ արձանագրություններում հիշվում է Մազդարա անունով²: Ըստ Հ. եպս. Շահաթունյանցի՝ գյուղով անցել է Արքունի ճանապարհը, որտեղ եղել է «իջեւանատուն արքունի»³: Մաստարացիների նախնիները եկել են Սասունից, Կարսից, Բասենից, Խնուսից, Ալաշկերտից, Մուշից: Պահպանվել

¹ Տվյալ հոդվածը անդրադարձ է Մաստարա գյուղի սրբատեղիներին, նրանց հետ կապված հավատալիքներին եւ պատմությանը: Հոդվածում արտահայտվել են 2015 թ. հետազոտությունների արդյունքները: Բոլոր դեպքերում, եթե նշված չի թվագրության մասնագիտական աղբյուրը, թվագրությունը տրվում է ըստ բանասացների:

² Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, ՀՀ-ի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (հետազայում՝ Տեղանունների բառարան), Երևան, 1991, հ. 3, էջ 707: Գյուղի անվան հետ կապված կան մի քանի ավանդազրույցներ: Ըստ դրանցից մեկի՝ «Երբ եկել են հարկերը տանելու, գյուղացիներն ասել են՝ «մասը տարան, մասը տարան», այստեղից էլ առաջացել է գյուղի անվանումը (բանասաց Գագիկ Ավետիսյան, 54 տ.): Ըստ մյուս ավանդության՝ «Եթե անոս Շիրակի տարածքում գտնվող հին Անիի յոթ մեհյանների սպասավորները ուզում են դարձի գալ ու խմոր են շաղախում: Այդ խմորը նախատեսված էր Բաղարջակերպ տոնի բաղարջները թխելու համար: Այն Ս. Թադեոս ու Ս. Բարդուղիմեոս առաքյալները պիտի Էջմիածին տանեին: Ճանապարհին՝ նրանց վրա գայլեր են հարձակվում: Հանկարծ հրաշքով հրդեհ է բռնկվում, ու գայլերը փախչում են, նրանք էլ կարողանում են փրկվել: Երբ առաքյալները բացում են խմորը, տեսնում են՝ կրակից նկանակ է թխված, վրան՝ խաչված Հիսուսի պատկերը, որն էլ տանում են Էջմիածին: Այն տեղը, որտեղ տեղի է ունենում գայլերի հարձակումն ու հրդեհը, կոչվում է Մաստարա, քանի որ առաքյալները Էջմիածին «մաս տարան» (Կ. Չալիկյան ԴԱՆ, ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Մաստարա 1971 թ., բանասաց՝ Թորգոմ Մաթեոսյան (61տ.):

³ Հ. եպս. Շահխաթունյանց, Ստորագրություն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացի Արարատայ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015, էջ 236:

են հին գյուղատեղիի (նախկինում՝ Քյոհնա /Հին/ Մաստարա) եւ հին գերեզմանոցի մնացորդները⁴: Մաստարայի բնակիչները կրողն են հայկական բանահյուսության գոհարների, որոնցից մեկը՝ Մաստարայի հորովելը, հրատարակում ենք այս աշխատանքում⁵: Մաստարան բավականին հարուստ է նաեւ պատմական հուշարձաններով, որոնց թվում կարեւոր տեղ են գրավում սրբատեղիները. նրանց կանգրադառնաք ստորեւ:

Ս. Սյրեփանոս Նախավկա. Գյուղի հյուսիսարեւմտյան բարձրունքի վրա պահպանվել են միջնադարյան ամրոցի ավերակները եւ հնագույն մատուռի տեղում կառուցված Ստեփանոս Նախավկայի եկեղեցին (ԺԷ. դար), ըստ ժողովրդական անվանման՝ Նըխավիկ: Ս. Ստեփանոս Նախավկան վերակառուցվել է 1875 թ.՝ Պետրոս Հակոբի Տեր-Պետրոսյանի կողմից: Ամեն տարի Ս. Զատիկի (Ս. Հարություն) հաջորդ կիրակի օրը նշվում է սրբի տոնը, որը հայտնի է նաեւ «Կանաչ-Կարմիր» կիրակի անունով: Սրբավայրի շրջակայքից մարդիկ փոքրիկ քարեր են վերցնում, տանում եւ փակցնում եկեղեցու խորանի աջ կողմում գտնվող սալի վրա՝ նախապես երեք անգամ քարը սալի վրա վեր ու վար անելով: Եթե քարը կպած է մնում, նրանց ցանկությունը կատարվում է: Նախավկա գալիս են ուխտավորներ նաեւ տարբեր տարածաշրջաններից (Երեւանից, Շիրակից, Թալինից, հարակից գյուղերից ու վայրերից)՝ մոմ վառելու, մատաղ անելու: Մատաղ են անում աքաղաղ, աղավնի, գառ, ոչխար: Հիմնականում այցելում են երիտասարդ սիրահարները: Նախավկայի ճանապարհին սալոթի ծառ կա, որի ճյուղերին ուխտավորները թաչկինակներ, լաթերի կտորներ են կապում՝ երազանքները կատարվելու ակնկալիքով⁶:

Ս. Հովհաննես. Միջնադարյան Հայաստանի հնագույն կառույցներից մեկը Մաստարայի սուրբ Հովհաննես եկեղեցին է, որը Թ. Թորոմանյանը

⁴ Հին Մաստարայի ավերման հետ կապված կա հետևյալ ավանդությունը. Մաստարայի իշխանի աղջկան սիրահարված է լինում մի վիշապ օձ: Երբ օձը փորձում է նրան համբուրել, աղջիկը նրան վերցնում և նետում է վառվող թոնիքը: Դրանից հետո օձերը հարձակվում են գյուղի վրա և կործանում գյուղը (ԴԱՆ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Ազատ Ավետիսյան, 60տ): Այս նույն առասպելի եւս մեկ տարբերակ ավարտվում է այսպես. օձը թոնքի մեջ պայթում է, թոնիքը լցվում է ջրով, որից ջրհեղեղ է լինում, և Մաստարան կործանվում է (ՀԱԻ արխիվ, «Պիոներ կանչ»-ի արխիվ, թղթ. 4, էջ 47): Մեկ այլ առասպելի համաձայն՝ «Հին Մաստարայում մի կին հաց թխելիս է լինում, այդ պահին օձ է մտնում թոնրատուն: Կինը օձին վերցնում թոնիրն է գցում: Օձը սուր ճիչ է արձակում: Նրա ճեղքից շատ օձեր են հավաքվում ու դուրս են բշտում մարդկանց Հին Մաստարայից» (Լ. Միմոնյան, Կ. Հովհաննիսյան, ԴԱՆ, ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Ակունք, 2015 թ.): Մեկ այլ տարբերակում գյուղը կործանվել է երկրաշարժից:

⁵ Բանասաց Թորգոմ Մաթեոսյանի երգած հորովելը գրառել է Կարո Չալիկյանը, ում թույլտվությամբ այն հրատարակում ենք այս հոդվածում առաջին անգամ:

⁶ ԴԱՆ, Մաստարա, 2015 թ.:

Թվագրում է է. դ.⁷, իսկ Բ. Առաքելյանը եւ այլք՝ Ջ. Դարից ոչ ուշ⁸: Արտաքին ճակատների առանձին հատվածներ վնասվել են, տեղ-տեղ նկատելի են վերաշարումներ, ամբողջովին նոր են շարված թմբուկի քիվից վեր ընթացող երկու շարքերը, որոնք ավելացված են որպես գմբեթի սալածածկ տանիքի հենարան⁹:

Եկեղեցու արեւմտյան եւ հարավային պատերին կան է. դ. կեսին պատկանող երեք շինարարական արձանագրություններ, ըստ որոնց՝ տաճարը կառուցել է Գրիգորիս վանականը. «Գրիգորիսը շինեց Մաստարայի եկեղեցին Գնունեաց Թեոդորոս եպիսկոպոսի օրոք»: Ենթադրվում է, որ վանականի արձանագրությունները վերաբերում են եկեղեցու վերանորոգմանը¹⁰:

Մինչեւ ԺԸ. դարը եկեղեցին չընթացած է եղել բարձր պարիսպով, որը 1889 թ. քանդել են եւ տաճարը վերանորոգել¹¹: 1935 թ. փակումից հետո կրկին վերաբացվել է 1993 թ.: Խաչը եւ զանգերը նույնպես այդ թվականին են տեղադրվել: Ըստ տեղեկությունների՝ տեղադրողը Աշոտ Սարգսյանն է¹²:

Համաձայն եկեղեցու ներսի վիճակի արձանագրության՝ եկեղեցին հնում կոչվել է Ս. Աստվածածին, սակայն արդեն Շահխաթունյանցի օրոք վերանվանված է եղել Ս. Հովհաննես¹³: Գյուղի անվան առաջացման տարբերակներից մեկը կապված է այս եկեղեցու հետ: «Երբ այստեղով տանելիս են եղել Ս. Հովհաննեսի դիակը, գյուղացիք խնդրել են, որ նրանից մի մաս տրվի իրենց: Ստանալով այն՝ նրանք գյուղում եկեղեցի են շինում եւ աջը դնում մեջը: Դրանից հետո գյուղի անունը կոչում են Մաստարա, որը նշանակում է մասը տարան»¹⁴:

Եկեղեցում հավուր պատշաճի կատարվում են բոլոր ծիսարարողությունները:

Թուխ Մանուկ. Թուխ Մանուկ մատուռը գտնվում է Ս. Հովհաննես եկեղեցուց հարավ՝ մերձակա տներից մեկի՝ Թադեոսյանների այգում: Մա-

⁷ Թ. Թորոմանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, երկու հատորով, հ. 1, Երևան 1942, էջ 69:

⁸ Բ. Ն. Առաքելյան, Լ. Ա. Բարսեղյան եւ ուրիշներ, Հայկական ճարտարապետության պատմություն, 6 հատորով, հ. 3, Երևան, 2004, էջ 55:

⁹ Նույն տեղում, էջ 52:

¹⁰ Նույն տեղում, էջ 55, տողատակ:

¹¹ «Տեղանունների բառարան», Երևան, 1991, էջ 708:

¹² ԴԱՆ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Զինա Գետրոյան (58տ):

¹³ Հ. Եպս. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 236:

¹⁴ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 163:

տուռը թվագրվում է ԺԳ. դարով¹⁵: Ըստ մատուռի ետեւի մասում ամրացված ցուցանակի՝ այն կառուցվել է ԺԷ.-ԺԸ. դդ.: Արտաքին արձանագրություններից մեկի համաձայն՝ այն վերանորոգվել է 1901 թ. Գասպար Պողոսյանի կողմից: Թուխ Մանուկի հարեւանությամբ բնակվող եւ սրբավայրը խնամող Արծվիկ Թադեւոսյանը պատմում է, որ ինքը տեսել է Թուխ Մանուկին՝ երիտասարդ, չեկ մազերով, կապուտաչյա տղայի, եւ խոսել է հետը¹⁶: Այստեղ պատմեցին մի քանի դեպքեր՝ կապված սրբի զորության հետ: Հրանուշ Թադեւոսյանը վկայում է, որ Գյուլմրիից մի կին երեխա չի ունեցել, երազում տեսել է Մաստարայի Թուխ Մանուկը, եկել, մոմ է վառել եւ որոշ ժամանակ անց երեխա է ունեցել ու անունը Թուխ Մանուկ դրել: Անցել է 17 տարի, բայց նրանք ամեն տարի երեխայի ծնունդի օրը գալիս են մատուռ եւ մատաղ անում¹⁷: Արծվիկ Թադեւոսյանի պատմելով՝ մի հիվանդ կին երազ է տեսնում, որ պետք է գնա Մաստարայի Թուխ Մանուկ: Կինը դժվարությամբ էր քայլում, նրան օգնելով տանում են մատուռ, երբ մատուռից դուրս է գալիս, նա քայլելով հեռանում է: Թադեւոսյանները պատմում էին նաեւ, որ ձմռանը մատուռի դուռը թելով կամ մետաղյա լարով են կապել, որպեսզի անձրեւ, ձյուն չլցվի ներս, սակայն առավոտյան տեսել են, որ թելը կարծես դանակով կտրած լինի: Դրանից հետո դուռը միշտ բաց են թողել: Հրանուշ Թադեւոսյանը պատմում է, որ պատի վրա մեծ քար է եղել, որը դրված էր կողքի, սուրբը եկել է երազում եւ ասել՝ «Իմ քարը դրե՛ք նույն տեղը»: Նրանք կատարել են սրբի պահանջը: Տանտերերը նաեւ պատմում են, որ այգու մեջ՝ մատուռի մոտ, կենդանի օձ կա՝ գլխին թագ: Մատուռը չունի ուխտագնացության հատուկ օր, գալիս են տարբեր օրերին տարբեր վայրերից՝ մոմ վառելու, աղոթելու, մատաղ անելու:

Ս. Մեռեղիարոց. Ս. Հովհաննես կաթողիկեի կողքին գտնվող Ս. Մեռել-հարոց մատուռը ԺԶ. դարի կառույց է¹⁸, վերանորոգվել է 1975 թ.: Ըստ բանասաց Արեգնազ Հակոբյանի՝ իր պապերը գաղթել են Մուշից՝ իրենց հետ բերելով Նարեկ¹⁹: Գյուղապետարանը Արեգնազի պապին՝ Ավետիս Տեր-Մարգարյանին, որպես եկվորի, առաջարկել է կով, սակայն պապը հրաժարվել է եւ փոխարենը ստանձնել մատուռի խնամակալությունը: Նախկինում տները շատ փոքր են եղել, երբ մարդ է մահացել, բերել-

¹⁵ «ՀՀ բնակավայրերի բառարան», 2008, էջ 131-132:

¹⁶ ԴԱՆ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Արծվիկ Թադեւոսյան (57 տ.):

¹⁷ ԴԱՆ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Հրանուշ Թադեւոսյան (87 տ.):

¹⁸ «ՀՀ բնակավայրերի բառարան», էջ 131-132:

¹⁹ ԴԱՆ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Արեգնազ Հակոբյան (42 տ.):



Նկ. 1. Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին (լուսանկարը՝ հեղինակի)



Նկ. 2. Ս. Հովհաննես եկեղեցին փակվելուց (1935 թ.) առաջ (լուսանկարը՝ Էդուարդ Մարգարյանի) եւ վերաբացումից (1993 թ.) հետո (լուսանկարը՝ հեղինակի)

դրել են այդ մատուռի մեջ, որ հարուժյուն առնի²⁰, նրա պապն էլ գիշերը պահակ է նստել: Մատուռի վերանորոգումից հետո այլևս մահացած մարդ չեն բերել: Նախկինում մատուռը եղել է փայտից եւ գմբեթարդ, երբ վերանորոգել են, ձեւը եւ չափերը փոխվել են: Վերանորոգումների ժամանակ հարեւանուհի Սաթիկին երազում գալիս է սուրբը եւ ասում. «Եթե հիմքս քանդեք, տունդ կքանդեմ»: Չեն լսում եւ քանդում են մատուռը, նոր քարերով կառուցում: Որոշ ժամանակ անց վերանորոգողի երկու տղաները մահանում են, ինչը կապում են սրբի դժգոհության հետ: Մատուռում դրված Նարեկը գողացել են, հետո դժբախտ դեպք է տեղի ունեցել գողացողի ընտանիքում. ետ է վերադարձրել, սակայն հետո նորից են գողացել եւ մինչեւ այժմ չեն վերադարձրել: Սուրբը պարբերաբար խոսում է տանտիրուհու հետ, նրան երազ գալիս, զգուշացնում: Արեգնազը պատմում է, որ սուրբը սպիտակ մորուքով ծերունի է: Բանասացի հայրը էրետիկ (մաշկային հիվանդություն) է բուժել: Սրբից տրված այս շնորհը անցել է ազգականներից մի քանիսին:

Սուրբ Խաչ. Գյուղի հարավարեւելյան բլրալանջին գտնվում է «Սուրբ Խաչ» (1223 թ.) կոչվող խաչքարը²¹: Նախկինում դրանք երեքն են եղել, սակայն երկուսն ընկել են: Ըստ սովորության՝ տեղի բնակչությունը, հատկապես երիտասարդ սիրահարները, գնում են «Սուրբ Խաչ»՝ խաչքարին քարեր են քսում, եթե քարերը կպած են մնում խաչքարին, ցանկությունները կատարվում են:

Ս. Գրիգոր Լուսավորիչ. Մատուռը գտնվում է գյուղամիջում (ԺԹ. դ.), իր նախնական ձեւի մեջ եղել է հացատան մի անկյունում: Ըստ բանասաց Կիմա Սարգսյանի (նրան էլ պատմել է իր սկեսուրը), երբ թուրքերը հարձակվել են գյուղի վրա, տանտերը թաքնվել է թոնրի մեջ: Թուրքերը կողոպտելով իրենց հետ վերցրել են նաեւ Ավետարանը եւ խաչը: Հեռանալու պահին խաչը ընկել է թոնրի վրա, թալանողները չեն հանդգնել կռահալ ու վերցնել խաչը եւ չեն իմացել, որ այնտեղ թաքնված մարդ կա, եւ այդպես տանտերը փրկվել է: Սակայն հետագայում մատուռը խարխվել եւ փուլ է եկել: Նոր տանտերերը մի քիչ հեռու նոր փոքրիկ մատուռ են կառուցել, խաչն ու նվիրատվությունները դրել մեջը: Տանտիրուհին նշում է, որ սուրբը շատ գորավոր է. իր տղային գերությունից փրկել է, եւ նրանք ամեն տարի մատաղ են անում²²:

²⁰ Ըստ բանասացի:

²¹ «Տեղանունների բառարան», Երևան, 1991, էջ 708:

²² ԴԱՆ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Կիմա Սարգսյան (62 տ.):

Ս. Գրիգոր. Մատուռը գտնվում է գյուղամիջում՝ դեպի հյուսիս-արևմուտք, ճանապարհի հանգույցում: Նախկինում (ԺԷ. դար)²³ մատուռը եղել է խոր փոսի մեջ: Մատուռի խնամակալությունը զբաղվել է Աշոտ Սարգսյանը: Ըստ բանասաց Զինա Գեորգյանի՝ համագյուղացիներից Գոհար անունով մի աղջիկ երազ է տեսնում, որտեղ սուրբը նրան ասում է, որ ինքը մրսում է, եւ իրեն պետք է վերեւ հանեն: Հայտնում է նաեւ, որ այդ ընտանիքում տղա պետք է ծնվի, ու նրա անունը Հովնան պետք է դնեն: Իսկապես, այդ ընտանիքում ծնվում է արու զավակ, եւ Աշոտ Սարգսյանը 1977 թ. վերեւում նոր մատուռ է կառուցում, մինչդեռ հինը եւս պահպանվում է մինչեւ այսօր: Հավատացյալներն այցելում են միայն վերեւի մատուռը, իսկ հինը շարունակում է խնամվել, բայց մոմավառություն կամ ծիսական այլ նպատակով չի գործածվում²⁴:

Ս. Մարնասար. Մատուռը գտնվում է Ս. Հովհաննես եկեղեցի տանող ճանապարհի ձախ հատվածում՝ Ապրիկյանների այգում: Ըստ բանասաց Սուսաննա Ապրիկյանի՝ սուրբը եղել է մարագի մեջ՝ խոր փոսում: Տան մեծ տատիկը՝ Բուրաստանը, որը Սուսաննայի սկեսուրն էր, պատմել է, որ երազում միշտ ձի էր գալիս, ու մատուռը (մարագը) միշտ դղրդում էր: Երազում նաեւ ձայն էր գալիս, որն ասում էր՝ պետք է նույն հիմքի վրա վերեւում կառուցվի մատուռ: 2005 թ. եղբայրներ Արամ եւ Հայկազ Ապրիկյանները հին մատուռի տեղում կառուցում են նոր մատուռ²⁵: Պատճառը, թե ինչու է մատուռը կոչվում Մատնահար, բանասացը չգիտի:

Ս. Հակոբ եւ Ս. Հովհաննես. Մատուռները գտնվում են Ս. Ստեփանոս Նախավկա տանող ճանապարհի աջ մասում: Ավանդություն համաձայն՝ զույգ եղբայրներ են եղել եւ կողք կողքի կառուցել են փոքրիկ մատուռներ: Բանասաց Սամվել Վարդանյանի պապը՝ Մրդոն, 1828 թ. սովորել է Մշո Ս. Կարապետ վանքում: Սովորելու տարիներին նրան երկու սրբի մասունք են տալիս՝ արծաթե խաչ եւ ճկույթի մասունք: Երբ գաղթում են գյուղ, նա իր հետ բերում է այդ մասունքները: Իրենց տան կողքին մարագի մեջ լքված սրբավայր է լինում, իր հետ բերած մասունքները դնում է այդ սրբավայրում: Սակայն հետագայում այդ մասունքները գողանում են: Նրա մահից հետո տղաները՝ Համո եւ Սոխակ Վարդանյանները, վերակառուցում են այդ մատուռը եւ կոչում Ս. Հակոբ (1972 թ.): Իսկ նրանց

²³ «ՀՀ բնակավայրերի բառարան», էջ 131-132:

²⁴ ԴԱՆ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Զինա Գեորգյան (58 տ.):

²⁵ ԴԱՆ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Սուսաննա Ապրիկյան (72 տ.):

Հորեղբոր տղան կառուցում է սբ. Հովհաննեսը (1966 թ.)²⁶: Մատուռների խնամակալությունը զբաղվում է Վարդանյանների ընտանիքը:

Ս. Գայանն. Ս. Գայանն մատուռը գտնվում է գյուղի վերին հատվածում՝ դեպի Ծաղկասար տանող ճանապարհի աջ մասում: Մատուռը կառուցվել է 2015 թ. Խոսրով Թադևոսյանի կողմից: Բանասաց Խոսրով Թադևոսյանի պատմելով՝ մատուռը կառուցել են իր քրոջ՝ Նելլիի երազի հիման վրա: Երազում սուրբը նրա հետ խոսել է, ցույց տվել իր տեղը՝ ասելով. «Մաքրե՛ք աղբը, կառուցե՛ք սուրբ, իմ անունն է Գայանն»: Սակայն բանասացը նշում է, որ ինքը այդ ամենին թերահավատորեն է մոտեցել, եւ մատուռի կառուցումը ձգձգվել է: Որոշ ժամանակ անց նա ավտովթարի է ենթարկվում, որից հետո նրա ընկեր Գարիկն ասում է. «Արի քանդենք-բացենք սուրբը, թե չէ ավելի վատ փորձանքների մեջ կընկնես»: Քանդելով, գտնում են մի քար, որի հիման վրա էլ կառուցում են փոքրիկ մատուռ²⁷: Մատուռի խնամակալությունը զբաղվում են Խոսրովն ու իր ընտանիքի անդամները:

Շեկ Ավետարան. Մատուռը գտնվում է գյուղի վերին հատվածում՝ դեպի Հյուսիս: Բանասաց Շողիկ Ն.-ի պատմելով՝ 30-ական թթ. իր ամուսնու պապը՝ Նելսոն, որն ապրել է Արթիկի Ղըրխազգիրման (Հնաբերդ) գյուղում, գալիս է Մաստարա եւ տեսնում, որ այստեղ ապրելու պայմաններն ավելի բարվոք են, որոշում է տեղափոխվել այս գյուղ²⁸: Մաստարայում նա ամուսնանում է Թագուհու հետ: Նրանք տուն չեն ունենում: Մի օր Թագուհին երազ է տեսնում, որտեղ սուրբը ասում է, որ ինքը Շեկ Ավետարանն է. «Եկե՛ք, ինձ հողի տակից հանե՛ք ու դարձե՛ք ձեզ տուն» (տան տեղում փլատակներ են լինում): Քանդում են, փլատակների տակից հանում են խաչքարը, մոմլատե կտորի մեջ փաթաթված գիրքն ու խաչը: Այդ տեղում մատուռ են սարքում՝ մասունքները դնելով մեջը, իսկ կողքին՝ մի սենյակ, որտեղ իրենք են ապրում: Շողիկի սկեսուրը՝ Աստղիկը, պատմել է, որ ինքը տեսել է սրբին, ավելի ճիշտ՝ սրբերին: Նրանք ամուսիններ են եղել՝ չեկ մազերով, ուռենու ճյուղերից հյուսած մեծ կողովի մեջ գույգ երեսաներ են դրված եղել ու կարծես կզգու վրա լինեին՝ շրջապատված ջրով: Աստղիկ տատը հավատքով կին է եղել: Մատուռը կառուցելուց հետո, ով բանակ գնալուց առաջ եկել ու մոմ է վառել, նա մատուռին նվիրաբերած ասեղնագործ թաշկինակներից մի փոքրիկ կտոր

²⁶ ԴԱՆ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Սամվել Վարդանյան (59 տ.):

²⁷ ԴԱՆ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Խոսրով Թադևոսյան:

²⁸ ԴԱՆ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Շողիկ Ն.:

է կտրել ու ամրացրել նրանց հագուստին: Եվ բոլոր գնացածները ողջ-առողջ հետ են վերադարձել, իսկ այդ փոքրիկ կտորը հետ են բերել մատուռ ու դրել փոքրիկ արկղի մեջ:

Ս. Մարգիս. Մարդասպանի ձորում²⁹ է գտնվում Ս. Սարգսի ձիու պայտի տեղը: Երբ զորավար սուրբն անցել է այդտեղով, նրա ձին կոխել է քարը, եւ պայտը դրոշմվել է քարի վրա: Մի քանի տարի առաջ գյուղացի եղբայրներ Մկրտիչ եւ Գարիկ Վարդանյանները այդ սալի վրա կառուցել են փոքրիկ մատուռ՝ պայտի դրոշմը թողնելով ներսում: Ձորը բավականին հեռու է գյուղից, եւ ոչ բոլորը գիտեն եւ կարող են գնալ մատուռ³⁰:

Ձորի ձգնավոր. Ըստ հայտնի ավանդազրույցի՝ «Հնում վերելից ջուրն եկել- թափվել է ձորը, եւ դրանից լիճ է գոյացել: Դեւը եկել, ջուր է խմել, լողացել ու խաղացել լճի մեջ»: Այդ պատճառով տեղը կոչվել է Դեւախաղ³¹: Տարբեր ժամանակներում տեղաբնակները միշտ վախեցել են «Պոչիկ ձորի»³² Դեւախաղից՝ մտածելով, թե իբր ջուրը կախարդում, ներս է քաշում: Գյուղացիներն ասում էին, որ այդ ձորից միշտ զգուշանալով՝ նույնիսկ անասուններ չեն տանում արածեցնելու³³: Ուշադիր նայելով՝ կարելի է նկատել ձորը եզրագծող, իրար վրա շարված սալաքարերը: Աջ կողմում՝ դեպի քարհանք տանող կողմի վրա՝ ժայռն ի վեր, հնագույն ժամանակների բնակավայրեր են, դեպի լեռան խորքերը տանող քարանձավներ, որոնց մուտքը սկսվում է քարե աստիճաններով: Այստեղ կա սուրբ՝ Ձորի ձգնավոր եկեղեցին, որը քարհանքից սողացող ավազների տակ է մնացել:

Գյուղում կան նաեւ երկու Ս. Մինասներ, որոնց մասին ավանդույթներ եւ պատմություններ հայտնի չեն:

Ս. Մինասը, որը կառուցվել է 1978-79 թթ. Աշոտ Կարապետյանի կողմից, գտնվում է իր այգու վերջում: Ներկայումս կառուցողը մահացել է, իսկ նրա ընտանիքի անդամները գյուղում չեն բնակվում, եւ սրբի պատմության մասին ոչ ոք որեւէ տեղեկություն չունի:

Ս. Մինասը կառուցվել է 1971 թ. Վազգեն Առաքելյանի կողմից եւ գտնվում է հին գերեզմանոցի հարեւանությամբ: Մատուռի խնամակա-

²⁹ Ձորը կոչվել է Մարդասպանի, որովհետեւ 20-30-ական թթ. այդտեղ մարդ են սպանել:

³⁰ ԴԱՄ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Ազատ Ավետիսյան (60 տ.):

³¹ Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, ԴԱՄ, ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Արեգնազ Հակոբյան (42 տ.):

³² Ձորակը նեղ լինելու պատճառով ստացել է այդ անվանումը:

³³ ԴԱՄ, Մաստարա, 2015 թ., բանասաց՝ Ազատ Ավետիսյան (60 տ.), Հարութ Սարգսյան (71 տ.):

Մաստարայի հորովել Գրառումը՝ Կարո Զալիկյանի

Handwritten musical score for "Mashtarakhi Horoveli" by Karo Zalikyan. The score is written on ten staves with Armenian lyrics and musical notation. The lyrics are:

Մաստարայի հորովել, զարուհե՛ն...
 Զարուհե՛ն...
 Զարուհե՛ն...
 Զարուհե՛ն...
 Զարուհե՛ն...
 Զարուհե՛ն...
 Զարուհե՛ն...
 Զարուհե՛ն...
 Զարուհե՛ն...
 Զարուհե՛ն...

լուծյամբ զբաղվում են նրա ընտանիքի անդամները: Սակայն նրանք մատուռի ստեղծման պատմության եւ անվան հետ կապված ավանդազրույցներին տեղյակ չեն: Այստեղ գալիս են մոտակա վայրերից՝ մոմ վառելու, իրենց ցանկությունները իրականություն դարձնելու ականալիքով:

Այսպիսով, Մաստարա գյուղը բավականին հարուստ է հին եւ նոր սրբատեղիներով, որոնց մեծ մասն առ այսօր ուխտավորներ ունի, իսկ մի մասի վերաբերյալ պահպանվել է նաեւ հարուստ բանահյուսություն: Մաստարայի սրբավայրերը ժողովրդի հետեւյալ փափազներն իրականացնելու նպատակն ունեն. երեխա տալը, հիվանդների բժշկումը, զինվորների պահպանությունն ու ճանապարհորդների պաշտպանությունը: Տեղի Ս. Հովհաննես կաթողիկե եկեղեցին Հայաստանի պատմա-ճարտարապետական գոհարներից է, որ առ այսօր պահպանում է իր հոգեւոր-ծիսական գործառույթները: Ս. Ստեփանոսը գյուղի ամենակարեւոր ուխտատեղին է, որի ուխտը մեծ հանդիսություն է տոնվում է Կանաչ-Կարմիր կիրակի օրը: Թուխ Մանուկ սրբավայրը հիմնականում կապված է սրբի՝ երեխա տալու եւ հիվանդների բժշկման հետ: Սիրելի ուխտատեղի է նաեւ Ս. Մեռելահարոցը, ուր հատկապես էրեւիկի (մաշկային հիվանդություն) բուժման նպատակով են այցելում: Ս. Խաչ խաչքարը հիմնականում այցելում են երիտասարդները: Մաստարայի մյուս սրբավայրերը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Գրիգորը, Ս. Մատնահարը, Ս. Հակոբը, Ս. Հովհաննեսը, Ս. Գայանեն, Շեկ Ավետարանը, երկու Ս. Մինասները նույնպես զորավոր սրբեր են, եւ այնտեղ մարդիկ մեծ հավատքով են այցելում: Տեղի սրբերն ու սրբատեղիները, բացառությամբ Ս. Ստեփանոս Նախավկայի, չունեն ուխտազնացության հատուկ օր: Ուխտավորները գալիս են բոլոր օրերին եւ տարվա բոլոր եղանակներին: Այցելում են ինչպես տեղացիները, այնպես էլ ուխտավորներ տարբեր վայրերից:


РЕЗЮМЕ

Село Мастара богато древними и новыми святынями, большая часть которых по сей день имеет паломников. Св. Степанос - самая главная святыня села, паломничество к которой празднуется большой торжественностью в Зеленое-Красное воскресенье. Местная церковь - собор Св. Ованнес, является жемчужиной Армянской исторической архитектуры. Она по сей день сохраняет свои духовно-ритуальные функции. Святыня Тух Манук в основном связана с дарованием детей и исцелением больных. Любимой святыней является часовня Св. Мерелхароц, которую посещают особенно для исцеления эретика (кожная болезнь). Св. Хач по-

сещают в основном молодые люди. Другие святыни Мастары - св. Григор Просветитель, св. Григор, св. Матнахар, св. Акоп, св. Ованнес, св. Гаяне, Шек Аветаран, две часовни св. Минаса также играют весомую роль. Местные святыи и святыни, кроме св. Степаноса Нахавка, не имеют специальных дней паломничества. Паломники приезжают в любой день и в любое время года. Посещают как местные, так и приезжие.

SUMMARY

The village Mastara is rich in old and new holy places, most of which have pilgrims up to our days. The most significant place of pilgrimage is St. Stephanos, the pilgrimage of which is feasted on the Red-Green Sunday. The St. Hovhannes Cathedral is a considerable monument of history and architecture for Armenia. It preserved its spiritual-ritual functions in our days. The shrine Tukh Manuk is known mostly as child-giver and healer of the ill ones. A beloved holy place is St. Merelharots, visited mostly to heal the disease of skin named eretik, and the servants of the shrine have special gift of healing. The cross-stone St. Khach is mostly visited by young people. Other holy places in Mastara, such as St. Grigor Lusavorich, St. Grigor, St. Matnahar, St. Hakob, St. Hovhannes, St. Gayane, Shek Avetaran and the two St. Minas chapels are considered mighty saints. With exception of St. Stephanos Nakhavka, the local holy places have no special pilgrimage date. Pilgrims visit them on any day and in all seasons of the year. They are visited not only by local people but also by pilgrims from other localities.



ԱՆԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱԹ

**ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԶԱՐԴԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՈՃԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԺԹ. դարի 70-80-ական թթ. Վանը արծաթագործության խոշոր • կենտրոն էր՝ իր բազմաթիվ ոսկերչական-արծաթագործական արհեստանոցներով, որտեղ յուրաքանչյուր վարպետ մասնագիտացած էր տեխնիկական տարբեր հմտություններով¹:

Վանի արծաթագործ վարպետներն արծաթի գեղարվեստական մշակման համար կիրառում էին տարատեսակ տեխնիկաներ, որոնցից միայն սեւադապատման (սեւկիրտագործություն) մասին նշենք, որ Միջին Արեւելյան մի շարք երկրներում հայտնի է եղել որպես Վասպուրականից բերված արհեստ: ԺԹ. դարում այն Վանից տարածվում է դեպի Օսմանյան թուրքիայի տարբեր քաղաքներ, Կովկաս, այնուհետեւ՝ Ռուսաստան²: Դեռ ուրարտական³ ժամանակաշրջանում ոսկերիչներին ծանոթ է եղել ծծմբարծաթը, որի միջոցով կարելի էր սեւ բանվածքներ անել սպիտակ արծաթի վրա⁴:

Սեւադապատման տեխնիկան հայտնի էր նաեւ Սյունիք-Արցախի դպրոցին, որտեղ ճարմանդակապ գոտիները գլխավորապես մշակվում

¹ Ս. Պողոսյան, Վասպուրականի զարդահամալիրը, Հայաստանի մայրաքաղաքները-Վան, Երեւան, 2013, էջ 243:

² O. Tokat, Armenian master silversmiths, Los Angeles, 2005, p. 103-104.

³ Վանի մետաղի գեղարվեստական մշակման դպրոցի ավանդույթներն աղերսվում են Վանի կամ Արարատյան թագավորության մշակույթի հետ: Դրա վկայությունն են Թուրք-Ապեից հայտնաբերված պարանոցագալղերը: Արժեքավոր են նաեւ ասորական արքաների սեպագիր արձանագրություններում թողած հիշատակությունները՝ Նաիրիից ստացված պետական հարկերի ցուցակում՝ մետաղագործության պղնձե, արծաթյա, ոսկյա իրերի հարկ ու տուրքի մասին, տե՛ս Յ. Սանտալճեան, Ասորեստանեայ եւ պարսիկ սեպագիր արձանագրությունք, Վիեննա, 1901, էջ 122-123:

⁴ Լեո, Վանի թագավորությունը, Թիֆլիս, 1915, էջ 333:

էին այս հնարքով: Բայց, ի տարբերություն Սյունիքի սեւադապատ աշխատանքների, որն իր ոճով հիշեցնում է Հյուսիսային Կովկասի սեւկիտադորձական դպրոցը, Վասպուրականի աշխատանքներն ունեն գծային ավելի նուրբ փորագրություն: Սա պայմանավորված էր նաեւ երանգների տարբերությամբ: Վասպուրականում օգտագործվում էր մոխրագույնի մուգ տարբերակը, իսկ Սյունիքում՝ բաց մոխրագույնը:⁵

Վասպուրականի արծաթագործության դպրոցի ազդեցությունը տարածվում էր նաեւ Մոկքում, Շատախում, Բայազետում: Այս վայրերից մեզ հասած աշխատանքներն ունեն ոճային սերտ ընդհանրություններ Վանում ստեղծված զարդերի հետ⁶: Զարդեր արտադրվում էին նաեւ Տիգրանակերտում, Սասունում, Մուշում⁷:

ԺԹ. դ. վերջում Վանում գոյություն ունեին 120 ոսկերչական խանութներ ու արհեստանոցներ, որտեղ պատրաստվում էին բազմատեսակ զարդեր: Զարդերը տարբեր ժամանակներում մեծ դեր ու նշանակություն են ունեցել հագուստի գեղազարդման գործում՝ լինելով դրանց անբաժանելի տարրը՝ երբեմն իբրեւ առանձին լրացուցիչ զարդ, իսկ հաճախ էլ կարվել է հագուստին: Ի սկզբանե զարդն ունեցել է երկբնույթ նշանակություն՝ գեղագիտական եւ գաղափարային: Եթե գեղագիտական նշանակության դերը կնոջ եւ հագուստի գեղեցկությունն ընդգծելն էր, ապա գաղափարային տեսանկյունից զարդը կոչված էր պահպանելու չար ուժերից⁸:

Վասպուրականի զարդերի ձեւավորումը կրում է ինչպես տվյալ տարածաշրջանում իշխող ոճը, այնպես էլ դարեր շարունակ գոյություն ունեցող զարդաձեւերն ու պատրաստման եղանակները: Երբեմն, սակայն, կարող էին առանձնանալ տարբեր լուծումներով, ինչը, բնականաբար, պայմանավորված էր վարպետի ընկալմամբ ու ճաշակով: Հայկական արծաթագործությունը, մասնավորապես զարդերի մշակումն իր ազդեցությունն է թողել նաեւ տարածաշրջանի մի շարք երկրներին՝ Դաղստանի⁹, Բուլղարիայի¹⁰ զարդերի ձեւավորման վրա: Սա կապված էր նաեւ այն

⁵ Հ. Տ. Ղեւոնդեան, Մեկիստուածագործությունը եւ անոր օգտագործումը Հայաստանի մէջ, «Բազմավեպ», 1-4, 1986, էջ 251-252:

⁶ Հ. Ն. Տեր-Ղեւոնդյան, Հայկական արծաթագործական աշխարհիկ զարդերը 19-րդ դարում. ՀՍՄԽ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, Հ^փ 11 . 1965, էջ 64:

⁷ Ն. Ավագյան, Հայկական ժողովրդական տարազը, Երևան, 1983, էջ 93:

⁸ “Украшения грузинской женщины”, Хеловнеба, 1981, с. 33.

⁹ С. III. Гаджиева, Одежда народов Дагестана, Москва, 1981, с.122.

¹⁰ “National Ethnographic museum Bulgarian Academy of sciences”, Traditional Bulgarian Costums and Folk Arts, Sofia, 1994, p. 23.

իրողություն հետ, որ այստեղ արտադրված արծաթյա իրերն ամեն տարի դուրս էին բերվում Պոլիս, ԱՄՆ, Աֆրիկա¹¹:

Սույն հոդվածում անդրադառնալու ենք զարգահորինվածքների գեղարվեստական լուծումներին, խորհրդաբանությունը եւ ոճապատկերային առանձնահատկություններին՝ հիմք ընդունելով ՀԱԹ, ՀՊԹ եւ մասնավոր հավաքածուներում պահպանվող Վան-Վասպուրականի արծաթագործ վարպետներին վերագրվող աշխատանքները:

Կանանց եւ տղամարդկանց արծաթյա եւ ոսկյա ճարմանդակապ գոտիները պատրաստվում էին առանձնակի գեղեցկությամբ: Զարդերի պատրաստման համար կիրառվում էին ֆիլիգրան, դրվագման, սեւադապատման, հատիկազարդման եւ այլ տեխնիկաներ¹²:

Եթե Սյունիք-Արցախի գոտու ճարմանդները (նկ. 1) մշակվում էին երկգլխանի թագակիր թռչունների ուրվագծով¹³, Վասպուրականի ճարմանդներն առանձնանում են նույն հորինվածքի պայմանական-խորհրդանշական հնարքներով, որոնք մոտենում են դեկորատիվ ձևերին: Վան-Վասպուրականում հաճախ ենք հանդիպում իմաստաբանական նշանակություն ունեցող զարդաձևերի, որոնք, իրենց մեջ կրելով տեղական գեղագիտական ձևամտածողությունն ու ավանդականի պահպանումը, սերտ առնչություններ ունեն նաեւ արվեստի այլ բնագավառների հետ: Պատկերագրության տեսանկյունից հազվագյուտ օրինակ է ՀԱԹ պահպանվող Հ^մ 780 ճարմանդը (ԺԸ.-ԺԹ.դդ.) (նկ. 2), որը, ինչպես մյուս օրինակները, բաղկացած է երեք ճարմանդամասերից: Պահպանվել է մասամբ: Կենտրոնական շրջանն իր մեջ ամփոփում է գմբեթաձև հատիկազարդ ելուստ, նրա ստորոտից սկիզբ է առնում դրվագման միջոցով պատկերված կենաց ծառ, որի սաղարթները, բոլորելով շրջանը, վեր են խոյանում: Թեպետ քրիստոնեական թեմատիկան բացակայում է զարդերում առաջին անգամ է հանդիպում կրոնական բնույթի պատկերով մշակված այս ճարմանդը, որի վերին թագակիր թռչնազուլաների մեջ համաչափորեն ամփոփված են կնոջ եւ տղամարդու կերպարանքներ: Ավանդականի ու քրիստոնեական արվեստի զուգորդման յուրահատուկ մոտեցում է ցուցաբերել վարպետը՝ դրվագելով ձեռագրային պատկերագրության մեջ հայտնի թեմատիկ տեսարաններից մեկը՝ Ադամը եւ Եվան դրախտում: Ինչպես մանրանկարներում, այստեղ եւս Ադամն ու Եվան պատկերված

¹¹ Օ. Tokat, նշվ. աշխ., էջ 103:

¹² Արհեստագիտական եղանակների մասին առավել մանրամասն տե՛ս Բ.Առաքելյան, Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Երևան, 1958, հ. 1, էջ 170:

¹³ ՀԱԹ, գոտիներ Հ^մ 4877/14, Հ^մ 2823/1:

են ծառի երկու կողմում կանգնած: Պատկերները հարթ են, մարմինները՝ կիսադեմ, գլուխները՝ դիմահայաց, տեղավորված են անկյունային ուղիվագծով, բացակայում են դեմքերի անհատական բնութագրման հստակ ձևերը, ինչը մեզ թույլ չի տալիս որոշել նրանց սեռը: Վասպուրականի մանրանկարներում¹⁴ հիմնականում աջ կողմում պատկերված է լինում Եվան, ձախ կողմում՝ Ադամը: Հարկ է նշել, որ այս պատկերազրական սյուժեն հանդիպում է նաև Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու բարձրաքանդակներում¹⁵:

Հաջորդ ճարմանդների տարբերակն ունի գրեթե նույն քնարածեւ, թագակիր երկգլխանի թռչնի կառուցվածքը: Այս ճարմանդները բաղկացած են երեք զարդատախտակներից, որպեսզի հնարավորություն ստեղծվի գոտին հանգուցելու: Ըստ Ա.Մնացականյանի՝ նրանցից ամեն մեկը իրենից ներկայացնում է մի վարսանդածեւ զարդ՝ ծածկված ծիլերի, ծաղիկների, հատիկների զարդերով, որոնք իրենց մեջ խտացնում են աճման ու պտղաբերություն գաղափարը¹⁶: Այս ճարմանդների ողջ մակերեսը ֆիլիգրան (ցանցահյուսազարդ), զուգաթելի, հատիկազարդման ու ընդելուզման տեխնիկաներով արված կենաց ծառ հիշեցնող բուսական զարդանախշերով է հարդարված: Կենտրոնական հատվածներում տեղավորված են վեցաթեւ աստղեր¹⁷, երբեմն նրանց թեւերն արծնապատ են լինում, իսկ նրանց կենտրոնում՝ գմբեթածեւ ելուստների մեջ, ընդելուզված տարագույն ակներ են (նկ. 3): Կենտրոնական զարդատախտակի աստղը սովորաբար ձևավորված է լինում՝ սուր անկյուններն ուղղված դեպի հարեւան ճարմանդամասերը, ինչը շարժման տպավորություն է թողնում, իսկ կողային աստղերը՝ սուր անկյունը վերեւ՝ նման «Դավթի» աստղին: Վեցաթեւ աստղի գաղափարանշանի նախատիպերը հանդիպում ենք միջնադարյան քանդակազարդ բեկորների¹⁸, փայտի գեղարվեստական մշակման, պղնձագործ սկուտեղների¹⁹, ձեռագիր մատյանների լուսանցազարդերում²⁰ եւ

¹⁴ «Հայկական մանրանկարչություն», Վասպուրական, Երևան, 1978, տխ. 92: Հ. Բուշխանյան, Հայկական ձեռագիրներ Մխիթարեան միաբանության, Վիեննա, 1978, էջ 156, 171:

¹⁵ S. Der Nersessian, Aght'amar, Church of the Holy Cross, Cambridge, Massachusetts, 1965, p. 19.

¹⁶ Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 38:

¹⁷ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ճարմանդ՝ Հմ 233, ՀՊԹ, ճարմանդ՝ Հմ 6493:

¹⁸ ՀՊԹ պահպանվում է Հմ 1794/522 վեցաթեւ աստղի պատկերմամբ Դվինի միջնաբերդի պատուհանի լուսանցույց, ԺԱ.-ԺԳ. դդ.:

¹⁹ ՀՊԹ սկուտեղներ՝ Հմ 8529, Հմ 4278, Հմ 2686, Հմ 11482:

²⁰ Մատենադարան, Ավետարան Հմ 356-96ա, Հմ 3722-55բ:

այլուր: Պետերբուրգի ազգագրության թանգարանում պահպանվում են Վան-Վասպուրականի բնակելի տների լուսանկարներ, որոնց չքամուտքերի ճակատամասերում վարպետորեն քանդակված են վեցաթեւ աստղի զարդաձևեր²¹ (նկ. 4), ինչը խոսում է տվյալ տարածաշրջանում այս զարդահորինվածքի տարածվածության մասին: Եթե վերոնշյալ օրինակներում այս գաղափարանշանը պատկերվում է անկյուններից դուրս եկող վարսանդա-պտղային զարդաձևով, իսկ լուսանցազարդերում դրանք հանդես են գալիս կենաց ծառի եւ ծնող-զույգերի ոճավորումների հետ համատեղ, ապա ճարմանդներում դրանք պահպանել են իրենց նախատիպերը՝ անկյուններից դուրս եկող հատիկազարդ կենաց ծառի հորինվածքներով: Ըստ Ա. Մնացականյանի՝ այս գաղափարանշանը երկու եռանկյունիների միահյուսումից է առաջացել՝ իր մեջ կրելով պտղաբերության գաղափարը²²: Հավելենք, որ ճարմանդները լայնորեն օգտագործվում էին տարածաշրջանի այլ ժողովուրդների կողմից եւս: Եթե մեզ մոտ առավել տարածված են թագակիր թոչնագլուխներով ճարմանդները, ինչը բուլղարների մշակույթում եւս հանդիպում ենք²³, ապա նրանց զարդերում բազմաձևությունն է (չրջանաձև, նշաձև) աչքի ընկնում: Ի հակադրություն նրանց մեծածավալ ու պարզունակ (դրվագազարդ) զարդաձևերի՝ հայկական ճարմանդները հարուստ են թե՛ տեխնիկապես եւ թե՛ զարդարման արվեստով:

Քանի որ Վան-Վասպուրականի զարդերի վրա գերակշռում են զանազան հավատալիքների ու պաշտամունքի խորհրդանշանները, որը կտեսնենք ստորեւ բերված օրինակներում, ՀՊԹ Հ^մ 6983, Հ^մ 6989 ճարմանդների կենտրոնական դաշտը զբաղեցնում են լուսնի մահիկներ:

Բացառիկ նրբությամբ են մշակված ճարմանդակապ գոտիների դրվագազարդ, փորագրազարդ օրինակները, որոնք աչքի են ընկնում ավանդական դարձած պատկերների ու տեսարանների տարատեսակ լուծումներով եւ պատկերազրական առանձնահատկություններով: Գոտիների զարդանախշման արվեստը մեզանում չատ հին է: Դեռեւս հնագույն ժամանակներից ի վեր գոտին հանդես է եկել իբրեւ իշխանության խորհրդա-

²¹ “Российский этнографический музей, Культурное наследие Западной Армении”, Санкт-Петербург, 2015, с. 25.

²² Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 240:

²³ Բուլղարական ճարմանդներում մեծ թիվ են կազմում զինանշան հիշեցնող երկգլխանի թռչունները, որոնք իրենց տեսքով մոտ են Սյունիք-Արցախի թռչնագլուխ ճարմանդներին, ինչը առանձին ուսումնասիրության թեմա է, տե՛ս Պ. Пунтев, М. Черкезова, Ж. Стаменова, В. Ковачева, Болгарское народное искусство, София, 1979, с. 98, рис.10, с. 114, рис. 32, 34:



Նկ. 1



Նկ. 2

Նկ. 1. ՀԱԹ գոտի Հ^մ 2823/1 (Սյունիք, ԺԹ.-Ի. դդ.)

Նկ. 2. ՀԱԹ, ճարմանդ Հ^մ 780 (Վասպուրական, ԺԸ.-ԺԹ. դդ.)



Նկ. 3



Նկ. 4

Նկ. 3. ՀղԹ, գոտու ճարմանդ Հ^տ 6493 (Վասպուրական, ԺԷ.ԺԸ. դդ.)
 Նկ. 4. ՔՅՄ, Վանի բնակելի տան դռան լուսանկար, Հ^տ 3887/13 (լուսանկարը՝ Культурное наследие Западной Армении գրքից)

միանում են ներդիր ձողերի միջոցով: Զարդատախտակներն ուղղանկյուն են, կենտրոնական մասը՝ էլիպսաձև, ուռուցիկ, նրանց միացման տեղում էլիպսաձև զարդաշրջանակն ունի հատիկազարդ եզրագոտի: Կենտրոնի վերադիր զարդաթիթեղներն իրենց մեջ ամփոփում են փորագրման եւ սեւադապատման տեխնիկայով պատկերված Վարսազավանք, Տիրամայր, Լիւս անապատ, Նարեկ, Ախթամար, Կարմրո. գրությունները եկեղեցիների տեսարանները (նկ. 5ա): Եկեղեցական շինություններն աչքի են ընկնում կառուցման ձևերի, ճարտարապետական հորինվածքների ճիշտ մատուցմամբ: Սա հավաստում է վարպետի՝ ճարտարապետություն, տվյալ պարագայում եկեղեցաշինության ու գեղանկարչական արվեստին ծանոթ լինելը, եթե հաշվի առնենք նաեւ այն հանգամանքը, որ Վասպուրականի եկեղեցիներին կից են աշխատել ոսկերիչները, որոնց մեջ եղել են թե՛ հոգեւորականներ եւ թե՛ աշխարհիկ վարպետներ³¹: Գոտու ճարմանդի դարձերեսին կա հայատառ «ԱՄ»՝ վարպետի անվան սկզբնատառերով դրոշմակնիք: Պատկերային նույնատիպ ոճն ու հորինվածքը տեղ են գտել մասնավոր հավաքածուներում պահպանվող ապարանջանների³² վրա, որտեղ հանդիպում ենք նաեւ Ս. Գրիգոր, Ս. Խաչ, Էջմիածնի վանքերի պատկերներին: Հատկանշական է, որ վարպետը կառույցները երբեմն ներկայացնում է բնապատկերի տարրերով՝ ստեղծելով տարածություն տպավորություն:

ՀԱԹ-ի գոտիների հավաքածուում մեծ թիվ է կազմում գոտիների այն խումբը, որն ընդգրկում է քրիստոնեական զարդարվեստի մաս կազմող մեկ այլ զարդահորինվածք՝ զարդարվեստում հայտնի որպես «զարդ աշխարհի»³³: Այս խումբն ունի գրեթե նույն կառուցվածքային լուծումները, ինչ նախորդ օրինակները: ՀԱԹ Հ^{մր} 2414/11 գոտին (նկ. 6) կազմված է տասնվեց զարդատախտակներից, որոնք ամրանում են կաշվի նեղ ժապավենի վրա. դրանց քանակը, կախված կրողի չափսերից, կարող էր տարբեր լինել: Զարդատախտակներն այստեղ ընդգրկում են փորագրագարդ եւ սեւադապատ եռաբողբոջ թեւերով խաչի զարդահորինվածքներ, որոնց կենտրոնը շրջանաձև է՝ անկյուններից դուրս եկող ճառագայթներով: Խաչի նմանօրինակ պատկերը Մ. արք. Օրմանյանի «Ծիսական բառարանում» ներկայացվում է որպես «սեռականաձև խաչ»³⁴: Այս անվանումը մեզ հայտնի է Հ^{մր} 7634 ձեռագրի 9բ թերթի զարդանկարից, որտեղ հիշատակվում է որ-

³¹ Օ. Tokat, նշվ. աշխ., էջ 106.

³² Նշվ. աշխ., էջ 167-169:

³³ ՀԱԹ, գոտիներ՝ Հ^{մր} 7372/5, Հ^{մր} 7335/1, Հ^{մր} 2414/11, Հ^{մր} 2049/10, Հ^{մր} 2465/6, Հ^{մր} 2423/23, Հ^{մր} 2414/7:

³⁴ Մ. արք. Օրմանյան, Ծիսական բառարան, Երևան, 1992, էջ 83-84:

պես՝ «Այս է զարդ աշխարհի»։ Նախաքրիստոնեական շրջանի ամենավաղ օրինակը, որի հետ գոյություն ունեն սերտ աղերսներ, Լեոնային Ալթայից գտնված Պաղիրիկ գորգն է (Ք. ա. ե. դ.)³⁵, որի ողջ հիմնադաշտը ծածկված է այս զարդաձևով։ Ա. Մնացականյանը այս զաղափարապատկերի իմաստաբանությունը տեսնում է կյանքի եւ բնություն երեւույթների՝ աման եւ պտղավորման օրինաչափությունների մասին մարդկանց ձեռք բերած աշխարհայացքի մեջ, որտեղ հիմնական օբյեկտը հատիկն է, որի հետ միաժամանակ հանդես են գալիս չորս տարրերը (հող, ջուր, օդ, արեւ)³⁶, դրանք քննվող օրինակում դրսեւորվում են վարսանդա-պտղային խորհրդանշերով ավարտվող խաչի թելերով։ Այս զարդատարրի ոճավորված տարբերակները լայնորեն կիրառվել են գորգագործության եւ ասեղնագործության մեջ՝ ժամանակ առ ժամանակ ցուցաբերելով անհատական մոտեցում, ինչի արդյունքում մեզ ներկայանում են տարատեսակ լուծումներով՝ այն է՝ խաչի թելերից դուրս եկող ճառագայթների անցումը ութաթել աստղի։ Բազմազան դրսեւորումներով դրանք իրենց արտահայտությունն են գտել Այնթապի ասեղնագործ բանվածքներում³⁷ եւ գորգարվեստում³⁸։ Եթե վերահիշյալ գոտիներում պատկերվում է փորագրված եւ սեւադապատ այս զարդատարրը, ապա կարելու է նշել, որ հանդիպում են օրինակներ՝ նշյալ զարդանախշի դրոշմադրվագված տարբերակով³⁹։

Ի տարբերություն արեւելահայկական զարդահամալիրի՝ Վասպուրականի գլխազարդերը տարատեսակ են ու բազմաբանակ։ Նկատելի է, որ այստեղ պահպանվել են զարդաձևեր, որոնք զաղափարային բովանդակությամբ աղերսվում են հնագույն հավատալիքների ու պաշտամունքի հետ՝ մասնավորապես լուսնի մահիկի զարդանախշը։ Ծարմանդների վրա դրանց ձեւավորմանը արդեն իսկ հանդիպեցինք։ Առավել ցայտուն կերպով աչքի են ընկնում հատկապես կանանց ճակատազարդերում, մասնավորապես՝ արծաթե մախչայի (քնար) ձեւավորման մեջ։ Գոյություն ունեն մախչայի հինգ տեսակներ։ Ն. Ավագյանը նշում է նրանց չորսը՝ 1. մախչա-քնար՝ բաղկացած 11 տախտակից, 2. մախչա-թամաղա՝ բաղկացած 9 տախտակից, 3. մախչա-քնար՝ 7 տախտակից, 4. մախչա՝ 5 տախտակից⁴⁰ եւ 5. մախչա՝ 3 զարդատախտակից։

³⁵ U. Schurmann, The Pazyryk, New York, 1982.

³⁶ Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 176:

³⁷ Հ. ԹՈՔՄԱՆՃԱՆ, Այնթապի ասեղնագործություն, հ. Ա., Հալեպ, Երեւան, 2015, էջ 213:

³⁸ ՀԱԹ, գորգ (Վասպուրական), ՀՊՐ 3692, սակայն հանդիպում են այլ շրջաններում եւս:

³⁹ ՀԱԹ, գոտի՝ ՀՊՐ 2414/7:

⁴⁰ Ն. Ավագյան, նշվ. աշխ., էջ 75:

Առաջին երեք տեսակի տախտակները քառակուսի են, վերելի մասը՝ աստղաձև, բայց իրարից տարբերվում են զարդարման եղանակով: Տախտակները իրար միացվում են մարջանի գլխիկ ունեցող ներդիր ձողերի միջոցով⁴¹: Չորրորդ տեսակի տախտակների ներքեւամասն ալիքավոր է, իսկ դեպի վեր աստիճանաբար նեղանում է: Այդ նեղ մասում ամրացվում է գլանաձև հավելված՝ թելը դրա միջով անցկացնելու եւ գլխին կապելու համար⁴²: ՀԱԹ Հ^մ 820 այս տեսակի ճակատազարդի յուրաքանչյուր զարդատախտակի կենտրոնում տեղավորված է վերադիր լուսնազարդ, գունավոր ակերով եւ փրուզով: Մախչայի հինգ տեսակն էլ ստորին եզրերին օղեր ունեն, որոնցից կախվում են արծաթյա սնամեջ գնդիկներ (բլուրներ): Վասպուրականի զարդերն իրենց տեղն են գտել ժողովրդական խաղիկներում եւ սիրո երգերում:

Դէրիկօն էլե կերթա բաղչէն, Դէրիկօ ջան,

Կը բղբղայ (փայլի) ճակտի մաղչէն, Դէրիկօ հօպնարօ Դէրիկօ ջան⁴³:

«Մախչան պատվերով պատրաստում էին Վանի ոսկերիչ արծաթագործները: Ունեւոր խավի կանայք պատվիրում էին թանկարժեք քարերով զարդարված եւ ավելի շատ տախտակներից բաղկացած մախչա: Ամենաքեղը համարվում էր 11 տախտակից բաղկացածը»⁴⁴: Մախչան պատրաստվում էր կռաման, երբեմն գուգաթելի, հատիկազարդման տեխնիկայով, ընդելուզվում էր բնական եւ արհեստական ակներով⁴⁵:

Գրեթե բոլոր տեսակի մախչաների կենտրոնական զարդատախտակի վրա տեղադրվում էր մեծ կամ փոքր վերադիր լուսնի մահիկ: Մահիկի վրա փորագրվում եւ սեւադապատվում էր տերեւազարդ ծաղկանախչ (նկ. 7), իսկ դրա բացակայության դեպքում ընդելուզված քարով զարդատախտակ էր ամրացվում⁴⁶: Հատկանշական է, որ ծաղկի զարդահորինվածքով մահիկաձև կրծքազարդ հանդիպում ենք Թոփրակ-կալեից գտնված մարդու մարմնով, բրոնզե, թեւավոր ցուլի արձանիկի վրա⁴⁷ (նկ. 8): Լուսնաձև լանջազարդերը լայն կիրառություն են ունեցել Վանի թագավորության ժամանակաշրջանում⁴⁸: Սրանով միայն չի սահմանափակվում լուսնի զար-

⁴¹ ՀԱԹ, ճակատազարդ՝ Հ^մ 827, տէս ՀՊԹ, Հ^մ 6735:

⁴² Ե. Լալայան, Վասպուրական, ազգագրություն, Թիֆլիս, 1911, էջ 26:

⁴³ Հ. Աճեմեան, Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսութեան, Էջմիածին, 1917, էջ 44:

⁴⁴ Ն. Ավագյան, նշվ. աշխ., էջ 75:

⁴⁵ ՀԱԹ, ճակատազարդ՝ Հ^մ 6622/1, Հ^մ 6622/2, Հ^մ 828, Հ^մ 827:

⁴⁶ ՀՊԹ, ճակատազարդ Հ^մ 6735, Հ^մ 6766:

⁴⁷ B. B. Piotrovskii, Urartu, The kingdom of Van and its art, London, 1967, p. 29.

⁴⁸ «Հին Հայաստանի ոսկին», Երեւան, 2007, էջ 175-176:

դաձեւի կապը ուրարտական մշակույթի հետ: Միջնադարում մահիկաձեւ լանջազարդերի կիրառութեան մասին հիշատակվում է նաեւ Հ⁴⁹ 1215 ձեռագրում պահպանված վկայութեան մեջ⁴⁹:

Լուսնի մահիկի գերակայութիւնը Վան-Վասպուրականի զարդահամալիրում պայմանավորված էր նախաքրիստոնեական շրջանի հավատալիքներով, մասնավորապէս՝ Անահիտ դիցուհու պաշտամունքով:

Անահիտի պաշտամունքի՝ լուսնի հետ ունեցած աղերսին ամենայն մանրամասն անդրադարձել է Կ.Մելիք-Փաշայանը՝ մեջբերելով պատմիչների տարբեր վկայութիւններ⁵⁰:

Ղ. Ալիշանը նշում է. «Եղջերաձէ, մանեկաձէ, կարսկնաձէ կամ նսվակաձէ Լուսինն՝ Մահիկ կոչուի առ մեզ, ըստ ծանօթ Պարսից Մահ կամ Մահի բառից, որ նշանակէ զլուսին եւ զամիս. որոյ ձեւէն երեւի Մեհեւանդ գարդն»⁵¹:

Մահիկի՝ որպէս ճակատազարդի, մասին հիշատակում է Վ. Հացունին՝ նշելով, որ այս զարդով է հանդես եկել լուսնի Սելենե դիցուհին⁵²: Այս մասին խոսում է նաեւ Ղ. Ալիշանը՝ հայտնելով, որ հույներն իրենց Արտեմիսի (Անահիտի) ճակատին դնում էին լուսնի մահիկ. «Հայք Արտեմիայ լուսնակիր պարկերն ընդունելով ի Հունաց՝ կանգներ էին յԵրեզ»⁵³: Սա փաստում է, որ վաղեմի այս սովորույթը պահպանվել է հայկական զարդերում: Չնայած որ տարբեր ուրվագծով ճակատազարդեր կրել են բազմաթիվ ազգեր⁵⁴, սակավաթիվ են լուսնազարդով ձեւավորված օրինակները: Որպէս բացառութիւն նշենք բուլղարական «ստեֆան» կոչվող ճակատազարդերը⁵⁵ եւ Մարոկկոյի ճակատազարդ-թագերը⁵⁶, որտեղ մահիկները մշակված էին շղթաներից կախ ընկած տեսքով:

Նկատենք, սակայն, մի ուշադրավ փաստ եւս. ըստ ազգագրագետ Վ. Բդոյանի՝ հայկական կանացիակերպ աղամանները Անահիտ դիցուհու ծաղկած մշակույթի վերապրուկ են⁵⁷: Դրանք հաճախ հանդես են գալիս որոշ զարդատարներով (եռանկյունի, լուսնեղջյուր), որոնք հաստատում

⁴⁹ Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 442:

⁵⁰ Կ. Վ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, վայրը, թիվը, էջ 148:

⁵¹ Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց մեջ, Վենետիկ, 1895, էջ 59:

⁵² Վ. Հացունի, Պատմութիւն հին հայ տարագին, Վենետիկ, 1923, էջ 34:

⁵³ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., 1895, էջ 137:

⁵⁴ Տես թուրքմենական ("The decorative and applied art of Turqmenia", Leningrad, 1976, p. 75) եւ տաջկական (Л. А. Чвыр, Таджикские ювелирные украшения, Москва, 1977, с. 18, рис. 1, 2) զարդերը:

⁵⁵ П. Пунтев, М. Черкезова, Ж. Стаменова, В. Ковачева, Болгарское народное искусство, с. 94, рис. 2.

⁵⁶ http://worldartdalia.blogspot.am/2014/02/blog-post_6890.html:

⁵⁷ Վ. Բդոյան, Հայկական աղամաններ, Երեւան, 1986, էջ 25:



Նկ. 5



Նկ. 5ա

Նկ. 5. ՀԱԹ գոտի Հ^տ 6626 , (Վան, ԺԹ. դ.)


Նկ. 5ա. ՀԱԹ գոտի Հ^տ 2414/11, (Վան, ԺԹ. դ.)



Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8



Նկ. 9

- Նկ. 6. ՀԱԹ, ճակատագարի ՀՊՈ 828, (Վան, ԺԸ.-ԺԹ. դդ.)
 Նկ. 7. Բրիտանական թանգարան, բրոնզաձուլ արձանիկ,
 (Թուփրակ-կալե), (լուսանկարը՝ B. B. Piotrovskii,
 Urartu, The kingdom of Van and its art գրքից)
 Նկ. 8. ՀՊԹ գլխաթառ ՀմԻ 5170 (Բաղեշ, ԺԹ. դ.)
 Նկ. 9. ՀԱԹ պարանոցագարի, ՀՊՈ 1521 (Վան, ԺԹ. դ.)

են վերոնշյալ փաստերը: Այս առումով խիստ արժեքավոր է ՀՊԹ գտնվող Հ^տ 5794 կանացիակերպ մի աղաման, որի վրա պատկերված է եռանկյունի լանջազարդ՝ ստորին հատվածից կախված մահիկ: Լ.Ագուլեցու հավաքածուի մաս է կազմում Վասպուրականի ԺԹ դ. ճիշտ նմանատիպ մի կրծքազարդ⁵⁸: Լուսնաձև մահիկներով էին զարդարվում գդակների վրայի շարանները⁵⁹, պարանոցազարդերի վերջույթները, գոտու ճարմանդները եւ այլն: Անահիտ դիցուհին ներկայանում է պտղաբերության մեկ այլ՝ եռանկյուն խորհրդապատկերով՝ լինելով իգական սիմվոլի հատկանիշը⁶⁰, ինչը տարածված զարդատեսակ էր Վասպուրականում⁶¹: Այսպիսով, լուսնին՝ Անահիտի պաշտամունքը քրիստոնեության շրջանում չի անէանում, ավելին, այն վերապրուկային տեսքով պահպանվում է նույնիսկ զարդերում:

Գլխի հարդարանքի մաս էին նաեւ գլխաթասերը: Պատրաստվում էին դրվագման տեսնիկայով, շրջանաձև են, կենտրոնում ուռուցիկ, գմբեթաձև ելուստով, սովորաբար կազմված են լինում լայն ու նեղ շրջագոտիներից: Երբեմն շրջագոտիներն ընդգրկում են դրվագազարդ ծաղիկների ու տերեւազարդ բուսանախշերի զարդահորինվածքներ⁶²: Երբեմն էլ հանդիպում են օրինակներ, որտեղ ամփոփված են մի քանի զարդաձևեր, այդպիսի նմուշ է ՀՊԹ Հ^տ 5170 գլխաթասը (նկ. 9), որի կենտրոնը զբաղեցնում է վեցաթև աստղ, իսկ լայն շրջագոտին կռման եւ դրվագման միջոցով կոր կիսաբոլորների պարբերական շարքով իր ամբողջության մեջ ներկայացնում է հավերժության (արեւի) խորհրդանշան: Հատկանշական է, որ հավերժության խորհրդապատկերը Վան-Վասպուրականի ասեղնագործության դպրոցում կիրառվող բնորոշ զարդատարրերից մեկն է⁶³: Այս երկու՝ վեցաթև աստղի եւ արեւի խորհրդապատկերներին հանդիպեցինք Վանի քանդակազարդ տան չքամուտքերում: Գլխաթասի կախ ընկած շղթաների անմիջապես կենտրոնում տեղավորված են ոճավորված վիշապներ: Գլխաթասեր օգտագործել են նաեւ մեր հարեւան ժողովուրդները: Աթենքի հնագիտության թանգարանում պահվում է հնատիպ ոսկե մի օրինակ (Ք. ա. Գ. դ.)՝ կենտրոնում քանդակված Արտեմիս դիցուհու կիսանդրով: Եթե հայերը, Արտեմիսի լուսնակիր պատկերը հույներից ըն-

⁵⁸ Լ. Ագուլեցի, Անցյալի մասունքներ, Երևան, 2010, էջ 128:

⁵⁹ Նշվ. աշխ, էջ 140, նկ. 1:

⁶⁰ Վ. Բդոյան, նշվ. աշխ., էջ 61:

⁶¹ ՀԱԹ, կրծքազարդ Հ^տ 230/7, Հ^տ 774:

⁶² ՀԱԹ, գլխաթաս Հ^տ 1459:

⁶³ Ս. Դավթյան, Հայկական ժայռակ, 1966, էջ 18, նկ. 32:

դուռներով, կանգնեցրել էին Երիզայում, որի մասին նշում է Ղ. Ալիշանը, ապա չի բացատրվում, որ գլխաթասերը հեղինական մշակույթից մեզ հասած զարդատեսակ են:

Ախչիկ քեոյ գելօխ առթթ թասի,

Տղա՛ քեոյ գելօխ սրմալու Ֆասի⁶⁴:

Հայերի գլխավոր պաշտամունքներից է եղել օձը, որը շատ անգամ անվանվում է նաեւ վիշապ՝ համարվելով ավելի մեծ ու հզոր: Մեր երկրի շատ վայրեր կրել են դրանց անունները: Ալիշանը հիշատակում է Տարոնում գտնվող Օձ քաղաքի մասին, որ կոչվել է նաեւ վիշապաքաղ⁶⁵: Վիշապների պատկերները տարբեր ժամանակներում տեղ են գտել բարձրաքանդակներում եւ երկրաչափականացված մոտիվներով գորգերի, կարպետների զարդանախշերում: Ժողովուրդը նրանց վերագրել է պաշտպանիչ հատկություն⁶⁶: Բնականաբար, վիշապն իր տեղը կգտներ նաեւ զարդերում: Վասպուրականի պարանոցազարդերը մեծամասամբ պատրաստվում էին օձ-վիշապների տեսքով: ՀԱԹ Հ⁴ 1521 վզնոցը (նկ. 10) կազմված է դրվագված երկգլխանի գալարուն վիշապների շարքից, որոնք ստվորաբար ամրացվում են կտորի շերտին: Վիշապները, կախված վարպետի ձեւավորումից, կարող են երկշարք լինել⁶⁷. դրանք ստորին եզրում օղեր են ունենում, որոնցից կախվում են երկրորդ շարքի զարդատախտակները: Դրվագազարդ վիշապներով հարդարվում էին քունքակախիկներից եւ գլխաթասերից կախված շղթաները:

Ամփոփելով վերոնշյալը՝ նկատենք, որ Վան-Վասպուրականի զարդահամալիրի գեղարվեստական հարդարանքը, ոճապատկերային հորինվածքները, մեծամասամբ ունեցել են խորհրդաբանական իմաստ՝ պայմանավորված տեղական նախասիրություններով ու պահպանողականությամբ, ինչն աղբյուրում էր նախաքրիստոնեական շրջանի հարուստ զարդարվեստի հիմքերին: Զարդահորինվածքային սյուլթենները հարստացված են ժողովրդական ձեւամտածողության, նախաքրիստոնեական եւ քրիստոնեական ավանդույթների մի ուրույն համակարգի ամբողջացմամբ: Դրանց գեղարվեստական առանձնահատկությունները դրսևորվում են մի շարք զարդաձեւերի կիրառմամբ, որոնք տիպական ու բնորոշիչ են միայն այս տարածաշրջանի զարդահամալիրին: Դրանք են՝ ճարտարապետական կառույցների (տվյալ դեպքում Վասպուրականի եկեղեցիներ-

⁶⁴ Գ. Շերենց, Վանայ սագ, Թիֆլիս, 1885, էջ 39:

⁶⁵ Ղ. Ալիշան, Հայոց հին հաւատքը կամ հեթանոսական կրօնը, Երևան, 2002, էջ 81:

⁶⁶ Գ. Սրուանձունց, Գրոց ու Բրոց, Կ.Պոլիս, 1874, էջ 45:

⁶⁷ ՀԱԹ, վզնոց Հ⁴ 1544:

րի) պատկերումը, ճարմանդների եւ գլխաթասերի կենտրոնական դաշտը զբաղեցնող վեցաթեւ աստղը, արեւի (հավերժության) խորհրդապատկերը, ինչը մեծ տարածում ունեն հայկական քանդակագործության մեջ, այդ թվում՝ Վասպուրականի, լուսնի մահիկի զարդաձեւը, որի աղերանները ձգվում են մինչեւ Թուփրաք-Կալեից պեղված գտածոներ: Առանձնահատուկ զարդաձեւերից է նաեւ օձ-վիշապի պատկերագրությունը, որով գլխավորապես ձևավորում էին պարանոցազարդերը:

Վանի արծաթագործական դպրոցն իր զարդաձեւերի ներքին բովանդակությամբ ու արտաքին բնութագրիչ գծերով, ինչպես նաեւ տեխնիկական հմտությունների զուգորդմամբ առանձնահատուկ տեղ է գրավում արծաթագործական մյուս դպրոցների կողքին՝ կրելով բազմադարյա հարուստ մշակույթի փորձը:

РЕЗЮМЕ

Художественное украшение и стилистическая иллюстрированная композиция убранства Ван-Васпуракана имеет свое символистическое значение, которое обусловлено местными предпочтениями и консерватизмом. Сюжеты орнамента обогатились народной, дохристианской и христианской единой системой символики. Художественная специфика отображается в употреблении различных декоративных форм которые типичны и характерны только для украшений этого региона - архитектурные сооружения васпураканских церквей, инкрустированные пластинчатые тубетейки, пряжки с символами вечности и шестикрылой звезды, налобное украшение в форме полумесяца и, наконец, ожерелья с орнаментом, символизирующим дракона.

SUMMARY

The artistic ornamentation and style visual compositions of the adornment of Van-Vaspurakan region had its symbolical meaning due to local preferences and conservatism. Decor-compositional themes are enriched with the system of completion of popular way of thinking, reflected in pre-Christian and Christian ornamentations. The artistic specifications are displayed with using of several patterns: that of belts decorated architectural structures of Vaspurakan's churches, encrusted plate-caps and buckles with symbol of six point star and eternity, crescent-shaped forehead adornments and necklaces with ornamental patterns symbolizing the dragon.



ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ*բանասիրական գիյր. թեկնածու, ՀԱԻ***ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳԻՐԵՐ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի եւ հայ ժողովրդի մշակույթի, պատմության խնդիրները մշտապես ուսումնասիրման առարկա են հայ մտավորականների համար: Նոր շրջանում անհրաժեշտություն է առաջացել միավորելու եւ համատեղելու ջանքերն ու աշխատանքները: Այս առումով կարեւոր իրադարձություն է Պատմական ու հնագիտական ընկերության հիմնադրումը (1913 թ., Թիֆլիս), որը կապված է հիմնադիր Գյուտ ավ. քին. Աղանյանցի եւ հայ նշանավոր մի շարք գիտնականների ու մշակութային գործիչների հետ¹: Ստորեւ ներկայացնում ենք այդ ընկերության հիմնադրմանը վերաբերող վավերագրեր, որոնք պահվում են Հայաստանի ազգային արխիվում (ֆոնդ 654)²:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 5-ին 1913 թ. տեղի ունեցավ Հայոց պատմական եւ հնագիտական ընկերության հիմնադիրների եւ ընտրված իսկական անդամների ընդհանուր ժողովը՝ Հովնանյան օր. դպրոցի դահլիճում:

Ներկա էին՝ Բարձ. Գյուտ. ավ. քին. Աղանյան¹, Ստ. Մալխասյան², Ստ. Լիսիցյան³, Ա. Բաբախանյան (Լեո)⁴, Ի. Հարությունյան⁵, Հովհ. Թուրմանյան⁶, Ս. Տեր-Ավետիսյան⁷ եւ Ա. Շահնազարյան⁸:

1 Կազմակերպության կանոնադրությունը հրատարակել է Գյուտ ավ. քին. Աղանյանցը. տե՛ս «Կանոնադրություն Հայոց պատմական եւ հնագիտական ընկերության», Թիֆլիս, 1914:

2 «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը սույն փաստաթղթերը հրատարակում է լեզվաճանաչական մասնակի խմբագրումներով եւ ուղղումներով:

Ժողովի զբաղման առարկան էր Ընկերություն խորհրդի անդամների ընտրությունը:

Ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց Բարձ. Գ. ավ. քհն. Աղանյանը, եւ քարտուղար՝ Ա. Շահնազարյանը:

Նախքան ընտրությունն անցնելը՝ ժողովականները մանրամասն ծանոթացան Հայոց պատմական եւ հնագիտական ընկերության պատշաճավոր իշխանության կողմից հաստատված կանոնադրությանը, որից հետո գաղտնի քվերակությամբ ընկերության խորհրդի նախագահ ընտրվեց Վրաստանի եւ Իմերեթի թեմի առաջնորդ Գեր. Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը⁹, գանձապահ՝ Բարձ. Գ. ավ. քհն. Աղանյանը, թանգարանապետ՝ պ. Ստ. Մալխասյանը, եւ մատենադարանապետ՝ պ. Ա. Շահնազարյանը:

Այնուհետեւ ընդհ. ժողովը հանձնարարեց ընկերության խորհրդին՝ օգուտ քաղել առիթից եւ Հայոց տառերի ու տպագրության գյուտի հոբելյանը շողկապել ընկերության հանդիսավոր բացման հետ, եւ ըստ այնմ էլ՝ պատշաճ նյութեր պատրաստել այդ օրվա համար:

Ժողովը որոշեց նաեւ հանձնարարել Ընկերության խորհրդին՝ իր կողմից շնորհակալություն հայտնել Վիեննայի համալսարանի ուսուցչապետ պ. Ստրոբիլովսկուն¹⁰՝ Հայոց պատմ. եւ հնագիտ. ընկերության առաջարկությամբ եւ նախաձեռնությամբ Հայոց ճարտարապետության մասին իր կարգացած դասախոսության համար:

Նախագահ ընդհ. ժողովի՝ Գյուլ. ավ. քհն. Աղանյան (ստորագր.)
Քարտուղար՝ Ա. Շահնազարյան

Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ),
Փ. 654, ց. 3, գ. 1, թ. 24:
Բնագիր: Զեռագիր:

ՕՐԱԳԻՐ հմ. 2

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
12 հոկտեմբերի, 1913 թ.

ՆԵՐԿԱ ԷԻՆ

Նախագահ՝ Տ. Մեսրոպ եպս.
Անդամներ՝ Ստ. Լիսիցյան
Ստ. Մալխասյան

Ա. Շահնազարյան
Գյուտ ավ. քին. Աղանյան
Անդամ-քարտուղար՝ Սմբատ Տեր-Ավետիսյան

ԼՍԵՑԻՆ - Գյուտ ավ. քհն. Աղանյանը, ծանոթացնելով խորհրդին
Ընկերության գանձարանի դրույթյան հետ, ներկայացրեց
մուտքի եւ ելքի հաշիվները՝ փաստաթղթերով՝ ընկերու-

թյան սկզբնավորությունից մինչեւ հոկտ. 23:
Նա հայտնեց, որ Ընկերության բացման առթիվ նվիրաբե-
րում է իր հրատարակած «Դիվան Հայոց պատմության»
ժողովածուի հատորները եւ «Լուծայի»¹¹ 16 տարվա հա-

մարները:
Ա. Շահնազարյանը խոստացավ նվիրել «Փորձի»¹² մի քա-

նի տարվա համարները:
Ընկերության կանոնադրության պար. 40-ի համաձայն՝

ՈՐՈՇԵՑԻՆ - Առաջարկել գանձապահին՝ պատրաստել մուտքի եւ ծախ-
քի մատյան ու հաշիվը մտցնել նրա մեջ:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 25:

ՕՐԱԳԻՐ հմ. 3
ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ
28 հոկտեմբերի, 1913 թ.

ՆԵՐԿԱ ԷԻՆ

Նախագահ՝ Տ. Մեսրոպ եպս.

Անդամներ՝ պ. Ստ. Լիսիցյան

Ա. Շահնազարյան

Արժ. Գյուտ ավ. քին. Աղանյան

ԼՍԵՑԻՆ - Գյուտ ավ. քհն. Աղանյանը Հայ գրողների ընկերության¹³
կողմից հայտնեց, որ վերջինս մեր Ընկերության տրամադ-
րության տակ է դնում Հայոց բարեգործական ընկերու-
թյան¹⁴ տան մեջ ունեցած իր գրասենյակը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Որոշվեց տպագրել դիվանական գործառույթյան բլանկներ ու գրքեր: Գնել պահարան գործերի ու գրքերի համար: Հանդիսով բանալ Ընկերության հրատարակչական առաջին նիստը՝ նպատակ ունենալով առաջ բերել պատմական ու հնագիտական հարցասիրություն:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 26:

ՕՐԱԳԻՐ հմ. 4

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
17 դեկտեմբերի, 1913 թ.

ՆԵՐԿԱ ԷԻՆ

Նախագահ՝ Տ. Մեսրոպ եպս.

Անդամներ՝ Ստ. Լիսիցյան

Ստ. Մալխասյան

Ասլան Շահնազարյան

Գյուտ ալ. քին. Աղանյան

Անդամ-քարտուղար՝

ՈՐՈՇԵՑԻՆ - Շնորհակալություն հայտնել Հայ գրողների ընկերության վարչությանը՝ իրենց գրասենյակը մեր տրամադրության տակ դնելու համար:

Ընկերության հանդիսավոր բացման առթիվ կարգացվելիք դասախոսությունների նյութերը բաշխվեցին հետևյալ կերպով.

1. Ընդհանուր ակնարկ Հայ պատմագրության վրա. կարգալու է պ. Ստ. Մալխասյանը:

2. Հայկական դիվաններ. կարգալու է Գյուտ ալ. քին. Աղանյանը:

3. Արձանագրությունները իբր պատմության աղբյուր. կարգալու է Ա. Շահնազարյանը:

4. Ստ. Լիսիցյան՝ «Հայերեն ձեռագիրները»:

5. Ս. Տեր-Ավետիսյան՝ «Հնագիտության նշանակությունը»:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 27:

ՕՐԱԳԻՐ հմ. 5

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
23 հունվարի, 1914 թ.

ՆԵՐԿԱ ԷԻՆ

Նախագահ՝ Տ. Մեսրոպ եպս.

Անդամներ՝ Ստ. Լիսիցյան

Ստ. Մալխասյան

Ա. Շահնազարյան

Գյուտ ալ. քին. Աղանյան

Անդամ-քարտուղար՝ Սմբատ Տեր-Ավետիսյան

ԼՍԵՑԻՆ - Անդամների թիվը ավելացնելու համար որոշվեց մի գրող-
թյամբ դիմել Ռուսաստանի ու արտասահմանի ձեռնհաս
հայագետներին, որի համար կազմվեց հետեւյալ ցուցակը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Անդամության հրավեր ուղարկել հետեւյալներին.

Ռուսաստանում

Միաբան՝ դպիր Գալուստ¹⁵, Գարեգին եպս. Հովսեփյան¹⁶,
Սենեքերիմ Տեր-Հակոբյան¹⁷, Աշոտ Հովհաննիսյան¹⁸, Մես-
րոպ վրդ. Մաքսուդյան¹⁹, Սահակ վրդ. Ամատունի²⁰, Եր-
վանդ Տեր-Մինասյան²¹, Թորոս Թորամանյան²², Հայկ Հով-
հաննիսյան²³, Լեւոն Մելիքսեթյան²⁴, Ռուբեն Աբրահամ-
յան²⁵, Երվանդ Լալայան²⁶, Լեո (Առաքել Բաբախանյան),
Միսակ Խոստիկյան, Երվանդ Շահազիզյան²⁷, Աբրահամ
Չառփնեյան, Կարապետ Կոստանյան²⁸, Քուչուկ-Հովհան-
նիսյան²⁹, Նիկողայոս Ադոնց³⁰, Օրբելի³¹, Աշխարհբեկ Քա-
լանթարյան³², Հրաչյա Աճառյան³³:

Վենետիկ

Հայր Հովհաննես Թորոսյան³⁴, Պուտուրյան³⁵, Երեմյան³⁶:

Վիեննա

Հ. Գալամբերյան³⁷, Ներսես Ակինյան³⁸, Հակովբ Տաշյան³⁹,
Գաբրիել Մինարյան, ՊելեգրիկՋյան⁴⁰:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 28 եւ շրջ.:

ՕՐԱԳԻՐ հմ. 6

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
29 հունվարի, 1914 թ.

ՆԵՐԿԱ ԷԻՆ

Նախագահ՝ Ստ. Լիսիցյան
Անդամներ՝ Գյուտ ալ. քին. Աղանյան
Ստ. Մալխասյան
Ա. Շահնազարյան

Անդամ-քարտուղար՝ Ս. Տեր-Ավետիսյան

ԼՍԵՑԻՆ - *Կարգադրեց անդամության համար կազմված անձանց ցուցակը:*

ՈՐՈՇԵՑԻՆ - *Գրավոր դիմել բոլորին ու ստանալ նոցա համաձայնությունը՝ Ընկերության անդամ ընտրելու համար:
Պատրաստություն տեսնել Ընկերության հանդիսավոր բացման համար:*

Մեր կանոնադրության պար. 2-ի համաձայն՝ որոշվեց հրատարակել Տարեգիր հետևյալ ծրագրով.

- 1. Մասնագիտական ուսումնասիրություններ ու բնագրեր:*
- 2. Գիտական քրոնիկոն ու մատենագիտություն:*
- 3. Գիտական զեկուցումներ:*

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 29:

ՕՐԱԳԻՐ հմ. 7

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
20 փետրվարի, 1914 թ.

ՆԵՐԿԱ ԷԻՆ

Նախագահ՝ Տ. Մեսրոպ եպս.
Անդամներ՝ Ստ. Լիսիցյան
Ստ. Մալխասյան
Ա. Շահնազարյան

Անդամ-քարտուղար՝ Սմբատ Տեր-Ավետիսյան

ԼՍԵՑԻՆ - Նախագահը առաջարկեց կարգալ ընկերություն բացման առթիվ կազմակերպվող հանդեսին կարգացվելիք նյութերի ցանկը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հանդեսը բանալ մարտի 2-ին՝ կիրակի՝ երեկոյան 8 ժ.՝ Բարեգործ. ընկ. դահլիճում:

Այս մասին հայտարարել լրագիրների միջոցով հետևյալը. «Մարտի 2-ին՝ կիրակի՝ երեկոյան Կովկ. հայ բարեգործ. ընկ. դահլիճում տեղի կունենա նորահաստատ Հայոց պատմական եւ հնագիտական ընկ. հանդիսավոր բացումը: Հանդեսը կբանա ընկ. նախագահ Մեսրոպ եպս.՝ բացման ճառով. այնուհետեւ հաջորդաբար կխոսեն ընկերության անդամները»:

Մոտքը առանձին հրավերով: Մշակվեց հրավերի ձեւը:

Ստ. Մալխասյանը կարգաց մի ուսումնասիրություն հայ պատմագիրների մասին, իսկ Ա. Շահնազարյանը՝ արձանագրությունների մասին:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 30:

ՕՐԱԳԻՐ ԽԱՆՈՒՄ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
29 մարտի, 1914 թ.

ՆԵՐԿԱ ԷԻՆ

Նախագահ՝ Ս. Մեսրոպ եպս.

Անդամներ՝ Ստ. Լիսիցյան

Գյուտ ալ. քին. Աղանյան

Ա. Շահնազարյան

Ստ. Մալխասյան

Անդամ-քարտուղար՝ Սմբատ Տեր-Ավետիսյան

ԼՍԵՑԻՆ - Նիստը տեղի ունեցավ Երաժշտական ընկերության⁴¹ դահլիճում՝ բազմաթիվ հրավիրված հյուրերի ներկայությամբ: Նիստը բացեց Մեսրոպ եպս. մի ճառով, ուր բացատրեց նորակազմ Պատմական եւ հնագիտական ընկերության նպատակները: Այնուհետեւ հասարակական եւ

ազգային-կրթական զանազան հաստատությունաց ներկայացուցիչները շնորհավորեցին Ընկերության բացումը՝ ուղերձներով եւ ճառերով, որից հետո Ընկերության անդամները կարգացին հետեւյալ զեկուցումները. Ստ. Մալխասյան՝ «Ընդհանուր ակնարկ հայ պատմագրության վրա», Գյուլտ ավ. քհն. Աղանյան՝ «Հայկական դիվանները», Ա. Շահնազարյան՝ «Արձանագրությունները իբր պատմության աղբյուր»:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 31 եւ շրջ.:

ՕՐԱԳԻՐ հմ. 9

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
17 ապրիլի, 1914 թ.

ՆԵՐԿԱ ԷԻՆ

Նախագահ՝ Տ. Մեսրոպ եպս.

Անդամներ՝ Ստ. Մալխասյան

Ստ. Լիսիցյան

Ա. Շահնազարյան

Գյուլտ ավ. քհն. Աղանյան

Անդամ-քարտուղար՝ Սմբատ Տեր-Ավետիսյան

ԼՍԵՑԻՆ - Զեկուցվեց, որ անդամագրվել ցանկացել են Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը, Մեսրոպ վրդ. Մաքսուդյանը, Ստեփան Կանայանը⁴², Երվանդ Տեր-Մինասյանը:

Խորհուրդը քննության առավ տարեգրի հրատարակության գործը: Ս. Տեր-Ավետիսյանն առաջարկեց կազմակերպել ակադեմիկ Մառի⁴³ հոբելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Վարվել կանոնադրության համաձայն:

Խմբագրական գործը կատարել հերթով: Առաջին գիրքը խմբագրելու է Ստ. Մալխասյանը: Պարտականություն ղենել բոլոր անդամների վրա՝ պատմական-հնագիտական նյութ ժողովելու:

Խորհուրդը հայտնեց իր համաձայնությունը:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 32:

ՕՐԱԳԻՐ հմ. 10
ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
29 նոյեմբերի, 1914 թ.

ՆԵՐԿԱ ԷԻՆ

Նախագահ՝ պ. Ստ. Լիսիցյան
 Անդամներ՝ Արժ. Գյուտ ավ. քին. Աղանյան
 Անդամ-քարտուղար՝ Ս. Տեր-Ավետիսյան

ԼՍԵՑԻՆ - Կարգացվեցին անցյալ նիստերի արձանագրությունները: Ի նկատի ունենալով, որ խորհրդից երկու հոգի՝ պ. Ա. Շահ-նազարյան եւ պ. Ստ. Մալխասյան պաշտոնով տեղափոխվեցին Թիֆլիսից, որոշվեց հրավիրել ընդհանուր հերթական ժողով՝ խորհրդի կազմը լրացնելու համար: Այդ նիստին ընտրել նաեւ նոր անդամներ՝ հետեւյալ անձանց, որոնք հայտնել էին իրենց համաձայնությունը.

Տ. Հուսիկ արքեպ.

Եփրեմ եպս.

Մեսրոպ վրդ. Մաքսուդյան

Ստ. Կանայան

Երվանդ Տեր-Մինասյան

Մինաս Բերբերյան⁴⁴:

Այդ հերթական ընդհանուր ժողովին կարգալու են.

Ս. Տեր-Ավետիսյան՝ Հ. եպս. Սուրենյանի «1827 թ. պատերազմը եւ հայերի գաղթը», Գ. քհն. Աղանյան՝ «Հայաստանի վերանորոգումի ծրագիրը Եկատերինա Բ.-ի ժամանակ», Ստ. Լիսիցյան՝ «Հնդկահայերի ծրագիրը»: Հանգուցյալ Աբրահամ Բարունյանի ժառանգները, ուղարկելով Ընկերության իրենց հոր գրադարանի ցուցակը, հայտնեցին, որ մատենադարանը նվիրում են Ընկերության եւ առաջարկում են ընդունել: Խորհուրդը որոշեց հանձն[արար]ել պ. Ստ. Լիսիցյանին եւ Գ. ավ. քհն. Աղանյանին՝ գնալ եւ ընդունել գրքերը ու ցուցակով հանձնել խորհրդին:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 33 եւ շրջ.:

ՕՐԱԳԻՐ հմ. 11
ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
16 հունիսի, 191-- թ.

ՆԵՐԿԱ ԷԻՆ

Նախագահ՝

Անդամներ՝ Ստ. Մալխասյան

Գյուտ քին. Աղանյան

Անդամ-քարտուղար՝ Ս. Տեր-Ավետիսյան

ԼՍԵՑԻՆ - Այս նիստին հրավիրված էր եւ Ընկերության հիմնադիր անդամ Հովհաննես Թումանյանը:

Քննության առնվեց Ընկ. գործունեությունը, որ դադարել էր պատերազմի հետ կապված շատ աննպաստ պայմանների պատճառով:

ՈՐՈՇԵՑԻՆ - Վերսկսել Ընկերության գործունեությունը, հրատարակել տարեգիրը:

Սկիզբը դնել պատմական հիշատակարանների պահպանության գործին՝ սկսելով Հաղպատի վերանորոգությունը: Իսկ Անիի մասին համաձայնության գալ Մառի հետ: Ուսումնասիրության կենտրոն դարձնել Լոռու ձորը:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 34:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Ձեր փետրվար 4-ի (այստեղ ստացված՝ ապրիլի 2-ին) առաջարկությունը պատիվ ունեմ պատասխանելու, որ համաձայն եմ Ընկերությանդ իսկական անդամ լինելու:

Խորապես զգալով այդպիսի մի Ընկերության գոյության անհրաժեշտությունը՝ բոլոր սրտով շնորհավորում եմ նրա բացումը եւ առաջադիմություն ու բարգավաճում եմ ցանկանում նրան:

Երվանդ Տեր-Մինասյան

2 ապրիլի, 1914

Ալեքսանդրապոլ

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 35: Ինքնագիր:

Նախագահ Հայոց պատմական եւ հնագիտական ընկերության՝
Գերապատիվ Սրբազան Հայր

Հատուկ ներողություն եմ խնդրում, որ ցարդ ուշացրի պատասխանս
Ընկերությանդ սիրալիր առաջարկին, այն է՝ համաձայնելու Ընկերու-
թյանդ անդամագրվելու:

Տոներին՝ Ձեզ մոտ գալիս, ես պետք է այս մասին հայտնեի, բայց
խոսակցության ընթացքում մոռացա եւ ահա այժմ հայտնում եմ, որ հա-
մաձայն եմ ընտրվելու, իհարկե քվեարկությամբ, եւ կամ ինչպես Ընկե-
րությանդ կանոնադրությունն է թելադրում:

Կղժվարանամ միայն հողված հասցնելու Ընկերությանդ տարեգ-
րության համար, քանի որ նախընթաց տարվա պես ստիպված եմ Կարս
գնալ՝ ամառս մասնավոր դասեր ճարելու. իսկ թափված անմշակ աշխա-
տությունները վերամշակելու եւ տպագրության հանձնելու ժամանակը
գլխավորապես, ինչպես Ձեզ անհայտ չէ, ուսուցիչներին համար արձա-
կուրդն է, մանավանդ՝ ամառային:

Ցանկանալով ընկերությանդ բարգավաճում՝ խորին հարգանք՝

Սյուրիան Կանայան

22 մայիսի, 1914

Վաղարշապատ

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 36 եւ շրջ.: Ինքնագիր:

«Մշակ»⁴⁵

Հայոց պատմական եւ հնագիտական ընկերության խորհուրդն իր վերջին նիստում՝ ապրիլի 17-ին, լսելով իր անդամ-քարտուղար Սմբատ Տեր-Ավետիսյանի առաջարկությունը հայագետ ուսուցչապետ Մառի 25-ամյա գիտական գործունեության հոբելյանը տոնելու մասին՝ որոշեց հոբելյանական հանդեսը կազմակերպելու գործը վերցնել իր վրա:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 37:

Պատմական ընկերության

Ներսիսյան դպրանոցի նոր շինության մեջ կիրակի օրը՝ ամսիս 13-ին, հայ գրերի գյուտի 1500-ամյակի եւ հայկական տպագրության 400-ամյակի առթիվ տեղի կունենա հոբելյանական հանդես՝ գրության հետ կցված ծրագրով:

Հայտնելով Ձեզ այդ մասին, Մեծապատիվ պարոն, խնդրում եմ Ձեր ներկայությամբ հարգել այդ հոբելյանը:

ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՄԻՆ ԹԻՖԼԻՍԻ՝

Մեսրոպ եպս.

(ստոր.)

9 հոկտեմբերի, 1913

Թիֆլիս

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 41: Տպագիր:

Հմ. 10

12 հունիսի, 1919 թ.

Հայաստանի Հանրապետության լուսավորության պարոն նախարարին.

Հայոց պատմական եւ հնագիտական ընկերությունը, կամենալով իր գործունեությունը տեղափոխել Հայաստան՝ կենտրոն ունենալով Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը, ընդամին ներկայացնում է հինգ օրինակ «Կանոնադրություն Հայոց պատմական եւ հնագիտական ընկերության»՝ խնդրելով հաստատել այդ կանոնադրությունը:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 44: Թողոն: Ձեռագիր:

Հմ. 12

12 հունիսի, 1919 թ.

Հայաստանի Հանրապետության լուսավորության պարոն նախարարին.

Քաջ Հայտնի է, որ ներկա մեծ պատերազմի ընթացքում մեր պատմական եւ հնագիտական ու ընդհանրապես բոլոր կուլտուրական հիշատակարանները մեծամեծ վնասներ կրեցին, եւ մնացորդներն էլ այժմ անխնամ մնալով՝ կա՛մ անցնում են օտարների ձեռքը, կա՛մ հետզհետե ոչնչանում են: Ուստի, բնականաբար, առաջ է գալիս մի հաստատության կարիք, որ այդ բոլորը կորստից ազատի ու ժողովելով մի տեղ՝ պահի: Այդ հաստատությունը լինելու է ազգային թանգարան, որի կարիքը հրամայողաբար առաջ է բերել մեր ժամանակը: Մենք չենք կարող մեզ ճանաչել, ուսումնասիրել մեր անցյալը եւ ներկան՝ առանց Հնագիտական-պատմական թանգարան ունենալու: Ոչ մի բարձրագույն ու միջին դպրոց, թատրոն, արվեստագետ, վիպասան, առանց թանգարանի օժանդակության, չի կարող կանգնել իր կոչման բարձրության վրա:

Ուստի, Հայոց պատմական եւ հնագիտական ընկերությունը, դիմելով Ձեզ, խնդրում է հենց այժմվանից Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում հիմք դնել ազգային կենտրոնական թանգարանի եւ խնամք առնել մեր հիշատակարանների պահպանության ու ժողովելու մասին:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 45: Թողոն: Ձեռագիր:

Հայոց պատմական եւ հնագիտական ընկերության նախագահ
Տ. Մեսրոպ եպիսկոպոսին

Մեր կյանքի պատմական ուսումնասիրության եւ անցյալի հիշատակարանների պահպանության հրամայողաբար պահանջը 1913 թ. ստիպեց մի խումբ անձանց (Գյուլտ քհն. Աղանյան, Ստեփան Լիսիցյան, Սմբատ Տեր-Ավետիսյան, Հովհաննես Թումանյան, Ասլան Շահնազարյան)՝ հիմք դնել Հայոց պատմական եւ հնագիտական ընկերությանը, որի կանոնադրությունը պատշաճ իշխանության կողմից հաստատվեց 1913 թ. մայիսի 29-ին, իսկ 1914 թ. մարտի 29-ին տեղի ունեցավ Ընկերության հանդիսավոր բացումը, ուր նախագահ Տ. Մեսրոպ եպիսկոպոսը ծանոթացրեց նորակազմ ընկերության նպատակների հետ: Այն անթիվ ճառերը, որ արտասանեցին կազմակերպության ուսումնական եւ կրթական հաստատությունների ու մամուլի ներկայացուցիչները, մի անգամ էլ ապացուցեցին այդ ընկերության անհրաժեշտությունը:

Առաջին հերթին Ընկերությունը պատրաստվեց հրատարակել իր «Տարեգիրը», որի նյութն արդեն բաժանված էր, եւ սկիզբը դնել թանգարանի, երբ սկսվեց 1914 թ. պատերազմը, որի ընթացքում տապալվեց ամեն մի կուլտուրական գործ, մանավանդ որ Ընկերության վարչության անդամները այլ եւ այլ հանձնարարություններով հեռացան թիֆլիսից: Ընկերությունը որոշեց սպասել պատերազմի վախճանին, ձեռք բերեց մի գրադարան՝ բաղկացած 118 կտոր հայագիտական կարեւոր գրքերից: Այնուհետեւ դիմեց Հայաստանի Հանրային կրթության պ. նախարարին (Գեւորգ Մելիք-Ղարաբոյունյանին) հետեւյալ երեք առաջարկով.

1. Բանալ Ազգային թանգարան.
2. Հրատարակել հնությունների պահպանության եւ ուսումնասիրության վերաբերյալ օրենքներ.
3. Հաստատել Ընկերության կանոնադրությունը, որպեսզի կարելի լինի Ընկերության գործունեությունը վերսկսել Հայաստանում:

Այս առաջարկները մնացին անպատասխան, թեեւ հետո համալսարանական «կոմիտեայի» միջոցով հանձնարարվեց մեր անդամ-քարտուղար Սմբատ Տեր-Ավետիսյանին՝ կազմել հնությունների պահպանության եւ հնագիտական վարչություն հաստատելու օրենքների նախագիծ, որը կազմելուց հետո հաստատվեց նախարարի կողմից, բայց չգործադրվեց:

Ի նկատի ունենալով հնությունների պահպանության եւ ուսումնասիրության այն անկերպարանք վիճակը, որ այժմ կար Հայաստանում, եւ այն վտանգը, որ զանազան մասնավոր գիտական ընկերություններ եւ էքսկուրսիաներ օրենքների բացակայության պատճառով կարող են ի զուրն գործ դնել իրենց տված ազատությունը՝ Պատմ. եւ հնագիտ.

ընկերությունը փետր. 20-ին տեղի ունեցած նիստում որոշեց լիազորել Ընկերության նախագահ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին: Առաջարկել Հայկական Համալսարանի խորհրդին, որ վերջինս [Հաստատի] մի պետական հիմնարկություն, որը ամբողջովին իր վրա վերցնի Պատմական եւ հնագիտական ընկերության նպատակների իրագործումը:

Ի նկատի ունենալով գործի մասնագիտական կողմը՝ Ընկերությունս պարտավոր է աջակցել պետությանը՝ հնագիտական օրինագծեր մշակելիս եւ «Ազգային թանգարան» հաստատելիս:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թթ. 47-48 շրջ.: Թուղոն: Ձեռագիր:

ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՅՈՑ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՒ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

20 փետր., 1920 թ.

Թիֆլիս

Նիստ հմ. 12

«Հորիզոն»⁴⁶

Նախագահ՝ Մեսրոպ եպս.

Ստ. Լիսիցյան

Ս. Տեր-Ավետիսյան

Ծանոթացանք Ընկերության գրության եւ գործունեության հետ. եւ, ի թիվս որոնց, ի նկատի ունեցանք նախարարին դիմելը, որ հնագիտ. կոմիսիա եւ թանգարան հաստատվի եւ Ընկերության կանոնադրությունը:

Եղավ երկու առաջարկ.

1. Ընկերությունը տեղափոխել Հայաստան՝ իբրեւ մասնավոր ընկերություն,

2. Հանձնարարել համալս. ժողովին՝ միջնորդել պետությանը, որ Հայաստանում հաստատվի մի պետական հիմնարկություն, որն իր վրա վերցնի ընկերության նպատակների^{3*} իրագործումը:

Ընդունվեց վերջին առաջարկը:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 49 եւ շրջ.: Թուղոն: Ձեռագիր:

3* Բայ է թողնված փի բառ՝ անընթեռնելի (ծան.՝ կազմ.):

ՕՐԱԳԻՐ հմ. 12

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
11 հունիսի, 1919 թ.

ՆԵՐԿԱ ԷԻՆ

Նախագահ՝ Ստ. Լիսիցյան
Անդամներ՝ Գյուտ ավ. քին. Աղանյան
Անդամ-քարտուղար՝ Սմբատ Տեր-Ավետիսյան

ԼՍԵՑԻՆ - Ի նկատի ունենալով հնագիտական, պատմական հիշատակարանների անխնամ վիճակը՝ որոշվեց.

ՈՐՈՇԵՑԻՆ - Մի գրությունը գիմել Հայաստանի լուսավորության նախարարին՝ խնդրելով հրատարակել օրենքներ մեր հնությունների ուսումնասիրության եւ պահպանության վերաբերյալ:

Խնդրել նախարարին՝ բանալ Ազգային թանգարան:
Ներկայացնել ընկերության կանոնադրությունը Հայոց կառավարությանն ի հաստատության եւ ընկերության գործունեությունը տեղափոխել Հայաստան:

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 58: Բնագիր: Ձեռագիր:

ՕՐԱԳԻՐ հմ. 13

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
20 փետրվարի, 1920 թ.

ՆԵՐԿԱ ԷԻՆ

Նախագահ՝ Մեսրոպ Եպիսկոպոս
Անդամներ՝ Ստ. Լիսիցյան
Անդամ-քարտուղար՝ Սմբատ Տեր-Ավետիսյան

ԼՍԵՑԻՆ - Քննության առնվեց Ընկերության արդի վիճակը, որի համար քարտուղարը մի գեկուցում արավ Ընկերության անցյալ գործունեության մասին եւ նկարագրեց գանձա-

րանի ու մատենադարանի վիճակը: Ապա հիշեց, որ վերջին անգամ դիմած է Հայաստանի հանրային կրթության պ. Նախարարին՝ հետեւյալ երեք առաջարկով.

1. Հաստատել Պատմ.-հնագիտ. ընկ. Կանոնադրությունը՝ Հայաստանում գործելու համար.

2. Բանալ Ազգային թանգարան⁴⁷.

3. Հրատարակել հնությունների պահպանության վերաբերյալ օրենքներ:

Ասվեց, որ այս առաջարկները մնացին անպատասխան:

Անցնելով Ընկերության հետագա վիճակին՝ եղավ երկու առաջարկ.

4. Ընկերության գործունեությունը տեղափոխել Հայաստան՝ պահելով նրան իբրեւ մասնավոր հաստատություն:

5. Առաջարկել Հայկական համալսարանի խորհրդին, որ վերջինս միջնորդի պետությունը, որ Հայաստանում հաստատվի մի պետական հիմնարկություն, որն իր վրա վերցնի ընկերության նպատակների իրագործումը:

Միաձայն անցավ երկրորդ առաջարկը: Այս նպատակով խորհուրդս լիազորեց պ. Նախագահին՝ վերահիշյալ նպատակին հասնելու համար հարաբերություններ սկսել Համալսարանի խորհրդի եւ, եթե պետք լինի, նաեւ պետություն հետ:

Ի նկատի ունենալով գործի մասնագիտական բնավորությունը՝ Ընկերությունս իր կողմից պատրաստ է աջակցել գիտությունը, եթե պետությունն այդ հարկավոր կհամարի: Պատրաստել Ընկերության մասին մի զեկուցագիր եւ տալ պ. Նախագահին:

Նախագահ՝

Անդամ-քարտուղար՝ Սմբատ Տեր-Ավետիսյան

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թթ. 59-60: Բնագիր: Զեռագիր:

Կ. Պոլիս

Հրանտ Ասատուր⁴⁸

Մաղաքիա արքեպ. Օրմանյան⁴⁹

Բաբկեն եպս.

Դուրյան եպս.⁵⁰

Թորգոմյան⁵¹

Երուսաղեմ

Մեսրոպ վրդ. Նշանյան⁵²

Տրդատ եպս. Պալյան⁵³

Փարիզ

Կարապետ Բասմաճյան⁵⁴

Արշակ Զոբանյան⁵⁵

ՀԱԱ, ֆ. 654, ց. 3, գ. 1, թ. 61: Բնագիր: Ձեռագիր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Գյուտ քին. Աղանյան՝ բանասեր, հրատարակիչ (1850-1920 թթ.):
- 2 Ստեփան Մալխասյան՝ պատմաբան, հայագետ (1857-1947 թթ.):
- 3 Ստեփան Լիսիցյան՝ ազգագրետ (1865-1947 թթ.):
- 4 Ա. Բաբախանյան (Լեո)՝ պատմաբան, հայագետ, բանասեր (1860-1932 թթ.):
- 5 Իսահակ Հարությունյան՝ բանասեր (1863-1928 թթ.):
- 6 Հովհաննես Թումանյան՝ բանաստեղծ (1869-1923 թթ.):
- 7 Սմբատ Տեր-Ավետիսյան՝ բանասեր, պատմաբան (1875-1913 թթ.):
- 8 Ասլան Շահնազարյան՝ պատմաբան (1877-1955 թթ.):
- 9 Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյան՝ հոգևորական (1865-1939 թթ.):
- 10 Յոզեֆ Ստրժիգովսկի՝ Վիեննայի համալսարանի ուսուցչապետ (1862-1942 թթ.):
- 11 «Լույս» հանդես՝ Թիֆլիս, 1896-1911 թթ.:
- 12 «Փորձ» հանդես՝ Թիֆլիս, 1876-1881 թթ.:
- 13 «Հայ գրողների կովկասյան ընկերություն»՝ Թիֆլիս, հիմն. 3.10.1912:
- 14 «Կովկասի հայոց բարեգործական ընկերություն»՝ Թիֆլիս, 15.11.1881-1929:
- 15 Գալուստ Տեր-Մկրտչյան՝ միաբան, բանասեր, պատմաբան (1860-1918 թթ.):
- 16 Գարեգին արք. Հովսեփյան՝ հոգևորական, բանասեր, արվեստաբան (1867-1952 թթ.):
- 17 Մենեքերիմ Տեր-Հակոբյան՝ ուսուցիչ, բանասեր (1881-1938 թթ.):
- 18 Աշոտ Հովհաննիսյան՝ պատմաբան (1887-1972 թթ.):
- 19 Մեսրոպ վրդ. Մաքսուդյան՝ հոգևորական, բանասեր (1876-1918 թթ.):
- 20 Սահակ վրդ. Ամատունի՝ հոգևորական, բանասեր (1856-1917 թթ.):

- 21 Երվանդ վրդ. Տեր-Մինասյան՝ հոգեւորական, պատմաբան, բանասեր (1879-1974 թթ.):
- 22 Թորոս Թորամանյան՝ ճարտարապետ, արվեստաբան (1864-1934 թթ.):
- 23 Հայկ Հովհաննիսյան՝ ուսուցիչ, պատմաբան (1875-1958 թթ.):
- 24 Լեւոն Մելիքսեթյան՝ հայագետ, բանասեր (1890-1968 թթ.):
- 25 Ռուբեն Աբրահամյան՝ լեզվաբան (1881-1951 թթ.):
- 26 Երվանդ Լալայան՝ ազգագրագետ, բանասեր (1864-1931 թթ.):
- 27 Երվանդ Շահազիզյան՝ բանասեր (1856-1951 թթ.):
- 28 Կարապետ Կոստանյան՝ պատմաբան, հայագետ (1853-1920 թթ.):
- 29 Խ. Քուչուկ-Հովհաննիսյան՝ ուսուցիչ, պատմաբան (1819-1919 թթ.):
- 30 Նիկողայոս Ադոնց՝ պատմաբան, հայագետ (1871-1942 թթ.):
- 31 Հովսեփ Օրբելի՝ պատմաբան, հնագետ (1887-1961 թթ.):
- 32 Ա. Աղալոյի Քալանթարյան (Լորիս-Քալանթարյան)՝ հնագետ, պատմաբան (1884-1942 թթ.):
- 33 Հրաչյա Աճառյան՝ լեզվաբան (1875-1953 թթ.):
- 34 Հայր Հովհաննես Թորոսյան՝ բանասեր (1860-1940 թթ.):
- 35 Մկրտիչ Պոտուրյան՝ հոգեւորական, բանասեր (1881-1959 թթ.):
- 36 Սիմոն Երեմյան՝ բանասեր (1871-1938 թթ.):
- 37 Գրիգոր (Գրիգորիկ) Գալամբերյան՝ բանասեր (1862-1917 թթ.):
- 38 Ներսես Ակիւնյան՝ բանասեր (1883-1963 թթ.):
- 39 Հակոբ Տաշյան՝ բանասեր (1866-1934 թթ.):
- 40 Բառնաբաս (Պողոս) Պելեգիկջյան՝ բանասեր (1867-1921 թթ.):
- 41 «Հայոց երաժշտական ընկերություն»՝ Թիֆլիս, հիմնադրվել է 1912 թ.:
- 42 Ստեփան Կանայան՝ բանասեր (1867-1937 թթ.):
- 43 Նիկողայոս Մառ՝ պատմաբան, հնագետ, բանասեր (1865-1934 թթ.):
- 44 Մինաս Բերբերյան՝ հրապարակախոս (1871-1919 թթ.):
- 45 «Մշակ» հանդես՝ Թիֆլիս, 1872-1921 թթ.:
- 46 «Հորիզոն» հանդես՝ Թիֆլիս, 1909-1918 թթ.:
- 47 Հայաստանի պատմության պետական թանգարան՝ հիմն. 20.08.1921:
- 48 Հրանտ Ասատուր՝ բանասեր (1862-1928 թթ.):
- 49 Մաղաքիա արք. Օրմանյան՝ հոգեւորական, հասարակական գործիչ, պատմաբան, բանասեր (1841-1918 թթ.):
- 50 Եղիշե եպս. Դուրյան՝ հոգեւորական, հասարակական գործիչ, բանաստեղծ, բանասեր (1860-1930 թթ.):
- 51 Վահրամ Թորգոմյան՝ բժիշկ, բանասեր (1858-1942 թթ.):
- 52 Մեսրոպ Նշանյան՝ հոգեւորական, բանասեր (1872-1944 թթ.):
- 53 Տրդատ եպս. Պալյան՝ հոգեւորական, բանասեր (1850-1923 թթ.):
- 54 Կարապետ Բասմաջյան՝ պատմաբան, բանասեր (1864-1948 թթ.):
- 55 Արշակ Չոբանյան՝ բանաստեղծ, թարգմանիչ, բանասեր (1872-1954 թթ.):

ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄՄ

ՄՄ Հ^ֆ 6765 «ԱՎԵՏԱՐԱՆ» ԶԵՌԱԳՐԻ
ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Ձեռագիր մատյանները, հնատիպ գրքերն ու արխիվային փաստաթղթերը մշտական խնամքի կարիք ունեն։ Այս խնդիրը մշտապես գտնվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ուշադրության կենտրոնում։

Սույն հոգվածի նպատակն է ներկայացնել ձեռագրերից մեկի՝ Ժէ. դարի արծաթյա, ոսկեպատ կրկնակազմով թղթյա չքեղ Ավետարանի մանրանկարների (նկ. 1) վերականգնման երկարատև ընթացքը։ Ավետարանը գրվել է Նոր Զուղայում։ Գրիչը Աստվածատուրն է, ծաղկողը՝ Հայրապետ Զուղայեցին, ով հայտնի է իր մի շարք տիտղոսներով՝ «Վարպետաց Վարպետ», «Վարպետ Հայրապետ», իսկ գրիչ Աստվածատուրը եղել է նրա աշակերտներից մեկը, ով օգնել է վարպետին Ավետարանի նկարազարդման ընթացքում։ Հայրապետի նկարազարդած ձեռագրերից Մատենադարանում առկա են 20-ը՝ նկարազարդված շուրջ 52 տարիների (1639-1691 թթ.) ընթացքում։ Հայրապետը մի ձեռագիր է նկարազարդել նկարիչ Աղափիրի հետ (Վենետիկ, «Մայր ցուցակ», Բ., թ. 623)։ 1669 թ. ընդօրինակած Ավետարանը գտնվում է Էջմիածնում (ձեռ. 253)։ Ձեռագրեր կան նաեւ Երուսաղեմի և Նոր Զուղայի հավաքածուներում¹։

Ձեռագիրը ՄՄ է բերվել 1930 թ. (Էջմիածին, եկեղեցական թանգարան) մի շարք այլ ձեռագրերի հետ միասին²։

Այս ձեռագրի առանձնահատկություններից է այն, որ Տերունական շարքի թեմատիկ նկարները 18-ն են, ինչը հազվագեպ է հանդիպում։ Ձեռագիրը հարուստ է գույներով՝ ոսկի, կապույտ, կանաչ, կարմիր (որդան

¹ Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ, Մատենագիտություն IX-XIX դդ., Գահիրե, 2005, էջ 328։

² ՅԶՄՄ, Ա., թ. 128-131, 1924-1936 թթ. հավաքածու։

կարմիր եւ ալ կարմիր), նարնջագույն, մանուշակագույն, մոխրագույն, դեղին, սեւ, սպիտակ:


Ձեռագրի՝ խոնավությունից վնասված մանրանկարների կոնսերվացիոն ու վերականգնման նախնական ղննումը ցույց էր տվել, որ վնասված մանրանկարների թիվը 210 է: Վնասված էին ոչ միայն լուսանցազարդերը, այլեւ զարդագրերի ու գլխատառերի մեծ մասը: Նախնական ախտահանումից եւ չոր մեխանիկական մաքրումից հետո սկսվեցին մանրանկարների վերականգնման եւ ամրացման աշխատանքները: Նախնական ախտահանումը կատարվել է հատուկ ախտահանիչ պահարանում՝ հայկական բնաշխարհում հանդիպող բույսերից ստացված եթերայուղերով: 48 ժամ անց ձեռագիրը հանվել է ախտահանիչ պահարանից, որից հետո բնական խոզանակով զգուշորեն մաքրվել են ձեռագրի թերթերը: Քանի որ հիմնական խնդիրը վնասված մանրանկարներն էին, իսկ գրքաբույրը բարվոք վիճակում էր, հետևաբար, ձեռագիրը վերականգնվել է՝ առանց այն քանդելու: Սա առաջին դեպքն էր, երբ վնասված էր ձեռագրի գրեթե ողջ մանրանկարչությունը, այդ իսկ պատճառով որոշվեց վերականգնումը կատարել երկու եղանակով. նախ՝ մանրանկարների այն մասերը, որոնք արտատպվել էին հակառակ թերթերի վրա, հեռացվեցին խոնավացման միջոցով, ապա վերականգնումը շարունակվեց չոր եղանակով: Մանրանկարներն արված էին բնական ներկերով, սակայն ներկերի ջրակայունությունը ստուգող փորձը ցույց տվեց, որ բոլոր ներկերը ջրալույծ էին, որոշ դեպքերում՝ առավել ընդգծված: Խոնավ հեռացման դեպքում օգտագործվել է կլուսել “G” 20 %-ոց ալկոհոլային լուծույթ³: Մանրանկարները վերականգնվել են խոշորացույցի, առավել բարդերը՝ մանրադիտակի օգնությամբ (նկ. 2):

Մանրանկարի այն մասերը, որոնք արտատպված են եղել դիմացի թերթի վրա միայն ներկի շերտով, վերականգնվել են հետևյալ կերպ. վնասված մանրանկարի չափով կտրվել է ճապոնական թուղթ (մի քանի միլիմետրը չգերազանցող), որը կլուսել “G” 20 %-ոց ալկոհոլային լուծույթի օգնությամբ ամրացվել է՝ մանրանկարի մակերեսին դնելով չկաշող թուղթ եւ ավագե բարձիկ: Չորանալուց հետո, երբ ներկի շերտին արդեն ամրացված է եղել ճապոնական թուղթը, սուր նշտարով զգուշորեն անջատվել է պոկված հատվածը եւ ամրացվել իր նախնական տեղում (նկ. 3): Որպես սոսինձ՝ կրկին օգտագործվել է կլուսել “G” 20 %-ոց ալկոհոլային լուծույթը:

³ Կլուսել - հիդրոքսիպրոպիլցելյուլոզա:



Նկ. 1. Կազմի Ա. եւ Բ. փեղկերը, տեքստըրլոկը եւ դռնակը՝ չորս կապիչներով



Նկ. 2. Շրջանակի մեջ խոշորացված հատվածը՝ վերականգնումից առաջ եւ հետո
 Նկ. 3. Հեռացման առաջին տարբերակը ճապոնական թղթի օգնությամբ



Նկ. 4. Հետացման երկրորդ տարբերակ. չոր հեռացում նշտարի օգնությամբ



Նկ. 5. Թղթի կպած շերտի անջատում՝ վերականգնումից առաջ և հետո
 Նկ. 6. Ոսկու շերտի ամրացումը նախնական տեղում՝ վերականգնումից առաջ և հետո

Զոր հեռացումը կատարվել է միայն նշտարի օգնությամբ: Զգուշորեն կպած ներկի կտորից թղթի շերտով անջատվում է վնասված հատվածը, տեղափոխվում իր նախնական տեղը եւ ամրացվում, որից հետո ներկի շերտի հետ տեղափոխված թղթի շերտը հեռացվում է փափուկ վրձնի օգնությամբ կլուսել “G” 20 %-ոց ալկոհոլային լուծույթով և կրկին ամրացվում իր նախկին տեղում: Այս եղանակով շերտած թուղթը հանդիսանում է տեղափոխման միջոց՝ ապահովելով ներկի շերտի ամբողջականությունը: Փորձը ցույց տվեց, որ ընտրված եղանակով ապահովվում է դրական արդյունք. միակ բարդությունը թղթի շերտի տեղադրման ճշգրտությունն է (նկ. 4):

Թղթի շերտերը, որոնք ուղղակի կպած են եղել մանրանկարներին խոնավության պատճառով, նույնպես հեռացվել են կլուսել “G” 20 %-ոց ալկոհոլային լուծույթով: Այս գործողության կարևորությունն այն է, որ պետք է ճշգրիտ հաշվարկել ժամանակահատվածը, որի ընթացքում տեղի է ունենում կպած թղթի շերտի խոնավացումը, սակայն այնքան, որ ներկի արտաքին շերտի խոնավացում չլինի (նկ. 5): Տվյալ գործընթացի տեւողությունը կարող է տատանվել մի քանի վայրկյանից մինչեւ մի քանի րոպե:

Վերականգման աշխատանքների ընթացքում առկա էին մի շարք բարդություններ, առանձնապես այն դեպքերում, երբ լուսանցազարդերը տեղադրված էին իրար դիմաց, և հպումից տեղի էր ունեցել ներկի շերտերի տեղափոխություն:

Մյուս բարդությունը կապված էր ոսկու շերտերի տեղափոխման եւ կոնսերվացման հետ, քանի որ այն իրենից ներկայացնում էր բարակ փայլաթիթեղ, որը հնարավոր չի եղել վերցնել նրբունեղու օգնությամբ: Ուստի՝ ոսկու շերտը զգուշորեն նստեցվել է նշտարի վրա, տեղադրվել իր նախնական տեղում եւ ամրացվել մագաղաթի սոսնձով (նկ. 6): Հաջորդ օրը մանրադիտակի օգնությամբ ստուգվել է մանրանկարի ներկերի եւ ոսկու շերտի վիճակը եւ ըստ անհրաժեշտության՝ կրկին ամրացվել սոսնձով:

Ձեռագրի թերթի ներքեւի կենտրոնական մասում 1-32 թ. առկա էր այրված հատված, որի եզրը մշակվել է մեթիլցելլյուլոզայի 25 %-ոց սոսնձով:

Մանրանկարների վերականգնման աշխատանքների ավարտից հետո որոշակի միջոցառումներ են ձեռնարկվել նաև կազմի ու մագաղաթյա պահպանակների նկատմամբ:

Թիֆլային կոռոզիայից քայքայված մագաղաթյա պահպանակների անցքերը վերականգնվել են ճապոնական թղթով՝ օգտագործելով ցորենի և մագաղաթյա սոսնձի խառնուրդ: Հետագա կոռոզիայից խուսափելու համար, որպես կանխարգելիչ միջոց, տոնավորված ճապոնական թղթով փակվել են փեղկերի աստառի և կաշվի վրա տեղադրված բոլոր ներքին մետաղյա մասերը: Մետաքսե կտորից աստառները նույնպես զգուշորեն մաքրվել են ռետինի օգնությամբ, որից հետո, որպես կոնսերվացում եւ գույնի վերականգնում, քսվել է կլուսել “G” 20 %-ոց ալկոհոլային լուծույթ:

Կազմի ողջ մակերեսը խնամքով մաքրվել է հատուկ խոզանակով, իսկ կապիչները, որոնք մինչ այդ չէին ընկնում իրենց անցքերի մեջ, կազմի ուղղումից հետո կրկին ընդունեցին իրենց նախնական տեսքը:

Տասնութ ամիսների երկարատև եւ հոգատար աշխատանքի արդյունքում վերականգնվել եւ ամրացվել է 10 խորան, 18 տերունական պատկեր, 4 ավետարանիչների պատկերներ՝ իրենց անվանաթերթով, 210 լուսանցազարդ, 140 զարդագիր, 114 գլխատառ:


РЕЗЮМЕ

Реставрация Евангелия N 6765 Матенадарана проведена двумя способами - «сухим» и «влажным». Причиной повреждения миниатюр и орнаментов явилась влажность, что в свою очередь привело к липкости красок. Это был первый случай, когда в рукописи наблюдалось повреждение более 90% миниатюр. Реставрационные работы были проведены с помощью лупы или под микроскопом, в качестве клея использовался 20%-ый алкогольный раствор Klucel “G”. Следует отметить, что помимо переноса слоев краски, было проведено успешное восстановление тонкого слоя толченого золота, которым была выполнена миниатюра, что еще более затрудняло процесс его переноса и закрепление. В результате длительной и кропотливой работы в течение восемнадцати месяцев было восстановлено и закреплено 18 миниатюр евангельского цикла, 10 таблиц канонов согласия, 4 портрета евангелиста, 4 титульных листа, 210 маргинальных украшений, 140 орнитоморфных букв, 114 инициалов.

SUMMARY

The restoration of the Gospel N 6765 of Matenadaran has been carried out in two methods: dry and humid. The reasons for the damage of manuscript and marginal ornaments have been hydration, which in its turn has activated the stickiness of colours. It was the first case that more than 90% of miniatures in manuscripts was damages. The

restoration has been done with the help of magnifying glass and microspore, Krusel “G” 20% alcoholic liquid has been used as glue. It must be mentioned that besides the removal of colour layers attempts has been made to recover the gold layers and good results was achieved. The gold is actually a thin layer of bitten gold which makes the removal and installation of it more difficult. During 18 months of long and careful work were conserved 18 miniatures, 10 canon tables, 4 of which were Evangelist portraits, 4 carpet pages, 210 of which were marginal ornaments, 140 of which were zoomorphic letters, and 114 of which were initials letters. Although the treatment was difficult and very detailed, the work was rewarding and necessary to ensure the conservation of the manuscript and its miniatures.



СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВИТЕЛЬНЫЕ ГРАМОТЫ

Приветственное слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II, обращенное к Святейшему Понтифику Папе Римскому Франциску при церемонии вступления его в Кафедральный собор Св. Эчмиадзина	5
Слово Святейшего Понтифика Папы Римского Франциска, сказанное при церемонии вступления его в Кафедральный собор Св. Эчмиадзина	8
Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II, сказанное на Божественной литургии, проведенной Святейшим Понтификом Папой Римским Франциском на площади св. Варданидов в г. Гюмри	11
Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II, сказанное на совместной со Святейшим Понтификом Папой Римским Франциском во время екуменической молитвы во имя мира	14
Слово Святейшего Понтифика Папы Римского Франциска, сказанное во время екуменической молитвы	18
Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II, сказанное по случаю визита Святейшего Понтифика Папы Римского Франциска на Архипастырской литургии	23
Слово Святейшего Понтифика Папы Римского Франциска, сказанное во время Архипастырской литургии	26
Совместная декларация Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II и Его Святейшества Папы Римского Франциска, принятая в Св. Эчмиадзине (на английском и армянском языках)	28

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

КАРЕН МАТЕВОСЯН - Монастырь Арчоарич, что близ г. Ани	35
ТАТЕВИК МАНУКЯН - Рукописные экземпляры печатной грамматики Воскана Ереванци.....	50
АРМИНЕ МЕЛКОНЯН - Литературное наследие Петроса Мадатяна (Ашуг Сейяд).....	62
ГЕВОРГ ТЕР- ВАРДАНЯН - Серия "Армянские историографы" и проблемы нашей текстологии.....	74
ЛАЛИК ХАЧАТРЯН - Варианты образных сравнений в Библии (армянский перевод).....	99

СООБЩЕНИЯ

ИЕРОМОНАХ МОВСЕС САРГСЯН - Теория справедливой войны	109
ЛИАНА АВЕТИСЯН - Святые места в селе Мастара и вокруг него и связанные с ними традиционные представления	121
АНИ МХИТАРЯН - Художественные решения и образно- стилистические особенности комплекса украшений Ван-Васпуракана	131
АЛВАРД КАЗИЯН - Новые документы о деятельности Армянского исторического и археологического общества	144
АРТУР ПЕТРОСЯН - Реставрация миниатюр рукописи Евангелия N 6765 Матенадарана им. Месропа Маштоца.....	163

CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Welcoming speech of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, addressed to His Holiness Francis, Pope of Rome in the Cathedral of Holy Etchmiadzin during the welcoming ceremony of “Hrashapar”	5
Message of His Holiness Francis, Pope of Rome in the Cathedral of Holy Etchmiadzin during the welcoming ceremony of “Hrashapar”	8
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during the Divine Liturgy celebrated by His Holiness Francis, Pope of Rome in Sts. Vardanants square of Gyumri	11
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during the ecumenical prayer for peace offered together with His Holiness Pope Francis.....	14
Message of His Holiness Francis, Pope of Rome during the ecumenical prayer	18
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during the Pontifical Divine Liturgy celebrated in the Mother See of Holy Etchmiadzin on the occasion of the visit of His Holiness Pope Francis to Armenia.....	23
Message of His Holiness Francis, Pope of Rome during the Pontifical Divine Liturgy celebrated in the Mother See of Holy Etchmiadzin	26
Common Declaration of His Holiness Karekin II and His Holiness Francis at Holy Etchmiadzin, Republic of Armenia (in English and Armenian)	28

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

KAREN MATHEVOSYAN - The Monastery of Arjoarij near Ani.....	35
TATHEVIK MANUKYAN - Handwritten copies of the printed grammar manual by Voskan of Yerevan.....	50
ARMINE MELKONYAN - Literary heritage of Petros Madatyan (minstrel Seyad).....	62
GEVORG TER-VARDANYAN - Series “Armenian historiographers” and challenges of our textology	74
LALIK KHACHATRYAN - Variants of figurative comparisons in the Bible (Armenian version)	99

ESSAYS

REV. FR. MOVSES SARGSYAN - Theory of a “just war”	109
LIANA AVETISYAN - Holy places of Mastara and traditional views related to them.....	121
ANI MKHITARYAN - Artistic solutions and stylistic-pictorial characteristics of the complex of Van-Vaspurakan	131
ALVARD GHAZIYAN - Newly found documents on the Armenian historical and archaeological society	144
ARTHUR PETROSYAN - Restoration of miniatures of the “Gospel” manuscript N 6765 of Mashtots Matenadaran	163

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի խոսքը Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապին՝ Մայր Տաճարում Հրաշափառի բարիգալստյան արարողության ընթացքում	5
Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի խոսքը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում Հրաշափառի բարիգալստեան արարողութեան ընթացքում	8
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի կողմից Գյումրիի Սրբոց Վարդանանց հրապարակում մատուցված Պատարագի ընթացքում	11
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի հետ մատուցված խաղաղության աղոթքի ընթացքում	14
Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի խոսքը համամիութենական աղոթքի ընթացքում	18
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի այցի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցված Հայրապետական պատարագի ընթացքում	23
Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի խոսքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցուած Հայրապետական պատարագի ընթացքում	26
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի եւ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի համատեղ հռչակագիրը Սուրբ Էջմիածնում (անգլերեն եւ հայերեն)	28

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ - Անիի մերձակա Արջոառիճի վանքը	35
ՏԱԹԵՒԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ - Ոսկան Երեւանցու տպագիր քերականության ձեռագիր օրինակները	50
ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ - Պետրոս Մաղաթյանի (Աշուղ Սեյադ) գրական ժառանգությունը	62
ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ - «Պատմագիրք Հայոց» մատենաշարը և մեր բնագրագիտության խնդիրները	74
ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ - Պատկերավոր համեմատությունների տարբերակները Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ	99

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Տ. ՄՈՎՍԵՍ ԱՐԴ. ՍԱՐԳՍՅԱՆ - Արդարացի պատերազմի տեսությունը	109
ԼԻԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ - Մաստարայի սրբատեղիները և դրանց հետ կապված ավանդական պատկերացումները	121
ԱՆԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ - Վան-Վասպուրականի զարդահամալիրի գեղարվեստական լուծումներն ու ոճապատկերային առանձնահատկությունները	131
ԱՎԱՐԴ ԴԱԶԻՅԱՆ - Նորահայտ վավերագրեր Հայոց պատմական և հնագիտական ընկերության մասին	144
ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ - ՄՄ Հ ^{մբ} 6765 «Ավետարան» ձեռագրի մանրանկարների վերականգնումը	163

- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ազերեան, Գր. Ճելալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՅՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՃ** - Գեորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՄ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեսանց), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոստանյան), հ. 1-9, Միսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲԵ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲԹ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարգարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մախաթյանց), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՄ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՅՀԶ** - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուն Մատենադարանի, Երևան
- ՆԲՀ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Աւետիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՃԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «ՎՀՀ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՅԶՄՄ** - Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուն Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- ԱԴՎ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племен Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- ANES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- CAH** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

*Հրապարակում է
Գեորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիրխորհրդի երաշխաւորութեամբ եւ որոշմամբ*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային և Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատվական հանգույցի» ձևավորման աշխատանքներին:

Այս հանգույցում ի մի են բերվում հայագետների և գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչների հրատարակած հոդվածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցությունն են բերում հայաստանյան և Սփյուռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչությունները, գրադարանները:

Հանգույցը հասանելի է <http://www.flib.sci.am/arm/node/2> համացանցային հասցեով: Օգտվողներին բոլոր նյութերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման կարգավիճակով:

Ունեցե՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտվելով հանգույցից, տարածելով տեղեկատվություն դրա մասին, տրամադրելով թվայնացված նյութեր:

Հայաստանի ազգային գրադարան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵՄՆ ՀԱՍՑԷՆ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Republic of Armenia, Etchmiadzin, Redaction of Review "Etchmiadzin"

Web կայքի հասցեն՝ www.etchmiadzine.am
Էլ. փոստ՝ mayratoriamsagir@gmail.com կամ etchmiadzinamsagir@gmail.com
Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am

Հեռ. (+374-10) 517-296/174
Ստորագրուած է տպագրութեան՝ 18. 07. 2016 թ.

Չափսը՝ 70X100 1/16: Ծաւալը՝ 11 տպ. մամուլ: Թուղթը՝ օֆսէթ: Տպաքանակը՝ 400:



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ